



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6 1893

Յ Ո Ւ Ն Ի Ս

1893 № 6

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Կ Տ Ա Ր Ի

երես

1	ՇԻՐՎԱՆՋԱԴԷ	859	Արսէն Գիմարսեան (գերջ):
2	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ	927	*** (բանաստեղծութ.):
3	ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱՋԱՐՈՍ	928	Իմ կեանքի գլխաւոր դէպքերը.
4	ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ	943	Անտուայ երգ (բանաստեղծութ.):
5	»	946	Բլբուլ (բանաստեղծութիւն):
6	ՖԵԼԻՔՍ	947	Նատուրալիստը և Զոլան:
7	ՄԵԼՔՈՒՄԵԱՆՅ, Պ.	960	Ա. Նամալեան, Պատրիկ Նամակները.
8	Ա., Ա.	976	„Армянские беллетристы“.
9	Պ. ՄԵԼՔ.	979	Ներգնկեանց—Քաբան. խնդիրներ:
10	Ա., Ա.	987	Շեքսպիրեան գրականութիւն:
11	ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ, Ա.	992	Ժամանակակից տեսութիւն: Կաթո- ղիկոսի գարտեան առիթով:
12	ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅ, Յ.	996	Նամակ խմբագրին:
13	Ա. Թ.	1001	Խուսափանից:
14	Ֆ.	1009	Արտասահմանեան Գրոնիկ:
15	Զ.	1019	Քաղաքական տեսութիւն: Պարլա- մենտական ընտրութիւնները Գեր- մանիայում: Կուսակցութիւններ:
16	ԽՄԲ.	1027	Ջանազան լուրեր:
17	»	1031	«Մուրճ»-ի բովանդակութ. № 1—6,

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:




Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

Типография М. Д. Ротинянца, Гол. пр., д. №41.

1893



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6 1893

Յ Ո Ւ Ն Ի Ս

1893 № 6

Հ Ի Ն Գ Ե Բ Ո Ր Դ Տ Ա Ր Ի

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱԳՐԱԳ. Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротинянца, Гол. пр., д. № 41.

1893

В. П. М.

В. П. М.

В. П. М.

Дозволено цензурою. Тифлисъ, 13 Юня, 1893 г.

ԱՐՄԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ

ՇԻՐՎԱՆՁԱԴԵԻ

(Շարունակութիւն և վերջ ¹⁾)

մ ա ս ե ր ր ո ղ ր ր ր

X

Մի ժամ անցած, երբ արդէն բոլորովին մութն էր, Բարաթեանը աջ ու ձախ նայելով, մտաւ Բախտամեանների բնակարանը: Ոչ ոք նրան չըզիմուորեց, ոչ ծառայ, ոչ աղախին և ոչ սանտիրուհին:

Դռները բաց էին, ամբողջ տան մէջ տիրում էր անսովոր լուսութիւն: Կարծես երեխաներն անգամ տանը չէին: Մի կանթեղ կիսով չափ լուսաւորում էր նախասենեակը: Առանց վերարկուն հանելու, Բարաթեանը մտաւ ներս, անցաւ ընդարձակ դահլիճը և գնաց մի ուրիշ սենեակ: Այստեղ թաւշեայ բազկաթոռի վրայ նստած էր այրիացած տիկին Բախտամեանը, ձեռները կրծքին ծալած և աչքերը դռներին չառած: Տեսնելով Բարաթեանին, նա հառաչեց, տեղից թեթև շարժեց, առանց ոտքի կանգնելու: Նա հագած էր սև հագուստ, որ նրա գէմքի գունատութիւնը աւելի սպարզ էր

¹⁾ Տես «Մուրճ» № 1, 2, 3, 4 և 5:

կացուցանում: Նրա նիհարած երեսը, կնձուած ճակատը և սղմած շրթունքները արտաշաչտում էին սգաւոր այրիի բոլոր նշանները:

Նրանք լուռ սեղմեցին միմեանց ձեռքը: Բարաթեանը վերարկուն ձգեց անկիւնում դրած մի աթոռի վրայ և նստեց տիկնոջ հանդէս՝ զլիարկը ձեռին բռնած, ինչպէս կարձ միջոցով եկած մի հիւր: Տիկինը անսովոր լրջութեամբ և սառն եղանակով ասաց, թէ Բարաթեանին հրաւիրել է մի շատ կարեւոր գործի համար: Նա խնդրեց առ այժմ ոչինչ չըհարցնել վերջին ժամանակաց պատահած անցքերի մասին. նրանք առանց այն էլ պարզ են Բարաթեանի համար: Շրթունքները ներքին խռովութիւնից անխնայ կրճոտելով, նա բացաղբեց իւր ներկայ դրութիւնը և նկարագրեց իւր կեանքը մնայլ զոյներով: Նա իւր սեպհական տանը ապրում է ինչպէս մի օտարական: Նրա փողերով նրան ողորմութիւն են անում, նա իւր գլխի տէրը չէ:

— Պէտք է ինձ օգնես, — աւարտեց նա իւր խօսքը, — ես ուրիշ յոյս չունեմ, բացի քեզանից:

«Ի՞նչով խօսելը այս անգամ Բարաթեանին զուր չ'եկաւ: Նա շտապեց եղանակը փոխել և հարցրեց, թէ արդեօք ինչպէս կարող է օգնել տիկնոջը:

— Պէտք է այն ծերունու կտակը քանդել, — պատասխանեց այրին վճռողական եղանակով և համառօտ:

Բարաթեանը զարմացած նայեց նրա երեսին: Նոյն վճռողական եղանակով այրին կրկնեց իւր ասածը: Այո՛, պէտք է Պետր Պոլոմոնիչի կտակը անպատճառ քանդել, այստեղ զարմանալու ոչինչ բան կայ, ծերունու խելքը գլխին չէ եղել կտակը կազմելիս, նրան խաբել են անասուածները:

— Այդ կրթւած աւազակ Վէքիլովը և այն ուղտապան Ամբակում Աֆանասիւվիչը, երկուսն էլ գող են, սրիկայ են, պէտք է նրանց զէմ դատ բաց անել:

— Ասացէք խնդրեմ, ո՞վ է ձեզ այդ խորհուրդը տւել, — հարցրեց Բարաթեանը:

— Ա՛յ ոք, ես ինքս եմ մտածել այս մասին: Ի՞մ դրութիւնը այնպէս է, որ ես ուրիշ միջոց չունեմ այդ խաբեբաներից ազատւելու: Տասնուչորս տարի շարունակ ես տանջւել եմ, չարչարւել

մի «քաւթառի» ձեռքին, զերիի պէս ծառայել եմ նրան հիւանդ ժամանակ, հազար տեսակ հաչհոյանքներ եմ լսել: Սիրել՞ուցն եմ արել, հա, հա, հա... Միթէ այժմ էլ ուրիշները պէտք է ինձ տանջեն: Ոչ, ոչ, ես չեմ կարող այս տեսակ անպատուութեան դիմանալ: Պէտք է կտակը քանդել և ժառանգութիւնը իմ անունով հաստատել, որովհետև ես եմ միայն Պետր Սոլումնիչ Բախտամովի օրինաւոր ժառանգը, երեխաները իմն են— ոչ թէ Ա.էքիլովինը կամ Սարգսիովինը:

Բարաթեանը հանդարտ և անվրդով սկսեց բացատրել, թէ մի կտակ, որ կազմուած է նոտարի ձեռքով, օրինական կարգով և որ շուտով պէտք է հաստատուի կառավարութիւնից, չէ կարելի քանդել:

—Ի՞նչ անեմ նոտարիուսի ձեռքով է կազմուած, — գոչեց այրին զայրացած, — նոտարիուսը խօմ թագաւոր չէ, որ նրա արածը փոխել չըլինի:

Բարաթեանը մի բռպէ ընկաւ մտատանջութեան մէջ: Տիկնոջ զրութիւնը նրա համար հասկանալի էր, բայց ինչո՞վ կարող էր օգնել նրան: Նա աշխատեց նրան համոզել, որ թողնի իւր վտանգաւոր միտքը և համբերութեամբ հպատակւի իւր ճակատագրին: Ծրէնքի դէմ նրանք ոչինչ չեն կարող անել, բացի իրանց անունը խայտառակելուց:

— Կուք ուրեմն վախենն՞ում էք խայտառակութիւնից, — ընդհատեց այրին աւելի ու աւելի զայրանալով, — իսկ ես չեմ վախենում: Այո, ոչ մի բանից չեմ վախենում, որովհետև առանց այդ էլ խայտառակուած եմ... հէնց ձեր պատճառով...

Բարաթեանը անտարբեր նայում էր վրդովուած այրիի երեսին, որի մկանունքները ցնցւում էին ամեն մի բառ արտասանելիս: Այդ բռպէին նա չանկարծ զգաց մի անբացադրելի ատելութիւն դէպի այդ կինը, նկատելով նրա ճակատի վրայ, բերանի անկիւններում և աչքերի տակերում բարակ խորշեր: Գեղեցիուհին մի վայրկեան այնքան տգեղացած և ծերացած թւաց նրան, որ նա երեսը մի կողմ դարձրեց իւր վառ տպաւորութիւնը թագցնելու համար: Բայց այրին գուշակեց նրա միտքը: Նրա աչքերը սպաղեցին, երևան եկաւ բնական կատաղութիւնը կանացի խալթուած ինքնասիրութեան հետ,

— Ահա ինչ մարդ էք եղել, ես չէի իմանում, — գոչեց նա:

ձեռներով ձանկուտելով սեղանի սփռոցը, — ահա իմ վարձը... վախկոտ։
 Նա, ստամբները կրճտելով, մի կերպ իրան զսպեց, որպէս զի
 աւելի խիստ ածական չըտայ այն մարդուն, որին յանձնել էր իւր
 պատիւը և որից սակայն դեռ յոյս ունէր օգնութիւն ստանալու։
 Այն ինչ՝ Բարաթեանը մազու չափ չըկորցրեց իւր սառնասրտու-
 թիւնը։ Նա հանդարտ եղանակով շարունակեց բացադրել բոլոր
 հանգամանքները։ Մարդը սխալական է, աիկինը մոլորեց, նա ինքն
 էլ մոլորեց։ Միթէ հէնց այս պատճառով նրանք իրանց անունը
 պէտք է թղթախաղի տան։ Եթէ առաջարկութիւնը անիրագոր-
 ծելի չըլինէր, նա կընդունէր։ Նա պատրաստ է ամեն բանում օգ-
 նել աիկնոջը։ Բայց այս բանում ոչ, չէ կարող, հակառակ իւր
 կամքի և ցանկութեան։

— Երևակայեցէք, յանկարծ երկուսս միասին մի օր ներկայա-
 նում ենք դատաստանին, ինչպէս մի և նոյն գործի համար համե-
 րաշխ ընկերներ։ Ո՛վ եմ ես ձեզ համար, ո՞վ էք դուք ինձ հա-
 մար։ — Փոարներ։ Եթէ մեր մէջ կար մի ազգակցական կապ, այն էլ,
 յայտնի է ձեզ, քանզու եք — ձեր ամուսնու քրոջ աղջիկը այժմ իմ
 կինը չէ։ Ուրեմն ինչ էք պահանջում, ասացէք։

— Դուք էք ինձ անբաղդացնողը, դուք էլ պէտք է ազատէք
 ինձ այս դրութիւնից։

Բարաթեանը, ուսերը թօթելով, ժպտաց և կծու հեղնու-
 թեամբ պատասխանեց.

— Երբ երկու մարդ իրանց հաճոյքի համար գողանում են ու-
 րիշների պատիւը և իրանք են զրկում պառւից — ոչ մէկը իրա-
 ւունք չունէ միւսին մեղադրելու։ Մեր մեղքերը հաւասար են, եր-
 կուսս էլ յանցաւոր ենք։ Եթէ դուք անբաղդ էք, ես էլ շատ
 բաղդաւոր չեմ։ Ձեռք վերցնենք միմեանցից, թողնենք մեր սխալ-
 ները և մեր անունը ազատենք մարդկանց բամբասանքից։

— Ազատենք մեր անունը, հա հա հա, ազատենք, հա հա հա...

Եւ այդին մի ըստեհաչափ խտրելիքական ծիծաղից բազկաթուի
 մէջ երերւելով ձեռներով ձմրում էր բառխստեայ թաշկինակը։ Վեր-
 ջապէս, նա մի քիչ խաղաղւեց, նորից կատաղեց և խեղդած ձայ-
 նով գոչեց.

— Խաբեբայ...

—Տիկին...

Արտասանելով վիրաւորական բառը, այրին դարձեալ փոխւեց: Կարծես, նոյն վայրկեանին զղջաց, որ այնքան հեռու զնաց: Նրա շունչը սկսեց սպառուել, կուրծքը ուժղին բարձրացաւ, կոկորդի բարակ, կապոյտ, թափանցիկ երակները փքւեցին: Նա սկսեց հեկեկալ, արտասանելով. «Նա անբաղդ եմ... ես ատելի եմ... խայտառակած...»:

Մի բոպէ Բարաթեանը խղճաց այրիին: Բայց կրկին նայեց նրա երեսին, ձեռների երկար մասներին և նորից ատելութիւնը շարժեց նրա սրտում: Այդ կինը, որ մի ժամանակ այնպէս կուրացրել էր նրան, այժմ թւում էր գրող, ատելի և զղւելի էակ:

Այրին արտասուքը սրբեց: Նա այլ ևս առաջւանը չէր: Խեղճացած, ընկճած, նա սկսեց աղերսել Բարաթեանին, որ կամ ինքը օգնի կամ մի որ և է ելք ցոյց տայ այժմեան զրութիւնից զուրս դալու: Նա կը վարձադրի նրան առատ ձեռքով, կըրոայ նրան ժառանգութեան մի մասը, քառորդը, մինչև անգամ ամբողջ կէսը, միայն թէ ինքը իւր զլսի տէրը լինի:

Մի քանի վայրկեան տիկնոջ խոստացած կաշառը զբաւեց Բարաթեանին: Եթէ նրա ձեռքը անցնի Բախտամեանի ժառանգութեան տասներորդ մասն անգամ, նա կրկնակի կըհարստանայ: Նա մտատանջութեան մէջ ընկաւ, տատանւեց, եղաւ մի վայրկեան, երբ կամեցաւ խօսք տալ այրիին օգնելու: Բայց նորից չիշեց այն ծանր պատասխանատուութիւնը, որ պէտք է յանձն առնէր, նորից պատկերացաւ նրա առջև դատաստանի սոսկալի պերսպեկտիւը, հասարակական կարծիքի ճնշող ծանրութիւնը, և նա ցնցւեց: Ոչ, ոչ, նա այդ չէ կարող անել, վտանգաւոր է, փոխանակ շահւելու, կարող է կորցնել...

Նա կամացուկ վերկացաւ տեղից և ձեռը հանդարտ մեկնեց տանտիրուհուն, որը, իւր կասպած շրթունքները ամուր սեղմելով, նայեց նրա երեսին և նոյնպէս ոտքի կանգնեց: Այլ ևս այրին կասկած չունէր, որ Բարաթեանը բոլորովին սառել է դէպի նա և անկարելի է նրա մէջ զրգուել նախկին զգացումը: Վայրկենաբար նրա մէջ բորբոքւեց մի ցանկութիւն — փաթաթւել այդ մարդու պարանոցին և խեղդել նրան իւր տարփալից զրկի մէջ: Բայց պաղ-

սիրտ սիրականի անտարբեր հայեացքը բեռեց նրան տեղն ու տեղը: Նա կատաղութիւնից ճանկոտեց իւր երեսը, տեսնելով այդ հայեացքի մէջ մի սարդ զգւանք, որ ծայրացեղ յանդգնութեան և անխղճութեան էր հասնում: Նա չըզիտէր ինչ անէր, ինչպէս պատժէր այդ մարդուն, որպէս զի սա յաւիտեան յիշէ այդ պատիժը և յաւիտեան տանջուէ:

Բարաթեանը նոյն սառնութիւնը երեսին գլուխ տւեց, վերցրեց վերարկուն և դիմեց դէպի դռները: Ան, ուրեմն ո՞չ մի խօսք, ո՞չ մի բացադուրութիւն, ո՞չ մի ներողութիւն: Նա գնում է, և երբէք չը պիտի վերադառնայ: Այրին մի քանի քայլ արեց նրա ետեւից և յանկարծ կանգ առաւ, մտածեց, նորից առաջ գնաց: Նա վազեց միւս սենեակ և, Բարաթեանի ճանապարհը կտրելով, գոչեց.

— Կնոջ...

Այն վայրկեանին, երբ Բարաթեանը նայեց այրիի այլապէս զէմքին, կիսախաւար սենեակի լուրթեան մէջ լուեց մի ամուր սպտակի ձայն:

— Այժմ կորիր...

Բարաթեանը ոչ մի խօսք չ'արտասանեց, ոչ մի ձայն չը հանեց: Միայն բնազդմամբ նայեց շուրջը և զգակը հաղնելով շտապեց դէպի դուրս: Ընդարձակ մարմարեայ սանդխտի վրայ նրա արիւնը խփեց գլխին, երբ իւր աջ աջոյի վրայ զգաց մի տաքութիւն: Միթէ նա այնքան ընկաւ, ստորացաւ... Վերադառնալ արդեօք, պատժի փոխարէնը հատուցանել: Բայց ում Մի յուսախափւած, մի անբաղդ կնոջ, որ կրքերից կուրացած ինքն էլ չիմացաւ ինչ արեց: Ոչ, չը պիտի իզուր տեղը ազմուկ հանել: Կ'անցնի, կըմոռացւի, ինչպէս ամեն բան անցնում է և մոռացւում աշխարհի երեսին...

Եւ իւր յուզմունքը խեղդելու համար նա վառեց մի ծխախոտ, սկսեց արագ արագ ծխել: Նա նստեց առաջին պատահած կառքը և կառապանին հրամայեց քշել հեռու, հեռու, թէկուզ քաղաքից դուրս: Պէտք է մի փոքր զբօսնել, հանդատանալ, ցրել ծանր մտքերը:

Մի ժամ անցած նա մտաւ կլուբ: Նա ձգեց վերարկուն սպասաւորի վրայ, շտապով մօտեցաւ հայելուն իբրև թէ փողկապը ուղղելու համար: Ապտակի ոչ մի միտք, ոչ մի նշան չէ մնացել նրա կլորիկ, մնալի երեսի վրայ: Նա կարող է սպառնով երևալ

մարդկանց մէջ: Նա հանդարտ քաջլերով բարձրացաւ սանդխտով և սովորական քաղցր ժպիտը երեսին բարեկեց իւր ծանօթներին ու բարեկամներին...

XI

Գարնան առաջին օրերը հասնելուն պէս Գիմաքսեանի գըլխում միտք չզացաւ թողնել ամեն ինչ և հեռանալ մի որ և է տեղ: Նա տեսնում էր, որ քանի հասարակութիւնը սկսել է կասկածով նայել նրա վրայ— ոչ մի գործի չէ կարող ձեռնարկել և քանի Կալիանէի պատկերը հալածում է նրան— ոչ մի բանի մասին հանգիստ և լուրջ մտածել չէ կարող:

Մինչդեռ անգործութիւնը դրզում էր նրա նեարդերը և աւելի հիւանդացնում: Մանաւանդ վրդովւում էր նա, մտածելով, թէ որքան անզօր է իւր սրտի մի զգացումը զսպելու խելքի ուժով: Ինչո՞ւ, միթէ նա այնքան սկաւ է, որ չէ կարող բռնանալ իւր հոգու վրայ, կեղծել, ստել և բուն սիրով սողորւած մարդու փոխարէն չարգող բարեկամ ձեւանալ, կամ ոչ այս լինել ոչ այն:

Սկզբում նա մտածեց ուղեորւել Նւրոպա, և այն մաքով, որ այլ ևս այնտեղից չըվերադառնայ: Նա ազատ է, անկախ, մենակ և նիւթապէս ապահով: Կըգնայ մի որ և է քաղաքակիրթ երկիր, կըսկսի պարապել գիտութիւններով և մի ազգի համար աշխատելու փոխարէն— կ'աշխատի ամբողջ մարդկութեան օգտին: Ի՞նչ նախապաշարմունք՝ ծառայել անպատճառ այն հասարակութեան, որին բաղդի բերմամբ պատկանում ես: Չէ որ այդ հասարակութիւնն էլ ամբողջի մի մասնիկն է, չէ որ ամեն մի անհատ նախ իւր ընտանիքի անդամն է, ապա իւր ժողովրդի, ապա մարդկութեան: Եթէ ազգի համար ներելի է մոռանալ ծնողներ, ընտանիք, ինչո՞ւ ներելի չէ մոռանալ և՛ ազգին, այդ փոքրիկ մասնաւորին, խոշոր ընդհանուրի համար: Միթէ մարդը մարդ չէ քնում ամեն մի շրջանում, միթէ մի հողից միւսը տեղափոխւելով զրկւում է իւր արժանաւորութիւններից:

«Կը թողնեմ այս տգէտ, խաւար շրջանը և ինձ համար կընտրեմ մի առողջարար և կենսատու շրջան, ուր կարող եմ ազատ շնչել, գործել և գնահատուել...»

Այսպէս էր մտածում նա սկզբում: Բայց շուտով նրա գլխում ծագեցին ուրիշ մտքեր, որ եկան հերքելու և ոչնչացնելու այդ բոլորը: Նա տեսաւ, որ իւր դատողութիւնները հիմնում է մի տեսակ սոփեատութեան վրայ: Նա զգաց, որ կամենալով փախել մայրենի շրջանից, աշխատում է ոչ միայն իւր փախուստը արդարացնել շաբլոնական գաղափարներով, այլ և նրանից ստեղծել մի ինչ-որ բարոյական սկզբունք:

Չէ որ առաջ հէնց ինքը պնդում էր, թէ առանց մասնաւորի չըկայ ընդհանուր երջանկութիւն: Միթէ ամարդութիւն չի լինիլ թողնել մի անբազդ ժողովուրդ, երես դարձնել նրանից, և ինչու: Այն պատճառով, որ այդ ժողովուրդի դէմքը ազեղ է, այլանդակ, դարերի ընթացքում կրած զրկանքներից աղաւաղամծ: Եւ որ խելացի օտարը գրկաբաց կընդունի իւր հարազատ շրջանից փախած մարդուն, ո՞վ կարդարացնի այն որդուն, որ իւր քաղցած, հիւանդ հօրը երեսի վրայ ձգելով, կըզնայ սպասաւորելու մի հարուստ ազգականի, որ իսկի կարօտ էլ չէ նրա օգնութեանը:

«Աերջապէս, ես ինչ մեծ տառապանք քաշեցի, որ այսպէս վհառում եմ: Միծաղելի չի լինիլ արդեօք ինքս ինձ նահատակ համարեմ այն ժամանակ, երբ իմ գլուխը դեռ շատ և շատ հեռու է փշեաց պսակին արժանանալուց...»

Կապեցին նրա ճանապարհը այստեղ, մի ուրիշ տեղ ճանապարհ կըգտնի: Միայն նեխուած ճահիճն է մնում միւսնոյն փոսի մէջ անշարժ, ընթացող ջուրը միշտ իւր համար ելք է գտնում:

Մինչ այս խորհրդածութիւնները պաշարել էին նրան, դարձեալ Գալիանէի պատկերը չէր հեռանում նրա աչքի առջևից:

Մի օր ճաշից յետոյ նա դուրս եկաւ զբօսնելու: Նա գիմեց դէպի քաղաքից դուրս գտնուող մի բարձրաւանդակ, ուր մի նեղ ուղի տանում էր շրջակայ լեռներից մէկը: Նա դանդաղ քայլերով բարձրանում էր այդ ուղիով դէպի վեր, երբ ետևից լսեց իւր անունը: Նա չետ նայեց և տեսաւ, որ բժիշկ Սալամբէկեանը իւր ամուսնու հետ թե թեխի տւած բարձրանում է նոյն ճանապարհով: Սպասեց և միացաւ նրանց: Հասնելով մի փոքրիկ տափարակի, տիկին Սալամբէկեանը բաց թողեց իւր ամուսնու թեւը և յոգնած նստեց մի մամուլապատ քարի վրայ:

Նրանց աչքի առջև տարածւած էր մի գեղեցիկ տեսարան: Ամբողջ քաղաքը երևում էր ներքևում ինչպէս մի սիրուն պանօրամա, որին մի աւանձին կենդանութիւն էր տալիս դեղնագոյն Քուրի օղակ օղակ ընթացքը:

—Ես այստեղից մեր տունը տեսնում եմ,—ընդհատեց լուծիւնը տիկին Սալամբէկեանը, — ահա մեր պատշգամբը, այն կանանչ կառուրի տակ: Կարող եմ երգել, որ այնտեղ կանգնած է Գայիանէն: Ահա նա շարժեց: Այն միւսն էլ, երևի, Ավսաննան է: Ինչքան խնդրեցի, Գայիանէն չ'ուզեց մեղ հետ զալ: Տխուր է, միշտ տխուր, խեղճ կին...

Վերջին բառերը տիկինը արտասանեց հազիւ լսելի ձայնով և հառաչեց: Գիմաքսեանը հայեացքը յառել էր դէպի հեռու: Նրա մտքերը վայրկենաբար թռան ահա այնտեղ, ուր հազիւ նշմարւում էր Գայիանէի անորոշ կերպարանքը: Նա չըլսեց, երբ բժիշկը առաջարկեց մի փոքր ևս դէպի վեր բարձրանալ: Երբ սթափւեց, բազում քիչ քիչ արդէն բաւական հեռացել էր: Նա շտապեց հանել նրանց և, իւր յուզմունքը թազցնելու համար, սկսեց լսուել առօրեայ բաների մասին:

Մի ժամի չափ նրանք բարձրաւանդակի վրայ այս ու այն կողմ պտտելուց և շրջակայքը դիտելուց յետոյ ցած եկան մի ուրիշ ուղիով: Տիկին Սալամբէկեանը հրաւիրեց Գիմաքսեանին թէլի, բժիշկը թախանձեց, և նա հրաւերը ընդունեց:

Երբ նրանք ներս մտան, Գայիանէն դեռ կանգնած էր պատշգամբի վրայ ձեռին մի հեռադիտակ բռնած: Նա ասաց, թէ հեռուից դիտում էր Սալամբէկեաններին և նկատեց, որ մի երրորդ անձ մօտեցաւ նրանց:

Ավսաննան բժշկին տւեց մի այցետուփ, ասելով թէ կէս ժամ առաջ մի անձանօթ մարդ բերեց:

—Իմ հիւանդներից մէկն է ուղարկել, — ասաց բժիշկը և շտապեց դնալ խնդրելով Գիմաքսեանին, որ նա մնայ մինչև իւր վերադարձը:

Օրը մթնում էր, արևը արդէն մայր էր մտել և նրա վերջին ճառագայթները անդրադառնում էին երկնակամարի վրայ: Բնդարձակ և մաքուր բակում տարածւել էր մեզմ իրիկնային զովը: Ավ-

սաննան, տիկին Սարամբէկեանը, Գայիանէն և Գիմաքսեանը նստած էին պատշգամբի վրայ՝ մի փոքրիկ շրջան կազմած: Գայիանէն պատասխանում էր Գիմաքսեանի հարցերին իւր ուսումնարանի մասին: Նա արդէն թոյլուութիւն էր ստացել և առաջիկայ աշնանը պէտք է դործը սկսէր: Վճուել էր ուսումնարանը բաց անել քաղաքի աղքատ թաղերից մէկում, մի եկեղեցու գաւթում, չքաւոր դասի աղջկերանց համար: Գպրոցի շինութիւնը պատրաստ էր, հարկաւոր էր միայն մի փոքր նրան վերանորոգել: Աւսումը պէտք է աւանդէր ձրի: Ինքը Գայիանէն պէտք է յանձն առնէր ուսուցչուհիներից մէկի պաշտօնը: Նա ասում էր, թէ գիմնագիտութեամբ ուսածից շատ բան մոռացել է և պէտք է ամառուայ ընթացքում պարսպաւի մոռացածները չիշելու համար:

Գիմաքսեանը թէև խօսակցում էր նոյն բանի մասին, բայց միտքը շատ հեռու էր խօսակցութեան նիւթից, և կարելի էր կարծել, որ նա ձանձրանում է:

Տիկին Սարամբէկեանը զնաց իւր գիշերօթիկ սաներին նայելու: Ովսաննան հեռուէց նրան, որ աղախնին հրամայէ սամօվարը զնելու:

Գայիանէն և Գիմաքսեանը մնացին դէմ ու դէմ մենակ: Իսկի մի անկիւնում փայլեց մի զեղնադոյն բան և ծառայի վառած լապտերի շողքերը տարածւեցին կարմիր աղիւսի փոշիով հարթած գետնի վրայ:

Մի ինչ-որ ծանր, բայց ախորժելի զգացում տիրեց Գիմաքսեանի սրտին: Ուրախութիւն էր այդ, թէ թախիժ—նա չըզիտէր: Մերթ նա նայում էր Գայիանէի կիսով չափ լուսաւորւած դէմքին, մերթ դէպի բակը: Երբեմն աջ ձեռով սեղմում էր իւր ճակատը, կարծես, իւր գլխից մի միտք հեռացնելու համար:

Գայիանէն խօսում էր միայն լուռ չը մնալու համար—եղանակի զովութեան, անցած ձմեռուայ ցրտերի, առաջիկայ շոքերի մասին:

Գիմաքսեանը նրա ոչ մի խօսքը անուշադիր չէր թողնում, բայց և՛ ոչ մի խօսքով չէր հետաքրքրում: Նա զգում էր, որ փոքր առ փոքր կորցնում է իւր սաւնութիւնը: Նա ցանկանում էր, շուտով տիկին Սարամբէկեանը կամ Ովսաննան դուրս գաց պատշգամբ, բայց, միևնոյն ժամանակ, ուրախ էր, որ ոչ մէկը դեռ չէ երևում:

Մի վայրկեան նա ուզեց տեղից վերկենալ, հրածեշտ տալ, հեռանալ և, կարծես, փախչել մի նախազգացւող վտանգից: Բայց մի ուրիշ զգացում նրան բռնեռել էր աթոռի վրայ և չէր թողնում տեղից շարժուիլ: Նրա սիրտը սկսեց արագ արագ բաբախել և հազիւ նա կարողանում էր զսպել իրան որպէս զի չարտայայտի այն, ինչոր անյաղթելի ուժով ձգտում էր ինքն իրան արտայայտելու:

Նա նկատեց, որ Վայխանէն ուզում է վերկենալ, կամ գուցէ այսպէս թւաց նրան: Նա ինքը ոտքի կանգնեց, չըզիտէր ինչու համար, և բնազդունով նայեց չորս կողմ: Աչ ոք չըկար, ոչ մի ձայն չէր լսում կամ գոնէ նա ինքը չէր լսում, բացի իւր սրտի բաբախումից, որ քանի զնում այնքան սաստկանում էր:

— Եղանակը ցրտանում է, դուք չէք մրսիլ, — տասց նա և իսկոյն փոշմանեց, որ ասաց, որովհետև ինքն իւր ձայնի մէջ զգաց մի կեղծ, անախորժ հնչիւն:

Վայխանէն պատասխանեց, թէ, այո, եղանակը ցրտացաւ և պէտք է ներս գնալ: Եւ նա կամենում էր ոտքի կանգնել, երբ լսեց.

— Օո, ինչքան դժուար է, ինչքան դժուար...

Այս խօսքերը Ռիմաքսեանը արտասանեց ցածր, հազիւ լսելի ձայնով, կարծես, ակամայ: Բայց և այնպէս նրանք շատ սլարզ, շատ որոշ հասան Վայխանէի ականջին:

Ռիմաքսեանը աչքերը ծածկեց ամօթից և նոյն վայրկեանին իսկոյն գլուխը բարձրացրեց: Նա կրկին նստել էր, այժմ նորից ոտքի կանգնեց, և նրանց աչքերը կիսախաւարի մէջ հանդիպեցին միմեանց:

— Անանեցէք ինձ, ինչպէս կամենում էք, բայց ես այլ ևս չեմ կարող պահել իմ խօսքը... Բարեկամ մնալ... Այ, եթէ ես կարողանայի արտայայտել իմ զգացածը, կըտեսնէիք, որ անհնարին է, դժուար է դիմանալ... Միթէ ամեն բան ձեզ յայտնի չէ, միթէ չէք տեսնում, ինչպէս տանջւում եմ ես...

Աստիճ չըկար, որ Վայխանէն եթէ մինչև այժմ չէր զղացել, այժմ ամեն ինչ հասկացաւ: Աւելի ոչինչ չը կարողացաւ արտասանել Ռիմաքսեանը: Ներսից, կարծես, մի բան խեղդում էր նրա կոկորդը: Իսկ Վայխանէն, որ ուզում էր զնալ, դեռ անշարժ կանգ-

նա՞ծ էր նրա առջև: Նայելով չորս կողմ, նա շփոթեա՞ծ արտա-
սանեց.

—Ի՞նչ պատահեց ձեզ... Ես չէի սպասում ձեզանից այդչափ
թուլութիւն: Յարգեցէք ձեզ... ուշքի եկէք...

Նա սկսեց դողալ ինքն էլ չը գիտէր ինչու.—երկիւղից, ամօ-
թից, թէ մի ուրիշ աւելի զօրաւոր զգացումից: Երբ նա տեսաւ,
որ Վիմաքսեանը լուռ է, կարծեց, թէ նա ուզում է բացադրել իւր
սիրտը աւելի պարզ: Այժմ նա չըզգիտէր ինչ անել, գնա՞լ, թէ
մնա՞լ: Նա զգում էր միայն, որ իւր գնալը պէտք է չաւիտեան վի-
րաւորէ Վիմաքսեանին, այն մարդուն, որի ազնուութեան մասին
բոպէ անդամ չէր կասկածել, չէր կասկածում և՛ այժմ, այդ վայր-
կեանին:

Վիմաքսեանը մի քայլ յետ կանգնեց, իւր սրտում զգալով մի
սուր ցաւ: Այն լուռ տեսարանը, որ տեղի ունէր, աւելի քան պերճա-
խօս կերպով պարզեց նրա համար ամեն բան: Նա տեսնում էր իւր
և Պայլիանէի մէջ մի հսկայական պատնէշ, որի առջև ինքը տկար էր,
անգոր բոլոր իւր բուռն զգացումներով հանդերձ: Այդ կինը սար-
սափում է և ամաչում իւր գրութիւնից: Յանդգնե՞լ արդեօք աւելի
առաջ գնալու, թէ կանգ առնել և ամեն բան վերջացած համարել:

Եւ մինչ նա այս տատանման մէջ էր, տեսաւ, որ Պայլիանէն
հանդարտ քայլերով հեռանում է: Հետեւէլ նրան, ներողութիւն
խնդրել, բացադրե՞լ, որ մոլորեց, կուրացաւ, չըզգիտի անէր: Ո՛չ,
ինչո՞ւ կեղծել և ստել, ինչո՞ւ խաբել և մի ուրիշ, աւելի վատ,
սխալ գործել: Վերջապէս, արդէն ուշ է, ահա Պայլիանէն գնաց,
մտաւ իւր սենեակը և դռները ետեւից ծածկեց...

Նա զոզում էր ոտից մինչև գլուխ Խելքը սլափուած, շշլը-
լած, նա կանգնած էր, գլուխը երկու ձեռներով ամուր բռնած,
այնքան ամուր, որ կարծես վախենում էր, թէ նա կարող է ան-
ջատուել ուսերից և թաւալուել պատշգամբի վրայ: Նա մէջքը յենեց
վանդակապատին: Ներսից ոչ մի ձայն չէր լսում: Ապծակի պէս
մի բան փայլեց, յետոյ լուսամուտների մթին աղակիները ղեղնեցին:
Կա տիկին Սալամբէկեանը կանթեղ է վառում սեղանատանը: Ան-
շուշա նա խկոյն դուրս կըզայ հիւրին թէյի հրաւիրելու: Երևա՞լ
արդեօք նրա աչքին:—Ո՛չ, անկարելի է, պէտք է հեռանալ, առանց

նրան տեսնելու, թող այդ լինի անբաղաքավարութիւն, փոլթ չէ, բաց պէտք է հեռանալ...

Վերջացաւ ամեն ինչ, ուրեմն այլ ևս յոյս չըկաց: Ինքն իւր աչքում ընկճեալ, դրեթէ ոչնչացած, նա կառքի մի անկիւնում սեղմւել էր այնպէս, որ ոչ ոքին չերևայ: Չը նայելով երեկոցեան բաւական թանձր մթանը, նրան թւում էր, որ չորս կողմից ինքը լուսաւորւած է պայծառ էլէքտրական լուսով և ամենքը տեսնում են նրան: Անաջողութիւնը դրոշմւած է նրա կերպարանքին, բոլոր անցորդները տեսնում են այդ, խղճում են ու ծաղրում նրան:

XII

Մի քանի րոպէ նա լուռ անցուդարձ էր անում իւր մթին սենեակում: Ներս մտաւ Սիրականը և, վառ կանթեղը դնելով սեղանի վրայ, մի քանի քայլ յետ քսչեց և սկսեց դիտել նրան: Նա իսկոյն հասկացաւ, որ էլի մի բան է պատահել իւր պարոնին: Կիմաքսեանը հրամայեց նրան դուրս գնալ, նա ուզում էր մենակ մնալ: Փառան անցաւ նախասենեակ և դարձեալ կանգնեց դռների ետևում, որ տեսնէ, ինչ պէտք է անի իւր պարոնը:

Կիմաքսեանը թուլացած ընկզմեց աթոռի վրայ, երեսը ձեռներով ծածկեց, գլուխը դրեց սեղանին: Նրա սիրտը լցել էր, նա ուզում էր լաց լինել, այն, հեկեկալ ինչպէս մի երեխայ: Բաց նա ճիգն արեց իւր դասն հեկեկանքը զսպելու, և զսպեց: Արտասուքը չէ կարող թեթեւացնել նրա սիրտը: Նա զգում է իրան կեանքից անջատւած, մի դատարկ տարածութեան մէջ, անյեն, անմտիթար: Նրա շուրջը սիրում է մեռցնող ցրտութիւն, և չը կայ մէկը, որ փարատէ այդ ցրտութիւնը:

Նա չիշեց Մսերեանին, նրա անկեղծ ընկերական համակրութիւնը: Շատ անգամ է այդ մարդը մտիթարել նրան և պահպանել հոգեկան դառնութիւնների ժամանակ իւր խրախուսիչ խօսքերով: Այժմ նա էլ չէ կարող օգնել: Հարկաւոր է աւելի ջերմ, աւելի քնքոյշ սիրտ, ոչ միայն մտիթարելու, այլ և նրա հետ դառնանալու, նրա վշտին վշտակից լինելու համար:

Որտեղ զանեւ մի այդպիսի սիրտ: Ախ, հրքան նա այդ ժամին կրկամենար իւր մօտ տեսնել այն միակ էակին, որին ոչ

ոք չէ կարող փոխարինել, ոչ ընկեր, ոչ բարեկամ, որի սերը որքան անկաշառ է, այնքան անսպառելի է, անհուն և ջերմ: Նա իւր որդու դէմքի մի թեթեւ արտայայտութիւնից, կրճ.քից դուրս եկած մի թոյլ հառաչանքից կը հասկանար նրա բոլոր ցաւերը: Իւր մայրական վշտակցութեամբ կը պահպանէր նրա յուսահատ հոգու մէջ կենսական ջերմութիւն: Նա կ'ասէր. «Ապրի՛ր առանց սիրւելու, որովհետեւ այդ հնարաւոր է և ես սպրեցի ոչ միայն չը սիրւած, այլ և ամբողջ կեանքիս ընթացքում տանջւելով»: Ա'սէր. «Մի սպասիր կնոջ կողմից սէր, որովհետեւ եթէ աշխարհի երեսին կայ իսկական սէր— դա մայրական սէրն է և միայն մայրը կարող է անկեղծ սիրել իւր զաւակին, ուրիշ ոչ ոք, ոչ ոք...»:

«Ես չիշում եմ, նա ինչպէս փայփայում էր ինձ և ինչ նուրբ զգացողութեամբ էր արտայայտում իւր սէրը, երբ ես մի թեթեւ դառնութիւն էի ունենում: Ահա քո դակահար դէմքը, որի վրայ պարզ նկարւած են քո սրտի բոլոր ելևէջները: Տեսնում եմ քեզ, տեսնում եմ, զլուխդ ուսիդ ծած մտիկ ես անում որդուդ, ուզում ես զուշակել իմ միտքը: Ի՛նչ, միթէ դու անցիմ էլ զգում ես չափսենականութեան մէջ... Յնճրք, ցնորք...»:

Եւ Գիմաքսեանի հայեացքը կենտրոնացել էր անորոշ տարածութեան մէջ, և այդ բույսին կենդանացել էին նրա աչքի առջև ամբողջ մանկութիւնը ու պատանեկութիւնը, և այդ հեռու, վաղուց մոռացւած անցեալի մէջ նշմարում էր իւր մօր պատուները:

Նրա աչքերը պղտորեցին և գրեթէ ոչինչ չէր տեսնում, բացի այդ պատկերից, որ նրա աչքի առջև կենդանացել էր զըրզըրւած երևակայութեան զօրութեամբ: Նա զգաց իւր ուղեղի մէջ մի տարօրինակ ցաւ: Նա բռնեց երկու ձեռներով զլուխը և մօտեցաւ անկողնակալին: Աջտեղ նրա մտքով անցաւ մի դէպք, որ վաղուց կարգացել էր եւրոպական լրագիրներում: Շէշցարիայի մի քաղաքում կեանքից ձանձրացած մի մարդ վճռել էր ինքնասպանութիւն գործել: Երեք անգամ նա փորձել էր վերջ տալ իւր կեանքին, և ամեն անգամ փորձը անյաջող էր անցել: Երկու անգամ նա ատրճանակ էր արձակել և միայն թեթեւ վէրք էր ստացել: Նա ձգել էր իրան մի լճի մէջ— նաւավարները ազատել

էին: Վերջապէս, նա փակեւել էր իւր սենեակում, դռները կողպել էր և թոցն ընդունել:

«Ո՛չ, ես այդպէս չեմ անիր»,—ասաց նա, ձեռը մեկնեց բարձի տակ և այնտեղից հանեց մի փոքրիկ, պսպղուն և ծանր առարկայ:

Նրա դէմքի կնճիռները բացւեցին: Անա որտեղ է նրա փրկութիւնը, ահա ինչու գրկաբաց սպասում է նրան իւր մայրը: Աներկիրւղ ձեռի մի յաջող հարւած, և նա անցնելով Ռուբիկոնը, կը հասնի անդադացութեան աշխարհը, ուր չը կայ ոչ տանջանք, ոչ երջանկութեան փափագ, ոչ նախանձ, ոչ փառասիրութիւն, ոչ ինչ, ոչ ինչ... Ինչո՞ւ երկար մտածել, միթէ ամենքի վերջը անցէ չէ, սկսած Նապոլէոն մեծից մինչև ամենայնտիւն անբաղդը: Տանջւել, հալածւել, չարչարւել և ինչո՞ւ, միմիայն մի անուն թողնելու համար: Զէ որ այդ անունը որքան բարձր հնչի, որքան հմայիչ լինի ամբոխի համար, դարձեալ վերջը պէտք է մոռացւի:

Նա մտոր քայլերով անցուդարձ էր անում, բռունցքի մէջ աւելի ու աւելի ամուր սեղմելով փոքրիկ զէնքի կոթը: Մի վճռական շարժում անելով, նա նստեց սեղանի մօտ, վերցրեց գրիչը: Հարկաւոր է վերջին քաղաքացիական մի պարտք կատարել—գրել մի քանի տող, որ ոչ ոք կասկածի տակ չընկնի: Բայց առաջին բառը չը գրած, նա յանկարծ ցնցւեց ամբողջ մարմնով, դողաց, գրիչը ընկաւ նրա ձեռից և մարմնով անցաւ մի տարօրինակ սառնութիւն: Միթէ նա վախեցաւ, միթէ այնքան թուլասիրտ է, երկչու: Նա դարձեալ վերցրեց գրիչը: Մարմնի սառնութիւնը անցաւ ուղեղին և վայրկենաբար փարատեց այնտեղ տիրած խաւարը: Նա աչքերը ծածկեց ձեռներով, և երևակայութիւնը դարձեալ պատկերացրեց իւր մօր հեղ կերպարանքը: Այժմ դա մի լուսաւոր կէտ էր, որ քաշում էր նրան դէպի ինքը, աշխատելով դուրս բերել նրան սոսկալի խաւարից, հեռացնել իւր ոտների տակ բացւած անբնդից:

Մայր, մայր, դու դժգոհ ես քո որդուց, որ այսպէս չուսահատու՞մէ, դու չես կանչում նրան քեզ մօտ, այլ խրախուսումես այնտեղից, դու կանխի՞ծես նրան, եթէ իւր վրայ ձեռք բարձրացնի: Իսկ քոյրերը, ինչո՞ւ այդպէս անգութ վարւի նրանց հետ, ինչու ձգի նրանց անվերջ վշտի մէջ... Ի՛նչ անմտութիւն, ի՛նչ երեխայու-

թիւն: Ինչո՞ւ համար մեռնել: Որ թշնամիները ուրախանան և աւելի ծաղրեն նրան, որ բարեկամները համոզւե՞ն, վերջապէս, թէ նա իրաւ խելագար էր...»

Նա ատրճանակը ձեռով հրեց սեղանի մի անկիւնը և նորից օտքի կանգնեց միանգամայն փոխւած, վերակենդանացած: Նրան թւաց, որ մեռած էր, այժմ կեանք ստացաւ, որ նրա առջև յանկարծակի բացւել էր մի մթին դերեզման և նոյնպէս յանկարծակի ծածկւեց:

Մի ձեռք զգուշութեամբ սեղանի վրայից վերցրեց ատրճանակը: Նա նայեց և տեսաւ Սիրականին, որ կէս երկիւղած և կէս կասկածալի դէմքով կանգնած էր նրա առջև:

— Դու ի՞նչ գործ ունես այստեղ:

Սիրականը ատրճանակը թազցրեց իւր գրպանում և լուռ մտիկ տւեց նրա երեսին:

— Ի՞նչ ես ուզում ինձանից, — կրկնեց Դիմաքսեանը, — ինչո՞ւ մտար այստեղ: Դու ինձ հարկաւոր չես, թո՛ղ ինձ հանգիստ, գնա՛...

— Մի աղաչանք ունեմ, — խօսեց ծառան անվստահ ձայնով:

Նրա նշածև աչքը փակւեց, իսկ կոլորակը մնաց անշարժ: Դա նշան էր, որ նա մտադիր էր երկար խօսելու:

— Ասա տեսնեմ, ինչ է աղաչանքդ, — ասաց Դիմաքսեանը, նստելով սեղանի մօտ:

— Աղա ջան, մայրս մեր գիւղում հէքիմ էր, անւանի հէքիմ: Տարին տասներկու ամիս նա աղօթք էր անում, պաս էր պահում, շաբաթներով էլ ծոմ էր մնում, չունքի, օրհնեալ եղիցի կամք Աստուծոյ, լնկաւոր էր... Բոլոր սրբերի անունով ջոկ-ջոկ աղօթքներ ունէր: Մեղաց Քեզ, մեղաց Քեզ, չարը պատահելիս, տեսնում էիր ընկաւ, բերանը փրփրեց, աչքերը բացւեցին, սկսեց Սաթայէլի հետ կռիւ անել: Այդ ժամանակ սուրբերը սկսում էին նրա բերանով խօսել... Մի անգամ, ժամաժամքին, մութը նոր ընկնելիս, լուսահողին թոնրատան առաջ բռնեց, ընկաւ երեսը գէսի աղօթարան: Ես տասը տարեկան էի, աչքովս տեսայ: Նա բերանը բաց արեց, ասաց. «Աղօթք արէք, տեսնում եմ քամբաղւոլթիւն է գալիս, աղօթք արէք, ոչխար մորթեցէք, մոմ վառեցէք...» Չորս օր անցած, աղօթարանից բարձրացաւ մի քամի, անձ-

րև բռնեց: Սկսեց մի կարկուտ, Տէր, Դու ցոյց չը տաս, հասը հաւի ձըւի չափ: Տասնուչորս գիւղերի հասած հունձքը կտարեց, նստացրեց, փշացրեց, սով ընկաւ...

Դիմաքսեանը ակամայ հետաքրքրել էր այս պատմութիւնով և լսում էր ծառային, առանց ընդհատելու նրա խօսքը: Նա գիտէր, որ Սիրականը անշուշտ մի նպատակով է այդ պատմում, և հէնց այդ նպատակը իմանալու համար նա համբերութեամբ ականջ էր դնում նրան:

—Շինականները մօրս պաշտում էին, չունքի լուսահոգին սուրբ Գէորգի «ղուէն» էր: Սուրբը նրա ձախ ոտի և աջ ձեռի վրայ մօր արգանդում նշաններ էր դրել, մէկը տերևի նման, միւսը թռչունի պէս: Սուրբի գերեզմանի հողը պահում էր մեր թոնրատանը, գիշեր-ցերեկ նրա առաջ մօմ էր վառում... Քանի քանի հիւանդներ է փրկել, որին աչքացաւից, որին գլխացաւից, որին ոսկրացաւից, որին էլ ետրա-փարաներից: Աղա, ես էլ ընկաւոր եմ:

—Դո՛ւ, — հարցրեց Դիմաքսեանը զարմացած և ցաւակցաբար:

—Վայ ինձ, վայ ինձ, ես սուրբի «ղուէլ» չեմ, ես մարգարէութիւն չեմ անում, բայց ընկաւոր եմ: Հէնց որ առաջին փորձանքը գլխիս հասաւ, մայրս անից տուն ման եկաւ, կոպէկ-կոպէկ փող հաւաքեց, շորեր հաւաքեց, սուեց ինձ ու ասաց. «Գնան, Սիրական, գնա, բոլոր սրբերին ուխտ արա, գերեզմանների հողը լգիր, եթէ մէկը չըփրկի, միւսը կըփրկի...» Գնացի, աղա ջան, քսան տարեկան էի, գնացի, երկու տարի ոտով թափառեցի Գենջա, Ղարաբաղ, Պարսկաստան, Տաճկաստան, որտեղ որ հայ քրիստոնէի սուրբ կայ, գերեզմանին երկրպագութիւն տւեցի...

—Լաւացար:

—Լաւացել էի, մեռնեմ նրանց սուրբ աջին, բայց յետոյ մեղքերս երևի էլի շատացան, էլի «չարը» մտաւ հոգիս: Այժմ տարէնը մէկ կամ երկու անգամ փորձում է: Սրանից երեք ամիս առաջ Սալդատակից բնագորում ընկայ, Գարադաւօյը բերեց տուն: Կիսոսները զրպանիցս տասը մանէթ էին հանել...

Դիմաքսեանը անկեղծ ցաւակցեց Սիրականին, որի անբուժելի հիւանդութեան մասին առաջին անգամն էր լսում:

—Լնւ, Սիրական, —ասաց նա բարեկամաբար, —այժմ ինչ ես ուզում ինձանից:

—Աղաչանք ունեմ, մեծ աղաչանք, — պատասխանեց Սիրականը այժմ աւելի փտտահացած: —Աղա, դու ինձ լաւութիւն շատ ես արել, էհ, ես ինչով կարող եմ պարաքս վճարել: Ես էլ ուզում եմ քեզ տալ ինչ որ ունեմ...

Նա ձեռը տարաւ ծոցը և այնտեղից հանեց մի բան:

—Այս պատիկ կապոցը մօրս թանգագին կտակն է, տալիս եմ քեզ, աղա, իմ խաթրու վզիցդ քաշ տուր:

Նա ջերմեռանդօրէն համբուրեց ձեռի բանը: Ուս կապտագոյն լաթի կտորից կարած մի եռանկիւնի կապոց էր լուցկիի տուփից քիչ փոքր:

—Այդ ինչ է:

—Սուրբ Գեորգի մարմնի փոշին է, չարը խափանելու համար, շատ թանգ բան է...

Գիմաքսեանը այժմ միայն հասկացաւ, թէ ծառան ինչից դրդւած այդ երկար պատմութիւնն արեց և ինչ նպատակով է այդ բանը իրան աւաջարկում: Գլուխը ներողամտաբար շարժելով, նա բարեկամական չանդիմանութեամբ ասաց.

—Դու էլ, Սիրական, դու էլ ուրիշների պէս հաւատացած ես, որ ես խելագարել եմ:

Սիրականը ամաչելով գլուխը թեքեց կրծքին: Պարզ էր, որ նա հաւատում էր տարածւած լուրին: Հեռաքրքրական էր Գիմաքսեանի համար իմանալ ինչ փաստերի հիման վրայ է այդ մարդը նրան խելագար համարում:

—Ասա ինձ, Սիրական, տես՛իլ ես ինձ գժութիւն անելիս:

Սիրականը աշխատեց խոց տալ ուղիղ պատասխանից: Բայց երբ Գիմաքսեանը ստիպեց, նրա շրթունքները սեղմեցին, շիւ աչքերի մէջ երևաց մի խորին ցաւակցութեան արտայայտութիւն: Նա պատմեց մի քանի բաներ, որ նկատել էր Գիմաքսեանի կողմից և որ երբեմն վախեցրել էին նրան: Օրինակ, մենակ ժամանակ նա ինքն իւր հետ շատ անգամ խօսում է, զանազան շարժումներ է անում...

—Բայց ես խօսմ ընկաւոր չեմ:

—Ձէ, աղա, Ասուած ոչ անի, որ այդ փորձանքին հասնես, դա ուրիշ բան է, բայց...

Նա չը կամեցաւ շարունակել, տատանեց:

—Ասա, ասա, էլ ինչ ես տեսել:

Ծառան զգուշութեամբ ակնարկեց այն շարագուշակ գիշերւայ դէպքը, երբ Ռիմաքսեանը սաստիկ տենդի մէջ էր: Բոլորը, ինչ որ նա արել էր այդ գիշեր և խօսել, Սիրականը չիշում էր: Այն ինչ՝ ինքը ոչինչ չէր մտաբերում, բացի նրանից, որ մահամերձ հիւանդ էր եղել: Առողջանալուց յետոյ նա մի անգամ հարցրել էր հայելու մասին, Ստերեանը պատասխանել էր, թէ ինքն է անզգուշութեամբ կոտորել, և նա հաւատացել էր:

—Եւ դու այժմ ուզում ես ինձ չարից փրկել, — գոչեց Ռիմաքսեանը ոչ այնքան բարկացած որքան կատակով:

—Աղաչում եմ, որ այս բանը վզիդ քաշ տաս...

—Գիտես ինչ, Սիրական, դու ինձ բաւական զբաղեցրիր, ևս տխուր էի, շատ տխուր, մտքերս ցրեցին, շնորհակալեմ: Գուբարի մարդ ես, Սիրական, անկեղծ ես, իսկ ես անկեղծ մարդկանց սիրում եմ: Բայց այդ կապոցը, չը նեղանաս ինձանից, ես վզիս քաշ տալ չեմ կարող...

Նա ձեռով մի դրական շարժում արեց, որ ցոյց էր տալիս, թէ այլ ևս չէ ուզում խօսել:

Սիրականը, լաթի կտորը ծոցը դնելով, դուրս եկաւ սենեակից:

Մի դառն և կծու ծիղաղ դուրս թռաւ Ռիմաքսեանի կրծքից և նա արտասանեց.

«Ողորմելի ամբոխ, թշւան ամբոխ, քանի որ մենք քեզ չենք ուզում կրթել, դու ինքդ ես ուզում մեզ կրթել...»

XIII

Գրեթէ ամբողջ գիշեր Գայիանէն չըկարողացաւ քնել պատահած անցքի տպաւորութեանը ենթարկւած: Նրա ականջին շարունակ հնչում էր Ռիմաքսեանի յուսահատ ձայնը. «Միթէ չէք տեսնում, թէ ինչպէս տանջում եմ ես...»

Նա վիրաւորւած չէր, այլ վշտացած: Նա չէր մեղադրում Ռիմաքսեանին և ոչ էլ վրդովւած էր նրա դէմ: Ի՛նչպէս կարող էր

իրան զսպել, քանի որ սիրում է, խել թէ սիրում է—միթէ՞ այդ վաղուց յայտնի չէր Քայիանէին: Բայց ինչու նա այնքան յուսահատուած էր և հէնց առաջին խօսքը արտասանեց յուսահատ ձայնով:

«Միթէ նա բոլորովին համոզուած էր, որ իւր սէրը ուրիշ ոչ մի արձագանք չէ գտնում իմ սրտում, բացի բարեկամական զղացմունքից: Վերջապէս, ես ինքս կարող եմ հաստատ ասել, թէ այդ մարդուն միայն յարգում եմ: Սթէ այդպէս լինէր, միթէ չէի աշխատիլ ժամանակին նրան ինձանից հեռացնել: Իսկ ես ի՞նչ արեցի, ի՞նչ արեցի. ոչ մի անգամ նրան չըզգուշացրի, ոչ մի անգամ... Այժմ ես ի՞նչ իրաւունքով նրանից վիրաւորեմ: Տէր Ասուած, Տէր Ասուած, զլուսս պատում է, չըզհիտեմ ինչ մտածել... Ի հարկէ, նա այժմ համոզուած է, որ ես նրան ատում եմ: Բայց այդպէս չէ, ոչ, այդպէս չէ: Ուրեմն ի՞նչ է... Միթէ վախեցայ հասարակական կարծիքից: Սխալ է, այդ չէ... Ես կամենում եմ իմ խղճի առաջ արդար լինել: Այն, ճիշդ դա է: Սթէ ես այդ մարդուն առաջ սիրէի և յետոյ բաժանէի իմ ամուսնուց, այն ժամանակ շատ կարելի է այդպէս չը վարէի նրա հետ: Բայց այդ մարդը իմ ուշադրութիւնը գրաւեց յետոյ, երբ ես ատում էի Բարաթեանին: Ես այն ժամանակ համեմատեցի երկուսին, երբ համեմատելը անկարելի էր: Այն ժամանակ ճանաչեցի մէկի արժանաւորութիւնները, երբ միւսի բարոյական լինելը ինձ համար բոլորովին պարզեց...»:

Ի՞նչ կը լինէր, եթէ նա կուրացած սիրէր Ռիմաքսեանին, եթէ արհամարհելով ամեն ինչ, գնար նրա ետեւից: Միթէ դա կը լինէր սէր և ոչ վրէժխնդրութիւն: Եւ ումից պէտք է վրէժը հանէր: Բարաթեանից: Սո, այդ մարդը վիրաւորելու փոխարէն կըծիծաղէր, կը զւարճանար: Նա ինքը իւր վրէժը լուծուած կը համարէր, տեսնելով իւր կնոջը իւր թշնամու հետ միացած: Նա այդ փաստը իւր ձեռքում զէնք կը դարձնէր նրա դէմ, կը պարծենար հասարակութեան առջև և ամենքին ցոյց տալով, կ'ասէր. «Ահա, տեսէք, կինս բաժանեց ինձանից ոչ թէ այն պատճառով, որ ես անբարոյական էի, այլ որովհետև նա ինքը չուզեց բարոյական ամուսին մնալ...»:

Եւ որքան Քայիանէն այսպէս մտածում էր, այնքան աւելի համոզուում էր, որ ուրիշ կերպ չէր կարող վարուել: Միակ իւր սխալը

Նա համարում էր այն, որ չուզեց կամ չը կարողացաւ ժամանակին Ղիմաքսեանի սէրը զսպել իւր սառնութիւնով: Միւս կողմից մի միտք նրան սաստիկ մտառանջութիւն էր պատճառում. կը զիմանայ արդեօք Ղիմաքսեանը այդ վշտին, թէ մի փորձանք կը բերի իւր գլխին:

Մերթ նա կարծում էր, թէ չէ կարող զիմանալ և մերթ մտածում էր, թէ պէտք է զիմանայ, քանի որ խելօք է, մտածող: Նա ինքը ինքնասէր է, հպարտ է—պէտք է իւր սիրածի ինքնասիրութիւնն ու հպարտութիւնն էլ ինչպիսի նա պատւախնդիր է և ազատասէր—պէտք է ուրիշներէն էլ նոյնը պահանջի: Եթէ նա սիրում է բարձր սիրով և ոչ լոկ իւր եսի խորութիւնից—անշուշտ կը հասկանայ իւր սիրածի վիճակը:

«Ի՛նչ, միթէ նա չի չարգիլ իմ մայրական զգացումները, միթէ չի մտածիլ, որ եթէ ես չը մերժէի—պէտք է զրկէի երեխաներից: Զրկել երեխաներից: Աչ, ոչ, այդ ես չեմ կարող անել, երբէք, ես առանց նրանց չեմ կարող ապրել...»:

Արմենիները պատշգամբի վանդակապատին յենած՝ նա կանգնած էր ուղիղ այնտեղ, ուր երեք օր առաջ Ղիմաքսեանը արտայայտեց իւր սրտի զգացումը: Նա նայում էր ցած, դէպի գաւիթ, ուր խաղում էր չորսից մինչև տասը տարեկան մանուկների և աղջիկների մի մեծ խումբ: Օդի բիւրեղեաց յտապութիւնը, ծիծեռնակների ծղվողը և երեխաների պայծառ, մետաղահնչիւն ձայները կարօտ մօր սիրտը լեցնում էին ճնշող զգացումներով: Ինչն նրա փոքրիկները չը կան այդ զւարթ խմբի մէջ:

Եօթ օր էր անցել նրանցից բաժանելուց, դառն և տաղուկալի օրեր, որ եօթ ամուսայ չափ երկար էին տևել: Ար տեսնւի արդեօք նրանց հետ դարձեալ, թէ այդ վերջին անդամն էր: Մի վայրկեան նա մտածեց՝ արդեօք աւելի լաւ չէր լինիլ եթէ նա իւր ծանր խաչը կրէր զաւակների սիրոյ և նրանց հետ ապրելու համար: Բայց հէնց նոյն վայրկեանին նա յիշեց անցկացրած տարիները, և կրկին նրա աչքի առջև պատկերացաւ խաբւած, անարդուած և պատւի զոհ դարձած ծերունին: Եւ նա աւելի սաստիկ նողկանք զգաց դէպի իւր անցեալը: Երբէք նա չը պիտի փոշմանի իւր արած քայլի մասին: Թող մարդիկ դատապարտեն, բայց նա իւր

խղճի առջև արդար է: Թող զաւակների կարօտը ցեցի պէս ուտի նրա սիրտը, մեռցնի, բայց չէր կարող ապրել այն մարդու հետ:

Նա երեսը չեռ դարձրեց գաւթից և աչքերը դադատուկ սրբեց: Նա չէր ուզում, որ իւր արտասուքը նկատեն աիկին Սալամբէկեանը և Ովսաննան, որ այդ միջոցին ներքեւում ղեկավարում էին փոքրիկ սաների խաղերը: Իսկ մանկական ձայները քանի դնում, այնքան աւելի զւարթ էին հնչում, իսկ դարնանային օղը քանի դնում, այնքան աւելի տաքանում էր և ապրելու, երջանիկ ապրելու ցանկութիւնը բորբոքում մարդու սրտում:

Տիկին Սալամբէկեանը վերջացրեց իւր պարապմունքը սաների հետ, բարձրացաւ վերև, մօտեցաւ Գայիանէին, բռնեց նրա թւից և տարաւ սեղանատուն: Նա դեռ տեղեկութիւն չունէր վերջին դէպքի մասին: Տեսնելով Գայիանէի կարմրած աչքերը, նա սկսեց ընկերաբար ջանդիմանել.

— Եթէ դու այդպէս շարունակես, կարճ ժամանակում կեանքդ բոլորովին կը մաշես: Չը պէտք է լինէր, բայց որ պատահեց, մի թէ ինքդ քեզ պիտի սպանես: Դու ոչ առաջինն ես, սիրելիս, ոչ էլ վերջինը կը լինես, քեզ նման շատերը կան...

— Մի թէ դու կարծում ես, որ ես իմ արածի մասին փոշմանել եմ:

— Երբէք չեմ կարծում: Դու միայն երեխաներիդ մասին ես հոգս անում: Բայց քեզ խօսմ նրանցից չեն զրկում, դու էլի խօսմ տեսնում ես նրանց հետ:

Այրի Բօլումբաշեանը սեղանատանը, պատրաստ սեղանի մօտ նստած, նախանձելի ախորժակով ոչնչացնում էր իւրապատասանները: Միւս սենեակից հիւանդի ծանր անքունքոցի ձայն էր լսում: Դա աիկին Սալամբէկեանի տասն էր, որ մեռնում էր մեռնում և դեռ կենդանի էր, տանջելով իւր շրջապատողներին և չղկամենալով կեանքից բաժանել:

Այրին Գայիանէին նստեցրեց իւր մօտ և նոցնպէս ջանդիմանեց: Նրա ասելով Գայիանէն այժմ աւելի բաղդաւոր է քան առաջ: Այդ ամուսին ասած արարածները իրանց կանանց վերաբերմամբ սահասարակ շատ դարշելի են, իսկի չ'արժէ նրանց վրայ ուշադրութիւն դարձնել:

— Խելօք կնիկը նա է, ով որ իւր մարդու մէկ արածի տեղ երկուսն է անում նրան խելքի բերելու համար: Հաւատան, հոգիս, մարդը այն կնիկն է սիրում, որը նրա գլխատակին փափուկ բարձ է դնում, քնացնում ու յետոյ ինքն իւր ուզածն անում: Ինչքան քիչ մտածես, այնքան բաղդաւոր կը լինես: Ականջներդ փակիր ու քէփդ տւածի պէս պար եկ, այն ժամանակ կ'ասեմ «այրես»: Երեխաները, իհ, նրանց մասին էլ չ'արժէ մտածել, տեսնում ես ինձ, շատ ուրախ եմ, որ երեխաներ չունեմ, գլուխս ցաւերից ազատ է: Այրիք, քէփ արա ինձ նման... Տեսնում ես, մարդիկ շատ բաներ են ասում իմ մասին, թող հաչկն, ինչքան ուզում են, շատ հարկաւորս է...

Այս ասելով, նա շտապով վերկացաւ, պահարանի վրայից վերցրեց Ֆիսգարմենիան և սկսեց նւագել ու յետոյ երգել մի ինչ-որ վրացական երգ: Միւս սենեակում հիւանդ պառաււի տնքանքոցը սաստկացաւ: Բայց այդին մինչև չը վերջացրեց իւր երգը, չը լռեց: Յետոյ նա անցաւ իւր սենեակը, շուտով զուգւեց և շտապով դուրս եկաւ անից:

Տիկին Սալամբէկեանը ամբողջ օրը զբաղւած էր իւր պարտիզով և իւր սաների համար հոգում էր ինչպէս հարազատ մացր: Սիրով հետևում էր նրանց յառաջադիմութեանը, ուսումնասիրում էր ամեն մէկին, վաղօրօք գուշակութիւններ էր անում, թէ այս կամ այն երեխայից ապագայում ինչ դուրս կը գայ: Ամեն օր, դասերը աւարտելուց յետոյ, ոգևորւած պատմում էր իւր «սիրելի գազանիկներին» մասին:

«Ձը գիտես ինչ երջանկութիւն է այդ անմեղ արարածների շրջանում լինելը: Մարդ ինքն էլ երեխայ է դառնում նրանց հետ: Մինչև մահ չը պիտի թողնեմ այդ շրջանը...»

Նւ նրա զուարթ դէմքը, հոգեկան եռանդուն տրամադրութիւնը ակամայ շարժում էին Գայիանէի նախանձը: Որքան կեանքը ժպտում էր իւր արժանաւոր ընկերուհուն և ինչպէս նա բաղդաւոր էր ամուսնութեան մէջ:

Մի ժամանակաւ ծոյլ-պեսսիմիստ բժիշկ Սալամբէկեանը այժմ, կարծես, բոլորովին իւր հայեացքը փոխել էր կեանքի մասին: Հիւանդներին ընդունելուց և այցելելուց յետոյ, նա իւր ամբողջ ժամանակը նւիրում էր անային պարապմունքներին: Նա օրի-

նակելի ամուսին էր և հոգատար, մինչև անգամ մանրակրկիտ տանտէր: Մի րուպէ հանգիստ չէր նստում իւր տեղը, միշտ զբաղւած մանր-մունր գործերով: Հոգեկան փոփոխութիւնը ազդել էր և՛ նրա մարմնի վրայ: Այժմ նա դէմքով առողջ էր, զւարթ, մինչև անգամ աչքի ընկնելու չափ չաղացել էր:

Երբեմն նա այցելում էր Ռիմաքսեանին և շատ ցաւում էր, որ իւր ընկերը ենթարկւած է ընդհանուր հալածանքի: Բացարձակ չէր ասում, բայց մտքում սկսել էր մի փոքր քննադատել իր ընկերոջ ուղղութիւնը: Արդեօք նա ծայրայեղ արմատական չէ, ինչու ամբողջ հասարակութիւնը իւր դէմ ոտքի է կանգնեցնում, միթէ չէ կարող աւելի խաղաղ գործել:

Նա մտածում էր և՛ Գայիանէի մասին, աշխատում էր որ և է կերպ թեթևացնել նրա վիճակը և գիտէր, որ այդ կարելի է միայն զաւակներին իրանց մօրը դարձնելով: Յաճախ նա խօսում էր Վէքիլեանի հետ, խնդրելով սրան միջնորդել Բարաթեանի մօտ: Բայց օրէնսգէտ իրաւաբանը այս դէպքում ոչ մի «արդարացուցիչ» պատճառ չէ ուզում ընդունել, բացի օրէնքի տառացի մտքից: Յինը իւր կամքով է հեռացել մարդուց, երեխաները օրէնքով հօրն են պատկանում: Գրա դէմ ոչինչ չէ կարելի անել:

Երբեմն բժիշկը փողոցում հանդիպում էր Բարաթեանին: Նրանք շատ սառն բարևում էին միմեանց և անցնում: Մի անգամ բժիշկը մօտեցաւ իւր նախկին ընկերոջը, կամենալով անպատճառ իմանալ նրա մտադրութիւնը երեխաների վերաբերմամբ: Բարաթեանը նախ շատ անտարբեր ընդունեց նրա ակնարկները, ապա սկսեց իւր դրութիւնը բացատրել: Նա ոչ իրան է մեղադրում, ոչ Գայիանէին: Հայեացքների «տարբերութիւն»—անա այն գլխաւոր պատճառը, որ բաժանեց նրանց միմեանցից:

—Ես ոչինչ ռիս չունեմ այդ կնոջ դէմ և հոգով սրտով ցանկանում եմ, որ նա բաղդաւոր լինի, առանց ամուսնի, առանց երեխաների:

—Բայց առանց երեխաների նա դժբաղդ է, ՚ի թէ մտադիր ես միշտ նրան զրկած պահել իւր զաւակներէից,—հարցրեց բժիշկը:

—Ես մի անգամ ուղարկեցի, էլի, երևի, կուղարկեմ մի ժամով, կէս ժամով:

—Այդ շատ քիչ է, դու պէտք է աւելի բարեսիրտ վարւես:

—Այդ մասին ոչ մի խօսք, երեխաները ինձ են պատկանում, իրաւունք ունեմ բոլորովին չուզարկել:

Բժիշկը չը կարողացաւ հակառակել և հեռացաւ վիրաւորւած:

Այդ խօսակցութիւնից մի քանի օր անցած Բարաթեանը կանգնեցրեց նրան փողոցում և, մի կողմ տանելով, յայտնեց իւր վճիռը:

—Գիտես, ես իմ երեխաներին սիրում եմ, չեմ ուզում որ նրանք զուրկ մնան իրանց մօրից: Վճռեցի որ նրանք մի ամիս իրանց մօր մօտ ապրեն, մի ամիս ինձ մօտ: Բայց մի պայման եմ գնում, չը լինի թէ նա երեխաների սրտում իմ դէմ ատելութիւն զարթեցնի... այդ պատահում է:

—Գայիանէն այնքան խելօք և բարի կին է, — պատասխանեց բժիշկը, — որ իւր երեխաների հոգին չը փշացնելու համար այդ բանը չի անի: Շնորհակալ եմ, ես իսկոյն կը շտապեմ քո վճիռը յայտնել նրան և ուրախացնել:

Երրորդ օրը Գայիանէն իւր սենեակում լուսամտի առջև նըստած կար էր անում իւր միտքը զբաղեցնելու համար: Փողոցից նրա ականջին հասաւ մի ծանօթ կանացի ձայն: Նա գլուխը դուրս բերեց լուսամտից, նայեց դուրս և իսկոյն մի ուրախ ճիշտ արձակեց, կարը ձեռից ձգելով:

Պառաւ դայեակը մի ձեռով բռնած հինգ տարեկան Թամարի, միւսով երեք ու կէս տարեկան Վեռնի ձեռը, զւարթ դէմքով սանդխտով բարձրանում էր: Ուրախութիւնից նրա լեզուն անատամ լնդերքի միջից դուրս էր ընկել, և նա հազիւ հազ շունչ էր առնում, շտապելով ուրախացնել կարօտած մօրը:

Գայիանէն սեղմեց կրծքին երկուսին միասին և երկար ժամակ համբուրում էր մերթ մէկին, մերթ միւսին, կրկնելով.

—Վերջապէս, վերջապէս...

Երբ նա իւր սրտի առաջին փափազը մի փոքր յագեցրեց, դայեակը հառաչելով հաղորդեց, թէ անդամալոյծ Գերասիմ Գերասիմիչը առաւօտեան լուսաբացին հոգին աւանդել է: Լուրը Գայիանէի վրայ տղաւորութիւն չը գործեց, այնքան զեռ նրա միտքը զբաղւած էր երեխաներով:

—Երէկ երեկոյեան երեխաներին կանչեց, համբուրեց, մէկ մէկ օրհնեց: Ձեր անունն էլ չիշեց, ձեզ էլ օրհնեց, Ասուած վկայ, օրհնեց: Ասաց, Ֆեօդօրա, կ'ասես հարսիս, ես օրհնում եմ, լաւ կնիկ է, թող հաշուի որպէս հետ...

Յետոյ պառաւ զայեակը աւերացրեց, թէ երիտասարդ պարունը հիւանդ է: Վեց տարւայ կենակցութիւնը իղուր չէ անցել: «Սովորութեան» զգացումը Գայլանէին չը թողեց շատ էլ անտարբեր լսել այդ լուրը: Բայց երբ զայեակի պատասխաններից իմացաւ, որ Բարաթեանի ցաւը ուրիշ ոչինչ է, եթէ ոչ այն ժառանգական հիւանդութիւնը, որ տարէնը կամ երկու տարէնը մի անգամ պարբերապէս կրկնուում է—նա ձեռով մի բացասական շարժում արեց, մի շարժում, որ արտայայտում էր նրա պարզ զգանքը, և գրկեց իւր Աւոնիկին:

Մի քանի օր նա ոչ մի բանի մասին չէր մտածում բացի երեխաներից և ամբողջ ժամանակ նրանցով էր զբաղւած: Բայց անցան այդ օրերը, նրա սիրտը կշտացաւ և նորից նա սկսեց տխրել: Ինչ և լինէր, դրութիւնը անորոշ էր, չը գիտէր ինչ ապագայ է սպասում երեխաներին:

Գերասիմ Գերասիմիչի թաղման օրը նա մենակ նստած էր իւր սենեակում և չիշում էր անցկացրած դառն օրերը: Նա կրկին յուզւեց, կրկին արտասւեց և, զլուխը վնելով բարձին, սկսեց հեկեկալ: Նա ողբում էր իւր քայքայւած, խորտակւած կեանքը և դժբաղդ երիտասարդական օրերը: Օ՛, անցած, կորած յոյսեր, որ մի ժամանակ այնպէս ոգևորում էիք նրան, միթէ չըպիտի վերադառնաք: Ինչո՞ւ նա այնպէս մոլորւեց, ինչո՞ւ նա չունեցաւ վեց տարի առաջ կեանքի մասին այն հայեացքը, որ ունէ այժմ: Ինչո՞ւ չըմտածեց, որ ընտանեկան երջանկութիւնը չը պիտի որոնել ամուսնու ոչ արտաքին գեղեցկութեան, ոչ աշխարհային շուքի և փայլի, այլ նրա հոգեկան և բարոյական արժանաւորութիւնների մէջ: Եւ այժմ, երբ նա կրում է իւր դառն սխալի պատիժը, երբ նրա աչքերը բացւել են, մի՞թէ արհամարհի ամեն ինչ և ընկնի մի նոր երջանկութեան ետևից: Ո՛ւր, ինչպէս, մի՞թէ աչքերը փակելով հասարակական օրէնքների, արմատացած աւանդութիւնների և նախապաշարմունքների առջև, մի՞թէ ապօրինի կենակցութեան

մէջ որոնելով այդ երջանկութիւնը: Այ, ոչ, դարձեալ ոչ, այդ անկարելի է, անհնարին, վերջապէս այդ բարձր է նրա բարոյական ոյժերից: Աւրեմն, հեռու մոլորութիւն, հեռու խաբուսիկ յոյսեր, նա չէ ուզում իւր սեպհական բազդի համար զաւակների վիճակը ենթարկել վասնդի, ահա այդ անմեղ, սիրուն և քնքոյշ էակին...

«Մայրիկ, ինչո՞ւ ես լալիս»:

Տեսնելով նոյն պահին ներս վազող Թամարին, Գայիանէն շտապով երեսը դարձրեց, աչքերը սրբեց և աշխատեց ժպտալ: Փոքրիկ աղջիկը զգաց նրա կեղծիքը և կրկնեց իւր հարցը, բայց պատասխան չը ստացաւ:

—Մայրիկ, երբ պէտք է գնանք,—ասաց նա մի փոքր լռելուց յետոյ:

—Ո՛ւր:

—Հայրիկի մօտ:

—Երբ որ դու կամենաս:

—Ես ուզում եմ հէնց հիմա:

—Գնա, եթէ ուզում ես:

—Գու էլ կը դաս մեզ հետ:

—Ո՛չ:

—Ինչո՞ւ:

Մայրը չ'իմացաւ ինչ պատասխանել:

—Մայրիկ, ինչո՞ւ դու այտուեղ ես մնում:

—Ես... մնում եմ... հիւր եմ...

—Այդքան ժամանակ հիւր կը լինե՞ն:

Մայրը կամեցաւ սաստել աղջկան, որ, վերջապէս, դադարի այդ սիրտ մորմոքող հարցերը տալուց: Բայց նայեց նրա մանկական անուշ հեաաքրքրութեամբ լի աչքերին և մի սուր ցաւ զգաց իւր սրտում: Աչինչ չէր կարելի անել. մտտաղ սրտում արդէն կասկածը արմատ էր զցել: Պարզ էր, որ այդ փոքրիկ գլուխը զբաղած է իւր մօր վիճակով և բնազդմամբ հասկանում է այդ վիճակը:

«Ասուած իմ—ասաց մտքում Գայիանէն, ձեռը Թամարի ուսին դրած, աչքերը վեր բարձրացնելով,—ոյժ տուր ինձ այս ցաւին դիմանալ...»:

XIV

Այն բոլորից, ինչ-որ Ռիմաքսեանը խորհել էր Գայիանէին իւր սիրտը պարզելուց առաջ, այժմ մնում էր մի միտք, թէ պէտք է հեռանայ և չէ կարող չը հեռանալ Թիֆլիզից:

Սր օրի վրայ նա իւր կառավարչից սպասում էր փողի: Իւր հետ բերած փողերից այժմ նրա մօտ համարեա ոչինչ չէր մնացել, թէև բերել էր բաւականաչափ զումար: Իւր վրայ նա առհասարակ ծախսում էր շատ քիչ, բայց այս անգամ ունեցաւ արտաքոյ կարգի ծախսեր: Նրա տեսութեան ժամանակ դպրոցից արտաքսւած աշակերտները աղքատ վիճակի մէջ էին, բացի մէկից, որ գործակատարի պաշտօն էր զտել մի վաճառականի մօտ: Չորս աշակերտի նա աւեց ճանապարհածախս և ուղարկեց հայրենիք: Իսկ հինգերորդը—Մարաքեանը, այն ընդունակ աշակերտը, որին նա ամենից աւելի էր սիրում, ոչ ուզում էր հայրենիք վերադառնալ և ոչ էլ միջոց ունէր քաղաքում ապրելու: Նա այնքան ինքնասէր էր, որ ամաչում էր վաճառած աշակերտի անունով ներկայանալ իւր ծնողներին: Նա ուզում էր անպատճառ, ինչպէս և իցէ, ուսումը շարունակել, մինչև անգամ փափագում էր համալսարան մտնել և ասում էր, եթէ այդ չը յաջողւի—ինքնասպանութիւն կը գործի:

Երբ Ռիմաքսեանը անձամբ հարց ու փորձ անելով այս բոլորը իմացաւ, վճռեց օգնել այդ զիւղական ինքնակամ, կոպիտ, բայց ընդունակ երիտասարդին:

—Դու կըստանաս բարձր կրթութիւն, —ասաց նա մի օր Մարաքեանին իւր տանը, —ես քեզ վերցնում եմ իմ հովանաւորութեան տակ:

«Բռի լօւեցին», ինչպէս կոչում էին նրան ուսուցիչները, այնքան զգացուց, որ նրա աչքերի մէջ ուրախութեան արցունք երևեց: Ռիմաքսեանը խորհուրդ տուց նրան զնալ Ռուսաստան:

—Այնտեղ դու կարող ես պատրաստել մի տարի, զիմնազիական քննութիւն տալ և յետոյ մտնել համալսարան: Աշխատիր իմ յոյսերը արդարացնել:

Քիչ ժամանակ անցած Մարաքեանը ստացաւ ճանապարհածախս և ամբողջ տարւայ թողակը, ուղևորւեց Օրեսաս:

Վերջապէս, Ռիմաքսեանը ստացաւ կառավարչից սպասած նա-

մակը: Բաց արեց ծրարը, կարդաց նամակը և բարկացած ձգեց մի կողմ: Փող ուղարկելու փոխարէն Հաբիգեանը հաղորդում էր մանրամասն տեղեկութիւններ նրա գործերի մասին: Միայն նամակի վերջում նա աւելացնում էր. «Հինգ օրից յետոյ կ'ուղարկեմ չորս հարիւր թուրքի»: Այս տողը աւելի զրգռեց Գիմաքսեանին: Նրան ամենաքիչը երկու անգամ աւելի էր հարկաւոր և դեռ համոզւած էր, որ իւր պահանջը շատ չափաւոր է:

Նա ուզեց իսկոյն հեռագրել Հաբիգեանին և պահանջել, որ իւր պատւէրը անյապաղ կատարի: Բայց այդ տեսակ մի հեռագիր կարող էր գուցէ վիրաւորել նրա ընկերոջը: Այն ինչ՝ նամակ գրելու համբերութիւն չունէր: Առանց երկար մտածելու նա վճռեց հէնց վաղն իսկ ճանապարհ ընկնել հայրենիք կարճ ժամանակով:

Առաւօտեան, կանուխ զարթնելով, նա մի նամակ թողեց Ստերեանի անունով և անմիջապէս ուղևորւեց:

Այս անգամ ճանապարհորդութիւնը նրա վրայ բոլորովին ուրիշ տպաւորութիւն ունեցաւ: Կար ժամանակ, երբ նա գրեթէ ակամայ էր դիմում դէպի իւր ծննդավայրը, իսկ այժմ շտապում էր որքան կարելի է շուտով հասնել այնտեղ: Նա փափագում էր օր առաջ տեսնել իւր քոյրերին, որոնց, կարծես, շատ տարիներ էր չէր տեսել: Նրան թւում էր, որ այնտեղ, իւր արիւնակիցների շրջանում միայն կարող է գէթ ժամանակաւոր մխիթարութիւն գտնել և յանդիմանում էր իրան, թէ ինչու այդ մասին առաջ չէր մտածել:

Հեռանալով այն քաղաքից, ուր նա եօթ տարի շարունակ անց էր կացրել փոթորկալից կեանք, զգում էր, որ իւր ետևում թողնում է մի տեսակ բեռն, որից բաժանւելը և՛ ցանկալի էր, և՛ դառն: Նա յիշում էր իւր կրած վշտերը և, կարծես, մի ներքին ձայն շնչում էր, թէ այդ վշտերը կարող էին առաջանալ հէնց այն մթնոլորտում միայն, որից հեռանում էր:

Նա ուզում էր հողով անձնատուր լինել լայնատարած դաշտերի, անտառների և լեռների ազդեցութեանը: Եւ պատահում էին բոպէներ, երբ նա մոռանում էր ամեն ինչ և թարմանում զարնանային օդով արձակ բնութեան մէջ: Բայց անցնում էին այդ բոպէները, նորից զրգոււում էին զսպւած, խեղդւած զգա-

ցումները, և զարձեալ թւում էր նրան, թէ այդ զգացումներից
գուցէ կարող է ազատուել միայն իւր արիւնակիցների շրջանում:
Եւ ահա ամեն փոստային կայարանում նա անհամբերութիւնից
բարկանում էր, որ ձիերը ուշ են փոխում: Նա անընդհատ կաշա-
ռում էր կառավարներին շտապել և անդադար շտապել զէպի
առաջ:

Երկու օրուայ ճանապարհը նա այս անգամ կտրեց երեսուն
ժամուայ մէջ, զեշերը ոչ մի տեղ կանգ չ'առնելով: Նա շտապեց
մտնել հայրենի տունը: Այստեղ այժմ բնակւում էր նրա մեծ
քոյրը—տիկին Մարթան իւր ընտանիքով: Մուսլ և նիրհած տունը
այժմ կենդանութիւն էր ստացել: Թրը մինչև երեկոյ ընդարձակ
պարտիզի մէջ թռչկոտում էին Մարթայի երեքից մինչև իննը
տարեկան երկու զոյգ երեխաները: Փողոցի կողմի լուսամուտները
բացւել էին, արևի կենդանացուցիչ լոյսը առատօրէն հոսում էր
ներս, զէպի մաքրած, նորոգած սենեակները: Պատերը ծածկւել
էին ուրախ գոյնի պատաստներով, շտապները ներկւել էին, կահ
կարասին փոխւել: Խոհանոցից լսում էր ամանեղէնի և պղնձեղէնի
ձայներ: Ախուատանը խրխնջում էր մի նժոյգ, որ պատկանում
էր Մարթայի ամուսնուն, լսում էր Ջասկի տոներին երեխաների
համար բերած դառնուկների մլաւոցը: Մի նորատի հայ աղախին
վազում էր երեխաներին սաստելու, որ պարտիզի ծաղիկները չը
փչացնեն:

Ամեն ինչ փոխւել էր, նորոգւել, զւարթացել: Նոյն իսկ
պողատու և անպտուղ ծառերը, կարծես, աւելի ուրախ էին նա-
յում, զոնէ այսպէս էր թւում Դիմաքսեանին: Պատշգամբի վրայ
այլ ևս չէր երևում այն հնամաշ փայտեայ մեծ բազկաթոռը, որ
միշտ միւկնոյն տեղն էր լինում և որի վրայ նստում էր հանգու-
ցեալ Մարգար ազան:

Դիմաքսեանը ներս չը մտած առանձին առանձին բռնեց իւր
քրոջ զաւակներին, համբուրեց, այստեղ միայն չիշելով, որ պէտք
է այդ փոքրիկների համար նւէրներ բերէր:

Տիկին Մարթան նրան զիմաւորեց, վազելով պատշգամբ և
ուրախ բացագանչելով.

—Փառք Աստուծոյ, փառք Աստուծոյ...

Նա Արսէնից երկու տարով մեծ էր, բայց դեռ պահպանել էր երիտասարդական թարմութիւնը, չը նայելով եօթերորդ բերքին: Նրա զէմքի բարի, հեզ արտայայտութիւնը և մուգ զոյնի թակածալի աչքերը, մանաւանդ կակուղ ձայնը յիշեցնում էին իւր մօրը: Նա հագնուում էր անխառն եւրոպական տարազով—այսպէս կամենում էր նրա ամուսինը, որ արքունական պաշտօնեայ լինելով մեծ մասամբ իւր օտարազդի պաշտօնակիցների շրջանում էր պոտում:

Նա մի քանի անգամ եղբօրը համբուրելուց յետոյ, անմիջապէս ծառային ուղարկեց իւր կրտսեր քրոջը կանչելու: Աէս ժամ անցած եկաւ Արսէնից չորս տարով փոքր Անիկը: Երկու քոյրերի արտաքինի ինչպէս և ներքին յատկանիշների մէջ կար խիստ տարբերութիւն: Հասակով Անիկը աւելի բարձր էր, կազմաւածքով խոշոր, թէև ոչ այնքան զէր: Նրա երեսի գծերը կանացի փափկութեան հետ ունէին նաև մի ինչոր ազդու տղամարդային արտայայտութիւն: Իսկ փոքր ինչ լայն ծնօտը, սղմած շրթունքները յիշեցնում էին Մարգար աղային: Հետեւելով իւր աւագ քրոջ օրինակին, նա նոյնպէս եւրոպական տարազով էր հագնուում:

Նա, գոնէ արտաքուստ, մի աւանձին ուրախութիւն ցոյց չը տւեց եղբօրը տեսնելով: Նա միայն մի անգամ համբուրեց նրա հետ, հարցնելով.

—Լաւ ես:

Արսէնը այս անգամ սովորականից աւելի հետաքրքրւած հարցնում էր իւր քոյրերի կենցաղավարութեան մասին: Այն ինչ քոյրերին ստիպում էին նրան պատմել իւր կեանքից: Մարթայի աչքում նա և՛ նիհարել էր, և՛ ծերացել: Սկզբում կատակով, սպալը լրջօրէն երկու քոյր ջանդիմանեցին իրանց միակ եղբօրը, թէ ինչու մինչև այժմ չէ ամուսնացել: Այս կողմից աւելի խիստ էր Մարթան:

—Ինչու ես հօրդ տունը անտէր թողնում, —ասում էր նա, — ինչու մեզ չես ուղղում ուրախացնել: Աստծուն է յայտնի, սիրտս կտոր կտոր էր լինում ամեն անգամ այս տան մօտով անցկենալիս: Ես կարծում էի մի աւերակի մօտով եմ անցկենում: Աերջը՝ էլ չը համբերեցի, եկայ այստեղ ապրելու: Խեղճ մայր, մտքովդ անց կը կենանր, որ քո մի հատիկ աչքի լոյս որդին այսօր պէտք է ծնող-

ներից զուրկ, քոյրերից հեռու, հօր անից զուրս, ով գիտէ ինչ երկրում կեանք անցկացնի:

Նրա ձայնը զգացւեց, աչքերը արտասուեցին:

—Միթէ ամուսնութիւնը շատ լաւ բան է, որ ինձ էլ խորհուրդ էք տալիս ամուսնանալու, — հարցրեց Արսէնը ը լոկ այն նպատակով, որ իմանայ որքան իւր քոյրերը երջանիկ են ընտանեկան կեանքում:

—Ամուսնութիւնը մի պարտք է, լաւ վատ, ամեն մէկը պարտաւոր է կատարել, — պատասխանեց Մարթան:

Բայց այդ պարտքը շատերին է թանգ նստում: Դու ուրախ ես, որ ամուսնացել ես:

—Ոչ ուրախ եմ ոչ տխուր, բաղդիցս զանգատել չեմ կարող, ինչ որ ճակատիս զրեւծ է, պէտք է կատարել: Բայց էլի վառք Աստուծոյ, երեխաներովս բաղդաւոր եմ:

—Իսկ դ՞ու, Անիկ...

—Ինձ համար միևնույնն է:

—Մարդդ քեզ հետ լմու է վարւում:

—Այդ մասին մի՛ հարցնիլ, — մէջ մտաւ Մարթան ծիծաղելով, — Անիկը այն կանանցից չէ, որ իւր մարդու խօսքի տակ մնայ...

Մի թեթեւ ժպիտ անցաւ Անիկի դէմքով. պարզ էր, որ քրոջ ասածը նրան զուր եկաւ: Հօր շափ յամառ և ինքնակամ՝ նա ընտանեկան կեանքում ձգտում էր կին-բռնակալի դեր կատարելու՝ սկսած այն օրից, երբ Արսէնը տեց նրան իւր ժառանգութեան մի մասը: Որովհետեւ նրա ամուսինն էլ հեշտ հպատակողներից չէր, ուստի երբեմն նրանց մէջ տեղի էին ունենում ընտանեկան խռովութիւններ: Բայց երբէք այդ խռովութիւնները ծայրացեղութեան չէին հասնում, որովհետեւ մարդը միշտ զիջողութիւն էր անում, նախ՝ իւր ընտանեկան կեանքը շատ էլ չը թունաւորելու համար, երկրորդ՝ համոզւած լինելով, որ իւր յամառութեան տակ Անիկը ունէ իսկապէս բարի հոգի...

Շուտով եկաւ Մարթայի ամուսինը պաշտօնական համազգեստով, կոնատակին բռնած մի մեծ պօրաֆէշլ: Դա մի հաստափոր մարդ էր բարակ ոտներով: Բարեկեղով Արսէնին ռուսերէն լեզուով, որ քաղաքակրթութեան նշան էր համարում, նա մի քանի անգամ

գրկեց նրան, գոչելով. «նականեց, նականեց...» Եկաւ և Անիկի ամուսինը, որ, հակառակ իւր քենակալին, նիհար դէմքով, չոր կազմեաձքով մի բարձրահասակ մարդ էր, պարապուում էր վաճառականութեամբ:

Ընտանեկան ճաշը անցաւ բաւական ուրախ, շնորհով Մարթայի ամուսնուն, որ անդադար խմում էր, սրախօսում, ծիծաղում և ծիծաղեցնում:

Իրիկնադէմին Դիմաքսեանը ծառային ուղարկեց Հաբիգեանին կանչելու: Յայտնեց, որ կառավարիչը գնացել է մօտակայ գիւղերից մէկը և միայն վաղը պէտք է վերադառնայ: Այժմ Դիմաքսեանը, հակառակ սովորականին, շատ հետաքրքրեաժ էր իւր գործերի գրութիւնով, փափագում էր տեսնել կալւածները:

XV

Հետեւեալ օրը առաւօտեան նա նոր էր զարթնել, երբ ծառան յայտնեց Հաբիգեանի դալտեան մասին:

Ներս մտաւ առողջ կազմեաձքով, արեւից այրեաժ պղնձադոյն դէմքով մի աղամարդ մօտ երեսուն ու երեք տարեկան: Նա հագաժ էր կոշտ մոխրագոյն կտորից կարաժ կարժ պաժկոն և երկար կօշիկներ, որ ծածկեաժ էին թանձր սպիտակ փոշիով:

Դիմաքսեանը ընդունեց նրան այն սենեակում, որ մի ժամանակ ծառայում էր Մարգար աղային: Բոլոր հին կահկարասիներից այստեղ մնում էր միայն երկաթեայ ժանգոտեաժ սնդուկը, որի մէջ այժմ ոչինչ չը կար:

Հաբիգեանը նոր էր վերադարձել գիւղից և ճանապարհի հագուստը չը փոխաժ շտապել էր Դիմաքսեանի մօտ:

— Գնացել էի ապաստիկներ ժողովելու, —ասաց նա, անմիջապէս դիմելով գործին, ինչպէս մի մարդ, որի համար ամեն մի ըուպէն թանգ արժէր, —այսօր ուզում էի փոստով ձեզ համար փող ուղարկել, շատ լաւ եղաւ, ինքներդ եկաք:

Դիմաքսեանը ընդհատեց նրա խօսքը, առաջարկելով խօսել իւր հետ պուժով, ինչպէս առաջ:

Արդարև մի ժամանակ նրանք ընկերներ էին և բաւական մօտիկ ընկերներ: Հաբիգեանը գիւղական քահանայի որդի էր, սկզբնա-

կան կրթութիւնը ստացել էր Ղիմաքսեանի ծննդավայր քաղաքի հողևոր դպրոցում: Յետոյ նա իւր մի վաճառական քեռիի օգնութեամբ տեղափոխուել էր Քիլիկիոյ և մտել ուէալական դպրոց: Պանդխտութեան մէջ երկու հայրենակից պատանիները ընկերակցել էին և դեռ այդ ժամանակ արդէն նրանց ապագայ հայեացքների մէջ պարզւեց մի խիստ տարբերութիւն:

Մինչ Ղիմաքսեանի երեւակացութիւնը պատանեկական հասակում զարմանալի թողիւքներ էր անում, մինչ նա փայփայում էր մի իլէալ, որ քանի զնում այնքան զարգանում էր, հասունանում և բարդանում, Հաբիգեանը, այդ լուռ, սառն և միշտ իւր դասերով զբաղւած պատանին, հիանում էր իւր հայրենակցի իլէալով, բայց երբէք չէր չափշտակւում: Մնած և սնած լինելով գիւղական շրջանում, նա տեսել էր շքաւորութեան դասնութիւնները և մասամբ փորձել իւր վրայ: Եւ իւր համար լռիկ կազմել էր մի ուրիշ, ուրոյն գաղափար թէ իւր ապագայի և թէ առհասարակ կեանքի մասին, մի գաղափար, որի առաջ նսեմանում էին և զրեթէ ոչնչանում բոլոր միւս գաղափարները:

Մարդկանց թշւառութեան հիմնաքարը նա համարում էր աղքատութիւնը: Սրանից էին ծագում նաև ազիտութիւնը, փոխադարձ նախանձը, ատելութիւնը և թշնամութիւնը: Երբ Ղիմաքսեանը նրա մօտ ողորւած խօսում էր ժողովրդի բարոյական վերածնութեան մասին, նա պնդում էր, թէ ոչինչ վերածնութիւն չէ կարելի մտցնել մի ժողովրդի մէջ, ուր մարդկանց ամբողջ ժամանակը և բոլոր հոգեկան ոյժերը ապառւում են ստամոքսի համար: Եւ ժողովուրդ ասելով, Հաբիգեանը միշտ աչքի առջև ունէր իւր գիւղի համայնքը: Այստեղ էր հիմք առել և այստեղից էր սկսւում նրա ամբողջ աշխարհայեցողութիւնը, որ շատերին թւում էր նեղ, սահմանափակ: Եւ որքան նրա միտքը լուսաւորւում էր, այնքան սիրտը մօտենում էր այդ համայնքին. մի բան, որ շատ քիչ գիւղացի ուսանողներին մէջ էր նկատւում:

Մտակալի գիւղատնտեսական ձեմարանի երրորդ կուրսը նոր անցած, նա հիւանդացաւ և ստիպւեց վերադառնալ հայրենիք: Քիչ ժամանակից յետոյ այստեղ բոլորովին կազդուրւեց, բայց հայրը չը կամեցաւ, որ նա նորից գնայ հիւսիս: Այն ժամանակ նա վճռեց

անպատճառ, ինչպէս և լինի շարունակել իւր ուսումը արտասահմանում և թախանձեց հօրը՝ ոչինչ չը խնայել: Գիւղական համեստ քահանան, որ ինքը հազիւ գրել-կարդալ գիտէր, հասկանում էր գիտութեան ոչժը: Նա զրաւ գրեց իւր այդին, պարտքի մէջ ընկաւ, որպէս զի իւր որդուն կրթւած տեսնի:

Չորս տարի Հաբիգեանը արտասահմանում վարեց այնպիսի սուղ կեանք, որ ոչ մի աղքատ ուսանող չէր վարել: Վերջապէս, նա հասաւ իւր նպատակին, վերադարձաւ հայրենիք գիղատնտեսական գիտութիւնները գործնական և տեսական պաշարով: Նա սկսեց օգնել իւր եղբայրներին, որ պարապուած էին գինեգործութիւնով: Բայց իւր մտադրութիւնները իրագործելու համար նրան պակասում էր մի բան—գրամաղլուխ, որ ոչ նրա հայրը ունէր և ոչ եղբայրները ունէին: Հէնց այդ միջոցին Գիմաքսեանը հրաւիրեց նրան իւր կալւածները կառավարելու, և նա ուրախութեամբ ընդունեց այդ հրաւերը:

—Արդեօք շնտ փող պէտք է ուղարկէիր ինձ համար,—հարցրեց Գիմաքսեանը ժպտալով:

—Այնքան, ինչքան խոստացել էի նամակումս:

—Այդ ինձ բաւական չէր լինիլ: Իմ այստեղ գալուս մի պատճառն էլ այն է, որ քեզ համոզեմ՝ շատ էլ ժլատ չը լինես իմ վերաբերմամբ:

—Ի՛նչ արած, ստիպւած եմ ժլատ լինել:

—Ինչո՞ւ, միթէ ես այդքան աղքատացել եմ:

—Գու աղքատ չես, բայց ես ուզում եմ, որ աւելի հարստանաս:

—Ապագայում: Ա՛յ, ես այդ բանին համաձայն չեմ: Լսիր, Հաբիգեան, զուցէ ես քո աչքում մի փոքր թեթեւաբար երեւամ, բայց ուղիղն ասած, իմ նիւթական ապագայի մասին ես բոլորովին չեմ մտածում: Ինձ հարկաւոր չեն ոչ խոշոր գումարներ և ոչ մեծ կալւածաւիրոջ անուն, թէև, համաձայն եմ, փողը մեծ ոյժ է մեր ժամանակում:

Հաբիգեանը, լաւ ձանաչելով Գիմաքսեանին, ոչինչ չ'ասաց: Բայց գլուխը բացասական կերպով շարժեց, որ արտայայտում էր թէ՛ զարմանք և թէ՛ անհամաձայնութիւն ընկերոջ ասածին:

Վէս ժամ անցած նրանք պոտոմ էին տան առջև տարածւած

պարտիզում: Այստեղ ևս նկատուամ էին փոփոխութիւններ: Մասնազինները հարթուել էին, մաքրուել, կանոնաւորուել, հնադարեան պարիսպը նորոգուել էր: Երևում էին տեսակ տեսակ նոր անկաճ ծառեր, բոյսեր, ծաղիկներ: Եւ այդ բոլորը Հաբիգեանի գործն էր:

Պարտիզպանը նոյն մարզն էր, որ ծառայում էր Մարզար աղայի ժամանակից: Այժմ ոչ ոք նրա վրայ չէր գոռում, ոչ ոք չէր հայհոյում նրան, մանաւանդ ծեծում, և նա աւելի սիրով էր աշխատում: Նա ուրախ ուրախ առաջնորդում էր իւր պարոնին, ցոյց սալով բոլոր փոփոխութիւնները: Պարտեզը, բացի զեղեցկանալուց և հարստանալուց, այժմ մի որոշ եկամուտ էլ սալիս էր. աւելացած պատգները և միրգերը ծախուում էին մրգավաճառներին:

Մի ժամի չափ անցուդարձ անելով պարտիզում նրանք գնացին քաղաքի կենտրոնական շուկան: Այստեղ Ղիմաքսեանը ունէր մի շարք խանութներ և մի քարւանսարայ, ուր կանգ էին առնում քաղաք մտնող սայլերը և Ֆուրգօնները: Մարզար աղայի կենդանութեան ժամանակ խանութները կիսաւեր դրութեան էին հասել, քարւանսարան քայքայուել էր, բալը պահուում էր կեղտոտ և միշտ լիքն էր ձիերի ու տաւարի աղբի կոյտերով: Այժմ խանութների փրատակած պատերը նորոգուել էին, մաշած ծածկոցները և դռները փոխուել էին, ներկուել: Քարւանսարայի բալը մաքրուել էր, քարով ծածկուել: Հաբիգեանը ասաց, թէ ուզում է շուտով այդ բակի շուրջը կառուցանել մի նոր երկչարկանի շինութիւն, վերելուամ բնակարաններ, ներքեւում խանութներ:

Ճաշից յետոյ նրանք գնացին քաղաքի շրջակայ այգեստանը: Հաբիգեանը Ղիմաքսեանին ընդարձակ քարաշէն դարբասով առաջնորդեց մի մեծ այգի: Մասերը նոր էին կանանչել, պարարտ երկիրը դեռ խոնաւ էր անցեալ զիշերը եկած անձրևից: Խաղողի որթերը արդէն տերևներ էին արձակել և կանանչ սփոցի պէս ծածկել մի ընդարձակ տափարակ: Հեռուում երևում էր մի շինութիւն կարմիր աղիւսից: Ինիկնադէմի արևի ճառագայթները լուսաւորում էին նրա կանանչագոյն երկաթեայ եռանկիւնի կաուրը: Այս շինութիւնը նոր էր և կառուցուել էր դինիի ու օղիի գործարանի համար: Դէպի ձախ երևում էր մի ուրիշ աւելի մեծ տափարակ խաղողի որթերով ծածկուած: Ղիմաքսեանը չիշում էր, որ իւր հօր

կենդանութեան ժամանակ այդ տարածութիւնը մնում էր անմշակ: Այժմ Հաբիգեանը միացրել էր նրան մեծ այգիի հետ և սկսել շահագործել:

—Ահա ինչի վրայ են փողերը ծախուում,— ասաց կառավարիչը, Գիմաքսեանին առաջ նորոգելով աղիւսեաց շինութեան ներքը:

Այստեղ դրւած էին մի քանի պղնձեաց նոր կաթսաներ: Մի որմնաղիւր իւր օգնականի հետ շինում էր գործարանի վառարանները: Գրտում ցրւած էին մի խումբ մշակներ, ոմանք հող էին փորում, ոմանք խաղողի որթերի համար ցիցեր էին անկում:

Հաբիգեանը պատմում էր իւր ձեռնարկութիւնների մասին այն սառն դրական եղանակով, որ յատուկ է գործնական մարդուն: Նա նկարագրում էր այն մօտիկ ապագան, երբ Գիմաքսեանի բոլոր կալւածներ լի մշակութիւնը պիտի հասնէր ցանկալի զարգացման:

—Նեռ շատ բան կայ անելու, եթէ միայն թող կըրտաս: Գիւնկործութեան համար անհրաժեշտ է արտասահմանից հրաւիրել մի հմուտ վարպետ: Ժամանակ է մեր թթու գինիներից ձեռք վերցնել: Ափսոս է մեր խաղողը, կարելի է նրանցից տասը տեսակ լամիչքներ պատրաստել: Ես ինքս ուրախութեամբ կըսարասուէի միայն զինկործութիւնով: Բայց աշխատանքի բաժանման մասին առ այժմ մտածել չէ կարելի, ուրիշ շատ գործեր ունեմ: Պէտք է մի շոգեշարժ ազօրիք շինել: Վարուցանք անելու և հնձելու համար վատ չէր լինիլ մեքենաներ բերել տալ: Վարելի է այստեղ մի ուրիշ գործարան շինել միրգ չորացնելու համար: Այս բոլորը փող է պահանջում, և դու ասում ես, որ ես ժլատ չըլինեմ...

Օրն արդէն մթնելու վրայ էր, երբ նրանք վերադարձան քաղաք: Ամբողջ երեկոյ նրանք խօսում էին գործերի մասին: Գիմաքսեանը երախտաղիտաբար սեղմեց Հաբիգեանի ձեռը, յայտնելով նրան իւր շնորհակալութիւնը: Նա հիացած էր իւր կառավարչի աշխատասիրութեան վրայ և, միևնոյն ժամանակ, ուզում էր իմանալ նրա եռանդի դրդիչ զաղափարը: Նա չէր հաւատում, թէ խելօք, կրթւած, եւրոպական քաղաքակրթութեան ճաշակն առաջ մի երիտասարդ կարող է հոգեկան անթերի հաճոյք գտնել լոկ նիւթական գործունէութեան մէջ: Նա ուզում

էր համոզել, որ Հաբիգեանի արտաքին գործնականութեան տակ թագնւած է մի հասարակական գաղափար, որ նա չէ ուզում պարզել:

Մի շաբաթ անցած նա այցելեց մի քանի գիւղեր, ուր զրոնւում էին նրա վարելահողերը: Այս ճանապարհորդութիւնը տեւեց երեք օր, և նա տուն վերադարձաւ նորանոր ազաւորութիւնների տակ: Նա գիտէր գիւղական ժողովրդի մտաւոր և անտեսական վիճակը, բայց զիտէր ոչ այնքան զործնապէս, որքան տեսականապէս — գրքերի և լրագրների միջոցով: Ճշմարիտ է, մի քանի տարի առաջ նա ճանապարհորդեց Անդրկովկասի մի մասում, տեսաւ գիւղեր, բայց արդեօք այդ ժամանակէն նրա հոգեկան տրամադրութիւնն էր պատճառ, թէ մի ուրիշ բան, այդ մի ամուսն ընթացքում նրա համար չէր պարզել գիւղացու գրութիւնը այնպէս, ինչպէս պարզեց այժմ, երեք օրուայ մէջ:

Եւ պարզողը Հաբիգեանն էր: Գործնական մարդը նրա ուշադրութիւնը դարձրեց այն բոլոր առօրեայ կարիքների վրայ, որ կազմում էին մի ամբողջ ժողովրդի կեանքը: Նրանք անցան մի գիւղով, որի բնակիչները հողի պակասութիւնից ազատելու համար պատրաստ էին իրանց «հարազատ գաւակներին դրաւ դնել», ինչպէս ասում էր Հաբիգեանը: Անցան անբերրի, քարքարոտ հողերով, ուր գիւղացին գերբնական աշխատանք էր զործ պնում իւր օրական պարէնը վաստակելու համար: Մի գիւղից մի ուրիշ գիւղ անցնելու ժամանակ Հաբիգեանը ցոյց տեւց խորհուրդներով լի նեղ ուղին և նկարագրեց այն բոլոր վնասները ու շարիքները, որ առաջանում էին կանոնաւոր ճանապարհների բացակայութիւնից:

Այ մէկը նրանց այցելած գիւղերից ուսումնարան չունէր: Երեխաները թափառում էին փողոցներում, խաղալով հորթերի, շների և հաւերի հետ, մերկանդամ, զլխաբաց, ոտաբոբիկ: Ամեն տեղ թաղաւորում էր մտաւոր մթութիւն, մի թանձր, չուսահանցուցիկ իտաւար, ուր ոչինչ և ոչինչ մտիթարական չէր նշմարւում: Բայց արդեօք այդ խաւարի մէջ գեղերւողները գոնէ զգում են լուսոյ կարօտը:

—Ոչ, — պատասխանեց Հաբիգեանը գրական եղանակով, — նրանք միայն մի կարօտ են զգում — անտեսական:

—Գուցէ կարելի է հասկացնել նրանց, որ բացի չքաւորութիւնից ունին և մի ուրիշ թշնամի—ազիտութիւնը:

—Ես շատ անգամ եմ խօսել նրանց հետ այդ մասին, շատ եմ բացադրել զրազիտութեան նշանակութիւնը: Նրանք միշտ լուռ ականջ են դնում այնպէս, որ մարդ կարծում է համոզւեցին: Բայց տեսնում ես նայեցին միմեանց երեսին և յետոյ անտարբեր արտասանեցին. «Աղա, շատ լաւ ես խօսում»:

—Ուրեմն համաձայնում են:

—Այո, բայց պէտք է տեսնել, թէ ինչպէս և ինչ եղանակով են ասում. «աղա, շատ լաւ ես խօսում»: Վարժես, այդ խօսքերով մարդու զխին սառն ջուր են ածում: Պատահում է, որ ես մինչև անգամ բարկանում եմ նրանց վրայ և դռում. «չիմարներ, դուք ձեր զաւակների համար պէտք է ուսումնարան պահէք»: Բայց նրանք հարցնում են. «Քսա վարժապետի փողը ձրտեղից գտնենք»: Եւ միայն այս հարցը ինձ միշտ նեղն է զցում, ես մտիկ եմ անում նրանց ողորմելի դէմքերին և կամայ ակամայ լռում եմ:

—Ուրեմն քո կարծիքով ոչինչ միջոց չը կայ ժողովրդի մէջ լոյս տարածելու,—գոչեց Գիմաքսեանը մի քիչ վրդովւած Հարիզեանի սառնարտութեան դէմ:

—Ինչո՞ւ չէ. կայ:

—Ո՞րն է:

—Իմ կարծիքով այն, որ մեր կրթւած երիտասարդները մի փոքր օգնեն ժողովրդին, չը փախչեն նրանից այնպէս, ինչպէս այժմ:

—Աս, դա շատ սովորական դարձւած է:

—Բայց զուտ ճշմարտութիւն է:

—Նրեի, դու ուզում ես, որ ամենքն էլ գան քեզ նման զիւզանտեսութեամբ պարապեն, չէ:

—Թէկուզ հէնց այդ լինի իմ ցանկութիւնը, չե՞ս համակրում:

—Համակրում եմ, բայց, ասա ինչդրե՞մ, ի՞նչ օգուտ ունեն զիւզացիները դիցուք հէնց քո այժմեան գործունէութիւնից:

—Ես այդ մասին չէի կամենալ խօսել զո՞նէ այժմ,—պատասխանեց Հարիզեանը սառն կերպով,—բայց քանի որ հարցնում ես, կը բացադրեմ...

XVI

Նրանք նստած էին Մարգար աղայի սենեակում առանձին: Գիմաքսեանը փափագում էր ուսումնասիրել իւր ընկերոջ ներքին աշխարհը, թափանցել նրա սիրտը և տեսնել՝ կանչ արդեօք այնտեղ մի բարձր գաղափար: Ահա ինչու նա խորին հետաքրքրութեամբ աչքերը յառած Հաբիղեանի երեսին, սպասում էր նրա բացաղբութեանը:

— Գիտես ինչ, — սկսեց Հաբիղեանը հանդարտ ձայնով, — ես առհասարակ այն մտքի դէմ եմ, թէ իբր հասարակական գործիչը պէտք է լինի անասման անձնւէր, անշահատէր: Կաւ է որ այդպէս լինի, բայց դա մի գեղեցիկ և անիրագործելի երազ է: Աշխարհիս երեսին, իմ կարծիքով, չը կայ ոչ անպայման անձնւիրութիւն, ոչ առասպելական անշահասիրութիւն: Եւ եթէ կայ, դա միայն հազադիւտ ընտրեալների յատկութիւններն են, ընտրեալների, որոնք երկար զարերի ծնունդ են: Մարդիկ սովորաբար ուրիշների օգտի համար գործում են երկու շարժառիթներից զրդւած — բարոյական և նիւթական: Բարոյականը — փառասիրութիւնն է, եթէ չասենք փառամոլութիւնը, նիւթականը — շահասիրութիւնն է, եթէ չ'ասենք շահամոլութիւնը: Երկու դէպքում էլ չը կայ և չէ կարող լինել անպայման ինքնամոռացութիւն: Համաձայն ես ասածիս, թէ ոչ...

— Փառասիրութիւնից զրդւած ուրիշների համար գործելը, — պատասխանեց Գիմաքսեանը, — ինձ համար դու հասկանալի է, բայց ինչ ասել է շահասիրութիւնից գործել, այսինքն ինչպէս մարդ իւր նիւթական շահերի համար աշխատելով կարող է կարծել, թէ ուրիշներին էլ օգուտ է բերում: Այդ ինձ համար անհասկանալի է:

— Կը պարզեմ որքան կարող եմ: Ես աշխատում եմ քեզ հարստացնել, որովհետև ինքս էլ օգուտ ունեմ քո հարստանալուց: Գուցէ, եթէ դու ինձ մի յայտնի սոկոս չը տայիր քո եկամուտներից, եթէ ծառայէի մի որոշ ուժիկով — աւելի պակաս եռանդով վերաբերւէի քո գործերին կամ ուղղակի անտարբեր լինէի: Բայց այժմ ես քո գործը իմն եմ համարում: Ահա այստեղ իմ նիւթական շահը իմ եռանդի առաջին ստիմուլն է:

— Ընդունենք, որ այդպէս է, օրինակը պարզ է, բայց ոչ այնքան յաջող: Գուցէ կայեցիր միմեանց քո և իմ շահերը, բայց մենք

երկու անհատներ ենք և զու ծառայելով իմ գործերին, չես կարող ասել, թէ ծառայում ես հասարակութեանը:

—Փող Ասուած հեռու պահի ինձ այն մտքից, որ երբ և իցե ինձ հասարակական գործիչ համարեմ: Ոչ, ես այդ չէի ուզում ասել: Բայց կարծում եմ, որ ես աշխատելով խելացի կերպով շահագործել քո կալածները, դրանով այսպէս թէ այնպէս ես հարստացնում եմ երկրի ընդհանուր արդիւնաբերութիւնը:

—Օրինակ:

—Օրինակ, իմ և քո շահերը պահանջում են մի գիւղից միւս գիւղ ճանապարհ շինել, մենք շինել ենք տալիս, և դրանով հեշտացնում ենք բոլոր գիւղացիների համար հաղորդակցութեան միջոցները: Մեր անձնական շահերը պահանջում են մի շոքեշարժ աղօրիք ունենալ—մենք շինում ենք, և դրանով միջոց ենք տալիս գիւղացիներին կարճ ժամանակում և էժան գնով իրանց ցորենը աղել: Ենք ժամանակակից եղանակով մշակում ենք մեր հողերը, մեզանից օրինակ են առնում մեր դրացիները: Այս դէպքում մենք դառնում ենք մի տեսակ ուսուցիչ, քաղաքակրթութիւն տարածող գործօններ:

Մի վայրկեան նա լռեց, մի ծխախոտ վառեց և ապա շարունակեց նոյն ստանաբառութեամբ և դրական տճով.

—Ես քեզ ցոյց տւեցի հողեր, որոնք ջրի պակասութիւնից չեն մշակւում կամ մշակւում են շատ անպաշտօն: Եթէ մեր ծախսով այդ հողերով մի առու անցկացնենք, նախ, մենք ինքներս կ'ունենանք մեծ շահ, երկրորդ, գիւղացիները մեզ կը համարեն հազազիւս բարերարներ, մեզ երկրպագութիւն կը տան, կը սպաշտեն: Ես կարող եմ հարիւրաւոր օրինակներ առաջ բերել, բայց կարծեմ այսքանն էլ բաւական է: Այս է գործնական մարդու բերած օգուտը, այսինքն ինձ նման մի մարդու, որ, եթէ ուզում ես, միայն իմ անձնական շահերը ունեմ աչքի առաջ: Բայց ինչեր կարող է անել մի ուրիշը, դիցուք հէնց քեզ նման մի զաղափարական մարդ: Դու ունես բաւական մեծ հարստութիւն, և նա օրից օր պէտք է աւելանայ: Եթէ չես ուզում խոշոր դրամատէր կամ, ինչպէս ասում ես, մեծ կալածատէր լինել, շատ գեղեցիկ, մի լինիլ: Բայց մի թողնիլ, որ քո հարստութիւնը իզուր տեղը անօգուտ մնայ: Եկ այս-

տեղ, բնց արա քո հաշուով ուսումնարաններ աղքատ զիւղիրում; թող հարիւրաւոր զիւղական խեղճ մանուկներ ձրի կրթութիւն ստանան: Հիմնիր մի զիւղատնտեսական դպրոց կամ մի օրինակելի ագարակ և թող այնտեղ զիւղացիները զասեր առնեն զիւղատնտեսութեան զանազան ճիւղերի վերաբերմամբ: Եւ միթէ այս միայն կարող ես անել զուր Գո առջև — զործելու մի այնպիսի ասպարէզ կայ, որ, ճշմարիտ, զարմանում եմ, ինչպէս զուր արհամարհում ես այդ ասպարէզը և յուսահատ կռիւ ես մղում մի ամբողջ հասարակութեան դէմ:

Նա ոտքի կանգնեց, մի անգամ անցաւ սենեակի միւս ծայրը, յետ դարձաւ, նորից նստեց և շարունակեց.

— Ես ինքս մեծ հետաքրքրութեամբ հետևում եմ քո զործունէութեանը և, անկեղծ եմ ասում, զարմանում եմ քո եսանդի, հոգեկան ոյժի և մտաւոր կարողութեան վրայ: Տեսնում եմ, որ զուր մեր թմրած հասարակութեան մէջ մտցրել ես նոր մտքերի մի թարմ հոտանք: Այն, այդ ամենը հարկաւոր է, հիանալի է և ծափահարութեան արժանի, բայց, ասա խնդրեմ, ինչ վերջ պէտք է ունենայ քո կռիւր: Չեմ ասում քեզ համար, քեզ այնքան պէտք է հարածին, որ վերջը ոչնչացնեն ինչպէս մի մարդու, որ աշխատում է քանդել խաւար ամբոխի համար սրբութիւն համարած վնասակար նախապաշարմունքները: Այն, ինչ օգուտ, անմիջական օգուտ, պէտք է ունենայ քո զործունէութիւնը այն թշուա ժողովրդի համար, որին քո աչքով տեսար: Մինչդեռ հէնց այդ ժողովուրդն է կարօտ վերակենդանութեան և հէնց նրա անմիջական շահերի համար և նոյն իսկ նրա շրջանում պէտք է զործել:

Վերջին խօսքերը արտասանելիս Հարիգեանի կոշա ձայնի մէջ զգացւեց մի բաւական մեղմ հնչիւն: Կարծես, նա փոքր ինչ զգացւել էր, երկար տարիներից չետոյ առաջին անգամ այդպէս մտերմաբար խօսելով իւր նախկին ընկերոջ հետ: Գիմաքսեանը լուրջում էր՝ առանց հերքելու նրա ասածները կամ համաձայնութեան որ և է նշան ցոյց տալու: Նա, կարծես, մտքում կշռում էր Հարիգեանի իւրաքանչիւր խօսքը:

— Կարելի է ես սխալուում եմ, — շարունակեց Հարիգեանը, բայց իմ խորին համոզմունքը այս է. զուր այստեղ, քո ծննդավայր

հողի վրայ, կարող ես աւելի օգտակար լինել, քան թէ այնտեղ, ուր այժմ գործում ես: Այս պատճառով ես շատ ուրախ կը լինեի, որ դու թողնէիր ամեն ինչ և գալիր այստեղ գործելու: Այն ժամանակ քեզ հետ կարելի է ես էլ մի քիչ զաղափարական մարդ գառնայի և միայն իմ անձնական շահերից դրդւած չ'աշխատէի: Դու կը տալիր ինձ ծրագիր—ես կը կատարէի, դու կը լինէիր կարգադրող—ես հրամանակատար, այդ ինձ համար թէ հաճելի կը լինէր և թէ բարոյապէս օգտակար:

Մի ժամանակ գրեթէ միևնոյնը առաջարկում էր և՛ Մսերեանը: Բայց այնտեղ չէր զգացում այնչափ հաւատ, համոզմունք, որչափ Հաբիգեանի խօսքերի մէջ: Դուցէ այդ նրանից էր, որ իդէալիստի բերանով խօսում էր մի ժամանակաւորապէս վհատւած հողի, մի վշտացած սիրտ, կեանքի անաջող դէպքերի տպաւորութեան տակ: Գիմաքսեանը զգաց, որ Հաբիգեանը համեստութիւնից է ասում, թէ իւր գործունէութեան շարժառիթը անձնական շահերն են: Նա կարծում էր, եթէ այդ մարդը, լինէր նրա հարստութեան լիազօր տէրը, նոյնը պէտք է անէր, ինչ-որ առաջարկում էր նրան:

Այս խօսակցութիւնից մի քանի օր անցած Գիմաքսեանը մի անգամ ևս Հաբիգեանի հետ ճանապարհորդեց զիւզիրը և այս անգամ աւելի մօտիկ ծանօթացաւ ժողովրդի կարիքների հետ: Այնուհետև յաճախ նա մտածում էր Հաբիգեանի առաջարկութեան մասին: Հետևե՛լ արդեօք նրա խորհրդին, թողնե՛լ գործունէութեան այժմեան եղանակը, կարե՛լ բոլոր կապերը մօտիկ անցեալի հետ և ընտրե՛լ նոր ասպարէզ:

Նա տատանւում էր, կասկածում, թէ կարող է աւելի օգտաւէտ լինել այդ ասպարիզում: Կար մի կէտ, որ նրա առջև ներկայանում էր ինչպէս մի մեծ խոչնդոտ. իւր սրտի մէջ նա չէր գտնում բաւականաչափ սէր դէպի գաւառական կեանքը: Նա զգում էր, որ ոչ մի նպատակ չէ կարող իրան երկար ժամանակ պահել մի շըրջանում, ուր չէր տեսնում մտքի պատերազմի համար քիչ թէ շատ ընդարձակ ասպարէզ: Այ, ոչ. նա իւր մէջ չէ գտնում խաղաղ, անխռով գործունէութեան ձգտում, նա ծարաւ է հասարակական կուէի: Նա չէ կարող շնչել և սպրել առանց հաւասար թշնամիների:

«Աւելի լաւ է միշտ հալածւում, միայն թէ կուտմ՝ այդ անշարժ հասարակութեան նախապաշարմունքների դէմ, քան թէ թմրած կեանք վարեմ մի խուլ անկիւնում: Ի՞նչ կարող եմ անել զիւղական ժողովրդի համար. ճանապարհներ շինել, ջրեր անցկացնել նրա հողերով, ուսումնարաններ բաց անել: Այդ բոլորը լաւ գործեր են, մեծ գործեր են, բայց ինձ համար չեն: Հաբիգեանը աւելի յաջող կարող է կատարել այդ գործերը, քան թէ ես, որովհետեւ նա աւելի սերտ կապերով է կապւած զիւղական ամբոխի հետ...»

Եւ միթէ նա այդ գաղափարն էր փայփայել տարիների ընթացքում: Միթէ երբ և է երևակացել էր, թէ իւր կեանքը պէտք է դնի մի նեղ շըջանակի մէջ:

«Ներքեւից սկսել, ինչպէս ասում էր Մսերեանը և ինչպէս կրկնում է այսօր Հաբիգեանը: Իսկ եթէ ես այդպիսի ձգտում չունեմ, միթէ կեղծ եմ, ստեմ և սկսեմ գործել հակառակ իմ զգացումների: Այ, չեմ ուզում, չեմ կարող: Թող այս լինի անհամեստութիւն, բայց ես իմ մէջ զգում եմ «վերեւից» ազդելու ոյժ: Այո, ես չեմ կարող հասարակ գործիք լինել, բայց կարող եմ գործիքներ պատրաստել: Ես այդ կասպացուցանեմ և ընդունակ եմ ապացուցանել: Չէ որ եթէ մի կողմից ինձ հալածում են, միւս կողմից կան մարդիկ, որ ինձ հաւատում են, որոնց վրայ ես ազդեցութիւն եմ արել...»

Դարձեալ նրա միտքը պարզեց, սիրտը զրգուեց: Դարձեալ նրա աչքի առջև պատկերացաւ մի լուսաւոր ապագայ, դէպի ուր վճռել է և պէտք է դիմէ իւր ամբողջ կեանքի ընթացքում: Անցան բուսական տատանումները, կասկածները և նորից նա հեռաքրքրեց տեղական հասարակական կեանքով: Նա հանդիպեց նոյն սիրալից ընդունելութեան, նոյն յարգանքին, ինչ որ առաջ: Կրկին նրան շրջապատեցին այն մարդիկ, որոնց մտքի և սրտի վրայ նա ազդեցութիւն էր ունեցել: Այ ոք կասկածանքով չէր վերաբերում դէպի նա: Երևի կամ նրա մասին տարածւած լուրը չէր հասել իւր հայրենի քաղաքը կամ հասել էր, և ոչ ոք նշանակութիւն չէր տալիս նրան:

Օրերը անցնում էին օրերի կտուից, և նա դեռ չէր մտածում Թիֆլիզ վերադառնալու մասին: Այն զգացումները, որ այն-

քան տանջում էիր նրան, այժմ մեղմացել էին և ճնշող ներգործութիւն չէին անում նրա վրայ: Առաւօտները նա զարթնում էր վաղ, զբօսնում էր պարտիզում, խաղում էր իւր քրոջ զաւակների հետ, ապա փակուում էր իւր սենեակում և երկար ժամանակ պարապւում:

Երբեմն միայն առանձնութեան մէջ նրա սրտում բարձրանում էր մի թեթեւ փոթորիկ: Նա չիշում էր իւր անցեալի ամենածանր րոպէները և ամենից պարզ ու որոշ պատկերանում էր այն վերջին երեկոն, երբ նա խորհել էր ինքնասպանութեան մասին: Աչ, ոչ, այլ ևս նա այդչափ չի յուսահատուիլ, այդ րոպէները անցան, գնացին անդառնալիս: Այժմ նա բժշկուել է և եթէ ոչ բոլորովին, շուտով, շուտով կը բժշկուի:

«Նա զգում եմ, որ իմ մէջ մի ինչոր փոփոխութիւն է կատարւում,—գրում էր նա Մտերեանին իւր վերջին նամակում,—թէ ինչ կը լինի վերջը—չը գիտեմ: Բայց յոյս ունեմ, որ դու ինձ այլ ևս այնպէս չես տեսնիլ, ինչպէս էի մի ժամանակ... Անցեալ նամակումս ես գրել էի քեզ Հաբիգեանի մասին, այն, նա հազազիւտ մարդ է: Իմ մէջ չզացել է մի միտք—ձեզ երկուսիդ մօտեցնել միմեանց մի ընդհանուր գործով: Այսպիսի մի գործ կազ, և ես յոյս ունեմ դու յանձն կառնես նրան ծառայելու: Բայց առ այժմ քեզ ոչինչ չեմ գրիլ այս մասին, շուտով անձամբ կը տեսնուենք և կը խօսենք... Մի կարծիլ, որ այստեղ անգործ նստած եմ, երբէք ես այնպէս զբաղւած չեմ եղել, ինչպէս այժմ... Յը տեսութիւն, նամակ մի գրիլ, սպասիր ինձ...»

Երբեմն նա կանչում էր իւր մօտ Հաբիգեանին, կրկին և կրկին անգամ հարցուփորձ էր անում իւր այցելած գիւղերի մասին: Առանձնապէս նա հետաքրքրւած էր գիւղական մանուկների թւով: Նա զանազան հաշիւներ էր անում, գրում էր, մտածում և ստէպ ստէպ այցելութիւն անում տեղական թեմական առաջնորդին:

Հաբիգեանը հետաքրքրւած հարցնում էր, թէ նա ինչու համար է այդ տեղեկութիւնները հաւաքում: Բայց Դիմաքսեանը ոչինչ չէր պատասխանում: Մի անգամ նա միայն ասաց անորոշ.

—Ուզում եմ քո աչքին անօգուտ մարդ չերևայ...

XVII

Մօտ երկու շաբաթ անկողնում պառկելուց յետոյ Բարաթեանը կարողացաւ, վերջապէս, ոտքի կանգնել: Բայց նա բոլորովին չէր առողջացել: Բժիշկներից ոմանք խորհուրդ էին տալիս նրան գնալ արտասահման և այնտեղ ենթարկել մի զժւարին օպերացիայի, եթէ կամենում է միանգամ և եթէ արմատապէս բժշկել ժառանգական ցաւից: Եւ նա մտապիւր էր հետեւել նրանց խորհրդին:

Առ այժմ նա կարգադրում էր իւր հայրական գործերը: Նա վճարեց իւր բոլոր պարտքերը և, ժառանգութիւնը հաստատելով իւր անունով, ապահովեց իրան բոլորովին: Այժմ նա իրան զգում էր աւելի բազմաւոր քան երբ և է զգացել էր: Թուր էր նրան, որ դրամական վարկի հետ նորից ամրանում է և իւր բարոյական վարկը: Հատարալութիւնը այլ ևս առաջւայ պէս չէր զբաղւում նրա ընտանեկան կեանքով, և կարծես ամենքը սկսել էին մոռանալ նրա մասին տարածւած աննպաստ լուրերը:

Երբեմն նա յիշում էր այրի Բախտամեանից ստացած վիրաւորանքը, բայց յիշում էր վայրկենաբար, առանց երկար մտածելու այդ մասին:

«Բարոյական վիրաւորանքը, ասում էր նա ինքն իրան, այն ժամանակ է աղլու, երբ կատարւում է հրապարակօրէն: Այդ կիներ երբէք չի համարձակւիլ ուրիշին հաղորդելու ապտակի մասին, ուրեմն ինչու արիւնս պղտորեմ մի շնչին բանի համար: Այո՛, մարդիկ շատ անգամ ոչինչ բանից իրանց համար տանջանք են ստեղծում: Ճշմարիտ էր ասում հայրս, թէ «ինչքան քիչ մտածես վերքիդ մասին, այնքան նա քեզ քիչ ցաւ կը պատճառի...» Այո՛, այո, չը մտածել, այլ ապրել է հարկաւոր և միայն ապրել...»

Յաճախ նա տեսնւում էր Վէքիլեանի հետ: Նրանց յարաբերութիւնները շարունակւում էին առաջւայ ուղղութիւնով, թէև զգալի էր, որ իրաւաբանը իւր սրտում ամեն կերպ աշխատում էր թագցնել մի տեսակ ատելութիւն զէպի իւր ընկերը:

Առաւօտ էր: Քէյի բաժակը առջևը դրած, Բարաթեանը կարդում էր օրւայ լրագիրները, երբ ներս մտաւ Վէքիլեանը բոլորովին անսպասելի: Երբէք նա այդպէս վաղ չէր այցելել իւր ընկերոջը:

— Ես եկել եմ մի անչետաձգելի և կարևոր գործի համար, —

ստաց նա լուրջ ձայնով, — և այսպէս վաղ եկաց, որ քեզ տանը տեսնեմ: Լսիր, այրին ուզում է Պետար Սոլումոնիչի կտակի դէմ դատ բաց անել:

— Մի՛թէ, — արտասանեց Բարաթեանը անտարբեր:

— Ես այդ իմացաց երէկ զիշեր կլուբում: Աջտեղ քեզ շատ պորեցի, բայց չը տեսայ...

— Երէկ թատրոնից գնացի Կրուժոկ ընթրելու: Ո՞ւմ միջոցով է ուզում դատ բաց անել:

— Փաստաբանի:

— Մի՛թէ կան այնպիսի փաստաբան, որ այդ գործը յանձն առնի:

— Կան փաստաբաններ, որոնք ոչ մի գործից չեն հրաժարոււմ որքան նա անարդար լինի: Այրին մի այդ տեսակ մարդու է զիմեւ:

— Աս, — արտասանեց Բարաթեանը անորոշ, — ուրեմն նա քո և Ամբակում Աջանասիեւիչի դէմ վատ խնդ է սկսում...

— Ինչո՞ւ միայն իմ և Ամբակում Աջանասիեւիչի, գուցէ և մի ուրիշի դէմ, — նկատեց Վէքիլեանը խորամանկութեամբ:

Լուրը Բարաթեանի վրայ վատ սպաւորութիւն էր գործել, իսկ իրաւաբանի վերջին նկատողութիւնը աւելի վախեցրեց նրան: Նորից նրա աչքի առջև պատկերացաւ դատաստանի խայտառակ պերսպեկաիւր, նորից նա իւր անունը, պատիւը և վարկը տեսաւ հասարակութեան բամբասանքին ենթարկած:

— Մի՛թէ տիկինը այդ բանը կանէ, — հարցրեց նա, դեռ ևս կարողանալով զսպել իւր վրդովմունքը:

— Եթէ չը կամենայ էլ, փաստաբանը անպատճառ կը համոզի նրան անել:

— Բայց կը յաջողի՛ նրան դատը:

— Դժուար է նախադուշակել, օրէնսդրութեան մէջ կան այնպիսի բաց տեղեր, որոնք շատ անգամ ճարպիկ փաստաբանի ձեռքում յաջող գործիք են դառնում: Ես այդ դատից վախնում եմ:

— Վախենալով բան չի լինիլ, պէտք է գործել: Ի՞նչ ես մտադիր անելու:

Վէքիլեանը մի քանի վայրկեան մտածեց, սպա զրական եղանակով պատասխանեց.

— Իմ խորին համոզմունքով քանի որ գործը սկսած է,

պէտք է նրան խափանել: Եթէ այրին մինչև անգամ բոլորովին էլ զատը տանուլ տայ, դարձեալ դատաստանական պրոցեսսը վտանգաւոր է: Ձեմ կարող ասել, թէ նա ումի նիւթականին կը վնասի, բայց թէ բարոյական վնաս կունենայ — դա անհերքելի է:

— Ձեմ հասկանում ասածդ:

— Պէտք է ասած, — շարունակեց Վէքիլեանը նոյն եղանակով, — որ այդ տեսակ գործերում շատ անգամ մի երրորդ, չորրորդ, մի չէզոք համարւած մարդ աւելի է պատժուում, — բարոյապէս եմ ասում, — քան թէ դատին անմիջապէս խաւը մարդիկ...

Այս անգամ ակնարկը կարօտ չէր բացաւրութեան. սակայն Բարաթեանը դարձեալ փորձեց իրան չը գիտցող ձեւացնել և ասաց.

— Այո՛, քո ասածը ճիշդ է, այդ պատահում է, ուրեմն աշխատիր դատի առաջն առնելու...

— Ես կը կամենայի, որ դու էլ մեզ օգնես այս գործում:

— Ես ինչ կարող եմ անել:

— Պէտք է փաստաբանին կաշառել:

— Կաշառել:

— Այո՛, դա միակ միջոցն է խաչատուակ դատից ազատելու:

— Էէ, շատ լաւ, ինչո՞ւ չես կաշառում:

— Երէկ գիշեր Ա՛բակում Ա՛թանասիւեւիչը և ես վճուեցինք այս գործը քեզ յանձնել:

— Ի՞նչ:

— Այո՛:

— Ինչո՞ւ:

— Որովհետև թէ ինձ և թէ նրա համար անչարմար է:

— Բայց, ասա խնդրեմ, ես ինչո՞ւ պիտի խառնեմ այդ գործին:

— Այդ, կարծեմ, քեզ աւելի յայտնի պէտք է լինի, քան թէ ինձ...

Բարաթեանը նայեց ընկերոջ երեսին և, աշխատելով անփոյթ՝ ժպտալ, արտասանեց.

— Դու, երևի, ինձ հետ կատակ ես անում:

— Երբէք:

— Ուրեմն աւելի պարզ խօսիր:

Իրաւաբանը մի առժամանակ լռեց, սեղմեց շրթունքները ատամներով և, վերջապէս, ուղիղ նայելով Բարաթեանի երեսին, ասաց.

— Լսիր, դու միշտ եղել ես զգոյշ, խոհեմ և խելօք: Հէնց այդ յատկութիւններից համար ես քեզ միշտ յարգել եմ և այժմ էլ յարգում եմ: Այս անգամ էլ եղիր զգոյշ, խոհեմ և խելօք, մի՛ ստիպիր ինձ ամեն բան բացադրել, հասկացիր, որ քո անունին վտանգ է սպառնում:

Բարաթեանը լռեց և ընկաւ մտատանջութեան մէջ: Նա չէր կամենում իսկոյն, առանց ընդդիմութեան, ենթարկուել իւր ընկերոջ կամքին:

— Իհտեա, — ասաց նա, — դու ինձ շատ վատ առաջարկութիւն ես ասում. կաշառել և կաշառք վերցնել — միևնոյն շանցանքն է:

— Յանցանք, — կրկնեց Վէքիլեանը հեզհօրէն ժպտալով, — երանիք որ և ի՞նչ յանցանքը միայն այդ լինէր... Յամառութիւն մի՛ անիլ, դու ստիպւած ես երկու շարիքից փոքրագոյնը ընտրել:

— Ինչո՞ւ եմ ստիպւած, — գոչեց Բարաթեանը, վերջապէս, չըկարողանալով զսպել իւր վրդովմունքը:

— Ինչո՞ւ... Լսւ՛ւ, քանի որ ուզում ես խմանալ, լսիր ուրեմն: Ստիպւած ես դու, ինչպէս և՛ ես, որովհետև այրիի դատը կարող է մեր երկուսի անունին կայցնել մի կարճ ածական — զող:

— Վէքիլեան...

— Իզուր ես վրդովում: Այո՛, ես ու դու զող ենք: Չանազանութիւնը միայն այն է, որ ես հասարակ զող եմ: Իսկ դու պատուի զող: Քողնում եմ քեզ դատելու, թէ որն է այս երկուսից աւելի վատը: Բարաթեան, մենք միմեանց շատ լաւ ենք ճանաչում, այնպէս չէ, տեսնում ես, որ ես ճշմարտութիւնը քեզանից չեմ թաղցնում: Ուրեմն դու էլ ինձ հետ անկեղծ եղիր զոնէ մի օր, մի ժամ: Ամբակում Աֆանասիելիչը և ես օգտուել ենք հանգուցեալի հարստութիւնից, թէ ի՞նչպէս — դա կը պարզւի դատաստանում: Իսկ դու յարիշտակել ես նրա պատիւը, թէ ի՞նչպէս — դա էլ կը պարզւի դատաստանում: Այո՛, ես համոզւած եմ, որ ինչքան էլ դատը զգոյշ տանելի պէտք է այս գաղտնիքները պարզւեն: Այլին խելօք կին չէ. նա չէ մտածում իւր անւան մասին, կամ շատ կարելի է մտածում է, բայց յուսահատութիւնից է այդ անում: Զէ՛ որ յու-

սահառուած մարդը երբեմն կորցնում է իւր առողջ դատողութիւնը: Իսկ զու խելօք ես, զոնէ զոն մտածիր քեզ համար...

Բարաթեանը չը հակառակեց: Նա լուռ և յուզւած լսում էր, միևնոյն ժամանակ, ատելութեամբ նայելով իրաւաբանի երեսին:

— Վճռիր և իսկոյն յանձն առ, — շարունակեց Վէքիլեանը, — որովհետև անկարելի է գործը յետաձգել: Վաղը կամ միւս օրը փաստաբանը կարող է դատաստանին հնդիր ներկայացնել: Այդ մարդուն կաշառելը զժւար բան չէ, բայց դա բաւական չէ: Կրանով մենք կարող ենք միայն ստիպել նրան գործից հրաժարուել: Բայց ուրիշ փաստաբաններ շատ կան: Անհրաժեշտ է այրիին էլ կաշառել: Վերջապէս, ես ինքս այժմ տեսնում եմ, որ անգթութիւն է այժմեան խեղճ կնոջը թողնել դրութեան մէջ: Բայց այդ արդէն իմ և Ամբակում Աֆանասիուի զործն է. մենք վճուել ենք նրան մի կերպ գոհացնել:

Երկար խորհրդակցելուց յետոյ, վճուեցին այսպէս անել: Վէքիլեանը հէնց այսօր Լեթ Բարաթեանին կը բռնուի հասարակ կերպով կը ծանօթացնի այրիի փաստաբանի հետ: Բարաթեանը խօսք բաց կ'անի ապագայ դատի մասին, ի հարկէ, զգուշութեամբ, որ փաստաբանին չը խրոնկեցնի: Իբրև հոգաբարձու նա իրաւունք ունէ պաշտպանել Ներսիսեան դպրոցի շահերը, որովհետև եթէ կտակը քանդուի, դպրոցն էլ կը զրկուի իւր մասից: Այսպիսով նա փաստաբանին կը ներկայանայ ինչպէս մի հիմնարկութեան շահերի պաշտպան, և ինքն ըստ ինքեան ոչ մի կասկած չէ կարող տեղի ունենալ:

Այդ օրից սկսած Բարաթեանը հանգստութիւն չունէր: Նա մոռացաւ ամեն ինչ և սկսեց հետամուտ լինել, որ մի կերպ խայտառակ դատի առաջն առնի: Չընայելով, որ արդէն լրացել էր իւր որոշած ժամանակամիջոցը, նա դեռ չէր մտածում երեխաներին բերել տալ Գայիանէի մօտից: Այն ինչ՝ ամառուայ շոքերը վրայ էին հասել, հարկաւոր էր երեխաներին ամառանոց ուղարկել:

Տիկին Սալամբէկեանը իւր սանիկներին արձակուրդ էր տւել: Մնում էին նրա մօտ միայն մի քանի գեշերթիկներ, որոնց ծնողներն օտար քաղաքներումն էին: Նա խնդրում էր Գայանէին վերցնել երեխաներին և նրա հետ միասին տեղափոխուել մօտակայ գիւղերից մէկը, ուր նա ամառանոց էր վարձել: Բայց Գայիանէն

զեռ չէր վստահանում այդ անելու: Օր օրի վրայ նա սպասում էր, թէ անհն ներս կը մտնի Բարաթեանի ծառան և կը պահանջի երեխաներին: Սարսափով, այն, կատարեալ սարսափով նա երեւակայում էր այն րոպէն, երբ նա ստիպւած պէտք է լինէր բաժանուել: Մի ամսւայ ընթացքում նա այնպէս ընտելացել էր իւր զաւակների ներկայութեանը, որ դժւարանում էր հաւատալ, թէ կարող է մի օր անգամ առանց նրանց ապրել:

Երկդիմի վիճակն օրից օր ազդելով, դարձրել էր նրան նեարգային, անհամբեր, ամեն անգամ երբ նայում էր երեխաների անմեղ աչքերին, յիշում էր նրանց դրութիւնը, նրա սիրտն էր մորմոքւում: Պէտք է վերջ տալ այդ վիճակին, դժւարէ, անհնարին է երկար ապրել այդ անորոշութեան մէջ:

Եւ ոչ մէկը չէր կարողանում նրան մի որոշ ելք ցոյց տալ: Տիկին Սալամբէկեանը ձգնում էր ամեն կերպ մխիթարել նրան: Աշխատում էր համոզել, թէ չը պիտի շատ էլ փափկասիրտ լինել, թէ երեխաներն իրանց հարազատ հօր մօտ պէտք է գնան և ոչ թէ օտարի, թէ Գայիանէն նրանց դարձեալ կըտեսնի և այլն և այլն...:

Երբեմն նա փորձում էր մինչև անգամ ամաչացնել Գայիանէին, կպչելով նրա ինքնասիրութեանը:

—Չըգիտեմ, ինչպէս ես համարձակում ուսումնարան բաց անել ուրիշներին երեխաներին կրթելու, երբ քո սիրտը միայն քո զաւակներին ես նւիրել: Աչ, դու ետասէր ես, թոյլ ես, դու չես կարող դաստիարակ լինել...:

Այս խօսքերը ի գուր չէին անցնում, ազդում էին Գայանէի վրայ: Նա սիսեց մտածել, որ իրաւ ինքը չափազանցութեան է հասցնում իւր մայրական սէրը: Այն, պէտք է վերջապէս զսպի իւր զգացումները հէնց նոյն իսկ իւր զաւակների ապագայի մասին պարզ մտքով խորհելու համար: Եւ անհն նա ինքն իւր մոքում աշխատում էր հաշուել նոյն իսկ ծայրայեղ թշւառութեան հետ: Նա երեւակայում էր ամենամեծ դժբաղդութիւնը, այն է, որ ինքն իբրև թէ բնաւ զրկւած է երեխաներից: Ե՛նչ պէտք է անել, չէ՞ որ կան մայրեր, որոնք թաղել են իրանց բոլոր զաւակներին. հապա ինչպէս են նրանք կրում իրանց վշտերը: Աւերջապէս, ինչո՞ւ յուսահատուել, խօսմ այդ երեխաները պէտք է մեծանան, պէտք է հասկա-

նան իրանց զրութիւնը: Այն ժամանակ նրանք իրանց կամքով կը դան իրանց մօր մօտ... Այն, պէտք է ապրել նրանց մի օր բազդաւոր տեսնելու համար...:

Այս խորհրդածութիւնները հեռզնետէ ամբացնում էին նրա հոգին: Նա վճուեց արիութեամբ սպասել ամէն տեսակ հարւածներէ: Ահա ինչու երբ, վերջապէս, Բարաթեանը ծառային ուղարկեց երեխաների ետեւից, նա շատ էլ չը յուսահատուեց: Նա խնդրեց բժիշկ Սալամբէկեանին մի անգամ ևս միջամտել: Թող Բարաթեանը թոյլ տայ Փամարին յանձնել տիկին Սալամբէկեանի պարտեզը, իսկ Աւոնիկին պահել իւր մօտ մինչև աշուն:

Բժիշկն անմիջապէս դնաց Բարաթեանի մօտ: Հակառակ սպասածին, Բարաթեանը նրան այս անգամ ընդունեց սիրով: Նա հոգեկան լաւ տրամադրութեան մէջ էր: Բանն այն էր, որ մի քանի օր առաջ յաջող կերպով գործն աւարտել էր այրի Բախտամեանի փաստաբանի հետ: Աւերջապէս, Ամբակում Աֆանասեւիչն էլ գոհացրել էին այրիին, նշանակելով նրա համար առանձին թոշակ: Այսպիսով գատի առաջն առնել էր, և թէ Բարաթեանի թէ Աւեքիլեանի ու Ամբակում Աֆանասեւիչի անունները, ազատել էին սպառնացող փասնոցից:

Այժմ Բարաթեանը զբաղւած էր մի քանի մանր գործերով, որոնց վերջացնելուց յետոյ պէտք է ուղևորէր արտասահման: Նա սաստիկ ջանկանում էր ձանապարհորդել կամ, ինչպէս ինքն ասում էր, «մի փոքր ազատ օդ շնչել»: Նա ինքն ուրախ էր այժմ առանց երեխաների ապրել բոլորովին համոզւած, որ իրանց մօր մօտ նրանք աւելի լաւ են խնամուում: Ծառային նրանց ետեւից ուղարկելը արտաքին պատճառ ունէր. նա ուզում էր ցոյց տալ, որ իւր զաւակներին չէ մոռացել: Իսկ մտքում վճռել էր ստիպողական դիրք չընդունել, եթէ Պայիանէն մի փոքր անգամ ընդհմութիւն ցոյց տայ:

Իւր իսկական միտումները բժիշկ Սալամբէկեանից թազցնելով, նա արտաքուստ դարձեալ չամառուեց երեխաներին իրանց մօր մօտ թողնելու: Սակայն երբ բժիշկը սկսեց թախանձել, նա, իբրև թէ ակամայ արտասանեց.

— Թող քո ասածը լինի, ես խղճում եմ այդ կնոջը...

Բժիշկը զգացած յայտնեց նրան իւր շնորհակալիքը և շտապեց ուրախալի լուրը Քաչիանէին հաղորդել:

Նրա զուրս զալուց յետոյ Բարաթեանի դէմքը սկսեց փայլել և նա ինքն իրան ասաց.

«Այժմ դու կրկին անգամ ամուրի ես և ազատ... ապրիր, ինչպէս ուզում ես»...:

Նրա աչքերի մէջ ցոլաց անսովոր երիտասարդական զւարթութիւն, նա սկսեց ուրախ-ուրախ շւացնել...

Մի քանի օր անցած Քաչիանէն Սալամբէկեանների հետ ուղևորեց ամարանոց: Այժմ նա այլ ևս չէր մտածում ապագայի մասին: Նա երջանիկ էր, որ երեխաներն՝ անորոշ ժամանակով՝ իրան էին յանձնւել: Իսկ յետոյ... յոյս ունէր այլ ևս յաւիտեան չը բաժանւել նրանցից...:

XVIII

Ամառայ ճիշդ այն միջոցն էր, երբ եօթ տարի առաջ Գիմաքսեանը Թիֆլիզի փողոցները ընկած իւր համար բնակարան էր փնտրում:

Քաղաքը կիսով չափ դատարկւել էր, բոլոր քիչ թէ շատ միջոց ունեցող ընտանիքները հեռացել էին ամարանոցները: Կեանքը թմրել էր, փողոցներում շարժում չէր երևում: Ծրը մինչև երեկոյ մարդիկ արևի տապից պատասպարւում էին իրանց տներում, խանութներում: Նրջակայ լեռների ու դաշտերի խոտը չորացել էր, դեղնել ու կպել երկրին: Քուր գետը փոքրացել էր, սեղմւել, մտել իւր նեղ շաւղի մէջ և ընթանում էր մնայլ ու դանդաղ: Տխուր ու ճնշող տպաւորութիւն էր անում առհասարակ քաղաքը իւր ամբողջ կերպարանքով: Երեք կողմից շրջապատւած մերկ լեռներով, կարծես, նա պարփակւած լինէր մի եռանկիւնի կաթսայի մէջ, ուր մարդիկ դատասպարուած էին խաշելու չափ հեղձուցիչ մթնոլորտում:

Միայն երեկոցեան մութը ընկնելիս օդը մի քիչ թեթևանում էր: Այդ ժամանակ բնակիչները տներից թափւում էին զուրս, և քաղաքը փոքր ինչ կենդանանում էր: Այգիները լցւում էին, փո-

ղոցներում սխտում էր շարժում, ձիաքարշի կառքերը անդադար անցնում էին այս ու այն կողմ ուղևորներով լի: Եւ այդ շարժումը տեւում էր մինչև ուշ գիշեր, այնուհետև քաղաքը նորից նիրհում էր մինչև հետևեալ երեկոյ:

Մտերեանը ոչ մի տեղ չըզնաց ամարելու: Նա անբաժան բնակւում էր իւր առաջնայ բնակարանում: Օրերը նրա համար անցնում էին միատեսակ, ձանձրալի, տխուր: Յերէկը երկու-երեք ժամ նա լինում էր իւր պաշտօնատեղում, յետոյ զալիս էր տուն, ձաշում, քնում և շարունակ կարգում իւր սիրած հասա գրքերը:

Երեկոները որոշեալ ժամին նա դուրս էր գալիս զրօսնելու: Երբեմն այցելում էր մի փոքրիկ պարտեզ, ուր հասարակ սեղանների շուրջը յոգնած, վատակած և շոքից թուլացած մարդիկ նստած լոսակցում էին, մերթ ընդ մերթ գարեջրի դատարկ բաժակները սեղանին զարկելով, որ սպասաւորը գաց նորից լեցնելու:

Նա միշտ նստում էր առանձին սեղանի մօտ և մի շիշ գարեջուր առջևը դրած զիտում էր այցելուներին: Նա ունէր մի քանի ծանօթներ, որոնց միայն հեռւից բարևում էր: Նա դարձեալ խոյս էր տալիս հասարակութիւնից, ուստի շատերը նրան համարում էին անմատչելի, գոռոզ մինչև անգամ տարօրինակ, խենթ: Գիմաքսեանի բացակայութիւնը նրա տաղտկութիւնը աւելացնում էր: Աերջին նամակը ստանալուց անցել էր մի շաբաթ, և նա զեւ չէր գալիս: Ի՞նչն է արդեօք այդ մարդուն պահում իւր հայրենի քաղաքում, քանի որ նա երբէք այդքան ժամանակ չէ մնացել այնտեղ:

Իրիկնապէս էր: Թէ խմելուց յետոյ Մտերեանը նստած էր իւր սենեակի առջև գոնեոզ պատշգամբի վրայ: Արևը նոր մայր էր մտել, օդի մէջ թողնելով մի ծանր տօթ: Փոքրիկ գաւթում ոչ ոք չըկար: Տանտիրուհու բազերը լողում էին մի մեծ քարեայ ջրամանում, երբեմն դուրս գալով ցամաք և իրանց թւերը թափահարելով:

Մտերեանը թղթատում էր մի նոր զիրք, որ այն օրն էր գնել: Երբեմն նա նայում էր դրքի էջերին, երբեմն դէպի երկինք: Այնտեղ, զիմացի հեռու լեռան ետևից բարձրանում էր սպիտակ ամպերի մի սար, որ հեռզհետև ոււշում էր, լայնանում և զանազան ձևեր ընդունում: Արևի վերջին շողքերը արագ-արագ փոխում էին

նրա զոյնը, ներկելով մերթ մանիշակագոյն, մերթ դեղին, մերթ կարմիր և այլ զոյների խառնուրդից առաջացնում տասնեակ Քոնտաստիքական եռանդներ:

Պատշգամբի միւս ծայրում նստած էր տանտիրուհին մի պառաւ վրացի կին - իւր եօթ-ութ տարեկան թուան հետ: Նա մի սեւաշեւոյ, դեղեցիկ, աշխոյժ աղջիկ էր, որ շարունակ բարձր ձայնով ծիծաղում էր, խփելով իւր տատի ծնկներին, ուսերին, ձեռներին: Ժամանակ առ ժամանակ Մտերեանը նայում էր այն կողմ և ժպտում: Գեռահաս աղջկայ անզուսպ քրքիջները, որ բղխում էին մանկական անհոգ սրտից, մի ակասակ մեղամաղձոտ հաճոյք էին պատճառում նրան: Մի բոպէ ձեռը դնելով գրքի վրայ, նա մտքով սլացաւ դէպի իւր մանկութիւնը, այդ տասնեակ տարիների թանձրութեան ետևում կորած, մոռացւած հետաւոր անցեալը: Շատ քիչ բան էր չիշում նա այդ անցեալից կամ ոչինչ էր չիշում: Փուռում էր նրան, որ երբէք չէ ունեցել ոչ միայն մանկութիւն, այլ և պատանեկութիւն, այլ և երիտասարդութիւն, որ միշտ եղել է այնպէս, ինչպէս կա՛յ այժմ - իւր ներկայ մտքերով, հոգսերով և թախիծով:

Ահա լրացաւ նրա քառասուն տարին—չորս ամբողջ տասնեակներ: Միթէ այդ չէ ծերութիւնը: Ի՞նչ է արել մինչև այժմ, ինչ կեանք է ունեցել, ի՞նչ ուրախութիւն, ի՞նչ մխիթարութիւն: Միթէ ոչինչ և ոչինչ: Օրերը անցնում են իրանդ սովորական ընթացքով, այսօրը՝ նման երեկեան, վաղը՝ այսօրեան, և այսպէս միշտ և շարունակ... Կը հասնի մի օր վերջին ժամը, և նա այլ ևս չըկայ աշխարհի երեսին բոլոր իւր զաղափարներով, բոլոր իւր իղձերով...:

Իղձեր, արդեօք ունեցել է նա իղձ .. Ինչո՞ւ չէ, ունեցել է և այժմ իսկ ունի...: Նա շատ է վհատուել, բայց երբէք չէ կորցրել իւր յոյսը մարդկութեան լաւագոյն ապագայի մասին: Նա միշտ հաւատացել է, այժմ էլ հաւատում է, թէ ամեն ինչ պէտք է փոխուի, վերանորոգուի: Բայց այս ի՞նչ հաւատ է եղել, որ չէ սոխպել նրան գործելու իւր զաղափարների համար:

«Այն, ժամանակ է, որ ինքս ինձ հաշիւ տամ, ժամանակ է, որ ինքս ինձ հարցնեմ— ի՞նչ նպատակի է ծառայում իմ կեանքը: Միթէ ապրում եմ նրա համար, որ գիշեր-ցերէկ կարգամ և կարգում եմ նրա համար, որ օրից օր աւելի ու աւելի ծուլանամ...»

Ոչ, ոչ, այդ անկարելի է, պէտք է մի կերպ վերջ տալ այս վհատեցնող, մեռցնող միատեսակութեանը: Աններելի է, այն, մինչև անգամ կատարեալ բարոյական յանցանք է այս տեսակ բուսական կեանք վարելը...:

«Աեանք, որից ոչ-ոք ոչինչ օգուտ և ոչինչ վնաս չունի...»

Նա գիրքը քաշեց արհամարհանքով՝ մի կողմ, արմուկները յենեց պատշգամբի վանդակապատին և իւր մտախոհ հայեացքը յաւեց անորոշ տարածութեան մէջ: Նրա խաղաղ հոգու մէջ բարձրացել էր մի անսովոր մրրիկ: Նրա անդորր թախիծը տեղի էր տւել այն ծանր ինքնադժգոհութեանը, որ չափահաս աղամարդի մէջ առաջացնում է մի դառն տանջանք:

Եւ մինչ նա իւր մտքերի մէջ խորասուզւած էր, յանկարծ նրա ականջին հասաւ մի ձայն: Նա լսեց իւր անունը, նայեց աջ ու ձախ — ոչ ոք չըկար, նայեց զէպի դաւիթ և բացագանչեց.

— Արսէն...

Արդարև դա Գիմաքսեանն էր, որ ժպտալով, արագ-արագ բարձրանում էր նեղ և փոքրիկ սանդխտով զէպի վեր: Մտերեանը անսովոր աշխուժով ոտքի թռաւ, վազեց առաջ: Երկու ընկեր զրկեցին միմեանց: Այն, երբէք իղէալիստը այնքան չէր ուրախացել իւր ընկերոջը տեսնելով, որքան այժմ, ընդամենն երկու ու կէս ամիս նրան չը տեսնելուց յետոյ:

— Ո՛ւր էիր, ինչո՞ւ ուշացար, առողջ ես, ուրախ ես, — հարցնում էր նա շտապով:

Գիմաքսեանը և՛ առողջ էր, և՛ զւարթ, գոնէ այսպէս երևաց ոչ միայն նրա խօսքերից այլ և ձայնից, զէմքից և բոլոր շարժումներից:

— Երգւում եմ, — գոչեց նա, պատշգամբի վրայից վերցնելով գիրքը և վանդակապատի վրայ դնելով, — որ քեզ ճիշդ այն դրութեան մէջ եմ գտնում, ինչպէս ճանապարհին երևակայում էի:

— Ի՞նչպէս...:

— Նստած պատշգամբի վրայ, գիրքն առջևդ դրած միայն թէչն է պահատում... Բայց, սպասիր, այդ արդէն չէի երևակայում, հէր օրհնած, մի՞թէ կարելի է այդպէս նիհարել...:

Մտերեանը հառաչելով ժպտաց և ոչինչ չ'ասաց: Նա հրաւի-

րեց ընկերոջը ներս: Օրն արդէն մթնում էր: Սենեակի լուսամուտները բաց էին, օդը բաւական զովացել էր: Մտերեանը իւր ձեռքով վառեց կանթեղը, հարցրեց Նիմաքսեանին, արդեօք թէ՛ կը կամենայ խմել:

—Ես արդէն խմել եմ հիւրանոցում:

—Հիւրանոցում, միթէ դու այնտեղ ես իջւանել:

—Այո:

—Ինչո՞ւ ոչ քո բնակարանում:

—Որովհետեւ շատ կարճ ժամանակով եմ եկել:

—Այն ժամանակ ինձ մօտ կ'իջւանէիր:

—Դու էլ չը պիտի մնաս այստեղ: Բացց այդ միւլետն է, թողնենք: Պատմի՛ր ինձ, ի՞նչ կայ այստեղ, ի՞նչ են անում մարդիկ, ի՞նչ գործի են:

Մտերեանը համառօտ պատասխանեց, թէ նրա գնալուց չետոյ ոչինչ փոփոխութիւն չէ եղել, մարդիկ նոյնն են, ինչ որ առաջ, հասարակական կեանքը դարձեալ թմրել է, մտքերի կռիւ չը կայ, վերջապէս, ամենքը ցրւել են ամաբանոցները:

—Մինչև անգամ բժիշկ Սալամբէկեանն էլ, —աւարտեց նա իւր խօսքը մի անտվոր եղանակով, որի մէջ զգացում էր մի միտտեսակ դառն հեղնութիւն:

—Բժիշկը, —կրկնեց Նիմաքսեանը և մի փոքր լռեց, ապա աւելացրեց, —երևի նա այժմ բաղդաւոր է...

—Պէտք է կարծել...

Նրանք լռեցին: Մտերեանը դարձեալ հառաչելով երեսը մի կողմ դարձրեց: Նոյն վայրկեանին նա ձեռով մի շարժում գործեց, կարծես, մի միտք իրանից հեռացնելու համար:

—Ան, մոռացայ ասել, —գոչեց նա նորից զւարթանալով, — ես մի ուրախալի նորութիւն եմ իմացել:

—Այն է:

—Այն է, որ դու գաւառներում մեծ չարգանք ես վայելում:

—Ի՞նչպէս, միթէ դու գնացել էիր գաւառները:

—Ոչ, ես այստեղ իմացայ: Մի փոքրիկ պարտեզ կայ, որտեղ մի գերմանացի դարեջուր է ծախում: Երբեմն ես երեկոները գնում եմ այնտեղ կէս ժամ մի ժամ նստելու: Կա մի տեսակ ամաբային

կրուք է, ուր մեծ մասամբ հաւաքուում են զաւառներից եկած վարժապետներ: Ի՞նչ խեղճ կերպարանք ունեն այդ մարդիկ և ի՞նչ շատախօսներն են: Շատ անգամ հեռւից լսում եմ նրանց խօսակցութիւնը, չըկարծես հետաքրքրութիւնից դրդւած, այլ որովհետեւ այդ մարդիկ միշտ բարձր ձայնով են խօսում: Երեւակայիր, հազիւ է պատահում, որ նրանք քո անունը չըջիշեն, քո դրածների մասին չըվիճեն: Ես միշտ նկատել եմ, որ նրանք քո մասին խօսում են յարգանքով և սիրով: Ամենքի վրայ երևում է քո մեծ ազդեցութիւնը:

Գիմաքսեանը ընդհատեց նրա խօսքը, կամենալով, որ խէստը պատմի իւր մասին: Նրա համար սաստիկ հետաքրքրական էր իմանալ, ինչպէս է իւր ընկերը վերջին ժամանակ իւր օրերը անցկացրել: Մտերեանը երրորդ անգամ հաւաչեց և մի տեսակ վհատւած ձայնով պատասխանեց.

—Միթէ քեզ յայտնի չէ, թէ ինչ եմ անում:

Երկու ընկեր նայեցին միմեանց երեսին: Գիմաքսեանը Մտերեանի աչքերի մէջ կարգաց նրա հոգեկան խորին դժգոհութիւնը իւր այժմեան վիճակից: Նա թախանձեց նրան պարզ խոստովանել, արդեօք զգճում է իւր կեանքի մէջ մի փոփոխութիւն մտցնելու կարիք, արդեօք կը կամենար վերջ տալ այդ յարատեւ և ձանձրալի միատեսակութեանը: Մտերեանը զարմացած նայեց նրա երեսին: Կարծես, Գիմաքսեանը մարդարէաբար զուշակիլ էր այն բոլորը, ինչ որ մի ժամ առաջ անցնում էր իւր ընկերոջ մոտքով: Այս հանգամանքը մի փոքր շփոթեցրեց Մտերեանին: Կարծես, նա ամաչում էր իւր հոգեկան դժգոհութիւնից, համարելով այդ մի տեսակ բարոյական ակարութիւն:

—Հասկանում եմ քո միտքը,—գոչեց նա վրդովւելով,—զուուզում ես ասել, թէ ես անօգուտ մարդ եմ: Այդ ճիշդ է և, եթէ կամենում ես իմանալ, ոչ որ այնքան զգւած չէ ինձանից, որքան ես: Եւ հէնց քո զալուցղ մի փոքր առաջ ես մտքումս վճռեցի որ և է փոփոխութիւն մտցնել իմ կեանքի մէջ: Կը յաջողի թէ չէ—չը գիտեմ, բայց իմ վճիռը հաստատ է, ես պէտք է զապարեմ անօգուտ մարդ լինելուց:

Մի պարզ, մաքուր եղբայրսիրական ժպիտ սահեց Գիմաք-

սեանի խելացի, արտայայտիչ դէմքով և նրա թափանցող, խոշոր աչքերի մէջ փայլեց մի ուրախութիւն:

—Լսիր,—ասաց նա հանդարտ ձայնով,—ես քեզ հետ կամենում եմ մի բանի մասին լրջօրէն խօսել և շատ ուրախ եմ, որ դու այդ վճիռը կայացրել ես քո մաբին: Նստիր և լսիր:

Ստերեանը, որ քայլում էր սենեակի մի ծայրից դէպի միւս ծայրը, նստեց նրա դէմ և, ձեռները չենելով ծնկներին, պատրաստեց սկանջ դնելու նրան: Գիմաքսեանը, մի ծխախոտ վառելով, սկսեց մանրամասն պատմել այն բոլորը, ինչ որ տեսել էր, ուսումնասիրել և զգացել իւր հայրենիքում վերջին երկու ու կէս ամսուայ ընթացքում: Նա ախուր գոչներով նկարագրեց գիւղական ամբոխի անտեսական և բարոյական վիճակը, նա առանձին եռանդով շեշտեց ուսումնարանների բացահայտութեան և նրանց անհրաժեշտ կարևորութեան փաստը: Նա խօսեց Հաբիգեանի մասին: Ստերեանը ձանաչում էր նրան Մոսկուայից, բայց լաւ չէր յիշում: Գիմաքսեանը պովեց նրան, ինչպէս մի եռանդուն, խելացի երիտասարդի, որի գործնական հայեացքները չեն խանգարում նրան լինել մի վերին աստիճանի օդտաւէտ անդամ իւր հասարակութեան: Նա ասաց, թէ Ստերեանը եթէ լաւ ծանաչի այդ մարդուն, անշուշտ պէտք է սիրի, յարգի և մինչև անգամ մտերմանայ նրա հետ:

—Ես այս բոլորը ասում եմ քեզ նրա համար, որովհետև ես ունեմ մի ծրագիր, որ պուք երկուսդ միասին պէտք է իրագործէք: Այո, թող քեզ չըզարմացնեն իմ խօսքերը: Լսիր: Բոլոր իմ աչքով տեսածները ինձ համոզեցին, որ մեզ համար շանցանք է մեր կարողութեան չափ չ'օգնել գիւղական ժողովրդին: Եւ ահա երկար ժամանակ Հաբիգեանի հետ խորհրդակցելով, եկայ այն եզրակացութեան, որ իմ կողմից միակ օգնութիւնը կարող է լինել այն, որ ես իմ հաշուով մի ուսումնարան բաց անեմ: Հաբիգեանը ցոյց տւեց ինձ մի ամենայարմար կենտրոնական գիւղ: Այնտեղ կարող են հաւաքւել մի քանի շրջակայ գիւղերի երեխաները: Այս մասին ես հարկաւոր կարգադրութիւնները արել եմ, ուսումնարան բանալու բոլոր արդէլքները հեռացւած են: Բանը այժմ կախւած է քեզանից:

—Ինձանից:

—Այո: Ես յատկապէս եկայ այստեղ քեզ առաջարկելու, որ

յանձն առնես ուսումնարանը կառավարել: Բոլոր տնտեսական գործերը կը կատարի Հաբիգեանը, ես միայն ուզում եմ, որ դու լինես ուսումնական մասի կառավարիչը, լինես գործի զլուխ, տեսուչ... Սաս, համակրում ես իմ վճռին:

Արտասանելով վերջին խօսքերը Գիմաքսեանը ուղիղ նայեց Մսերեանի աչքերի մէջ, որ նախ նրանց մէջ կարգայ իւր ընկերոջ համաձայնութիւնը կամ մերժումը: Կէպիտոսը երեսը դարձրեց մի կողմ և լուռ նայեց կանթեղի հանդարտ և անշարժ վառւող բոցային լեզակին, կարծես, նրա հետ խորհրդակցելով, ընդունել արդեօք Գիմաքսեանի առաջարկութիւնը: Այդ տեւեց ընդամենը մի քանի վայրկեան. յանկարծ նրա աչքերը վառւեցին, նա ոգևորւեց և զգացւած արտասանեց.

— Ես ամենաանպիտան մարդը կը լինեի, եթէ չընդունեի այդ առաջարկութիւնը: Աչ միայն համաձայն եմ, այլ և յայտնում եմ իմ խորին շնորհակալութիւնը, որ մի այդպիսի ծանր և լուրջ գործ ինձ ես յանձնում:

— Ուրեմն վճռւած է, գործը չը պիտի յետաձգել: Թափիր քեզանից անշարժութեան փոշին, թող այդ միտտեսակ կեանքը, սկսիր գործել: Յիշում ես, ինչպէս մի ժամանակ դու փափազում էիր ծառայել գիւղական ամբոխին: Ահա քեզ մի շարմար առիթ և գեղեցիկ ասպարէզ, օգուիր, եթէ քո փափազը այժմ էլ կենդանի է: Ես այստեղ մնալու եմ միայն վաղը, միւս օրը անպատճառ պէտք է գնամ, դու էլ պատրաստուիր իմ հայրենիքը ուղևորելու: Այնտեղ քեզ անհամբեր սպասում է Հաբիգեանը:

— Միայն ինձ է սպասում, իսկ քեզ, դ՞ու...

— Ե՛ս... պատասխանեց Գիմաքսեանը մի քիչ տատանւելով...
եւ էլ պէտք է գնամ իմ ճանապարհով...

— Ինձ հետ միասին...

— Այո՛, գաղափարով, բայց ոչ միևնոյն ճանապարհով:

Մսերեանը երկմտաբար նայեց նրա աչքերի մէջ, չը հասկանալով նրա խօսքերի միտքը:

— Լսիր, — խօսեց Գիմաքսեանը, դարձեալ մի փոքր լուրուց յետոյ, — երբ ես իմ հայրենիքումն էի, իմ գլխում միաք ծագեց թողնել քաղաքային կեանքը և գնալ այն ճանապարհով, որ այժմ

առաջարկում եմ քեզ: Այս միտքը ինձ բաւական ժամանակ զբաղեցրեց, բայց չեղաւ մի վայրկեան, որ նա ինձ գրաւէր: Երկար մտածողութիւնից յետոյ եկաւ այն հաստատ եզրակացութեան, որ ես ստեղծւած չեմ խաղաղ գործունէութեան համար: Թոյլ տուր ինձ, Սմբատ, հաղորդել քեզ մի նորութիւն, այն է, որ իմ մէջ տեղի է ունեցել մի մեծ փոփոխութիւն, մի տեսակ բարոյական յեղաշրջում: Երկար կըլինէր բացատրել, թէ ինչպէս կատարւեց այս յեղաշրջումը և հազիւ թէ կարողանայի բացատրել: Բայց այսօր կարող եմ ասել, որ այս բոպէիս քո առջև նստած է ուրիշ մարդ, որ այժմ ես այն չեմ, ինչ որ մի քանի ժամանակ սրանից առաջ, այն վհատուող, այն ընկճուող, այն չափազանց դիւրագրգիւ, այն, այն հիւանդոտ—ինքնասէր Պիմաքսեանը, որ ամեն մի վայրկեան յուզուում էր, վրդովուում և վիրաւորուում: Ես զգում եմ, որ ինձ համար անհրաժեշտ էր տանջւել—տանջւեցի, ես պէտք է փորձէի—փորձեցի կեանքի քուրաջում: Ես շատ անգամ վհատւեցի, շատ անգամ տատանւեցի, եղան վայրկեաններ, երբ վճռում էի թողնել իմ ընտրած ճանապարհը... Բայց այժմ այդ չը կայ. այժմ այդ բոլորից քնաց իմ մէջ մի ձգտում—շարունակել այն, ինչ որ սկսել եմ եօթ տարի առաջ. կուէլ միշտ և անդադար կուէլ հասարակական ընդհանուր վնասակար երևոյթների դէմ: Այն, թող ես անհամեստ լինեմ, բայց անկեղծ. ես զգում եմ, որ միայն և միմիայն այդ տեսակ գործունէութեան փափագ կայ իմ սրտում: Խաղաղ կեանքը, անվրդով գործունէութիւնը ինձ համար հաւասար է մեռելութեան:

Նա տեղից քիչ բարձրացաւ, վառեց կանթեղի լուսից իւր ծխախոտը, նստեց և շարունակեց.

—Եւ ահա ես վճռեցի հեռանալ այստեղից, բայց հեռանալ շատ կարճ ժամանակով, միայն մի ամսով: Թէ որտեղ կը գնամ—այդ միևնոյնն է, զուցէ Պետերբուրգ, զուցէ Եւրոպա, վաղը կը վճռեմ: Ես գնում եմ ոչ թէ այստեղից ժամանակաւորապէս փախչելու և ոչ նոյն իսկ հանգստանալու համար. ես գնում եմ դարձեալ իմ սիրած գործի համար: Քեզ յայտնի է, թէ ինչու ինձ չը յաջողեց հրատարակել իմ այն զրուածքը, որի վրայ ես այնքան աշխատանք եմ գործ դրել: Վերջին երկու ամսուայ ընթացքում ես դարձեալ

Նրանով էի զբաղւած—ուզողում էի, յրացնում, սրբագրում: Այժմ նա բոլորովին պատրաստ է, և ես գնում եմ այդ գիրքը հրատարակելու: Հէնց որ գործս վերջացրի, ես դարձեալ կը վերադառնամ այստեղ, նոյն իսկ այն հասարակութեան մէջ, որի հետ եօթ տարի քո աչքի առջև ես կուեցի: Ես այդ կռիւը ապարդիւն չեմ համարում, և եթէ ինձ կը յաջողի շարունակել նոյն եռանդով, զգացումներով և յամառութեամբ, այն ժամանակ յուսով եմ, որ կը գաց մի օր և մարդիկ յետ կը վերցնեն ինձ շնորհած խելագար ածականը: Բայց թող չը վերցնեն, թող ինձ համարեն ցնորւած, թող համարեն ժամանակակից Գոն-Քիշոտ, ես բարեօք եմ համարում մարդկանց աչքում այս տեսակ համարում ունենալ և գործել նրանց նախապաշարմունքների դէմ, քան թէ գնալ ընդհանուր հոսանքով:

Նա ոգևորւած էր, նրա աչքերի մէջ փայլում էր մի նոր, արտաքոյ կարգի եռանդ, մի պայծառ լոյս, որ խրախուսանք, ոյժ և հաւատ էր ներշնչում Ստեբանին: Թուում էր, որ նա այդ բուպէին սողորւած էր մի ինչ-որ բարձրագոյն, վեհ, անհասանելի ոգով, որի առջև կարող են խորասկել կեանքի բոլոր հարւածները: Իդէալիստը իւր սրտում զգաց մի այնպիսի պատկառանք դէպի իւր ընկերը, որ հաւասար էր պաշտելութեան: Նա տեսնում էր իւր դէմ մի մարդ ամբողջովին կլանւած իւր նւիրական, սուրբ և վսեմ գաղափարներով, որոնց նա երբէք, երբէք և ոչ մի դառն հանգամանքում չը պիտի դաւաճանէր: Նա զգացւած բռնեց Գիմաքսեանի ձեռը, ամուր սեղմեց և ոգևորութեամբ գոչեց.

—Այո՛, այդ ճիշդ է, ես տեսնում եմ պարզ... Թոյլ տուր շնորհաւորել քեզ քո չաղթութեան համար...

—Յաղթութիւն...

—Այո՛, կատարեալ չաղթութիւն. դու սպանել ես քո մէջ այն օձը, որ քեզ այնքան խանգարում էր...

Արդարև, Գիմաքսեանը կարող է պարծենալ, որ նրան յաջողւեց սպանել այդ օձին: Բայց նրա մէջ ծնւեց մի ուրիշ օձ: Վստահութեամբ կարող է ասել, որ այսուհետև մարդկանց ոչ հալածանքը, ոչ վիրաւորանքը, ոչ նախանձը, ոչ ատելութիւնը նրան չեն յուսահատեցնիլ, նա քաջութիւն կուեննայ արհամարել բոլոր հարւածները, որ կուղղեն նրա անձնաւորութեան դէմ: Այն նոր օձը, որ

այժմ զարթնել է նրա մէջ, նրա անհատական խորին ետը չէ, այլ ուրիշ բան: Այսուհետեւ էլ նա կը վրդովւի, կը գրգռուի, կը բորբոքուի, բայց վստահ է, ոչ անձնական վիրաւորանքներից, այլ հասարակական կեանքի վատ երևոյթներից....

Այս խօսքերը Կա արտասանեց մի այնպիսի զգացմունքով, հաւատով և ողևորութեամբ, որ ամենաթերահաւատ մարդուն կարող էր համոզել:

—Կեցցես, ուրեմն — գոչեց դարձեալ Մսերեանը, — ես համոզւած էի, որ այդպէս էլ պէտք է լինի վերջը:

Եւ մի փոքր լռելուց յետոյ աւելացրեց.

—Յիշում ես, ինչպէս ես քեզ ասում էի, թէ կը գայ ժամանակ, որ դու ամենարազդաւոր մարդ կը լինիս... Այժմ կարող եմ ասել, որ դու բաղդաւոր ես...

Արտասանելով բաղդաւոր բառը, Մսերեանը մի սուր հայեացք ձղեց Դիմաքսեանի աչքերի մէջ: Այսպէս է արդեօք, բաղդաւոր է արդեօք Դիմաքսեանը, նա ինքը զգում է այդ բանը, և եթէ զգում է, ինչպէս վարեց այն միւս օձի հետ, որ դուցէ աւելի թունաւոր էր և՛ աւելի մեծ վիշտ էր պատճառում նրան և աւելի ջլատում նրա բարոյական ոյժերը ու հոգեկան եռանդը: Միթէ նրան ևս սպանեց, մշտապէս իւր մէջ խեղդելով անաջող սիրոյ զգացումը:

Այս հարցերը, որ այնպէս պարզ արտայայտում էր Մսերեանի հարցական հայեացքը, նոյն վայրկեանին գտան իրանց պատասխանը Դիմաքսեանի սրտում: Նա գուշակեց իւր ընկերոջ միտքը: Նա ինքը կամենում էր այդ մասին խօսել կամ մի ակնարկ անել, որպէս զի փարատի Մսերեանի կասկածը:

—Ես զիտեմ, — ասաց նա, — որ դու բաղդաւոր համարելով ինձ, չես մոռանում և իմ անհատական բաղդը: Չէ որ մարդ իրրե հասարակութեան անդամ, իբրև գործիչ կարող է բաղդաւոր լինել, իսկ իրրե մարդ իւր համար — դժբաղդ: Մի էակ, որ կարող էր իմ անհատական երջանկութիւնը տանգծել, չը կարողացաւ կամ չը կամեցաւ այդ անել: Դու զիտես այս բանը: Յուսահատութեան վայրկեաններ եղան, երբ ես կամենում էի վերջ տալ իմ կեանքին այդ էակի պատճառով: Բայց շնորհակալ եմ ձեռնադրից, այդ չեղաւ, ես կարողացայ չաղթել իմ մէջ մի սպանիչ զգացում:

Այժմ ես վերակենդանացած եմ: Քայլանէի պատկերը իմ երեւակա-
յութեան մէջ մինչև կեանքիս վերջը կը մտայ կենդանի, վառ և,
ինչպէս մի իդէալ, ես միշտ կը պաշտեմ այդ պատկերը: Բայց ինչ-
պէս իրական էութիւն, ինչպէս անհատ—նա այլ ևս գոյութիւն
չունէ ինձ համար...

Այլ ևս նա ոչինչ չասաց, և Մսերեանն էլ այդ մասին չը խո-
սեց ոչինչ:

Արդէն բաւական ուշ երեկոյ էր, բայց նրանք դեռ ոգևորւած
խօսակցում էին իրանց ապագայ գործունէութեան մասին: Այժմ
Մսերեանին այլ ևս չէր վախեցնում իւր կեանքի փոփոխութիւնը:
Այժմ նա անհամբեր ձգտում էր հեռանալ այն մթնոլորտից, ուր նա
մաշել էր իւր կեանքի կէտը:

—Այո, ասաց—նա մի անգամ ևս վճռական եղանակով և յափշ-
տակւած, այժմ կարող եմ պարծենալ, որ իմ մէջ կայ գործելու
ոյժ և եռանդ: Ես կըզնամքո առաջարկած ճանապարհով, իմ բուն
փափաղով: Դա միակ ճանապարհն է ինձ համար: Իսկ դու... դու
շարունակիր քո մրցումը հասարակութեան հետ...

Առաւօտեան եօթ ժամը դեռ չէր լրացել, Դիմաքսեանը ար-
դէն ուղքի վրայ էր: Հիւրանոցի սպասաւորի օգնութեամբ նա կա-
պում էր իւր ճանապարհի արկղերը, երգելով, շւացնելով և երբեմն
ծառայի հետ զարծախօսելով:

Մի ժամ անցած նա պէտք է ճանապարհ ընկնէր առաւօտեան
գնացքով դէպի Բաթում, իսկ այնտեղից արտասահման: Նա սպա-
սում էր Մսերեանին, որ պէտք է զար նրան ուղեկցելու մինչև եր-
կաթուղու կայարանը: Նախընթաց երեկոյեան՝ ընկերական ուրախ
ընթրիքի ժամանակ՝ նրանք վճռել էին այսպէս. Դիմաքսեանն ա-
ռաւօտեան ճանապարհ կընկնի, Մսերեանը հէնց նոյն օրը հրաժա-
րական կը տայ իւր պաշտօնից և երկու օր անցած կուղևորւի Դի-
մաքսեանի հայրենիքը: Նախ քան ուղևորւելը նա պէտք է գնար
իւր ընկերոջ նախկին բնակարանը և այնտեղից վերցնէր Սիրակա-
նին պահ տրւած գրքերը և մի քանի իրեղէնները:

Ուղևորւելու ժամանակը մօտենում էր, իսկ Մսերեանը դեռ

չէր երևում: Վերջացնելով իւր դործը, Դիմաքսեանը շտապով մի բաժակ թէչ խմեց, նայեց ժամացոյցին և սպասաւորին հրամայեց մի կառք կանչել: Ստերեանի բնակարանը ճանապարհի վրայ էր, նա կարող էր հանդիպել նրան և այնտեղ իւր վերջին բարեները տալ ընկերոջը:

Հէնց սպասաւորը նոր էր դուրս եկել, երբ ներս մտաւ Ստերեանը շտապով և շնչատառ:

—Ներողութիւն, որ ուշացայ, — գոչեց նա զւարթ եղանակով, — բայց մեղաւոր չեմ: Զուգմունքից ամբողջ դիշեր չեմ կարողացել քնել, շարունակ մտածում էի ու մտածում:

—Ի՞նչի մասին:

—Օո, մի՛ վախենալ, այժմ ես առաջւայ պէս չեմ մտածում, այժմ իմ բոլոր մտքերը կենտրոնացած են մի բանի վրայ՝ շտապել շուտով այնտեղ, ուր խօսք եմ աւել զնալու: Ահա, դու արդէն պատրաստել ես. դէ՛հ, գնանք, կարող ես ուշանալ: Բայց սպասիր, քեզ մօտ հիւր եմ բերել, կարծում եմ դժգոհ չես լինել...:

Այս ասելով, նա բաց դռներով գլուխ դուրս բերեց դէպի կորիզոր և ձայնեց.

—Արի, արի ներս...

Նոյն վայրկեանին երևեցաւ Սիրականը՝ գգակը ձեռին մաքուր հագուստով: Նա լուռ գլուխ աւեց և կանգնեց դռների մօտ: Դիմաքսեանը, ուրախ և բարեկամաբար ժպտալով, հարցրեց նրա առողջութեան մասին և, ձեռը խփելով նրա ուսին, ասաց.

—Ձը կարծես քեզ մոռացել էի, կայարան գնալիս մտադիր էի կառքը կանգնեցնել, քեզ դուրս կանչել և «մնաս բարև» ասել:

Սիրականի կլորիկ աչքի մէջ ցոլաց անչափ ուրախութեան փայլը, բայց և նոյն վայրկեանին նրա դէմքը ծածկեց տխրութեան քողով: Երկու ու կէս ամիս էր նա չէր տեսել իւր սիրելի պարոնին, այժմ տեսնում էր մի քառորդ ժամ և, ով գիտէ, զուցէ այնուհետև այլ ևս չը պիտի տեսնէր:

—Դէ՛հ, — գոչեց Ստերեանը, նոյնպէս դառնալով ծառային, — մի՛ ամաչիր, զօչաղ կաց, յայտնիր խնդիրդ, նա կը կատարէ:

Սիրականն ամաչելով և տատանելով մի քայլ առաջ դրեց և յայտնեց իւր խնդիրը: Բանն այն էր, որ նա, Ստերեանից տեղեկա-

նալով Ռիմաքսեանի զալստեան մասին և նոյնպէս այն, թէ այսօր ճանապարհուում է,— առաւօտեան կանուխ հագնել էր և եկել իրէս-լիստի մօտ: Նա չէր ուզում այլ ևս ծառայել իւր այժմեան պաշտօնում և խնդրում էր, որ Մսերեանը նրան իւր հետ տանի Ռիմաքսեանի հայրենիքը և այնտեղ բարեսիրտ պարոնի կալածներում մի պաշտօն յանձնի նրան: Իսկապէս նրա բուն ցանկութիւնն էր ծառայել անձնապէս միմիայն Ռիմաքսեանին, որին նա այնքան ընտելացել էր, որ դժբաղդ էր համարում իրան առանց նրան: Բայց նա այդ ուղղակի չասաց: Նա միայն խնդրում էր՝ ազատել իրան այժմեան պաշտօնից:

Առանց երկար տատանւելու Ռիմաքսեանը կարգադրեց Սիրականի վիճակը նրա ցանկութեան համեմատ: Մսերեանը նրան իւր հետ կը վերցնի, Հաբիգեանը կը ապ նրան մի պաշտօն առժամանակ:

— Այսինքն մինչև արտասահմանից իմ վերադառնալը: Հէնց որ վերադարձայ, իսկոյն Մսերեանին կը հեռագրեմ, որ քեզ ինձ մօտ ուղարկի: Բայց ինչու, ես նախ քան այստեղ դալը մտապիւր եմ իմ հայրենիքը գնալ, այնտեղից մենք միասին կը գանք այստեղ:

Կարճեալ ուրախութեան ժպիտը փայլեց Սիրականի թաւամազ դէմքի վրայ: Այս անգամ արդէն նա իրան երջանիկ էր համարում:

Կառքը պատրաստ էր: Սպասաւորը Սիրականի օգնութեամբ արկղերը դուրս տարեց և տեղաւորեց կառքի վրայ: Երկու ընկեր, ուրախ ու զւարթ խօսակցելով դուրս եկան: Չընայելով, որ օրը բաւական անցել էր, փողոցում մարդիկ չէին երևում: Միայն դանդաղ ընթացքով անցնում էին մի քանի սայլեր աղիւսով և կրով բեռնաւորած և մի ոտիկան՝ մայթի վրայ կանգնած՝ դիտում էր հիւրանոցից դուրս եկողներին:

Ռիմաքսեանը և Մսերեանը նստեցին կառք, Սիրականը գլակը ձեռին բռնած մնաց մայթի վրայ: Ռիմաքսեանը նրան ձեռով նշան արեց, որ կառք նստի: Նա կամեցաւ բարձրանալ կառասրանի նըստարանի վրայ:

— Աչ, այստեղ նստիր, — ասաց Ռիմաքսեանը և՛ մի կողմ քաշելով իւր առջև դրած չեմօղանը, ցոյց տւեց գիմացի փոքրիկ նստարանը, — մենք երկուսն էլ շատ փոքրիկ մարդիկ ենք, կը տեղաւորուենք ամեն մի անկիւնում:

Դա առաջին կատակն էր, որ նա արեց իւր մարմնի փոքրութեան մասին: Եւ ոչ մի կեղծիք, ոչ մի ցաւ, ոչ մի ախտասնք չը զգացւեց այդ կատակի մէջ: Նա ուրախ էր և զգացւած: Նա անընդհատ խօսում էր, ծիծաղում և սրախօսում Սիրականի վերաբերմամբ: Ս'օ, երբէք, երբէք խեղճ ծառան այնքան երջանիկ չէր եղել իւր մասին կատակներ լսելով, որչափ այդ պահին:

Բայց քանի կառքը մօտենում էր կայարանին, այնքան նրանց խօսակցութիւնն աւելի ու աւելի ընդհատուում էր և այնքան երկունկերներ զւարթութիւնը պակասում էր: Երբ նրանք կառքից ցած իջան և մտան կայարան, ընդամենը հինգ բողբ էր մնում գնացքի հեռանալուն: Սիրականը արկղերը տարաւ ուղևորների դահլիճը, շտապով Նիմաքսեանի համար տոմսակ վերցրեց: Աւղևորների թիւը շատ քիչ էր, հեռաւոր տեղեր ճանապարհորդողներ չը կային, գրեթէ ամենքն էլ գնում էին ամարանոցներ իրանց լնտանիքների մօտ:

Զանգակը հնչեց երկրորդ անգամ և այդ հնչիւնը մի տխուր զգացմունք զարթեցրեց թէ Նիմաքսեանի և թէ Մսերեանի ու Սիրականի սրտում: Չընայելով, որ երեքն էլ յուսով լին էին, թէ շուտով, ընդամենը երեք-չորս ամսից յետոյ, պէտք է տեսնւին, բայց բաժանման զգացումն աւելի յաղթող հանդիսացաւ:

Նիմաքսեանն երեք անգամ համբուրեց Մսերեանի հետ, Սիրայանի ձեռք մէջ սեղմեց մի բուռն թղթադրամ և շտապով պլատֆորմից ոտքը զրեց գնացքի կառքերից մէկի սանդխտի վրայ: Ճիշդ այն վայրկեանին, երբ նա բարձրանում էր վեր, անզգուշութեամբ ուսով կպաւ մէկին: Նա չեա նայեց ներողութիւն խնդրելու, և երես առ երես հանդիպեց Բարաթեանին:

Նրա մարմնով ակամայ մի ցնցումն անցաւ: Բայց դա մի վայրկենական անցողիկ ցնցում էր, որ ոչինչ կապ չուներ նրա զիտակցութեան հետ: Նրա դէմքի վրայ երևեցաւ սառն ժպիտը: Նա անտարբեր կերպով երեսը դարձրեց և հանդարտ բարձրացաւ վերև: Բարաթեանը կանգնած էր դեռ ցածում: Նա չէր շտապում: Սի ձեւը ճանապարհի պաշուսակին յենած, միւսով ոլորելով իւր բեխերը, նա խօսում էր իւր մօտ կանգնած Վեքելեանի հետ: Հէնց որ տեսաւ Նիմաքսեանին, նա ճիզն արեց իւր գէր և կարմիր դէմ-

քին արհամարհական արտայայտութիւն տալ: Բայց այս անգամ այդ չը յաջողէց նրան:

Նս աչքունքը թթւեցրեց և բարձրացաւ կառքի վրայ: Չանգակը հնչեց երրորդ անգամ: Փոքրիկ լուսամուտներից մէկում երեւեցաւ Դիմաքսեանի գլուխը, միւսումը Բարաթեանի զլուսը և կուրծքը:

—Վաղը չէ միւս օրը անպատճառ, — գոչեց Դիմաքսեանը, գգակը վերցնելով վերջին բարեւը տալու Մսերեանին:

—Ո՛չ, հէնց վաղն և եթ, — պատասխանեց իրէպլիտը, — հէնց վաղն և եթ, ես և Սիրականը...

Այ՛ն, տալով վերջին բարեւը իւր ընկերոջ, նա նոյն վայրկեանին մտքում վճռեց այլ ես մի աւելորդ օր չը սպասել և հէնց վաղը ուղևորւել անտեղ, ուր նա յոյս ուներ օգտաւէտ մարդ գտնալու...

Գնացքը շարժւեց, կառքերը միմեանց ետևից պղրդալով անցան Մսերեանի առջևով: Միևնոյն կառքի մէջ անցան նրա երկու ընկերները, որոնցից մէկը տանում էր նրա խորին սէրը, յարգանքը, միւսը նրա արհամարհանքը և ատելութիւնը...

ՅԱՆԿԱՑԱԾ ԵՐԳ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԿԼԵԱՆՅԻ

Իմ կոչումը չէ անհոգ երգերի մեղեդիներով
Յրօրեւ հոգու քո անդորրութիւն
Եւ ոչ լսելիք շոյել զըրախտի պատմութիւններով,
Երջանիկ դըրախտ, ո՛ւր է աշխարհում:

Բայց ես կ'ուզէի, որ իմ երգերին լրտիկ ունկնդիր՝
Հոգիդ վըշտանար իմ հոգու նըման
Եւ նեղ կըրքերից ազատւած՝ կեանք դու ներշնչէիր,
Առողջ, թարմ հոսանք լուսաւորութեան:

Կուզէի երգերս հընչէին ուժգին, ինչպէս զանգակներ,
Որ զոզանջում են արևածագին
Եւ արթնացնելով կոչում են մարդկանց դէպի սառնարներ
Աղօթք անելու սիրոյ Քարոզչին:

Էջմիածին, 1893 թ., 22 մաչիսի:

ԻՍ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱԿՈՐ ԴԵՊՔԵՐԸ ¹⁾

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑԻ

VII

Փոստով գնացինք մինչև Վլադիկաւկազ միայն. նոյնտեղից շարունակեցինք մեր ձանապարհը ապրանքակիր սալլերով: Անծանօթ է մեզ երկիրը, անսովոր է կլիման, անմարս է կերակուրը, անհիւրընկալ են մարդիկ, բայց մենք գնում ենք կամաց կամսց կրխայի քալերով, տեղ ոտքով և տեղ սալլի վրայ նստելով, զանազան արկածների ենթարկւելով: Այդ արկածներից մէկը գրելու արժանի է իր հէքիաթական բնաւորութեամբ:

Մեր քարւանը մինչև երեսուն պաւոզկաներից (սալլերից) էր բաղկացած, ամեն մէկում մի ձի միայն լծած: Ձանապարհն այնպէս հարթ էր, որ քառասուն փութ բեռան համար մի ձին էլ շատ էր: Քարւանապետը մի հսկայ էր՝ Պոլիֆէմի պէս միականի, բայց մեզ վերցնողը ամենից խեղճն էր: Հսկայի ջիգրը եկել էր, թէ ինչու իրան չենք վարձել: Սակարգել էինք մինչև Ստաւրոպոլ: Այդ Պոլեֆիմն ահա մեզ շատ էր նեղացնում և ջիգրեցնում արհամարհելով, արմեաշկա անւանում և մեր կողքից անցնելիս թէ ինձ և թէ ընկերոջս հրնդում ու ծիծաղում, իբր թէ հանաք է անում: Մեր պաւոզկապանը բարկանում էր վրան, ջանդիմանում, բայց նա աւելի էր կատաղում նրա ջգրու: Մէկ անգամ էլ, երբ պիտի մօտովս անցնէր, ես պատրաստուեցայ, և հէնց ուղեց հրնդել, ես այնպիսի մի զարկ

¹⁾ Տես «Մուրճ» № 4, և 5:

աբւի ոտքովս, որ նա բերանքսիվայր փուռեց զեանի վրայ: Նա վեր կացաւ և ուզեց բռնել ինձ, բայց ես սպառնացի, ասելով. «Չժողո- նաս, եթէ ոչ՝ խանջալս փորըդ կը կոխեմ: Ուզում ես ուժըդ փոր- ձել, ես պատրաստ եմ. առաջներին զվորումը կոխ կեւանք, ատե- նենք ո՞վ ում կը չաղթի»: Լաւ,—ասաց ուսւը,—ես քեզ կը սոգո- բեցնեմ, թէ ինչ կը նշանակի վայր գցել: Բոլոր ընկերները սկսեցին ծաղրել իրանց հսկային, և վախկոտ անւանելով՝ աւելի զրգուեցին իմ դէմ, մինչև հասանք զուրը (քարւանի կայարան), ուր իջնում և կե- բակրում էր քարւանը: Այստեղ մէջ խառնեց գործին զուրի տէրը և ասաց ինձ.—Յաղթւողը պէտք է մի վեղբօ օղի առնի. եթէ դու չաղթես, սրա փոխարէն ես կը տամ մի վեղբօ, իսկ եթէ չաղթես, ինքզ պիտի առնես:—Ես պատրաստ եմ, ասացի, թող դուրս գայ:

Ես չգիտէի, թէ ուսաներն ինչպէս են կաշում: Վրաստանի սո- վորութեամբ երկու ձեռքով խաչմերուկ բռնեցի օձիքից և աջ ծունկս չանկարծ դեանին խփելով՝ ուսիս վրայով մեր հսկային կրիպուզ արի այնպէս, որ առաջ գոգաթը դիպաւ գեանին, յետոյ մէջքի վազ փուռեց դեանին ահագին [Երմիոցով: Սարսափելի էր հարւածը, բայց վեր կացաւ տեղիցը և բողբոջեց, թէ այդ սասա- նութիւն է և ոչ կաշի. պէտք է կաշի իրանց օրէնքով:

—Այ, ասացի, կաշիլու մէջ օրէնք չկայ, այլ միայն ուժ և ճարտարութիւն: Ես կաշում եմ մեր օրէնքով, դու էլ կպիր ձեր օրէնքով. ում՝ օրէնք որ ուժով կը լինի, նա կը չաղթի:—Այ, ոչ, բղաւեցին ամենքը միաբերան, պէտք է ուսական ձեռով կաշի, եթէ ոչ՝ դու պէտք է առնես օղին:—Շատ լաւ, ասացի, կաշենք ձեր ձեռով, բայց հեռու կացէք ամենքդ էլ, ոչ ոք չժողոնայ:

Ռուսական ձեռով պէտք էր իրար գօտիկից բռնել և վայր ձգել միայն ուժի օգնութեամբ: Ինձ համար այդ անհնարին էր, հակա- աակորդս արջի ուժ ունէր: Բռնեցինք, քաշքշեցինք իրար և հա- կառակորդիս համար աննկատելի կերպով՝ մօտեցայ չանկարծ՝ իբր նրա քաշելով՝ ոտքս անցկացրի նրա երկու ոտքի մէջով և այնպէս կես աբւի, որ բոլոր հասակովը զբրբխեաց զեանին: Այս բանն այն- պէս արագ կատարեց, որ ոչ ոք չնկատեց, թէ ես ինչ արի:

Հակառակորդս վեր կացաւ և հիմա էլ սկսեց կռիւ: Նա ինձ խփեց, ես իրան, բոլոր ուսաներն իրար խառնեցան և բոլորն էլ

շների պէս թափեցան վրաս որ գզգզեն: Այդ միջոցին Միքայէլս՝ չգիտեմ որտեղից՝ ճանկ գցեց մի ահագին մահակ և՛ տուր թէ կը տաս՝ մէկ սրան և մէկ նրան...

Այս կռիւն սպանութեամբ կը վերջանար, եթէ մէջ չգային անտարբեր մարդիկ և մեզ չազատէին այդ բարբարոսների ձեռքից: Մենք արդէն մտեցել էինք Ստաւրոպոլին, միւս օր մօտ կէսօրին պիտի հասնէինք, բայց այլ ևս հնարաւոր չէր որ զրանց հետ գնայինք: Նոյն գիւղումը մասնաւոր կառք վարձեցինք և խիոյն ճանապարհ ընկանք: Սեզ բերող սաւողկապանը իր վարձն ուղեց, բայց ոչ մի կոպէկ չաւինք. ինչ որ նրան պիտի տայինք, աւելինք նորավարձ կառապանին, որ մեզ կարճ ճանապարհով թուցրեց մինչև Ստաւրոպոլ:

Ռոստով որ հասանք, մեզ մօտ մնաց միայն 12 մանէթ...

Ես իմ վաստակած փողերս հօրս էի տալիս, յոյս ունենալով՝ որ երբ կարիք ունենամ, նա էլ ինձ կը տայ, բայց նա ոչինչ չուեց, որ ես հնար ունենամ քաղաքից հեռանալ, այլ ստիպւիմ մնալ:

— Գու նորից ուզում ես գժւել, ասաց հայրս, ինչ ունիս Ռոստատան, այդ կորած աշխարհումը. ինչու ես կորչում, որդի. տեղդ չի լաւ, թէ ոտճիկդ է քիչ. լսիր ինձ, այդպէս բան մի անիր:

Մայրս էլ, որ միշտ ինձ էր սրաշաղանում, այս բանումը համաձայն էր հօրս ասածին: Լաց էր լինում ազիողորմ և աղաչում, որ չերթամ:

Ես սկսեցի նրանց համոզել մեծամեծ խոստումներով, թէ ես կերթամ ուսումնս կը կատարելագործեմ, մեծ մարդ կը դառնամ. այնուհետև գիւղում քաշած նեղութիւններից կազատւինք, էլ Եասաուլների երես չենք տեսնիլ, էլ մոզրովը մեզ չի ծեծիլ, և այլ աչտեսակ բաներ, բայց նրանք չէին համոզուում, իրանց առջև չունէին մի այլ օրինակ, չգիտէին որ այդպէս բան կարող է լինիլ. ինձ վրայ նայում էին դարձեալ իբրև անփորձ երեխայի վրայ, կարօտ ծնշղական խնամքի և հսկողութեան, չէին հաւատում, որ իմ ունեցած ուսումնս քիչ է, կարծում էին, թէ ես եմ շինում բոլոր տպած գրքերը, հեղինակը գրաշարից չէին զանազանում:

Մի և նոյն կերպով վարւեցան և իմ ընկերոջ ծնողքը: — Մենք կաշխատենք, զրանք կը գան կը տանեն, ասաց Միքայէլը, ուրեմն

մնալով ոչինչ չենք կարող աշխատել, միայն զուր ժամանակ կը կորցնենք, լաւն այն է, որ ինչ ունինք-չունինք ծախենք և ինչ որ կը զոյանայ, նրանով ճանապարհ ընկնինք: Մախեցինք ունեցածներս և հազիւ 120 մանէթ գոյացաւ, որից մի քանի մանր ծախքեր արինք ճանալի վերաբերեալ, մնաց 75 մանէթ. գրանով էլ ճանապարհ ընկանք:

Ռոստովից 12 մանէթով ճանապարհ ընկնել գէպի Մոսկւա, կարելի չէր: Մտածեցինք տեսակ-տեսակ հնարներ և վերջը մի հնարի վրայ կանգ առանք: Վճռեցինք գնալ Թէոփոսիա՝ Խալիպեան տպարանը, այնտեղ ճանալի ծախք աշխատել և ապա ճանապարհ ընկնել գէպի Մոսկւա: Գնացինք նաւը և տոմսակ առինք մինչև Քայզան, ուր մեր բոլոր փողից մեզ մօտ մնաց միայն մէկ մանէթ, քառասուն կոպէկ: Չընայած այս բանին, ես իմ կողմից շատ անհոգ էի. իմ անհոգութիւնն ազդում էր և Միքայէլի վրայ: Ես այդ ժամանակ դեռ չէի կարդացել Աերւանտեսի երգիծաբանութիւնը, և լաւ է, որ չէի կարդացել: Նրբոր կարդացի, միտս եկաւ մեր ճանապարհորդութիւնը. ես և Միքայէլն էլ նոյն էինք, ինչ որ Դոն-Քիշոտն ու իւր թիկնապահը:

Քայզանումը մի առաւօտ շատ վաղ վեր կացանք և գնացինք ծովափ լողանալու: Յունիսի վերջերումն էր: Հասանք ծովափ թէ չէ, Միքայէլը բացականչեց. — Նայիր, նայիր, Աազարոս, ձկները ծովից դուրս են եկել, որ արածեն:

Յիրաւի, ջուրը նոր յեռ էր քաշուել յանկարծ և ափի քարաղաթերում թողել անհամար ձկներ, որոնք թայրտում էին դեռ ևս կենդանի. — Այ հրաշք, այ ճանալի ծախք, ասացինք և սկսեցինք հաւաքել և մի ահագին կոյտ կազմել: Ես մնացի կոյտի մօտ, իսկ Միքայէլը գնաց, որ բաղարից մի մշակ բերէ և աման, որ ձկները տանենք ծախենք:

Մշակին 30 կոպէկ առինք, իսկ բոլոր ձկները ծախեցինք 20 կոպէկով... Այս մեզ համար մի լաւ դատ եղաւ, որ էլ միւս անգամ ձկնորսութիւն չանենք, բայց այնքան խնդացինք, որ առնազն էլի մի 10 կոպէկ կարժէնար, որ ասել է մեր փնասը յեռ ստացանք:

Այդ ժամանակ Քայզանումը բնակում էր մի աւելի մեծ ձուկը, կատարեալ Աւիաթան, որին կարող էինք աւելի թանգ ծախել... Կ.

Այլազեանի վրայ: Կա էր աղա Յարութիւն Խալիպեանը: Արդէս զի չասէն «աղան տանը չէ», ես մի թուղթ գրեցի, որի մէջ մեր նպատակը յայտնելով՝ խնդրեցի, որ մեզ ճանաչի ծախք տայ մինչև Թէոդոսիա և գրէ հաջր Այլազեանին որ այդ փողը մեր վարձից զուրս գայ:

Թուղթս ներս դնաց, ես մնացի կանգնած պատշգամբի վրայ: Մի քառորդ ժամից աղան զուրս եկաւ և ուղղակի սկսեց ջանդիմանել ինձ, թէ ինչո՞ւ եմ իւր հանգիստը խանդարել այսպիսի մի չիմար թղթով:

— Ի զուր էք բարկանում, ասացի, աղան, շատ ի զուր. ես ձեզանից ողորմութիւն չեմ ուզում, այլ աշխատութիւն եմ առաջարկում. դուք տպարան ունիք, իսկ մենք գրաշար ենք. մենք խնդրում ենք, որ մեզ ուղարկէք ձեր տպարանումն աշխատելու: Շատ շատ, դուք կարողէք ասել, որ ձեր տպարանումը տեղ չըկայ, գործ չը կայ. իսկ ես հաստատ գիտեմ, որ կայ և գրաշարներն էլ կարօտութիւն կայ: Հաջր Այլազեանը ձեզանից շատ շնորհակալ կը լինի, որ մեզ ուղարկէք: Մեր նպատակն այստեղ զալ չէր, ինչպէս դրել եմ այդ թղթումը, այլ գնալ Մոսկւա, բացք բանն այսպէս պատահեց, մեր ճանապարհածախքը հատաւ...

Խալիպեանը, որ մի դաժան կերպարանքով ծերունի էր և հէնց այդ դէմքը բաւական էր, որ մարդ սարսափէր նրանից, բացք իմ համարձակ պատասխանը լսելով՝ հանդած հրդէհի պէս թշթշաց, խեղճացաւ և աթոռի վրայ նստելով՝ մի րոպէ մտածեց ինքն իրան և մի այսպիսի բան առաջարկեց, թէ լաւ չի լինիլ արդեօք, որ հէնց ուղղակի Մոսկւա գնանք. և սկսեց հաշուել թէ որ ճանապարհով աւելի էժան կը նստի: Ես վախեցայ, թէ մի գուցէ Նազիրեանցի պէս սա էլ յետ առնի խօսքը, և Մոսկւա ուղարկելու պատրուկով և ոչ Թէոդոսիա ուղարկի, այլև օգուտ քաղելով իր մեղմանալուց, ասացի՝

— Աղա, Թէոդոսիա գնալն աւելի ձեռնտու է, որովհետև դրա համար հարկաւոր է մեզ միայն տասը մանէթ. ասաջ ուղարկեցէք մեզ Թէոդոսիա, ուր կարող ենք ճանապարհածախք վատասկել. եթէ դուք կամենաք, այնտեղից էլ կարող էք օգնել մեզ:

— Շատ լաւ, ասաց, «այդպէս անենք»:

«Այդպէս անենք», որպէս թէ ինքն էլ է մեր օգոյի վրայ մտածում: Վերջապէս ցանկալի տասը մանէթը բերաւ և մենք զնացինք Թէոյոսիս:

VIII

1862 թւականի ամառն է: Հայր Ալազեանի ամենափառաւորեալ ժամանակն է: Հին ուսումնարանում բազմաթիւ զիշերօթիկ աշակերտներ կան թալուկ դէմքերով, իսկ նոր ուսումնարանի հոյակապ շէնքն արդէն աւարտուած է. մնում է ներսի սարք ու կարքը. հիմք է ձգուած և մի եկեղեցու: Տպարանը շատ հարուստ է, բայց էլի շատ ծախք է պահանջուում Վենեցեանի հետ մրցելու համար: Միակ մարդը, որ դրանց մաղձը խառնում էր ստէպ, բռնեց հէնց մեր այնտեղ եղած ժամանակ, էլ դրանց քէֆին քէֆ չէր հասնիլ: Տեսնելու էր, թէ ինչքան ուրախացան, ինչ ինչոյք սարքեցին, երբ Խալիպեանից հեռագիր ստացւեց, թէ՛ «բռնեցաւ մեր թշնամին»:

Մենք իջանք մի սրճարանում: Աւանձին սենեակ չը վարձեցինք, որ ծախք շատ չունենանք. հէնց այնտեղ, որտեղ յաճախորդները զիշերը մինչև լոյս խաղում ու խմում էին և ահագին ազմուկ բարձրացնում թէ երգելով և թէ կուելով, մենք հէնց այդտեղ էլ պառկում էինք զիշերները մի-մի նստարանի վրայ և քնում էինք այնպէս անուշ քնով, որ բնաւ չէինք իմանում, որ մեզ մօտ աղմուկ բարձրացողներ կան: Այլ որ առաւօտեան ժամը հնդից մինչև երեկոյեան ժամը իննը օտքի վրայ կանգնած կաշխատի, կէսօրին մի ժամ միայն կը նստի ծաշելու համար, նա էլ մեզ պէս անուշ կը քնի: Սա չեմ կարծում, որ Ալազեանը կամ Խալիպեանը իրանց փառաւոր ննջարանում մեզ պէս անուշ ու հանգիստ քուն ունենային:

Քաղաք հասանք թէ չէ՛ ես գնացի հ. Ալազեանի մօտ: Ներս մտայ, ձեռքը համբուրեցի և նստեցի մօտը, չսպասելով, որ ինձ հրաւիրէ նստելու: Սխտեցի պատմել, թէ ուր ենք գնում, ինչու համար և ինչպէս եկանք այտտեղ: Հէնց այս միջոցին ներս մտաւ Յ. աէր-Աբբահամեանցը, որ տպարանի գլխաւոր գրաշարն էր: Ներս մտնելիս նա դուռը կամացուկ չեա դրաւ, որ փայտը ցաւ չզղայ:

հէնց աչնտեղ էլ կանգնեց, և աչնպէս խոր գլուխ տուաւ, որ քիչ մնաց գլուխը յատակին զիպչի. յետոյ մի քանի քաջլ յառաջ եկաւ, գահլիծի մէջ տեղը կանգնեց, մէկ էլ այցտեղ երկուտակեց մէջ տեղից, մեխեց տեղն ու տեղը, ոտքերը զինուորի պէս իրար կպցրած և երկու ձեռքը սրտին զրեց ինչան հաշկական խոնարհութեան:

Վարդապետը նրան մի քանի պատուէր տուաւ, և հրամայեց, որ մեզ էլ գործ տայ ասպարանումը: Այս աստարանին ներկայ լինելով՝ ես սկսեցի մտածել, թէ անքաղաքավարութիւն չարի արպեօք, որ առանց հրաւիրելու նստեցի մօտը. Ի հարկէ անքաղաքավարութիւն էր և մինչև անգամ յանդգնութիւն: Այս անքաղաքավարութիւնը և յանդգնութիւնը ես սովորել էի մեր Պաշտանից. նրա համար մեծ ու փոքր չկար և այսօր էլ չկայ. ամենքի հետ վարուում էր ինչպէս իր հաւասարի հետ: Յայց Տէր-Աբահամեանցի վարմունքն էլ Պաշտանցի վարմունքի ստորին ծայրն էր. եթէ յանդգնութիւն է վերին ծայրը, զգուշի է ստորինը: Այդ ժամանակ ես ինձ երագել անգամ չէի կարող, որ Երուսաղէմի գերագահ պատրիարքը իր հրաւերքին ինձ իր կողքին կընստեցնէ, իսկ ինձանից վար մեծամեծ եպիսկոպոսներին և կոնսուլներին: Ճշմարիտ է, մէկ անգամ ես արժանացել էի գեներալ Հախվերդեանցի կողքին նըստելու, բայց այդ պէտք է վերագրել նրա ծայրայեղ մարգասիրութեանը և աչն բանին, որ հարկաւոր համարեց ինձ պէս մի վայրենուն պատուարել իր պաշտպանութեան տակ, որ չըխրանեմ: Այլազեան վարդապետն անմատչելի էր իր ստորադրեալների համար Թէոդոսիայումը. նա իր փառքի վերին ծայրումն էր և ձգտում էր աւելի ևս բարձրանալու: Այսպէս չէր նա Թիֆլիսումը իր եպիսկոպոս և առաջնորդ ժամանակ. շատ էր խեղճացել և դառել զիւրընտել: Նա կուչ էր եկել Մանկունու պէս մի գեադայի ձեռքի մէջ: Թէոդոսիայումը նա թէև վարդապետ, բայց առաջնորդ էր և առաջնորդ անսահման և անկախ միապետական իշխանութեամբ, զանելով միապետի անմիջական պաշտպանութեան տակ: Առաջնորդ, ըկտոր, խմբազիր երեք պարբերական թերթերի, գրաքննիչն էլ ինքը, Խալիպեանի հարստութիւնն իր ձեռքին, բարձրագոյն հովանաւորութիւն և բարձր կապեր և յարաբերութիւն: Այս զիրքի մէջ ևս աչնքան գոռոզացաւ, որ չուզեց խոնարհիլ իր հովապե-

տին—Մասթէոս կաթողիկոսին, որի դէմ մինչև անգամ մի շրջաբերական բողոք հրատարակեց իր թեմի մէջ, բայց սրբալոյս կաթողիկոսը կարողացաւ նրա եղջիւրները ջախջախել և նախկին Ալապեանին շինել մի խրթուիլակ:

Թէոդոսիայումը մենք մնացինք ամբողջ ամառը և բոլ լողացանք Սև ծովումը: Ես լող գիտէի, իսկ Միքայէլը չըզգիտէր. նա կանգնում էր ափին մօտիկ, իսկ ալիքները մէկ ընկնում էին ոտքի տակը, մէկէլ բարձրանում գլխովն անցնում: Մէկ անգամ վստահացաւ ետեւիցս լողալ դէպի խորը, մէկ էլ տեսնեմ Միքայէլը չի երևում: Յանկարծ զլուին երևաց, մէկ էլ ծածկւեց ալիքի տակ: Շուտ հասաւ և բռնել տւի ինձանից: Միքայէլը վախեցաւ, բայց ես աւելի ևս: Այս դէպքից յետոյ վերջ տւինք մեր լողանալուն: Մէկ անգամ էլ սրճարանում մեզ կալանաւորեցին և բանտարկեցին երկու ժամի շափ: Չըզգիտէինք ինչ էր պատճառը, բայց շուտով իմացանք: Նկարիչ Ալազեանի տունը գողեր էին մտել և նրա տան կառավարչին մահացու վէրք տալով՝ յափշտակել էին թանգագին բաներ: Գողերը չէրքէզի հագուստով էին եղել, մենք էլ այդպիսի հագուստ ունէինք: Բռնաւճներին տանում էին ցոյց տալիս վիրաւորաւորին, որ ձանաչի, բայց մենք չը տեսանք նրան: Երբոր մեզ տարան ցոյց տալու, նկարիչ Ալազեանը մեզ ջոկել տաւ միւսներից և ազատել տաւ: Այդտեղ առաջին անգամ տեսայ ես հանձարաւոր Ալազովսկուն: Շատ դուր եկաւ ինձ նա իր վայելչակազմ հասակով և համակրելի դէմքով: Չըզգիտեմ ինչո՞ւ ազատել տաւ մեզ. արդեօք զիտէր, որ մենք իր եղբօր գրաշարներն ենք, թէ՛ իբրև նկարիչ՝ մեր դէմքերից նշմարեց, որ մենք դողի պատկեր չունինք:

—Ինչ և իցէ, բայց սրա համար նա ինձ աւելի դուր եկաւ: Երկու Ալազովսկիները ջոկ-ջոկ ասողի տակ էին ծնւած: Աշխարհային փառքը մէկի ետեւիցն էր վազում, միւսի՝ առջևից: Նկարիչը չէր կարող փառքի ձանկերից ազատուել, որքան էլ փախչէր նրանից, իսկ նրա եղբայրն ի դուր էր չարչարւում փառքի ետեւից հասնելու:

Ամառն անցնում էր. պէտք էր շտապել դէպի Մոսկա, որ ցուրտը վրայ չը հասնի, թէև ոռոտական ցրտի մասին մենք որոշ գաղափար չունէինք: Մեր վաստակածից մենք յետ զցեցինք միայն

չխուսն մտնէթ, որ մի շնչին գումար էր. եթէ դրանից դուրս գա-
չին Յալիպեանի տւած 10 մանէթը, որի մասին արդէն գրել էր
Ալազեանին և ես էլ էի ասել, այդ գումարն աւելի ևս կը նւա-
զէր: Սրա համար ես գնացի ամսարանոց Ալազեանի մօտ և խընդ-
րեցի, որ գրէ տպարանի կառավարչապետին, որ նոյն 10 մանէթը
չը հանէ մեզ տալիք վճարից: «Մենք, ասացի, Մոսկւայումը կը վճա-
րենք, ում որ կամենաք, կամ կուղարկենք ձեզ»:

Վարդապետը չէր ուզում համաձայնիլ, որով շատ ստորացաւ
իմ աչքումը և ես նրան յանդիմանեցի շատ խիստ խօսքերով:—Մի
նայէք, ասացի, որ ես մի գրաշար եմ. իբրև մարդ, գուցէ ձեզա-
նից ստոր չը լինիմ. գոնէ եթէ ես ձեր տեղը լինելի, ամենայն հաչ-
րական խնամք ցոյց կը տայի մեզ պէս երկոսասարգներին, որոնք
թափառաշրջիկ բախտախնդիրներ և ձրիակերներ չեն, այլ նպատակ
ունին ծառայելու ազգին կատարելագործելով իրանց ուսումն ու ար-
հեստը: Կարծում էք թէ դուք ձեր դպրոցից աւելի պէտքակաշ
մարդիկ դուրս կը բերէք, որոնց վրայ կարժէր ահազին ծախքեր
անել, իսկ մեզ պէսներին անուշադիր թողնել:

Այս խօսքերիս համար ես նրան թւացի իբրև մի յանդուգն
սրիկայ, բայց գլխիցը ռազ անելու համար.—Լաւ, ասաց. ես կը
գրեմ Գեօղչայեան Յարութիւն քահանային, որ ձեզանից ստանայ
այնտեղ: Մի թուղթ գրեց տպարանի կառավարչին, որ 10 մանէթը
չը հանէ: Զուր չէր ուրեմն իմ կասկածս, որ ունեցայ Յալիպեանի
առատաձևունութեան մասին իր ծախքով մեզ Մոսկւա ուղարկելու
հաւար: Գուցէ շատերին առատպել թւայ այս բանը, թէպէտ ոչ
ոքի իմ ճշմարտախօսութեան մասին կասկածելու տեղիք չեմ տւած,
պէտք է այստեղ վերջացնեմ այդ 10 մանէթի պատմութիւնը: Այդ
գումարը հասաւ Գեօղչայեան քահանային, բայց մեզ յայտնի չէ, թէ
նա ուղարկեց ըստ պատկանելոյն թէ ոչ: Այս անցքից մօտ 14 տա-
րի անցած՝ Ալէքսանդրապոլ եղած ժամանակս, Սուքիաս վարդա-
պետը (այժմ եպիսկոպոս) ինձ հարցրեց, թէ իրաւ է, որ դուք
Ալազեանին 10 մանէթ էք պարտ:—Այո, ասացի, եղել եմ պարտ
և վճարել եմ, բայց դուք ձրտեղից զիտէք այդ բանը: Նա պա-
տասխանեց, թէ հաւաքւած էինք կաթողիկոսի (Գէորգ) մօտ շատ
հողիք. կաթողիկոսը կարգացել էր քո բրօշուրը Ալազեանի դէմ

և նրան ջիզրացնելու համար կատակով ասաց.—ինչու չէք պատասխանում Աղայեանցին և նրան մէկ լաւ հրահանգում: Այլազեանը ոչ տարաւ, ոչ բերաւ, և կաթողիկոսին մի անկապ պատասխան տուաւ, թէ՛ ես Աղայեանցին դեռ Քէոզոսիայից 10 մանէթ պարտք եմ տւել, ցայսօր չի վճարել, կարժէ, որ ես նրան պատասխան տամ...:

—Շատ կարելի է, ասացի, որ տէրտէրը հասցրած չը լինի նրան. այդ դումարը վճարել է Միքայէլի ձեռքով, բայց նրանից չեաց առ նւազն ես տասն անգամ պատասխանած կը լինիմ Այլազեանին և նա ոչ միանգամ չի ասել ինձ, թէ իմ 10 մանէթն ինչու չէք տալիս: Յետոյ կաթողիկոսն ինչ ասեց.—Մէկ կուշտ ծիծաղեց. մենք ամենքս էլ ծիծաղեցինք... Բխր 10 մանէթն ինչ է, որ 14 տարում չմոռացւի, արդէն դաւօստն անց է կացել, ասաց Սուքիասը, քահ քահ խնդարով...:

IX

Այլազեանից հեռացայ ես մի տեսակ արհամարհանքով և անբաւականութեամբ: Այստեղ իրանք հազարներով էին կուլ տալիս անհաշիւ, իսկ մեզ տւած 10 մանէթի համար խնայողութիւն էին ցոյց տալիս: Իբրև անտես, շատ խեղճ էր Այլազեանը: Արծաթասէր չէր, փող պահել չգիտէր, իւր մասին խնայող էր և անհոգ, բայց ուտողներն ուտում էին և անագին գումարներ էին վատնւում անհաշիւ, անխնայ և անհեռատեսութեամբ: Մեծ գիտնական էր, բայց ոչ դրական, այլ բացասական մտքով առած այդ բառը: Կաւ է որ մարդ բոլորովին օգէտ լինի և պարզամիտ, քան թէ ամբարւած բացասական գիտութիւններով: Այսպիսի մարդը մի ժողովրդի զլուխ անցնելով՝ նրան կը տանէ դէպի նախապատմական խաւար դարերը: Սրանք են, որ կապկացնում են մարդիկներին և ոչ նրանք, որոնք ասում են՝ մարդը կապկից է յառաջ եկել:

—Այս մարդը շատ գիտութիւն ունի, շատ լեզուներ գիտէ, բայց խելք չունի. ինչ կասես, աղան, ասաց ինձ մէկ անգամ Գէորգ կաթողիկոսը:

—Վեհափառ տէր, ասացի,—եթէ չգիտութիւնը գիտութիւն չհամարւի, դա և ոչ գիտութիւն ունի:—Կաթողիկոսը հաւանու-

Թիւն տւեց ասածիս, բայց հաւատացած եմ, որ չհասկացաւ թէ ինչ ասացի ես... Յիրաւի, հ. Ալեազեանը զուրկ էր ժամանակակից գիտութիւնից և մանաւանդ կենցաղագիտութիւնից: Ամբողջ ազգին թողած, նա մէկ հաստ մարդու պոչից էր բռնել: Որքան անհեռատեսութիւն և անձնապատանուութիւն: «Առաջնորդ» բառը շատ շատերին է սխալեցնում: Ճշմարիտ առաջնորդը նա է, որ ժողովրդի առաջը չի կտրիլ, նրան չի կանգնեցնիլ իր քիճքի ուզած տեղում, այլ կերթայ նրա հետ ձեռք ձեռքի տւած, համախոհ և համամիտ յառաջադէմ մտքի տէր եղող մարդկանց հետ: Բայց սրա համար հարկաւոր է, որ ինքն էլ իր զարգացմամբ նրանց զաղափարակից լինի, որովհետև տատակից կարելի չէ թուզ քաղել:

Մեկտեմբերի սկզբներին ճանապարհ ընկանք Խրիմից խաղող տանող սալլերի հետ և զանազան նահանգներով անցնելով՝ և տեղ տեղ այլ բեռնակիր սալլեր տեղափոխւելով, միակերպ տափարակ տարածութիւններ կտրելով՝ դիմեցինք դէպի Մոսկւա: Այդ տարածութիւնը այնքան միակերպ էր, շատ տեղ ամաչի և անապատ, որ մարդ շուտ կարող էր ճանապարհը կորցնել և մոլորւել: Մէկ տեղ մի հոգի էր միայն մեր սալլապանը, բայց ունէր եօթը սալլ մի մի ձի լծած և կապած իրար ետևից ուղտերի նման: Գիշեր էր և քունը տարի էր սալլապանի: Երկինքը պայծառ էր և աստղալից: Նայեց սյ մեծ արջ աստեղատանը և տեսայ, որ մենք զնում ենք նրա հակառակ, այսինքն ոչ դէպի հիւսիս, այլ դէպի հարաւ: Զարթեցրի սալլապանին և ասացի, մէկ նայիր, ճանապարհդ չե՞ս կորցրել արդեօք. դու գնում ես դէպի հարաւ, յետ յետ ես գնում: Ռուսը շուտ զլխի ընկաւ, որ իրաւ մոլորւել է: Շեղւել էր մեծ ճանապարհից, որի ակերին տեղ-տեղ քարակոյտեր կալին իբրև ուղեցոյցներ: Սալլապանը վաչրենու պէս ապշած մնաց, թէ ես ինչպէս իմացայ, որ կորցրել ենք ճանապարհը:

Նոյեմբերի կիսին մենք հասանք Մոսկւա և իջանք մի գւորում: Այն, հասանք վերջապէս, բայց վնայ այնպէս հասնելուն, ինչպէս մենք հասանք: Մերկացանք բոլորովին և՛ փողից և հազուստից և հացից:

Պէտք է ասեմ, որ իմ սիրելի Միքայէլը բնաւորութեամբ բոլորովին իմ հակապատկերն էր: Մենք մի մագնիսի երկու հակառակ բևեռներն էինք: Գուցէ, էլ ի՞նչ գուցէ, հէնց այդ էր պատճառը

մեր օրինակը չը տեսնուած առատութեան բարեկամութեան: Ես գիւրազրգիռ էի, իսկ նա պաղարիւն. ես շռայլ էի, իսկ նա՝ ինսյող. ես անխոհեմ էի և յանդուգն, իսկ նա՝ խոհեմ և համեստ. ես անհոգ էի, իսկ նա հոգացող: Հասակով իրար հաւասար էինք—թէ տարիքով և թէ բոյով: Այս լաւ հանգամանք էր, որովհետև մի և նոյն հազուատը երկուսիս համար էլ միակերպ յարմար էր գալիս, նոյն իսկ մեր գլխարկներն ու կոշիկները: Այս հանգամանքից մենք շատ անգամ էինք օգուտ քաղում: Իմ բնաւորութեան թոյլ կողմերն ես չէի հաւանում, իսկ նա բանի տեղ չէր դնում և տանում էր եղբայրական սիրով: Նա նիհար էր և ստիպամազ, բայց լերի երեսին մի այնպիսի գեղեցիկ խալափունջ ունէր, որ արժէր իմ խիտ և երկայն մօրուքին: Ես ուսում ունէի որքան և իցէ և վառ ուսումնասիրութիւն, գիտէի ռուսերէն բառական խօսել և քիչ-շատ կարգալ, իսկ նա չունէր ուսման սէր, աւելի արւեստն էր սիրում, արւեստին նւիրւած, նա չէր կարդում. ասում էր՝ մի և նոյն է, դու կարդում ես, յետոյ ինձ կը պատմես կարդացածդ: Ես նրա հերոսն էի, իսկ նա իմ պահապան և պաշտպան հրեշտակս: Ես իդէալներ ունէի և յափշտակւած էի նրանցով, հետևում էի նրանց օրինակին, մանաւանդ Բէնիամին Ֆրանկլինին, որ ամենից մօտ էր իմ սրտին. զրանցով ոգևորում էի ընկերոջս, որ նեղութեան համբերի և չը յուսահատուի: Հիմա ժամանակն էր, որ այսպիսի հէքիաթներով սիրտ տայի ընկերոջս. և սխեցի պատմել մեծ մարդկանց կեանքից զանազան աղէտներ...

—Այդ բոլորը շատ լաւ, բայց հաց չունինք, հնց, այսօր ի՞նչ պիտի ուտենք, ասաց Միքայէլը, որ շատ շերակայեմ:

—Ի՞նչ անենք թէ հաց չունինք, ասացի ես:—Երևակայիր, որ շատ հաց ունինք, և քեզ բոլորովին կուշա կզգաս:

—Շատ լաւ, մենք կերևանացենք, բայց սայլապանը չի երևակայում, իր հինգ մանէթն ուզում է, սրտեղից պիտի տանք:

—Հողիս, դու հաւատ ունեցիր և յոյս, Աստուած կըրտայ, ցոյց տալով մեզ ճանապարհը, թէ ինչպէս պէտք է գտնել հինգ մանէթի կրկնապատիկը:

Կոշիկներ չունէինք և ոչ տաք հազուատ, իսկ Մօսկւայումն արդէն ձիւն կար և սուսական «մարող»: Իմ կոշիկներս ոչ երես ունէ-

ին և ոչ տակ, իսկ Միքայէլինն երես չունէին, բայց տակ ունէին: Հազայ ընկերիս կօշիկները, բան ուզեցի և մեր սալլապանի արմեակ վերարկուն, և այս տարագի մէջ շատ նման էի սալմասանցի խաչագողի, որպիսիք մեզ շատ պատահեցին Ռուսաստանում: Թափառողներից իրանց սեփական սաչլերով:

Գնացի ուղղակի Ազգարեան ձեմարանի տպարանը, որ այդ ժամանակ կապարով ունէր վերցրած Մամնտովը, որ չեաոյ բոլորովին գնեց: Տպարանում գերմանացի Ֆակտորը փորձեց ինձ, որ տեսնէ իմ վարպետութեան աստիճանը. մի բան տուա հաչերէն. շարեցի, շարածս տպեց և չը դիտեմ ուր ուղարկեց կարգացնելու. չեա բերին հաւանութիւն ստացած:—Շատ լաւ, ասաց Ֆակտորը, կարող էք զալ և գործ սկսել: Ասացի որ փող ենք պարտ մեզ բերողին և ծախսելու էլ ոչինչ չունինք. մեզ մի 10 մանէթ է հարկաւոր կանխիկ: Պակտորը մերժեց, ասելով որ կանխիկ փող վճարել կարող չեն:

—Եթէ չէք հաւատում, ասացի, ահա իմ անցազիրս, կարող էք զրաւ պահել ձեզ մօտ:

—Ոչ, չենք ընդունիլ, ասաց անգուլթ գերմանացին սաւնութեամբ և երեսը շրջեց հեռացաւ:

Գրաշարներից իմացայ Ս. Նազարեանցի հասցէն, և ուղղակի գնացի նրա սեփական տունը: Ճանապարհին մտքումս մի լաւ ծառ պատրաստեցի և իմ ծառն ինձ վրայ այն տպաւորութիւնն արաւ, որ Նազարեանցը մեր որպիսութիւնն ստուգապէս իմանալուց չեաոյ, պիտի գրկէ ինձ, ճակատիցս համբուրէ, ինչպէս երբեմն Խ. Աբովեանցը Ռորպատում մի պանտուխտ հայի Նազարեանցը պիտի ասէ, թէ ուրեմն իմ ցանած սերմերս արդէն ձեզ պէս ղեղեցիկ ծաղիկներ են բուսցրել իմ սիրելի հայրենիքիս մէջ. ուրախ եմ, անչափ ուրախ, և ինձ մխիթարեա՞ծ եմ զգում: Թող այսուհետեւ ինչքան կուղեն, յարձակեն ինձ վրայ, ես այլ ևս չեմ վրդովիլի:

Տան դուռը բաց էր, բայց ես անքաղաքավարութիւն համարեցի ուղղակի ներս գնալ, զանգը քաշեցի: Ոչ ոք դուրս չեկաւ: Կրկնեցի մի քանի անգամ, մէկ էլ տեսնեմ մէկը բղաւելով ցած է իջնում և ասում. ատենում ես դուռը բաց է, ներս արի, էլ ինչո՞ւ ևս ինձ անհանդիստ անումս: Եկողը Նազարեանցն ինքն էր:

Հէնց որ զէմն ելաւ և հարցրեց, թէ զու ո՞վ ես և ի՞նչ ես ուզում, ես սկսեցի իմ արդէն պատրաստած ճառը. «Երկու հայ երիտասարդ եկել ենք»... Նազարեանցն ինձ իսկոյն ընդհատեց և ասաց բարկանալով՝

— Հայ, հայ, հայ... զահրա տարաք այդ հայերդ. ես ի՞նչ անեմ, որ հայ էք, կուզէք ջհուդ եղէք, ինձ համար հայը, թուրքը, մըլ-թոնին բոլորն էլ մէկ են»: Այս ասաց Նազարեանցը աչքերը խիած, մէջքի վերի մասը գլխով միասին թեքած, երկու ձեռքը թափ տալով դուրս անելու նշանով, և երեսը շրջեց ու հեռացաւ:

— Պարոն Նազարեանց, բայց դուք չը հասկացաք, թէ ես ո՞վ եմ, ի՞նչ եմ, և ի՞նչ եմ ուզում, — կոչեցի ես նրա ետևից, բայց նա էլ չետ չշրջեց երեսը: Նա անհետացաւ, իսկ ես մնացի մի աս-ժամանակ տեղումս մեխած: Այսպիսի չուսախաբութեան կեանքուոյ պատահած չէի ես: «Երևի սա «Հիւսիսափայլ»-ի խմբադիրը չէր, ասացի ես, այլ մի ուրիշ Նազարեանց, բայց աւանդ, իսկ և իսկ «Հիւսիսափայլ»-ի խմբադիրն էր, ուրիշ ո՞վ կը համարձակէր սրբազան կոսմոպոլիտու թիւնը անասնական էգօիզմի հասցնել: Ն/Պէ քեզ համար հայն ու մլթոնին միեկնոյն է, առաւել լաւ, փառք և պատիւ քո բարձր մարդասիրական զգացումներին, ուրեմն ընդունիր երկուսին էլ, սիրիր երկուսին էլ: Բայց ո՞չ, դու մարդատեաց ես և ոչ մարդատէր, դու ինքնատէր ես, բայց նոյն իսկ ինքնասիրութիւնդ բանականի չէ, այլ անբանի...»

Այսկերպ գտակելով և դատապարտելով Նազարեանցին, կրկին գնացի տպարան և այնտեղ խմանալով Եմինի հասցէն, ճանապարհ ընկալ զէպի նրա բնակարանը, որ բաւական հեռու էր: Գլուխս այնպէս էր տաքացել և սիրտս այնպէս չուզւել, որ չէի զգում որտաքաց քայլելս ձիւնի և սառուցի վրայով:

Ես արդէն Թէոդոսիայից մի նամակ էի գրել Եմինին և հարցրել, թէ արդեօք տեղ կը լինի ձեմարանի տպարանում, և ճառաբանել էի մեր նպատակը, բայց պատասխան չտանալով՝ ճանապարհ էինք ընկել: Հիմա որ գնացի մօտը, ասացի, որ ես այն նամակի զրոյն եմ, ձեզանից պատասխան չտանալով՝ հիմա եկել ենք, ու չուսով ենք, որ դուք ինչ որ կարող էք անել՝ կանէք: Ասացի էլ, որ ես արդէն տպարանումս էի, այնտեղ մեզ համար տեղ կայ, բայց

կանխիկ փող չեն տալիս. դուք որ գրեք, յուսով եմ, որ չեն մերժիլ: Նա պատասխանեց.

—Նս ձեր նամակին պատասխանեցի, որ տեղ չկայ, չգաք, որովհետև այդպէս ասացին ինձ տպարանումը. բայց որ հիմա կայ և ձեզ ընդունում են, աւելի լաւ: Փող կը տան կանխիկ թէ ոչ՝ այդ իմ գործը չէ, բայց կուզէք ես կը գրեմ, որ եթէ կարելի է տալ՝ տան:

Հէնց այսպիսի մի թուղթ էլ գրեց Էմիլը. տարայ տւի փակտորին, և նա կարգալուց յետոյ պատասխանեց ինձ սառնութեամբ. «Եթէ կարելի լինէր, ես առաջ էլ կը տայի. եթէ կարելի է տալ, ինչո՞ւ ինքը չէր տալիս, երևի կարելի չէ, որ չի աւել...»:

Նս մնացի շարած: Այդ միջոցին մի ջահէլ ուուս գրաշար մօտեցաւ ինձ, քաշեց մի կողմ՝ և ասաց կամացուկ. —Մի սրանեղիբ և ոչ ոքի էլ մի յիմիբ: Համբաւաբերի գրաշարը գործը թողել գնացել է. Մսերեանցին շատ է պէտք մի հայագէտ գրաշար. ինչ ուղեհաս, հիմա նրանք կը տան. ուրեմն կարող ես ուղղակի գնալ Մսերեանցներին, իսկ նրանք կենում են հէնց մեր փողոցումը, ձեմարանի դէմ, եկեղեցու բակումը, ձախ կողմին: Ուրեմն ցտեսութիւն, ասաց և ձեռքս այնպէս ամուր սղմեց, որ իր քնքուշ սրտի բոլոր զգացումները մի ելեքտրական հոսանքով թափեց իմ սրտի մէջ: Նս նկատեցի, որ նա շատ յուզւած էր և իր յուզմունքը ծածկեց ինձանից՝ շուտ հեռանալով: Այս տղան՝ Նաշան էր, որ յետոյ դարձաւ իմ և Միքայէլի անբաժան և սիրելի ընկերը:

Մութն արդէն վրայ էր հասնում: Մսերեանցի բնակարանը թէպէտ շատ մօտիկ էր, բայց անժամանակ լինելով՝ այցելութիւնս վաղւան թողի, և շտապեցի, որ այդ բարի լուրը շուտով հաղորդեմ Միքայէլիս:

(Նը շարունակւի)

ԱՆՄՈՌԱՑ ԵՐԳ

(Գ ԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՐԵԱՆԻ

I

Մեր կեանքն էր խորին, անվերջ սուգ ու լաց,
Երբ յանկարծ մի ձայն մեր հոգին ցնցեց.
Այդ ձայնը երգ էր—մի երգ անմոռաց,
Որի երգիչը յաւիտեան լուեց...
Նորան մորմոքիչ, դառն երկունքով
Երգիչը ծնեց բոցավառ կրճքից.
Նորան շատ տարիք արիւն-արցունքով
Երգիչը հիւսեց սրտի թելերից...
Եւ թռաւ երգը, սրլացաւ արագ
Գէպի հայրենի դաւատանջ աշխարհ,
Ուր որպէս անմեղ, անպարտ նահատակ,
Տանջուում էր մի ազգ՝ տարաբախտ, թշւառ.
Ուր չը կար կեանքի ո՛չ ուրախ դարուն,
Ո՛չ անամոգ երկինք, պայծառ արշալոյս
Ուր կեանքն էր—շղթայ, բանտ, աքսոր, արիւն,
Ուր մարդն ապրում էր վշտաբեկ, անյոյս...

II

Եւ ներս սրլացաւ երգը անմոռաց
Աղքատ գիւղացու անշուք օթեան

Սյնոեղ նա ապառ աւետիք կարդաց,
 Քննողը աւետիք կեանքի նորոգման...
 Որպէս մայրական քաղցրալուր օրօր,
 Նա դիպաւ մանկան քնքոյշ ականջին.
 Նա փայլեց, որպէս ճըրագ լուսաւոր,
 Գիւղական մնայլ խորձիթի միջին...
 Արձակ դաշտերում հայրենի երկրի
 Նա զիլ զօգանջեց զանգակի նրման.
 Նա օրհնեց վաստակն անխոնջ ձեռքերի,
 Օրհնեց մշակի արօրն ու զուլթան.
 Եւ մերթ ջերմ աղօթք՝ ծերի շրթունքին,
 Մերթ ոգի, եռանգ՝ պատանու կրճքում,
 Ապրեց ու յուզեց երգը սրտագին
 Դարերով ըստրուկ գեղջուկի կեանքում...

III

Թուաւ նա գիւղից մարդաշատ քաղաք—
 Ալեծուփ կի մնքի մե՛ծ հանդիսարան,
 Ուր մէկին բախտը ծաղրելով վայրագ,
 Միւսին ժըպտում էր սիրով անսահման.
 Ուր մէկը մատնեւած ծանրր գրկանքի՝
 Մաշում էր կեանքը հազար հոգսերով.
 Անվիշտ սպրում էր՝ վիշտը ծաղրելով...
 Եւ մտաւ երգը շքեղ սրալատներ,
 Կշտամբեց ոսկու հպարտ ստրուկներին,
 Այցելեց անզարդ, աղքատիկ տներ,
 Ողջունեց համեստ գործաւորներին...
 Մի տեղ նա լացեց սգաւոր, արտում,
 Մի տեղ կուշտ ինդաց, ասես, բախտաւոր,
 Բայց ամենուրեք կախարդիչ երգում
 Լսում էր հայի վիշտը դարեւոր...

IV

Օ՛, երգ վառվռուն, դու, երգ ոգեշունչ,
 Լերդախոց երգչի անկեղծ հաւաշանք,

Դու հայի աղերս, դու հայի միմունջ,
 Դու մեր վշտերի խորին արձագանք,
 Թո՛ղ այսօր մահւամբ անողոք խոցւած՝
 Ազատ երգիչը անկեանք, անբարբառ,
 Լռէ յաւիտեան, աչքերը փակած,
 Որպէս տարաբախտ բըլբուլ նետահար.
 Թո՛ղ մահու կապանք, մուսլ զերեզման
 Խլացնեն երգչի ձայնը կորովի, —
 Դու կայուն, որպէս ժայռը անսասան,
 Ձեռ մեռնիլ երբէք, ո՛վ երգ անմուաց.
 Եւ քանի հայ ազգն ապրում է, շնչում,
 Դու անբախտ հայի սիրտը կտխարդա՞՛
 Յաւերժ կը թնդաս հայրենի երկրում...

11 սեպտեմբերի 1892 թ., Մոսկւա:

Բ Ը Լ Բ ՈՒ Լ

Ա Լ Ե Ք Ո Ա Ն Գ Ի Ր Ծ Ա Տ ՈՒ Ր Ե Ա Ն Ե Ի

Մի լար, բըլբոլ, քեզ մի՛ տանջիր,
Որ փոթորիկն անիրաւ
Վարդըդ սիրուն, վարդըդ կարմիր
Թփից խըլեց ու տարն...

Կանցնեն օրեր... Կը զայ կրկին
Մի նոր դարուն վարդաբեր,
Կը մոռանաս դու վիշտըդ հին,
Նորից կերգես վարդի սէր:

Բայց վայ կեանքի այն հէզ երգին,
Որ վաղաժամ որբացած,
Իւր սիրելի, խօսուն վարդին
Յուրտ հողին է նա յանձնած...

Երգի համար դարուն չի զայ,
Ո՛չ նա նոր վարդ կը սիրէ,
Նա պէտք է լայ, պէտք է սգայ,
Մինչ չաւիտեան կը լուէ...

ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄԸ ԵՒ ԶՈՒԱՆ

Ֆ Ե Լ Ի Ք Ս Ի

ԷՄԻԼ ԶՈՒԱ (Emile Zola)

On mesure le génie aux vérités
qu'il apporte sur l'homme et la
nature.

E. Zola.

Մարդու հանճարը պետք է չափել
մարդկանց և բնութեան մասին նրա
լայտնած ճշմարտութիւններով:

Ի. Զոլա:

Նատուրալիստի էությունը:—Սրտիկի անբաւարութիւնը:—Րոման և
գիտութիւն:—Էմիլ Զոլայի իղծը:—Զոլան իբրև բոմանտիկ:—Զոլայի հեղի-
նակութիւնները:—Նրա դպրոցը:

Մեր նախընթաց չգլաճներում Ֆրանսիական նատուրալիստի
մասին մենք ծանօթացանք էմիլ Զոլայի, Բալզակի, Ֆլորբերի ու Գոն-
կուր եղբայրների հետ. ուսումնասիրեցինք նրանց գործը, աշխա-
տելով որոշել նրանց խաղացած դերը նատուրալիստ բոմանտի զար-
գացման մէջ: Բալզակից սկսած մինչև է. Զոլան Ֆրանսիական նա-
տուրալիստ բոմանտ գնալով ճոխացաւ և Զոլայի գրչի տակ նա իր
կատարելագործման գագաթնակէտին հասաւ: Իւրաքանչիւր տաղան-
դաւոր գրող իւրը մտքրեց բոմանտի մէջ, իւրաքանչիւր բոմանտիստ մի
նոր չարի աւելացրեց նատուրալիզմի հրաշալի սլախտի վրա: Այն-
պէս որ հմուտ աչքը դիտելով այս շէնքը, որոշում է այս ինչ կամ այն
ինչ մեծ ճարտարագետի գործը: Եւ, ճշմարիտ որ, նատուրալիստի

էւոլյուցիաի (զարգացման) ուսումնասիրութիւնը մի վերին աստիճանի հետաքրքրական և խրատատու էտիւզէ, որը ցոյց է տալիս, որ մի որ և է գրականական ուղղութեան ծնունդն ու զարգացումն սերտ կապւած է թէ գիտութեան և թէ հասարակական բարք ու վարքի դրութեան հետ, որ ոչ մի հանձար չի կարող շեղել բնական էւոլուցիաով որոշած ուղից և որ խոշոր գրական գործերը նոյնպէս հետեանք են նախընթաց մանր հանգամանքների, ինչ որ են մեծ քաղաքական և հասարակական երևոյթները:

Արիտիկոսը, մի որ և է գրական դպրոց ուսումնասիրելիս, պիտի ցոյց տայ այդ դպրոցի կախումն թէ բնական և թէ հասարակական գիտութիւնների զարգացումից: Այն ժամանակ գրականութեան պատմութիւնը կը դառնար մի մեծ և վերին աստիճանի հետաքրքրական գիտութիւն, իբրև արտայայտութիւն մի որոշեալ հասարակութեան որոշեալ ժամանակեաց հոգեկան աշխարհի, այսինքն նրա հոգեբանութիւնը!...

Նատուրալիստի պատմութիւնը այս տեսակէտից դեռ գրեւծ է, ու մենք, որ անասելի հետաքրքրութիւնով ուսումնասիրում ենք նրան, անոյժ ենք բացատրել նրա էւոլյուցիաի իւրաքանչիւր աստիճանը իբրև արդիւնք ժամանակակից գիտութեան շարժման: Մեծ և պողատու խնդիր,—որը մի աւելի հմուտ գրչի է սպասում:

Այնուամենայնիւ մեր նախընթաց էտիւզներում մենք, Ռալֆալի, Ֆլոբերի և Գոնկուրների գործերը քննելիս, աշխատեցինք ակներև անել բնական գիտութիւնների զարգացման ազդեցութիւնը նատուրալիստ բոմանի էւոլյուցիաի վրա: Մենք տեսանք որչափ սերտ կապւած է բոմանը գիտութեան հետ, և որչափ կանոնաւոր և աստիճանաբար է զարգանում նա գիտութեան նոյնպէս աստիճանօրէն զարգացման հետ:

Սակայն այս մի յանդուգն փորձ էր և դուցէ վաղաժամ մի փորձ: Մենք սրանով կամեցանք միայն ցոյց տալ, որ գիտութեան զարգացման իւրաքանչիւր էտապը (քայլափոխ) գրոշմում է իր կնիքը գրականութեան վրա: Այս փորձը անյաջող է այն պատճառով, որ մի որ և է հեղինակի գործը արտայայտութիւն է նմա-

Նույգէս նրա եզրական բանական ու հոգեկան աշխարհի, քանի որ ոչ մի հեղինակութիւն չի կարող անդէմ լինել ճանաչել հեղինակի մտաւոր զարգացման աստիճանը, թափանձիկ նրա զգացողական, մի խօսքով նրա հոգեկան աշխարհը, լաւ ծանօթանալ նրա դաստիարակութեանը, նրա յաջորդական շատկութիւններին, — այս է բոլոր հեղինակաւոր կրթիտիոնների իղձը, որը յաճախ, ասենք միշտ, անյագ է մնում, քանի որ հեղինակները յաճախ թաղցնում են իրանց սիրան ու հոգին Արիտիոսին մնում է միայն կապել, որքան այդ կարելի է, գրականական արտայայտութիւնները գիտութեան ծաւալման հետ:

Այդ անհրաժեշտութիւնը հանգիստ չի տալիս նամանաւանդ իրական, նատուրալիստ գրականութիւնը ուսումնասիրողին, քանի որ այդ ուղղութեան պարալլելները իրանց բովանդին գիտական ածական են տալիս: Թէ Ֆլորբերը, թէ դը Գոնկուրները և մանաւանդ Էմիլ Զոլան այն հաւակնութիւն ունէին, թէ գիտական մտքեր են արծարծում իրանց բովանդների միջոցով:

Եմիլ Զոլաի բովանդները, հեղինակի կարծիքով, ճշգրիտ գիտական հետազոտութիւններ են, որանց նա գուցէ էտիւդներ է անւանում (études):

Եմիլ Զոլան կամեցաւ թափանցել երկրորդ կայսերութեան հասարակութեան բոլոր շերտերը, և ամբողջ Ֆրանսիաի վարք ու բարքի էտիւդները տալ:

Յնորական, բաց վիթխարի ձեռնարկութիւն!

Մենք դեռ ևս չենք քննում այն խնդիրը, թէ որչափ յաջողւեց Զոլան այդ ահագին գործը, որը մի մարդի, մի հանձարի անգամ ոյժերից բարձր էր: Մենք միայն խոնարհւում ենք դարիս մեծ բովանդատի հրաշալի վտահութեան առաջ: Մենք երկնչելով ենք միայն գրիչ վերցնում այս ահուելի գործը քննելու համար, երկրնչելով այն մեծ պատասխանատուութիւնից, որը ըստանձնում ենք մենք Ֆրանսիաի ամենամեծ գրողներից մէկին ուսումնասիրել ցանկանալով:

Էմիլ Զոլան այն տաղանդներից է, որոնք արագ ըմբռնում են ժամանակակից ուսմունքները ու մշակում են նրանց: Մեծ բովանդակությամբ հասկացաւ, որ հին գրականական ֆորմուլան վիթելէ, որ բովանդակութիւնն է ստացել և որ անկարելի է այդ նոր հոսանքին դիմադրել: Զոլաի գրականական ոգին խմորւած էր բովանտիկ դպրոցում, Հիւզօի լիրիսմը թափանձել էր նրա ուղեղը, նրա տաղանդը սննդուել էր և աճել բովանտիկ կաթով:

Համարեա աղքատ ծնողների զաւակ, առանց սիստեմական կրթութեան, իր բնազդովին միայն հետևելով, պատանի Էմիլը ընկել էր բովանտիսմի հոսանքի մէջ, որին նրա դեռ ևս թոյլ ոյժերը անկարող էին դիմադրել:

Նա ինքը շատ տեղեր խոստովանում է այդ չափշտակումն Վ. Հիւզօյով, Ալֆրէդ դը Միսսէով և ժամանակակից լիրիկներով: Բայց յանկարծ Զոլան հրաժարուում է այս ուղղութիւնից և սկսում է կրթել իրան Բալզակի դպրոցում:

Ասենք իսկոյն: Արքան էլ զգոյշ լինէր Զոլան իր գրածքների մէջ, դարձեալ տեղ տեղ,—և այդ տեղերը բազմաթիւ են,—նա երևում է մեզ իբրև մի հիանալի բովանտիկ:

Էմիլ Զոլան մինչև այսօր քառասուն հատոր գրքեր է գրել, որոնցից 20-ը բովանտներ են, իսկ մնացածները վէպիկներ, նուէլներ, կամ կրիտիկական գրածքներ, թատրոնական պիէսներ, պօէզիաներ են:

Երկար տարիների ընթացքում մենք համբերութիւն և հետաքրքրութիւն ունեցանք հետևելու այս մեծ հեղինակի տաղանդի տարուբերմանը. Մենք ուշադրութիւնով ուսումնասիրեցինք նրա 19) բովանտները, որոնք կազմում են արդէն չափստեան հուշակաւոր «Ռուզօն-Մաքար» ընտանիքի պատմութիւնը, և որը Զոլաի յուսարով պիտի տար մեզ Երկրորդ Վալսերութեան քաղաքական, հասարակական, տնտեսական պատմութիւնը:

Առանց քաշելու և առանց կեղծ համեստութեան մենք վրատահանում ենք այս մեծ գործը բացատրել հայ գրագէտներին, և այդ անում ենք համոզւած լինելով մեր այս աշխատանքի օգտակարութեանը:

Եթէ մեր գրողները յաճախ մեղանչում են գրականութեան ամենատարրական պահանջների դէմ, դրա պատճառը պիտի որոնել այն հանգամանքում, որ օտար գրականութիւնը նրանց միանգամայն անծանօթ է:

Էմիլ Զոլաի բոմանը արդէն քսան տարի համա-եւրոպական գրականութեան սիրտն է դառել, որի իւրաքանչիւր բարախումն մի նոր ալեկոծումն է գցում եւրոպական գրական աշխարհում: Նոր սերունդները կրթւում են այժմ նրա շփոթում, ինչպէս որ նախընթաց սերունդերը կրթւում էին Վ. Հիւգօյի դպրոցում:

Զոլաի գորեղ գրիչը նոր գրականական ֆորմուլներ է տալիս մեզ, ինչպէս երբեմն Հիւգօինն էր այդ անում:

Մեր խորին համոզմունքով իւրաքանչիւր խղճմտաւոր գրող պարտաւոր է ճանաչել այս Բուգօն-Մաքարներին:

Մենք այնչափ յանդգնութիւն չունենք, որ կարծենք, թէ լաւ ըմբռնել ենք այս ականաւոր հեղինակի գրականական ֆորմուլան: Մենք կը ցանկայինք միայն առ այժմ լոկ պատմագիր մնալ, իսկ յետոյ մենք խոստանում ենք մի ընդհանուր կրիտիկական հայեացք գցել Նատուլիամի վրա:

ԷՄԻԼ ԶՈՒԱՆ ԲՈՄԱՆՆԵՐԸ

Je veux expliquer comment une famille, un petit groupe d'êtres, se comporte dans une société, en s'épanouissant pour donner naissance à dix, à vingt individus...

Zola.

Զոլաի բոմանները սերտ կապւած են միմեանց հետ.—Սկզբնաւոր Ադելաիդա Ֆուքը (Adelaïde Fouque).—Սրա սերունդը.—Զոլաի նկարագրած շրջանները.—Նրա հալեացքը բոմանի վրա.—Նրա բոմանների անունները.—Զոլան և ժամանակակից գիտութիւնը:

Էմիլի Զոլաի քսան հաստ բոմանները (մէկը «Բժիշկ Պասկալը» մամուլի տակն է) կրում են մի ընդհանուր վերնագիր.

Les Rougon-Macquart. Histoire naturelle et sociale d'une famille sous le second empire.

(Բ ու գ ո ն - Մ ա կ կ ա Ր ն ե Ր, — երկրորդ կայսերութեան ժամանակաւ մի ընտանիքի բնական և հասարակական պատմութիւնը):

Այս ընդհանուր նպատակը կատարւմ է միմեանց հետ Չոլաի քսան գրքերը, բոլոր քսան բովանդակների հերոսները մի նախամօր սերունդին:

Գործող անձերը բոլորը սերւում են մի օտարօտի կնոջից, որի անունն է Ադելաիդա Ֆուք (Adelaïde Fouque):

La fortune des Rougon, Չոլայի առաջին բովանդակի մէջ, մենք ծանօթանում ենք Բուգոն-Մակկարների այս արմատի հետ: Ադելաիդա Ֆուքի հայրը խելագարւում է և մեռնում: Ինքն Ադելաիդան նոյնպէս մի օտարօտի անձնաւորութիւն է, սաստիկ գրգուռող, օրիգինալ, որը հօր մահից յետոյ յանկարծ, չընայելով իր կարողութեանը, իրան ամուսին է ընտրում իր ծառաներից մէկին և նրանից մի արու զաւակ ծնում, որը Պիեր Բուգոնն է: Այս կինը 15 ամսից յետոյ, իր ամուսնուն կորցնելով, իրան սիրական է վերցնում մի գուեշիկ, անտաշ, արբեցող զիւղացի, Մակկար անունով, որը տալիս է նրան մի արու և մի էգ զաւակ, Անտուան և Իւրսուր:

Ահա Բուգոն Մակկարների արմատը:

Մի խելագար թողնում է մի էգ զաւակ, որը մի նետարգային, հիստերիկ, օտարօտի կեանք վարող արարած է (Ադելաիդա Ֆուք), որի սիրականը մի արբեցող է:

Այսպէս, արմատը խելագարութիւն է, միայն խելագարի աղջիկը ամուսնանում է մի առոյգ մշակի հետ, ամուսնութիւնից սերւած սերունդը պիտի անշուշտ աւելի առողջ լինէր, քան թէ Ադելաիդայի միւս երկու զաւակները, որոնց հայրը (Մակկարը) արբեցող է:

Այս անառողջ արմատը անտարակոյս պիտի անառողջ ծատար: Այս հիւանդ ծառի իւրաքանչիւր խոշոր ճիւղը դառնում է մի առանձին բովանդակ կենդրոնական սիւնը, որի վրա հիւսւում է ամբողջ բովանդակ ինտրիգը:

Այսպէս, իւրաքանչիւր բովանդակի հերոսի տոհմաբանութիւնը մեզ վաղօրօք չաչանի է և մենք կը տեսնենք յետոյ, թէ ինչ մեծ կարևորութիւն ունի ընթերցողի համար այս զիտելիքը:

Այս գործող անձերը իրանց վաղօրօք որոշւած հոգեկան յատկութիւններով մանում են իւրաքանչիւրը իր շրջանի մէջ, և ազդւում սրանից իրանց բնաւորութեան համաձայն:

Այսպիսով Զոլաի բովանդակների հերոսները բոլորը արիւնակիցներ են: Հեղինակը նրանց զցում է հասարակական տարբեր շերտերի մէջ, շրջապատելով նրանց զանազան դասակարգի պատկանող անձնաւորութիւններով:

Այս է Զոլաի հասարակական բարդ կեանքն ուսումնասիրելու ձևը: Այս կերպով նա մեզ «բարք ու վարքի» մի շարք էտիւդներ տւեց (romans de moeurs):

Մի արտակարգ և միանգամայն զարմանալի տոկոսութիւնով և համբերութիւնով մեծ բովանդատը աշխատեց թափանցել Նապոլէոն III-ի կայսրութեան ժամանակաշրջանի սիւրբանի կեանքը: Նրա իւրաքանչիւր բովանդակում մի որ է և դասակարգի կեանքի էջիւղն է:

Փառաւանջային մանր կուսակցական կռիւներ, Ֆրանսիական անպսակ հոգևորականութիւնը, բարձր քաղաքական դասակարգը, անբարոյակացած Պարիզի բանւորները, Պարիզի կոկոսների կեանքը, յետոյ մի շարք հրաշալի էջիւղներ ածխահանների, առևտրական դասի, երկաթուղու վրա ծառայողների, Պարիզի Ֆինանսական շրջանների, արտիստների կեանքից, 1870 թ. Ֆրանս-Պրուսական պատերազմը և դեռ չաւարտած ուսումնասիրութիւնը, որը նւիրւած է զիտնականների կեանքին:

Իր L Oeuvre բովանդակի մէջ այսպէս է խօսեցնում նա իր հերոս Սանդուսին, մի ժուրնալիստի.

«Ես գտել եմ, ինչ որ ինձ հարկաւոր էր: Օ՛հ, մի մեծ բան չէ գտածս! Այս մի փոքրիկ անկիւն է, բայց նա բաւական է մի մարդու համար, մինչև անգամ եթէ այդ մարդը չափազանց ընդարձակ հակումներ ունենար... Ես կը վերցնեմ մի ընտանիք և կ'ուսումնասիրեմ մի առ մի նրա անդամներին, թէ որտեղից են գալիս և ուր են գնում, ինչպէս նրանք միմեանց վրա ազդում են, վերջապէս մարդկութեան մենիատուրան, մարդկութեան զարգացման և կենցաղավարութեան եզանակը...»

Բայց այդ բաւական չէ: Ես կը զգեմ իմ անձերին մի որոշեալ պատմական շրջան, որպէս զի նրանք շարժւեն մի որոշ միջավայրում և գտնւեն որոշեալ հանգամանքների մէջ,—մի խօսքով, մի կտոր

պատմութիւն... Հը՛, հասկացար, մի շարք գրքեր, տասնըհինգ, քսան հատոր գրքեր, էպիգրօներ, որոնք կապւած կը լինեն միմեանց հետ, թէև նրանցից ամեն մէկը իր սեփական շրջանակը կ'ունենայ, — մի շարք բովանդակներ, որոնցից ծերութեանս համար մի տուն կը շինեմ, եթէ միայն ինձ չխաջխտեն նրանք»:

Այս է Զոլաի արածը: Քսան բովանդակներ, որոնք կարող են առանձին կարդացել, կապւած են միմեանց հետ իրանց գործող անձերի միջոցով, որոնք մի ընտանիքի անդամներ են:

Էմիլ Զոլաի գործը մի կալեյդոսկոպի է նմանում, որը զարմանալի գոյներով մեզ պատկերներ է տալիս: Ով որ տեսել է այդ պատկերներից մէկը, նա չի կարող չպտտել կալեյդոսկոպը, որ սքանչանայ միւս պատկերներով: Եւ այս քսան բովանդակները քսան հրաշալի պատկերներ են, որոնք այնչափ բարդ են, որ լաւ ըմբռնելու համար անհրաժեշտ է մի առ մի գննել նրանց մանրամասնութիւնները:

Ահա Զոլաի բովանդակների ցուցակը:

- 1) La Fortune des Rougon.
- 2) La Curée.
- 3) Le Ventre de Paris.
- 4) La Conquête de Plassans
- 5) La Faute de l'abbé Mouret.
- 6) Son Excellence Eugène Rougon.
- 7) L'Assommoir.
- 8) Une page d'Amour.
- 9) Nana.
- 10) Pot-Bouille.
- 11) Au Bonheur des Dames.
- 12) La joie de vivre.
- 13) Germinal.
- 14) L'Oeuvre.
- 15) La Terre.
- 16) Le Rêve.
- 17) La Bête Humaine.

18) L'Argent.

19) La débacle.

20) Le docteur Pascal.

Այս վերջին գիրքը կնքում է Բուզոն-Մաքարների սերիան:

Այս քսան վէպերը միառմի քննել անկարելի է, վասնորոյ մենք պէտք է մի հաւաքական ուսումնասիրութիւն տանք նրանց մասին: ¹⁾

Էմիլ Զոլան թէև պաշտօնապէս ուսում չի ստացել, բայց նրա բովանդատները ապացոյց են, որ այդ զարմանալի մարդը ինքնապատրաստութիւնով ծանօթ է գիտութեանը:

Մեծ Կլոդ-Բերնարի սքանչելի հետազօտութիւնները Ֆիզիօլօգիային մի նոր զարկ տւեցին և նորանոր Ֆակտեր բացեցին մեր առաջ: Ֆիզիօլօգիայի զարգացումն իր ետևից քարշեց դրական հոգեբանութեան ուսումնասիրութիւնը, իսկ այս վերջինը մի նոր լոյս գցեց մեծ հոգեկան հիւանդութիւնների վրա: Մօրելի, Մօրօ դը Տուրի, Ֆալրէի, Լասեզի, Շարկօի, Մանիանի, Բիբօի և սրանց հարիւրաւոր գիտնական աշակերտների էղիւղները հոգեկան անկանոնութիւնների և հիւանդութիւնների մասին մի կողմից, միւս կողմից Հիպնոտիսմի նորանոր հետազօտութիւնները և իտալական եղերական (յանցաւորների) հոգեբանական զպրոցը Լօմբրօզօի սուած զարկից չետոյ,—այս բոլոր հրաշալի գիւտերը, որոնք այնպէս ծաղկեցրին մեր վերջին կիսադարի մարդաբանական գիտութիւնը, միանգամայն հիմքից փոխեցին մեր հայեացքները մարդու Ֆիզիկական և հոգեկան կեանքի վրա: Այն ինչ մի շարք յեղափոխութիւնների ցանած իղէաները, տնտեսական և քաղաքական նոր հայեացքների ժողովրդականացումն և այլն մի նոր լուսով լուսաւորեցին հասարակական կեանքի բարդութիւնը:

Զոլաի դրքերը թերթեկիս մարդ ապշած է մնում այն բազմակողմանի տեղեկութիւնների առաջ, որոնք ապացոյց են հեղինակի ծանօթութեանը թէ բժշկական և թէ հասարակական գիտութիւններին: ²⁾

¹⁾ Այս վէպերից վաճառւած են մինչև ալժմ 1 1/2 միլլիօնից աւելի, միայն Nana-ից ծախւած է 130,000 օրինակ:

²⁾ Զոլան, թէև մի խոշոր բեղտրիստական տաղանդ է, բայց նա մի-

Զոլան մի և նոյն ժամանակ մի վերին աստիճանի խղճմտաբար դիտող է: Նրա նկարագրութիւնները միանգամայն լուսանկարներ են: Մի գործարան, մի հիմնարկութիւն, մի գիւղ կամ մի զեռ նկարագրելու համար նա մանրամասն կուսումնասիրի անձամբ և չի հաւատալ ուրիշների պատմածներին: Germinal-ը գրելիս նա իջնում է հանքի ստորերկրեայ անցքերը, Bête humaine-ի համար նա շոգեշարժի վրա ու մաշինիստի հետ ճամբորդութիւն է անում և այլն: Այս կողմից նա Ֆլորբերի արժանաւոր աշակերտն է:

ԶՈՒԱԽ ԳՈՐԾԸ

Եմիլ Զոլաի նատուրալիսմը բնորոշում է հետևեալ յատկութիւններով, որոնց մեծ զրոյր բոլոր բովանդետում աշխատել է հաւատարիմ մնալ:

I) Կատարեալ բացակայութիւն մի որ և է զոգմայի (վարդապետութիւն) և խրատատուութեան:

II) Կատարեալ քողարկումն հեղինակի ես ի.

III) ձիշտ և մանրամասն նկարագրութիւն բնութեան և միջավայրի.

IV) ձիշտ ուսումնասիրութիւն հասարակութեան.

V) ձիշտ ուսումնասիրութիւն հերոսների Ֆիզիոլոգիաի և հոգեբանութեան.

VI) ձիշտ ուսումնասիրութիւն հերոսների ժառանգական յատկութիւնների:

Առաջին հինգ սկզբունքները շատ կամ քիչ մշակած մենք գտանք արդէն առաջիկայ բովանդետների գործերում: Զոլաին պատկանում է ժառանգականութեան մեծ օրէնքը, բովանդի մէջ մտցնելու պատիւը:

Քննենք մի առ մի այս վեց կէտերը:

Անոյն ժամանակ բոլորովին զարգացած է է, ասում է ռուս կրթիկոս Միխայլովսկին: Մենք զարմանում ենք տաղանդաւոր ռուս գրողի այս օտարօտի խօսքերին և չըզիտենք ինչպէս բացատրել:

I ԿՍՏՐԵԱ, ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ ԳՕԳՄԱՅԻ ԵՒ
ԽՐԱՏՍԻՈՒԹԵԱՆ

La leçon est dans l'exactitude
des documents.

Z o l a.

Խրատը փաստերի ճշգրտեան
մէջն է, զուս:

Հին բոմանի ֆորմուլան. — Բարին չաղթում է, իսկ չարը կործանւում: —
Միստիցիսմ եւ գետերմինիսմ: — Նատուրալիստ բոմանի նպատակը: — Նրա
կրթողական նշանակութիւնը:

Նատուրալիստի գիտնական հոսանքը բնականաբար չէր կարող
նպատակ դնել իրան խրատներ կարդալ բոմանի միջոցով: Գրակա-
նութիւնը նատուրալիստների գրչի տակ դառնում է ժողովրդակա-
նացրած խիստ բարդ գիտնական տրակտատ, եւ՛, քանի որ գիտու-
թիւնը բարոյականացնող նպատակ չունի, հեռեւաբար բոմանն է
չպէտք է եւ չի կարող այդպիսի նպատակ ընտրել իրան:

Երբ որ բոմանը քարոզի նպատակով է գրւում, դուրս է
գալիս, որ բարին միշտ չաղթում է, իսկ չարը կործանւում: Իսկ
քանի որ կեանքի մէջ այդ սկզբունքը յաճախ չի իրագործւում,
հեռեւաբար հին բոմանիստները ստիպւած էին աղաւաղել Վակտերը,
Ճումսել հանգամանքների բնական դարսումները, իրանց բարոյական
սկզբունքը չաղթող դուրս բերելու համար: Բոմանի ամբողջ հիւս-
ւածքը, նրա ինտրիգը միայն այս անխուսափելի վախճանի, այսինքն,
չարի պատժելու եւ բարու չաղթելու ժամանակը հեռացնելու հա-
մար էին: Այնպէս որ հմուտ ընթերցողը հին բոմաններից մի քանի
տասնեակ էջեր կարդալուց յետոյ, կարող է վստահութիւնով ասել,
թէ ինչպէս կը վերջանայ նա: Սակայն այսպիսի մի ուղղութիւնը
պիտի տանէր մեզ անշուշտ եւ իրօք տարաւ էլ դէպի մ'իստիցիսմ:

Այսպիսով հին բոմանը ինքն իր փոսը փորեց: Նա հեռու էր
մնացել գիտութեան ուսմունքից, որը հերքում էր միստիցիսմը եւ
որը առաջ էր բերում մի ուրիշ վարդապետութիւն, այն է դե-
տերմ ինիսմը:

Այս սկզբունքը ակներեւ է համարեա բոլոր գրողների բոման-
ներում, Ֆլոբերից սկսած:

Մարդը իր զգացմունքներով, իր ուղեղով, շրջապատող հանգամանքների պտուղ է: Նրա վրա ազդում են կլիման, կերակուրը, արտաքին ամենաչնչին հանգամանքներն անգամ: Հետևաբար, եթէ մի որոշեալ Ֆիզիոլոգիական էակ զցենք որոշեալ ազդեցութիւնների ներքոյ, նրա գործունէութիւնը, որը միայն արտայայտութիւն է մարդու հոգեկան շարժումների, որոշեալ ձև կը ստանայ: Անձ դետերմինիսմը, որը թէև զգացւած էր Ալոգ-Ֆերնարից առաջ, բայց այս մեծ Ֆիզիոլոգը միայն կարողացաւ պարզ գիտնական սանկցիա տալ այս թէօրիաին: Եթէ վերցնենք մի որ և է կենդանի, զնենք նրան որոշեալ տաքութեան սենեակում, որոշեալ բաներ ուտեցնենք ու խմեցնենք նրան, յետոյ որոշեալ կերպով զրգռենք նրա մի որ և է նեարդը, մենք կը ստանանք որոշեալ ձևի երևոյթ: Բայց հէնց որ այս անհրաժեշտ պայմաններից մէկը կամ միւսը փոխւի, փորձի հետևանքն էլ տարբեր կը լինի:

Զուան կամեցաւ այս դետերմինիսմը մոցնել իր բովանդի մէջ, ինչպէս այդ արեւ էր մեծ վարպետ Յլոբերը իր «Տիկին Բովարի»-ի մէջ և դը Գոնկուրները իրանց գրւածքներում: Ընդունելով գիտնական այս թէօրիան, իրական վիպագիրները պէտք է ընդունէին նոյնպէս երևոյթների ճակատագրական, անխուսափելի չափորումները միմեանցից: Հետևաբար նրանց վէպերում կատարւած եղելութիւնները բնական երևուոյթներ լինելով, չէին կարող եւթարկել մի որ և է փոփոխութեան հեղինակի հաճոցքին համեմատ (ինչպէս այդ լինում էր հին ուղղութեան բովանդի մէջ): Այս գրականական դետերմինիսմը պէտք է այսպիսով հեռացնէր վերջնականապէս դոգմատիսմը (խրատաուութիւնը) վիպագրութեան միջից, և զարցնէր բովանդ անաչառ և աննպատակ էտիդ հասարակական հոգեբանութեան և հասարակական կեանքի:

Սակայն նատուրալիստ բովանդ աննպատակ բովանդ է, նա մի աւելի դրական և գուցէ աւելի օգտաւէտ նպատակ ունէր, այն է՝ մի որոշեալ շրջանի ճշգրիտ պատկերը նկատել, ցոյց տալ թէ ինչպէս էր բնութիւնը, ինչպէս էին ապրում մարդիկ, ինչ էին զղում և ինչ մտածում: Այնպէս որ բովանդ պատմութիւն չնէր, և որ նրա կարգացողը հեշտ գաղափար կազմէր որոշեալ էպոխաի բարք ու վարքի մասին:

Երկրորդ կէտը, որը նատուրալիստների տանջող փափագն էր, այն էր, որ նրանք ճգնում էին, ինչպէս ասել ենք, ենթարկել գործող անձերի հոգեկան և զգացողական շարժումները արտաքին աշխարհի ազդեցութեանը: Զուլի գրւածքներում այս կէտը աւելի ևս աչքի է ընկնում և այս է այն, երբեմն չափազանց տաղտկալի ու երկար, միջավայրի նկարագրութիւնների պատճառը, որոնցով լիքն են նրա գրքերը:

Բոմանի կրթողական զօրութիւնը կախւած է նրա ընթերցողի վրա գործած ազդեցութիւնից: Միւսնոյն Ֆակտը, միւսնոյն երևոյթը տարբեր կերպով կը շարժի երկու մարդու սիրտը և ուղեղը, նայելով թէ այդ մարդը ինչ դաստիարակութեան և ինչ զարգացման տէր է: Տալով ճիշտ և անկողմնապահ նկարագրութիւններ թէ մարդկանց ներքին և թէ հոգեկան կեանքի, դրական վիպասանը ստիպում է մեզ մտածել և ղգալ ու, մեր մտաւոր ու հոգեկան զարգացման համեմատ, դուրս բերել մեր ընթերցումից այս ինչ կամ այն ինչ բարոյական դասը: Այս տեսակէտից ևս նատուրալիստ բոմանը համամիտ է գիտութեան հետ, որը նոյնպէս նպատակ չունի բարոյական գաղափարներ մտցնել հասարակութեան մէջ, այլ այդ գաղափարները ինքն ըստ ինքեան հետևանք են լաւի ու վատի, բարու ու չարի ուսումնասիրութեանը:

(Կը շարունակւի)

Ա. ՆԱՄԱԼԵԱՆ

Պատրիկեանի նամակները: Տփլիս, 1893 թ.

Պ. ՄԵԼՔՈՒՄԵԱՆԻ

«Պատրիկեանի նամակները» գրական մի ալբոմ է, ուր զետեղած են ութսունական թուականների հալ երիտասարդութեան մի մասի պատկերները: Ո՞ր երիտասարդական սիրտ կարող է չըտարախել «հալ երիտասարդ», «հալ երիտասարդութիւն» խօսքերը լսելիս, որ հասարակութիւնը չի կամենալ ծանօթանալ իր երիտասարդութեան հետ, որի վրայ աչնքան ոտկի լոյսեր են դնում: Ո՞ւմ համար կարող են խօսք լինել բոլոր աչն անձնական թէ հասարակական, ազգային թէ հանրամարդկային գաղափարները, իղծերը, իղէալները, որ լուզում, ոգևորում են երիտասարդութեան թարմ միտքը, անարատ կուրծքը: Ահա աչն հարցերը, որոնք ինքն ըստ ինքեան հետաքրքրական են զարձնում Նամակեանի ալբոմը և որոնց ազդեցութեան տակ մենք գրեթէ ազահութեամբ սկսեցինք կարդալ «Պատրիկեանի նամակները»: Կարդացինք, բաց, պէտք է խոստովանեւ անկեղծութեամբ, լոյսներս չարդարացան. մենք զտանք աւելի քիչ, քան սպասում էինք: Բացատրենք:

Իւրաքանչիւր զեղարեւոտական գրածք իւր վրայ ուշք է դարձնում զեղարեւոտական կողմով և բովանդակութիւնով: Գեղարեւոտականի մէջ առաջնակարգ զեր է խաղում հեղինակի տաղանդը, իսկ բովանդակութեան մէջ արտաչափում են հեղինակի մտքերը, զգացումները, զիտողութիւնները, մի խօսքով նորա աշխարհայեցողութիւնը: Նամակեանին չընդունելով իբր տաղանդ, աւելորդ ենք համարում «Պատրիկեանի նամակները» գեղարեւոտական կողմի մասին ծանրանալ: Նամակեանը մեզ վրայ անում է, ալսպէս ասած սիրող վիպագրողի տպաւորութիւն, որը կարծես վիպական ձև է տուել գրածքին միմիաչն իրան զբաղեցնող մտքերը և զիտողութիւնները աւելի չաջող պաշմաններում արտաչափելու համար:

Գառնանք, ուրեմն, նամակների բովանդակութեան, որ գլխաւորն է: Ամեն մի վիպական գրւածքում հեղինակի հոգեկան բնորոշ գծերը պայտէս կամ ալնպէս արտափայլում են. որքան էլ այդ բնորոշ գծերը թւով շատ լինեն, աչնուամենաչնիւ նոցա մէջ լինում է մէկը աչնքան հիմնական, աչնքան իշխող, որ նորանով արտապայտում են հեղինակի գրւածքի թէ ամբողջ ոգին և թէ այլ առանձնատիրութիւնները: Ո՞րն է Նամալեանի աշխարհաբացողութեան հիմնական, իշխող գիծը: Նամալեանը չափնի մտքով ազատամիտ է, միաչն չափաւոր, և ոչ միշտ հաստատ, այլ տատանող ու անորոշ—ահա, իմ կարծիքով, աչն բանալին, որի միջոցով հեշտ է բանալ Պատրիկեանի նամակների թէ ընդհանուր ոգին և թէ այլ աչքի ընկնող առանձնապատկութիւնները: Եւ իբրև, Պատրիկեանի նամակները, արծարծելով Սամանակակից ամենաթարմ հարցեր, ռնկենալով անվիճելի ընդհանուր լուսաշողիմական տեսողենցիա, աչնուամենաչնիւ ոչ ոքի վրա շատ թէ քիչ խոր ապաւորութիւն չեն թողնում, առանձին հետաքրքրութիւն չեն զարթեցնում. չառաջագէմ մարդիկ նոցանով ճիշտ է, կըմնան դո՛հ, բայց սառնասրտութեամբ, առանց մազաչափ ողբորւելու, առանց չուզւելու. չետագէմ մարդիկ կը մնան անհոգ, բայց դարձեալ գրեթէ սառնասրտութեամբ, զուցէ քիչ տհաճութեամբ, չամենաչն դէպս չեն վրդովւել, չեն զարանալ. կարճ ասած՝ առաջադիմական ոգով, ընթերցանութեան համար օգտակէտ, բայց շատ քիչ հոտ—համ ունեցող,—ահա Պատրիկեանի նամակների ընդհանուր տպաւորութիւնը, բովանդակութեան կոզմից:

Գառնանք մանրամասնութեան:

Նամալեանի աշխարհաբացողութեան չափաւորութիւնը իր գոյութիւնը զգալ է տալիս և հեղինակի նկարագրութիւնների մէջ. բանը աչն է, որ չափաւորութեան տրամադիր բնաւորութիւնները չեն կարող խոր զգալ, խոր տանջւել, սիրել: Այդ է պատճառը, որ հասարակ կամ ոչ շատ պատասխանատու տիպերի նկարագրութիւնները Պատրիկեանի գրչի տակից դուրս են եկել բաւական կենդանի, բնական, մինչդեռ ամենապատասխանատու անձնաւորութիւնների նկարագրութիւնները պատշաճաւոր չափով չաջող չեն: Օտարօտի աչցելուն, Օրիորդ Նուարդը կեանքի ձախող հանգամանքների տակ տանջւում, խորովւում են, մինչդեռ նոցա հոգեկան տանջանքները, սրտի խոր հառաչանքները, կսկիծները, բուռն չուզմունքները արտապայտած են մի աչնպիսի պաշտօնական, չզգացւած լեզուով, սառն ու անոգի ոճով, որ հերոսների հոգեկան դրաման, առնւազն կիսով չափ, մնում է ընթերցողի համար անմատչելի: Աւսուցիչ Նարոտեանը ֆանատիկոսութեան հասցրած չափով սիրում է ռաուցչութիւնը, որից բարձր և վեհ ոչ մի պաշտօն չի գտնում. մինչդեռ այդ Պետաւոցցիի ողբորւթիւններից փչում է բաւականաչափ ցրտութիւն, արւեստականութիւն: Մեր ասածները հասկանալու համար, ի հարկէ,

պէտք է կարգալ շիշատակած երեք նամակները, իսկ առ ալժմ կըբերեմ մի փոքրիկ նմուշ, Պատրիկեանի ոգևորութեան խորութիւնը և ոյժը պարզելու համար:

«Օրիորդը իսկապէս հրաշալի էր նւագում, մեծ տաղանդով, մեծ զգացմունքով, մեծ հասկացողութիւնով: Նս հիւացած էի, ուստի սրաւբուղիս ասացի:

—Շատ և շատ չնորհակալ եմ, օրիորդ, դուք իսկապէս վարպետ էք և ինքնուրոյն՝ երաժշտութեան մէջ: Ձեզ գովել անդամ աւելորդ է. դուք աչնչափ գիտակցաբար էք ածում, որ դուք ինքներդ գիտէք ձեր գնահատութիւնը»:

Կա «հիացման» լեզու չէ և ոչ «սրտաբուղիս» խօսքեր, այլ, չըզգացած ակադեմիական գովասանութիւն. ինչ էին պատմում դաշնամուրի կախարդիչ հնչիւնները,—օրիորդ Նուարդի տանջած սրտի խոր հառաչանքները, թէ նրա լուսու երջանիկ րոպէները. Նամակեանը այդ զգալու և տրտալացտելու փոխարէն, շուալում է մեռելալին ցրտութիւն վչող գովասանքներ, իր շինծու ոգևորութիւնը վերջացնելով աչպիսի խօսքերով. «ձեզ գովել անգամ աւելորդ է. դուք ինքներդ գիտէք ձեր գնահատութիւնը»): Կրան ասում են հարցից փախուստ տալ, քօղարկելով ընդհանուր խօսքերի տակ: Ալժմ, ընդհակառակն, վերցրէք «Արանեանի մօտ» վերնադրով նամակը, որի բոլոր հերոսները անզաղափար, բաց բարի, միջին մարդիկ են, սրամաղիւր անդորր, ներդաշնակ կեանքի, հեռու հոգու փոթորիկներից, ալեկոծութիւններից... Տեսէք ինչպիսի անկեղծութեամբ, աշխուժութեամբ, կալտաութեամբ, բուռն համակրութեամբ է նկարագրում պ. Նամակեանը այդ մարդկանց, մանաւանդ Արանեանի և նրա ներդաշնակ Աննայի զարձախօսութիւնները, նիստ ու կացը... Սե այդպէս պ. Նամակեանի վրձինը, շատ թէ քիչ գաղափարական (идеи́ные) մարդիկ նկարելիս, ուժասպառ է լինում, գոռնատուում է. և ընդհակառակն չաջողութեամբ արտալացտում է հասարակ բնաւորութիւնների հետ գործ ունենալիս:

Տեղ տեղ Պատրիկեանը, կամենալով լինել աւելի խոհեմ, իր առանց աչն էլ չափաւոր ազատամտութիւնը իջեցնում է աչն աստիճանի, որ ստացում է քօղարկած կամ ոսկեղօծած վստաղիմութիւն: Ալզպէս մեր հեղինակը ամենաչն լրջութեամբ վրձում, ապացուցանում է, որ Ն գիւղի մի ինչ որ վաշխառուի քաջադարձութիւնը վեասակար է լրագրում հրատարակել և առաջարկում է կամագ-կամաց խախուտ դարձնել վաշխառուի գիրքը, մինչև որ մի գեղեցիկ օր, չենւած գիւղական մեծամասնութեան վրայ, կարելի կը լինի կործանել նրան: Ալզ ամենը որքան ժամանակում և ինչպիսի միջոցներով պէտք է ձեռք բերել—պ. Նամակեանը խոհեմ մարդկանց չատուկ զգուշութեամբ քօղարկած է պահում, բաց, ինձ թւում է, որ

մեր հեղինակը՝ «խոհեմութիւն» աւած բանը՝ ի չարն է գործ դնում: Եթէ մարդկութիւնը դարերի ընթացքում գործած լինէր համանման խոհեմութիւններով, մենք այսօր, անշուշտ, շատ Չինաստաններ կունենալինք:

Չափաւոր, խոհեմ մարդիկ մեծ պահանջներ չեն անում կեանքից. քիչն էլ նոցա բաւականութիւն է տալիս. դորան մի պերճախօս օրինակը այս ռուսիւն Վիտեյնը: Գորարով եմ ես բացատրում և այն հանգամանքը, որ Պատրիկեանը երիտասարդութեան ներկայացուցիչներ է ընդունել և գրեթէ գրքի ամբողջ կէսը—12 նամակներից 5-ը—նւիրել մի շարք աչնպիսի անհետաքրքրական անձնաւորութիւնների, որոնք ժամանակակից երիտասարդութեան հետ շատ քիչ առնչութիւնունին: Ահա այդ հինգ նամակները՝ «Փակածը», «Սերգոյեանը», «Խաղիրեանը», «Ապագայ աղան», «Արանեանի մօտ»: Փակածը—Աղաջանեանը—մի ապուշ է, տարին 12 ամիս զբաղած խաղաձև, բրգաձև և այլ ձևերի ամենաանհեթեթ բանաստեղծութիւններ մրտակալ. զբաղում է մեր հերոսը և բառերի ծննդաբանութեամբ, որ կապանում է հետեւալում.

խ==խառնուրդ.

խ ել-ք. . . . խառնուրդից ելք;

խ-աւ-ար. . . . խառնուրդով անող.

զ==ջերմութիւն,

զ-ար ուն. . . . ջերմութիւն անող ժամանակ.

և այլն:

Այդ զարհուրելի անհեթեթութիւններից ոչինչ չեմ հասկանում. անշուշտ ոչ ով էլ ոչինչ չի հասկանալ. մնում է միայն զարմանալ, որ հեղինակը Աղաջանեանի նման ապուշին հնազրտական գիւտ չէ ընդունել, այլ երիտասարդութեան ներկայացուցիչ, մտնելով նրա հետ երկար ու ձիգ խօսակցութեան մէջ, հանելով ընթերցողին համբերութիւնից:

Եւ զիտէք ինչ միտք է կամեցել պ. Նամալեանը չապտնել այդ անհեթեթ տիպով? Աչն որ մեր մէջ կան մարդիկ, որոնք իրանց հեղինակներ են համարում, բայց որոնց գրածքները չեն արժանանում տպագրութեան: Միթէ այդ հասարակ միտքը չապտնելու համար պէտք էր գիմել Աղաջանեանի պէս ապուշին: Վերջինիս նկարագրելիս պ. Նամալեանին հարկաւոր էր վիշել Պուշկինի խօսքերը՝

Съ кого они портреты нишутъ

Гдѣ разговоры эти слышутъ.

А если и случалось имъ,

То мы ихъ слушать не хотимъ.

Սերգոյեանը և Խաղիրեանը ժամանակակից մի քան՝ մտքեր, տեղի և անտեղի գործածող թութակներ են. հալիական Ռեպուտիւմիեր, մինչդեռ մեր հեղինակը Խաղիրեանին, Սերգոյեանի այդ արագաւտ եզ.

բօրը անւանում է «ազնիւ, անշահատէր և անձնւէր»: Այդքան էլ բարուական գնահատութեան ածանութիւն է, — ակամազ լիշում ես պոլսեցիներին: Սերգոյեանը և Խաղիրեանը, ինչպէս ասացինք, աչնքան իրար նման են, որ հեղինակը իւր ալբոմում ղեակղելով մէկի պատկերը, միայնը պէտք է միանգամաչն աւելորդ համարէր: Եթէ մի րոպէ ընդունենք անգամ, որ Սերգոյեանը և Խաղիրեանը արժանի են առանձին-առանձին նամակներու, դարձեալ կը տեսնենք, որ այդ նամակներում կարելի է անել ահագին կրճատումներ, առանց բովանդակութեանը մազաչափ վնասելու: Վերցնենք թէկուզ Սերգոյեանին, որին նւիրւած է ամբողջ տասն և վեց էջ, մինչդեռ առաջին երեք էջերում միանգամաչն պարզել է Սերգոյեանի բնավարութիւնը. մնացած ամբողջ 13 էջերը ոչինչ նոր բան Սերգոյեանին բնորոշելու համար չեն ասում և աւելորդ են:

Պատրիկեանը նւիրելով մի որ և է Սերգոյեանին Նոյնքան թերթեր, որքան օրինակ մի օրիորդ Նուարդին, բնականաբար առաջին նամակը դարձնում է անբովանդակ, ձանձրալի, աննետաքրքիր, մի պակասութիւն, որով խիստ կաղում են վերոլիշեալ հինգ նամակները, մանաւանդ արդէն լիշած երեքը: «Արանեանի մօտ» նամակը, լինելով կենդանի նկարագրութիւններով լիքը, աչնուամենայնիւ բովանդակութեան կողմից աննետաքրքրելի է. դորա գլխաւոր հերոսը Արանեանն է, կաշառք չվերցնող մի անտառապետ, մեր Պատրիկեանի սիրելի բարեկամը, իբրև անհատ ազնւասիրտ, իսկ հասարակական տեսակէտից զրօ: Հեղինակը գէպի նա վերաբերում է մի աչնպիսի սրտաշարժ մտերմութեամբ, մի աչնպիսի անկեղծ համակրութեամբ, որ կարելի է բացաղրել միայն և միայն Պատրիկեանի, որ նոյնն է պ. Նամակեանի, հասարակական մասշտաբի փոքրութեամբ, Խոնջով է Արանեանը այդքան հիացրել մեր հեղինակին? Նրանով որ բարձրագոչն ուսում սաացած այդ անտառապետը աչխատում է հիմնել մի ինչ որ դրողարան, մի գործ որ մեղանում ոչ սակաւ գլուխ են բերում շատ սովորական մարդիկ:—Վերջապէս Ապագայ աղան համոզմունքները առուտուր անող մի քամելէօն է. միայն իր ներքին գատարկութիւնը կարողանում է քողարկել անթափանցիկ աչքերից նորանով, որ գիտէ իրան լուրջ դիրք տալ, պահելով մշտական լուրթիւն և տեղ տեղ պատգամներ արձակելով աղատամտական կամ չետաղիմական ողով, նաչած հանգամանքներին: «Ապագայ աղան» հետաքրքրական կը լինէր, եթէ թխած, դունատ չլինէր դուրս բերած:

Եւ այդպէս պ. Նամակեանը, շնորհիւ իր աչխարհագրորութեան նեղ մասշտաբի, կեանքից մեծ պահանջներ չունի, բաւականանում է խոհեմաբար քով. կարճ ասած, երևոյթները, անձնաւորութիւնները գնահատելիս, նա ընդունում է փոքր մասշտաբ: Շնորհիւ մասշտաբի փոքրութեան, մարդիկ Նամակեանի աչքում բնականաբար մեծ են երևում և ար-

ժանանում աւելի մեծ ուշադրութեան, քան նոքա արժանի են, քան նոքա իրաւունք ունին: Այդպէս Խաղիւրեանը դառնում է «աղնիւ, անշահասէր, անձնէր», մինչդեռ, Բարսեղեանի ասելով՝ Խաղիւրեանը լուրեր տանել բերելով զբաղուող մի ողորմելի արարած է: Հասարակական տեսակետից զրօ Արանեանը արժանանում է խորին համակրութեան, բոլորն անկեղծութեան, մտերմութեան. այդ խոյ պատճառով անհետաքրքրական մարդիկ—Փակաձը, Սերգոյեանը, Խաղիւրեանը, Արանեանը, Ապաղայ աղան, որոնք շատ քիչ առնչութիւն ունին երիտասարդութեան հետ, գրաւում են զրքի ամբողջ կէտը, երկար ու ձիգ նկարագրութիւնների նիւթ դառնալով:

Դառնանք Պատրիկեանի աչն հերոսներին, որոնք երիտասարդութեան աւելի հետաքրքրական ներկայացուցիչներն են: Այդտեղ հեղինակը թող է տւել իրան մի այլ սխալ, կենտրոնանալով հերոսների հանրածանօթ, ոչինչ նորութիւն չներկայացնող գծերի, գաղափարների վրայ: Կարգացէք «Մտալախը ու կեանքի սիւները» և «Ուխտաւորները» վերնագրով նամակները, ուր դուրս են բերւած մեր երկու մեծ կուսակցութիւնների—մշակականների և մեղւակայանների—ընդհարումները, և դուք կը համոզւէք, որ այդ նամակներում արժարժւած մտքերը աչնքան մաշւած, հնացած, ընդհանրացած են, որ կարծես լրագիրներից արտադրած լինեն: Գէորգեանը մշակական է, և թէև իբրև տիպ կենդանի է, բայց այդքան քիչ է խօսում, որ մնացել է տուերի տակ և հետևաբար «մշակականութեան» վերաբերեալ ոչինչ գաղափար չէ տալիս: Մեսրոպեանը մեղւակայան է, կենդանութիւն չունի, աւելի թխած է, քան ընական և կարկուտի նման իրար վրա անուղի մի առ մի շարում է բոլոր աչն հնացած, մաշւած, ընդհանրացած մտքերը, որ ամեն օր կը գտնես մեր չետադէմ կուսակցութեան լրագրներում: «Ուխտաւորների» հերոսներն էլ նոյն մեղւակայաններն են, որոնք մի գլուխ պահանջում են երիտասարդութիւնից պահպանել «աղագրական» խնդիրներով, ծանօթանալ հնութեան, պատմութեան հետ: Այդ ամենի մէջ էլ չկալ մի գիծ, որ նորութիւն կազմէր ընթերցողի համար և լրագրներից աւելի լաւ չպտնի չլինէր: Վիպագրողը սակայն, իւր պատկերների մէջ պարտաւոր է ներկայացնել հերոսների աչնպիսի բնորոշ գծեր, առանձնապատկութիւններ, որ հարստացնեն ընթերցողի անձնական գիտողութիւնների պաշարը, հոգեբանական որ և է նորութիւն կազմելով նորա համար,—մի հանդամանք, որ պակասում է վերոյիշեալ երկու նամակներում:

Դանք «Պատրիկեանի նամակների» վերջին էական պակասութեան: պ. Նամակեանը խոյս է տալիս վճռական կարծիքներից. նա դժւարանում է անպայման կամ համակրել կամ հակակրել որ և է գաղափարին: Պատրիկեանի նամակներում ազատամտութեան զանազան ձիւղաւորութիւնները, Ֆրակցիաները ունին իրանց ներկայացուցիչները, որոնք

ցից իւրաքանչիւրը ունի իր հաւատամքը: Պատրիկեանը ալլ Քրակցիաներից ոչ մէկին էլ չէ կամենում պատկանել. նա բոլորին էլ և համակրում է և հակակրում, գտնելով բոլորի մէջ էլ և ճշմարտութիւն և անարդարութիւն: Վիճում են, զիցուք, հակառակ Քրակցիաների երկու ազատամիտներ — Մուշեղեան և բօխկ Բարսեղեան. մեր հեղինակը կարելի է համարում երկուսի հետ էլ և համաձայնել և չհամաձայնել, ասելով՝ «պ. Մուշեղեան, դուք կատարեալ իրաւունք ունէք պնդել ձեր ասածների վրայ, բայց բօխկի ասածների մէջ էլ կան իսկապէս էական կէտեր»: Վիճում են ալ երկու ներկայացուցիչներ — Ալափեան և Հաթամեան — մեր հեղինակը դարձեալ համաձայնում է և մէկի և միւսի հետ: Կարճ ասած, ազատամտութեան բոլոր Քրակցիաների դէմ պ. Նամալեանը ունի իր «թեր և դէմ» կարծիքները, մի երեսից, որ իմ կարծիքով, առաջ է գալիս հեղինակի աշխարհայեցողութեան անորոշութիւնից: Եւ իրաւ, կան մարդիկ, որոնք անւանում են իրանց և ազատամիտ և պահպանողական, կամենալով դորանով ցուց տալ, որ նոքա երկու կուսակցութիւնների մէջ էլ գտնում են ճշմարտութիւններ. աղպիտի խելօքներին մենք անւանում ենք անորոշ համոզմունքների տէր մարդիկ և ամենայն իրաւամբ, Բաճը աչն է, որ դժւար է երեակալել մի կուսակցութիւն, մի շօլա, որ չպարունակէր իր մէջ շատ թէ քիչ չափով ճշմարտութիւն, շատ թէ քիչ թւով լաւ կողմեր. հարցը միայն նրանումն է, թէ ո՞ր կուսակցութիւնը աւելի մեծ ճշմարտութիւն, աւելի շատ քանակութեամբ լաւ կողմեր ունի: Կորա համեմատ անհատը գրում է սու կամ աչն կուսակցութեան համախոհ, թէ և դիտէ, որ հակառակ կուսակցութիւնն էլ կարող է զուրկ չլինել օգտակար կողմերից: Նոյնը պէտք է անէր Պատրիկեանը նաև ազատամտութեան տարբեր Քրակցիաների վերաբերեալ. մինչդեռ մեր հեղինակը չչեղելով ընդհանրապէս ազատամտութեան սահմաններից, իրան ազատ է պահում ամեն տեսակ ազատամտական ուղղութիւնների հետ կոմպրոմիսների մէջ մտնելու, բոլոր Քրակցիաների հասցեով էլ կոմպրոմիսն առաւելու, թափառական մարդկանց պէս ո՞րոշ տեղ չբռնելով: «Թեր և դէմ» կարծիքները աչնքան գերել, կաշկանդել են Պատրիկեանին, որ վերջինս, նոյն իսկ հասարակ հարցերում անընդհատ գիմում է իր սիրած, փալիալած թեր և դէմ կարծիքներին: Մանուկեանը զատափեսելով ժամանակակից ուսանողութիւնը, մեր հեղինակին հարցեր է առաջարկում նորա կարծիքը իմանալու նպատակով: Պատրիկեանը անխուով պատասխանում է. «Ինդրեմ առանց ինձ հարցեր առաջարկելու շարունակէք ձեր ասելիքը. ես իմ կարծիքը ունիմ ուսանողութեան վրայ — թեր և դէմ»: Բայց պ. Նամ պեանը չի աշխատում պարզել իր դրական կամ բացասական գիրքը դէպի ուսանողութիւնը, և ոչ էլ ընթերցողը կարողանում է հասկանալ թէ ինչ թեր և դէմ ասելիք ունի պ. Նամալեանը ուսանողութեան մասին...:

Անվտանգութիւնը որ և է զրական կարծիք չաշտնելու կամ վերջինիս բացակայութիւնը պ. Նամալեանին մղում է դէպի «միջին» ճանապարհները և հարցերից փախուստ տալը:

Օրիորդ Նուարդը հարցնում է.

—Հաւանում էք պիէսը:

—Միջակ է, պատասխանում է պ. Նամալեանը, որի կարծիքով «միջակ» է կազմած և օրիորդ Նուարդի թարգմանութեան համար նշանակած գրքերի ցուցակը. «միջակ» ընդունակութեան տէր է և հոգաբարձու Սերոբեանը. «միջակ» է առաջ գնում և հաշկական կեանքը...:

Ծնորհու Նամալեանի աշխարհաչեցողութեան անվճռականութեան, անորոշութեան, ամեն բանում միմիաչն թեր և դէմ կարծիքներ պահելուն, շատ հարցեր, երևութներ, հաշեացակէտեր, ամբողջ տիպեր մնացել են անորոշ, չլուսաբանւած, պարզ չձևակերպւած, թողնելով ընթերցողին տարակուսանքի մէջ: Այդ պակասութիւնը աչքքան զգալի է, որ օրինակներ շատ կարելի է բերել, բայց շատանանք մի քանիսով: Վերցնենք «Ներխոսասարդ Հաթամեանը» վերնադրով նամակը: Աչքտեղ Ալափեանը կարդում է մի լողած—Մի ազգի առաջադիմութեան պայմանները—խորադրով: Հաթամեանը հակաճառում է Ալափեանին, բայց վերջինս պահում է, զաքարեական լուսութիւն: Ինչու Ալափեանը լուում է, չի խօսում. միթէ լողած կարդացողը չէր կարող իր մտքերը պաշտպանել սխալ կամ ուղիղ. մինչդեռ Ալափեանի լուսութեան պատճառով նորա տեսակէտը առաջադիմութեան վրայ մնում է միանդամաչն մութ: Այդ հաշեացակէտը վերցնում է պարզելու ինքը Պատրիկեանը, բայց նրա խօսքերից—թէ կեանքին և տալիք ունենք և ստանալիք—ընթերցողը ոչինչ չի հասկանում: Հաթամեանը, իբրև տիպ շատ անորոշ, շատ գունատ է, իսկ նրա տեսակէտը առաջադիմութեան վրայ լաւ չլուսաբանւած: Կարճ ասած, Հաթամեանի և Ալափեան—Պատրիկեանի վիճաբանութիւններից ընթերցողը ոչինչ պարզել չի կարողանում: —Վերցնենք «Իմ ուղեկիրցներ» վերնադրով նամակը. աչքտեղ Մուշեղեան և Բարսեղեան վիճում են նոյնպէս լառաջադիմութեան պայմանների մասին. առաջինի կարծիքով լառաջադիմութիւնը պայմանաւորւում է ժողովրդի նիւթական ապահովութեամբ, իսկ երկրորդի կարծիքով—ժողովրդի բարոյական սկզբունքների բարձրութեամբ: Անշուշտ այդ երկու կարծիքներից մէկը ակելի տարածւած կը լինի երկուսարդութեան շրջանում, իրականութեան մէջ, քան միւսը. անշուշտ այդ երկու տեսակէտներից մէկը ակելի մեծ ճշմարտութիւն է պարունակում իր մէջ, քան միւսը: Պատրիկեանը Մուշեղեանի և Բարսեղեանի վիճաբանութիւններին մի աչքովսի ձև, ուղղութիւն պէտք է տար, որ ընթերցողի համար պարզէին մեր շեշտած երկու կէտերը. մինչդեռ նա ստիպելով Մուշեղեանին և Բարսեղեանին իւրաքան-

չիւրին լոկ իր ասածները հաստատել, առանց ջրելու հակառակորդին, թողնում է ընթերցողին անորոշութեան, տարակուսանքի մէջ, թէ ո՞ր հակառակորդի տեսակէտը արդարագոյն է, թէ կամ գոնէ ո՞ր տեսակէտը աւելի խոր արմատներ ունի իրականութեան թէ կուզ միայն երիտասարդութեան մէջ:

Վերցնենք վերջապէս երրորդ օրինակը—«Ստարտի ալցելուն»: Այդտեղ Մանուկեանը աչքան դժգոհ է ժամանակակից ուսանողներից, որ ընկնելով ծայրալեզութեան մէջ հերքում է նոյն իսկ համալսարանների անհրաժեշտութիւնը, թէև համալսարանական կուրսը ձեռք է բերում տանը երեք տարւալ տոկոս աշխատութեամբ: Մանուկեանի անբաւականութեան պատճառները, մօտիւնները մի քանի են, և ըստ երևութին ամենազլխաւորը ժամանակակից ուսանողների բարոյական սնանկութիւնը, որ թույլ չէ տալիս նոցա ձգտել հասարակական գործունէութեանը. մինչդեռ Պատրիկեանի դրչի տակ մեր հերոսի անբաւականութեան մօտիւնները աչքան խառնափնդոր են, անարատ հոգու գաղափարական պահանջները աչքան շիթած են վաճառականական հաշիւների հետ, որ ընթերցողը դժարանում է որոշել Մանուկեանի անբաւականութեան գլխաւոր շարժառիթները երկրորդականներից: Եւ այլպէս, շնորհիւ Պատրիկեանի աշխարհայեցողութեան անվճռականութեան, անորոշութեան, ամեն բանում թեր և ղէմ կարծիքներ պահելուն, առանց աչք սահմանից դուրս գալ կարողանալու՝ շատ հարցեր, երևութիւններ, ամբողջ հայեցակէտեր, տիպեր մնացել են մութ, անորոշ, չլուսաբանւած, պարզ չձեակերպւած, թողնելով ընթերցողին անորոշութեան մէջ: Պարզ է որ հեղինակը ինքը իւր ճանապարհը չի գտել. թեր ու գէմի սահմաններից դեռ չի վերացել:

Մինչև այժմ խօսելով Պատրիկեանի նամակները բովանդակութեան մասին, գտանք երեք էական պակասութիւններ հետեւեալ ինն նամակներում. «Պակածը», «Երգոյեանը», «Խաղիբեանը», «Արանեանի մօտ», «Ապագայ աղան», «Մտաւախը ու կեանքի սիւնէրը», «Ուխտաւորները», «Երիտասարդ Հաթամեանը», «Իմ ուղեկիցները»: Այդ նամակներից առաջինն ինքը, ունենալով աննշան բովանդակութիւն, ձգձգւած երկար ու բարակ նկարագրութիւններով, պարունակում են անաղին աւելորդ բեռը, ուստի ջրալի, անհետաքրքրական ու սաղտկալի են: Հետեւեալ երկու նամակները, արժարժելով հանրածանօթ, ծամծամ մտքեր, նույնպէս ջրալի, անգոյն, անհետաքրքրական են. վերջապէս վերջին երկու նամակները—Երիտասարդ Հաթամեան և Իմ ուղեկիցները,—չօչափելով հետաքրքրական հարցեր, գաղափարներ, բաց պատշաճաւոր չափով լուսաբանւած չլինելով, կարող են դրաւել ընթերցողի ուշադրութիւնը, մանաւանդ առաջի նամակը. երկրորդը կիսով չափ կը գրաւէ:

Ի նկատի ունենալով ասածներս, ես վերոլիջեալ եօթը նամակներից որ և է չօչափելի օգուտ չեմ սպասում:

Այժմ դառնանք գէպիպն նամակները, որոնք հոտ-համ են տալիս զըր-
բին: Ահա այդ նամակները՝ Օտարօտի այցելու, օրիորդ Նուարդ, Ուսուցիչ
Նարոտեան: Այդ երեք նամակների մի ընդհանուր գեղարեստական պակա-
սութիւնը մենք պարզեցինք զեռ չօղածի սկզբում, ցոյց տալով, որ զոցա
հերոսների հոգեկան ներքին դրաման, սրտի բուռն չուզմունքները պատշա-
ճաւոր ուժով, լեզուով չեն թարգմանել նամակեանի կողմից: «Օտարօտի այցել-
ւի» անբաւականութեան շարժառիթների խառնվնտորութեան վերաբերեալ
մի փոքր ակնարկութիւն նույնպէս արել էի. այժմ աւելորդ չեմ համարում
ուսուցիչ Նարոտեանի վերաբերեալ ևս մի նկատողութիւն անել: Նարոտեանը
մի իդէալիստ ուսուցիչ է, հօգու բոլոր թեւերով նւիրւած իր պաշտօնին. մի
ազգային իդէալիստ կամաջ ակամաջ ընդհարումներ ունենալով շրջապա-
տող հացկատակ ուսուցիչների և անտարբեր հասարակութեան հետ, այնք
է որ զգացած լինէր շրջապատող խեղտող մթնոլորտի բոլոր թունաւորող
ժանիքները, ճիշտ աջնպէս, ինչպէս օրինակ Օտարօտի Այցելուն, կամ օրիորդ
Նուարդը. մինչդեռ Նարոտեանի անբաւականութեան, դժգոհութեան մա-
սին շատ հարեանցի կերպով է լիշատակւած: Այդ պատճառով, Նարոտեա-
նից չէ դալիս իրականութեան աջն հոտը, որ աջնքան քաղցրութեամբ
փչում է Օտարօտի այցելուից, օրիորդ Նուարդից: Այն Օտարօտի այցելուն,
օրիորդ Նուարդը իրանց ոտքերի տակ աւելի շատ իրականութեան հող
ունեն, քան ուսուցիչ Նարոտեանը, թէև վերջինս իր մտաւոր-բարոյական
աշխարհով ցած է առաջիններից:

Չնայելով «Օտարօտի այցելու», «Ուսուցիչ Նարոտեան», «օրիորդ Նու-
արդ» վերնադրով նամակների մեր ցոյց տւած պակասութիւններին, նոքա
սակաջն իրանց բովանդակութեամբ աջնքան խոր են շոշափում մեր կեանքը,
տալիս են մտածելու, զգալու աջնքան նիւթ, որ արժանի են առանձին-
առանձին քննութեան, որ և կատարում ենք մեծ ուրախութեամբ:

Կան մարլիկ, որոնք գէն գցելով սեպհական բաղդաւորութեան վրայ
ալ ևս մտածել, նւիրում են իրանց հասարակութեանը մի մեծ նպատակով՝
թեթեւացնել խեղճերի, թշուառների, տանջւածների ծանր բեռը, օգնել
կեանքի խորթ զաւակներին տենչալի բաղդաւորութիւնը ձեռք բերելու հա-
մար: Երանի աջն հասարակութեան, որ շատ ունի այդ «օրհնեալ» անդամներից.
զրանք են «երկրի ազը», զրանցով է պայմանորւում ազդերի և չառաջա-
դիմութիւնը և բաղդաւորութիւնը: Հաջ երիտասարդութիւնն էլ վերջին
ժամանակներս սիսել է տալ «օրհնեալներից», որոնց ներկայացուցիչ-
ներից պ. Նամակեանի զրքում գտնում ենք երեքին — Օտարօտի այ-
ցելուին, օրիորդ Նուարդին, մասամբ և ուսուցիչ Նարոտեանին: Օտարօ-
տի այցելուն — Մանուկեանը — մարմնացած բողոք է ժամանակակից ուսա-
նորութեան գէպի դիտութիւնը և գէպի ժողովուրդը բռնած ծուռ ընթացքի
դէմ: Մենք հալերս բաւական եսասէր ազգ ենք, և այդ հասկանալի է.

լինելով պատմութեան «խորթ» զուակներ, կրելով դարերի ընթացքում հազար և մի տեսակ հալածանքներ, նեղութիւններ, մենք բնականաբար սովորեցինք չսիրել ուրիշներին, մտածել միայն մեր թշուառ եւ լիրաց: Հալի ալզ կամութիւնը զգալ է տալիս իր գոյութիւնը և հալ ուսանողութեան երակներում: Կնչքան համալսարանականներ կարելի է թւել, որոնց տգիտութիւնը, երկխաչական զարգացումը ապշեցնում է. որքան համալսարանականներ կան, որոնց ամբողջ կեանքը, գոյութեան միակ նպատակը իրանց թշուառ կարիերան է, այն կարիերան, որի համար ընդունակ են գոհելու ամեն սրբութիւն, ընդունակ են զիմեւում այնպիսի ստորութեանների, ցածութիւնների, որոնցից զրկելով կիսախէլին նոցա անգրագէտ պապերն անգամ... Ահա այն հարցերը, որոնց պատճառով Մանուկեանը այնքան մտատանջւել է, այնքան ցածել է, զիմեւում անբնական եւքի—հերքելով համալսարանի անհրաժեշտութիւնը: Մանուկեանը վերջացնելով զիմնազիական կուրսը և վճռած լինելով իրան նւիրել ժողովրդին, մտադիր է, ապագայ գործունէութեան համար աւելի պատրաստած լինելու համար, գնալ համալսարան, «մտքի ալզ լաբորատորիան»: Աւարտման քննութիւնը տւած-չտւած՝ մեր հերոսը ծանօթանում է և վիճաբանութեան մտնում երկու նորեկ ուսանողների հետ ու շուտով մերկացնում մէկի մէջ անսահման տգիտութիւն, իսկ միւսում թոշնած երկտասարդութիւն, հոգեկան ծերութիւն, վրդովեցուցիչ անսարբերութիւն գէպի ժողովրդի ցածերը, գէպի հասարակական գործունէութիւնը: Տեսնելով համալսարանի ալզ կենդանի արդիւնքները, Մանուկեանը խոր բնաւորութիւններին չատուկ ուժով նւիրւած լինելով իր «սիրելի մտածմունքներին» ոչ թէ լոկ խելքով, այլ հողու բոլոր թելերով, մնում է ապշած, քարացած, կաշճակնահար դարձած, մեքենալաբար մտածելով. «Եթէ դա է հետեանքը—ալզ լոգնածութիւնը, վաղ պառաւութիւնը, —ուրեմն ինչինչու է պէտք ուսանողութիւնը: Կըզնամ, ուսում կանոն, բայց ոչքերս կսպառեմ և կըղառնամ հալրենիք. ում և ինչի կըլինեմ ես պէտք: Յանկարծ միտքս եկաւ, սր մեր քաղաքում 5 իրաւագէտներ կա վին, 3 բժիշկ, 2 արհեստագէտներ. դոքա բոլորն էլ բարձր ուսում են ստացած. դոցանից միայն մէկը—բժիշկ Սատարեանը—կենդանի մարդ է. հասարակալին խնդիրներ քրքրող և ընդհանուր շահերի ջատագով: Ուրեմն, ուրեմն, ուրեմն... Ես վճռեցի բարձր ուսում առնելու չգնալ» Մանուկեանը մնում է հաւատարիմ իր վճռին, բայց իր ընկեր ուսանողից բերել տալով իրաւաբանական դասախօսութիւնները, չըջապատելով իրան ընտրած մասնագիտութեան համապատասխան գրքերով, երեք տարւալ անխոնջ աշխատութեամբ անցնում է «բոլոր իրաւագիտական աւարկաները նոյնքան մանրամասն», կարդում է «ընդհանուր բովանդակութեան այնքան գրքեր», որքան ոչ մի համալսարան գնացածը նորա ընկերներից: Տանը ձեռք բերելով և

լուրջ գիտութիւն և լուրջ ընդհանուր զարգացում, Մանուկեանը մի տարի էլ նւիրում է իրան իրական կեանքի պայմանները ուսումնասիրելու, որպէս զի չեստոյ, զինւած բոլոր կարևոր գէնքերով, նւիրէ իրան հալ ժողովրդին, նրա ցաւերը, հոգսերը դարմանելու համար...

Նարոտեանը բողոք է աջն հացկատակ հալ ուսուցիչներին դէմ, որոնք իրանց պաշտօնի վրայ նախում են, իբրև մի ժամանակաւոր պարապմունքի վրայև ուսումնարանական տարին վերջանում է թէ չէ, խախտն իրանց աճուրդի են հանում և ուր մի սև կոպէկ աւելի են տալիս, աչնտեղ էլ զնում են, լինի ալ «աչնտեղը» մի խանութ, մի առևտրական գրասենեակ, մի գինետուն, մի ոտտիկանատուն, թէ էլի մի նոր հալկական դպրոց, միևնոջն է: Նրբ վիշում են ալք կարգի ուսուցիչներին աղիտութիւնը, ստորութիւնները, երկնորիզները իրար դէմ, անսահման անտարբերութիւնը, անպիտութիւնը դէպի իրանց ուսուցչական պարտականութիւնները. երբ երեակալում ես թէ ամեն մի ժամ, ամեն մի բոպէ քանի-քանի հազարաւոր հալ մանուկներին թարմ ուղեղները, անարատ սրտերը, մտաւոր-բարոյական մտնոյ ստանալու փոխարէն, ալլանդակում են ալք անկոչ, անարժան ուսուցիչներին ձեռով—ակամալ բացականչում ես. «խեղճ, խեղճ հալ դպրոցներ, երբ պէտք է ալցելեն ձեզ Նարոտեանները»: Նարոտեանի և մեր հացկատակ ուսուցիչներին հիմնական զանազանութիւնը կալանում է նրանում, որ առաջինը իր գործին նւիրած է ոչ թէ պատահմամբ, ալ կատարեալ դիտակցութեամբ, սիրում է նորան իր ամբողջ հոգով, իր ամբողջ էութեամբ. իր պաշտօնը լաշողութեամբ կատարելում գտնում է զլիաւոր, եթէ ոչ միակ վարձատրութիւնը: Ահա թէ ինչպէս է ալ ամենը ամիսիում ինքը Նարատեանը. «Գոնէ ինձ համար դպրոցը, ուրտեղ ևս պարապում եմ, ընդորձակ գործունէութեան ստպարէզ է և անսպառ ողևորութեան աւարկալ...: Նս կարծում եմ, որ հատարակական ամենամաքուր գործունէութիւնը մեղանում ուսուցչութիւնն է. ալտեղ իմ ամեն մի ժամը, ամեն մի օրը, իւրաքանչիւր իմ քալը տեսնում եմ նպատակին ծառայեցրած, կըրթութեան և լուսաւորութեան համար ծախւած: Գա հաշապահական տեսակէտից: Բալց կալ և մի ալ հանգամանք... գա ողևորութեան, գործը սիրելու և նորան նւիրելու հանգամանքն է: Նս սիրել եմ ալ գործը և սիրահարել եմ նորա վրայ: Նս ունեմ աչնպիսի վառ և սատտիկ տպաւորութիւններ ստացած ալս գործից, որ չաւիտեան նոքա կը մնան անմոռանալի ինձ համար»...: Ով ալգալիսի իղէալականութեամբ է վերաբերում ուսուցչութեան, նա, անկասկած, հրաշքներ կանէ. և Նարոտեանը ալ հրաշքը գործում է. «Աչակերտները սիրահարել են նորա վրայ. Նս կատարեալ կախարդել է նոցա», ասում է պ. Նամակեանը: Միաջն զգւելի աւագ-ուսուցիչը գո՞ չէ իր թշառ հեղինակութեանը վեասող Պետալոցցի-ուսուցչով. բացի ալ մի ինչ որ ինտրիդ լարում է Նարոտեանի դէմ

ասարակութեան մէջ, որ և առիթ է տալիս պ. Նամակեանին, նրա հետ և ամեն մի սրտացաւ հայի մտածել. «Այլ զիմանալ Նարտեանը արդեօք, կը տանի շրջապատող անհիւրասէր մարդկանց սառնասրտութիւնը և չի դալրանալ մի օր և կտմ յուսահատիլ ու թուլանալ կամ կոշտանալ, խտտանալ և կղզիանալ»: Անտեղի չեն այդ կասկածները. քանի-քանի բարեխիղճ ուսուցիչներ, շխարհաւնալով տանել հացկատակ ուսուցիչներին խեղդող մթնոլորդը, թողել հեռացել, ևն...»

Պր. Նամակեանի 12 նամակներից լուրջ ուշադրութեան առնելով միայն երեքը—Օտարօտի ալցելու, Աւուցիչ Նարտեան, Օրիորդ Նուարդ—վերջին երեքի մէջ էլ գտանք մի ընդհանուր պակասութիւն. բացի այդ «Օտարօտի ալցելուն» և «Աւուցիչ Նարտեանը» ունէին իրանց առանձին-առանձին պակասութիւնները, որոնցից աւելի աղատ է «Օրիորդ Նուարդը»: Եւ այդպէս «Օրիորդ Նուարդը» Պատրիկեանի նամակներից լաւագոյնն է: Իբր հետաքրքրական տիպ, մենք սիրով աւելի երկար կանգ կ'առնենք նորա վրայ:

Քիչ առաջ մենք խօսեցինք հասարակական ասպարիզում դործող «օրհնեալ» մարդկանց մասին. զոցա գործունէութեան սրբութիւնը, օգտաւէտութիւնը անվիճելի է: Կան մարդիկ, նոյն իսկ ամբողջ հասարակութիւնների և աչն էլ ամենազարգացած ազգերի մէջ, որոնք զանազան կասկածելի միջոցներով ապացուցանում են, թէ մարդկութեան ամբողջ կէտը—գեղեցիկ սեռը—իրաւունք չունի «օրհնեալ» մարդիկ տալու, թէ կինը ստեղծւած է լոկ ընտանեկան շրջանի համար, ուստի չպէտք է համարձակւի ձգտել որ և է հասարակական գործունէութեան: Այլ կարծիքի դէմ են շատերը, որոնց մէջ և գեղեցիկ սեռի լաւագոյն մասը, որ ասում է առանց խորամանկ սովիւտութիւնների զիմեւով. «ես մարդ եմ և ոչինչ մարդկավիւր ինձ համար խորթ չէ. ուստի եթէ տղամարդը, ինձ հետ միևնոյն արիւն-մարմին ունեցողը, ձգտում է հասարակական գործունէութեան, կամենում է ընկնել «օրհնեալների» շարքը, ես ես իրաւունք և պարտականութիւն ունեմ դրածել հասարակական ասպարիզում, մտնել «օրհնեալների» կարգը: Թէ երկու մարտնչող կարծիքներից որը վերջի վերջու պէտք է լաղթէ,—պարզ է. միայն կուրը, լուս, բալց անելի, անթիւ զոհեր պահանջող մեծ կուրը համեմատաբէս դեռ. նոր է սկսել նոյն իսկ ամենալուսաւորւած երկիրներում...» Այլ ահարկու կուր մօտ Նուարդի կուրը նման է մեծ ովկիանոսի մի կաթիլ ջրի, զուցէ նկատեն մեզ: Ճիշտ է, բալց աչնուամենայնիւ—այդ կաթիլ ջուրը իրստ թանդ է հակահիւստ անապատում: Նրեակապեցէք ձեզ զարգացած, խելօք, համարձակ, տոկուն, հասարակական գործունէութեանը ողջ էութեամբ ձգտող մի օրիորդ. երեակապեցէք, որ լիջեալ ընդունակութիւններով օժտւած շնորհալի օրիորդի մտաւոր-բարոյական ցանկութիւնները, իզձերը, շրջապատող մարդկանց տգիտութեան անտարբերութեան

չնորհիւ, մնացել են կաշկանդած, զոհացում, բաւարարութիւն չեն տա-
նում, առիպելով տանջող նաւապետի նման մի կողմից մարտնչել փրփրա-
լից դուռ ալիքների դէմ, իսկ միւս կողմից ցամաք դուրս գալու համար
անընդհատ փնտուել նաւահանգիստ: Այդ ամենը երևակայելուց չեառլ հաս-
կացած կըլինէք Նուարդին: Այսուհետև ես կըխօսեմ հեղինակի իրա լիզ-
ւով: Նուարդը հարուստ ծնողների զաւակ է. բայց թէ ծնողների հպեացք-
ները և թէ նոցա հարստութեան փալը խորթ են նորա սրտին. «Ծնող-
ներս ուրախ են, որ ես ուսում եմ առել, բայց եթէ քննէք, կըտեսնէք,
որ նոցա պէտք չէ ինքը ուսումը իր հետեանքներով. նոքա զարգարել
են իրանց սենեակները. ինչո՞ւ չզարգարէին և իրանց աղջկան, տալով
նորան բացի զգետից և ուսումնական փալը»: Գոհ չէ օր. Նուարդը և
նորանց տուն լաճախող բարեկամ-ծանօթ երիտասարդներից. «Համաճաչն-
ւեցէք, որ կարելի է ստիբել աչն տեսակ անձինքներին, ինչպէս Սերպո-
լեանը: Ես նախանձում եմ, տեսնելով նորա ազանխական միամտութիւնը,
նորա ողևորած և համոզած դատարկարանութիւնը»: Անտարբեր գէպի
իր ծնողների նիստ ու կացը, գէպի նոցա հարստութիւնը, գէպի շրջա-
պատող ողորմիկ երիտասարդները, օր. Նուարդը ճաշակել է մի ալ կեան-
քի անհուն քաղցրութիւնը և չգտնելով շուրջը, տանջւում, խորովւում է:
«Ի՞նչ անեմ. թնչպէս անցկացնեմ իմ ժամանակը. թնչպէս ես ինձ թմրաց-
նեմ, ինձ խաբւմ, որպէս զի չզգամ ապրելս: Ես չուեսես չեմ, ես չուսա-
հաւաւած չեմ, ես կեանքը դնահատում եմ, ես չուերս ունեմ... Ա՛լս, պ.
Պատրիկեան, ես կեանք եմ ուզում, կեանք»: Եւ օր. Նուարդը մէն մէ-
նակ, առանց պաշտպան ձեռքի, առանց քաջալերող ընկերի, անխորձ
լուզորդի նման մտնում է ծովը, միաչն թէ կարողանալ ձեռք բերել պան-
ծակի կեանքը. «Աս փորձեցի՜ ձրի դասեր տալ մի տարրական դպրոցում,
բայց ալ պարսպունդները չզոհացրին ինձ և վիրաւորեցին մօրս և ես չու-
սով հրաժարեցի»:

«Աս առաջարկեցի ծնողներիս, որ կարողութիւն տան ինձ բանալու
մի փոքրիկ մանկական գրադարան, որից ձրի օգուէին ուսումնարանի
աշակերտները: Ծնողներս բացասեցին»:

«Աս մտադրութիւն ունէի մի փոքրիկ ընկերութիւն կազմելու, որի
անդամները կանոնաւոր կերպով շրջէին մեր աղքատ ընտանիքները և ըստ
կարողութեան օգնէին նոցա»: Եւ ալչն, և ալչն և ալչն:

Օր. Նուարդի բոլոր բարձր նպատակները, գէպի հասարակական լաւ
գործունէութիւնը ուղղած անընդհատ ջանքերը ջախջախում էին ծնողների
հետեակ խօսքերով. «Էլի տուտուցութիւնդ բռնեց»: իսկ ծանօթերը ու-
սերն էին թափ տալիս, հանաքի գցում, կամ մինչև անգամ ծաղրում էին.
Չգտնելով լաչն հասարակական գործունէութիւնը, որի ծարաւը օր. Նու-
արդը զգում է հոգու բոլոր թեւերով, մեր հերոսուհին ճարահատեալ զբաղ-

ում է թարգմանութեամբ, «նուրբ կերպաների և գեղեցիկ կա՛ն կարասիքի մէջ թուլատրելի այլ գործունէութեամբ»: Եթէ օր. Նուարդի զիրքը, չրջանը վնասում է նորա ամենաջերմ իղձերի, ցանկութիւնների իրազոր-
 ծելուն, ինչո՞ւ նա ձեռք չէ վերցնում իր զիրքից, չի հեռանում ամեն
 տուրք բան մեռցնող իր չրջանից: Գորան օր. Նուարդը պատասխանում
 է. «Դժբաղդաբար, ես վճռել չեմ կարող. ինձ պէտք է հրամայել, որ ես
 ձեռք վերցնեմ. ես կապած եմ ամբողջ իմ անցեալով իմ ծնողներին հետ
 աչն կազմով, որ զուք տեսաք: Ես վճռելու համար պիտի շատ կուռն
 հետս, շատ մտատանջեմ և զաղար չունենամ»: Եւ այդպէս օր. Նուարդը,
 լինելով դժգոհ իր չրջապատող մթնոլորտից, միեւնոյն ժամանակ խիստ
 կապած լինելով իր կրթութեամբ սովոր կեանքի նիստ ու կացին, թուլ
 է զգում իրան փչրոտել կաշկանդող շղթաները, և ճակատագրական քայլը
 անելու համար սպասում է մէկին, որը պիտի նորան հրամայէ: Ա՞յլ է
 այլ հրամայողը. անշուշտ ոչ փայթեմ, ճոխ կեանքի սովոր գեղեցկադէմ
 մի հարուստ և ոչ էլ զիպլոմասուր համալսարանական չազ պաշտօնով, իր
 թշուաւ ետից դուրս ոչինչ չիմացող. բայց ինչո՞ւ դուշակել. լսենք Պատրի-
 կեանին: «Օրիորդը ցուց աւաւ իր ձեռքով նկարած մի երիտասարդի կեն-
 դանագիրը: Այլ միջոցին, երբ ես գննում էի պատկերը, օրիորդը սեղմած
 շրթունքներով և լուրջ նայում էր իմ երեսի արտապայտութեանը.

—Մա զիտէք ով է, ասաց նա—սա իմ ուսուցիչն է, իմ մասնաւոր
 ուսուցիչը. նա, որ ինձ վարդապետում էր գարցիցի դուրս: Գուք նորան
 չէք ճանաչում. նա մալրաքաղաք չէ գնացել կատարելա-
 գործւելու, ալլ... թողնենք զազանիք մնալ առ սլոմ»: Եւ այդպէս,
 զարգացած, խելօք, հասարակական գործունէութեան ողջ էութեամբ
 ներկած ծարաւ Նուարդները սպասում են պաշտպան, քաջալերող դուր-
 ծիչներին...: Միթէ օր. Նուարդը չոր անապատում ապրող օրիորդների հա-
 մար մի օղիտ, մի սիտիլիչ ապատարան չէ...

Բոլոր երիտասարդներին անպայման խորհուրդ կըտամ կարգալ «Օրի-
 որդ Նուարդ» և «Օտարօտի սպելու» վերնագրով նամակները. օգու-
 տով կարելի է կարգալ նաև «Ուսուցիչ Նարտեանը»: Պր. Նամակների
 բոլոր մնացած իննը նամակներից, ինչպէս ստել ենք, որ և է օգուտ չենք
 սպասում:

Մասնօթ. իմք. «Պատրիկեանի նամակները» խորագրով պ. Նա-
 մականը սկսեց գրել «Մուրճ»-ում: Այդ շարք նամակներից, սակաչն,
 տղեցին մեր ամսագրում ոչ բոլորը, որ մտել են առանձին գրքով հրա-
 տարակած հատորում, որ և քննադատութեան է առել լօղւածագիր պ. Մեղ-
 քումեանը: «Պատրիկեանի նամակներից», որ վիշտակուել են այս լօղւա-
 ծում, տպւել են «Մուրճ»-ում միաչն եօթը, աչն է՝ Օտարօտի սպելու, Նրի-
 տասարդ Հաթամեանը, Կեանքի սիւները, Գերուիչը (Վերգոլեան), Օրիորդ
 Նուարդ, Արանեանի մօտ և իմ ուղեկիցները:

Թերևս աւելորդ չէ ասելը, որ «Մուրճ»-ում տպւել է նոյն Նամալեանի
Նաև պատկերների մի այլ շարք՝ «Կեանքի դժեր» ընդհանուր խորագրով,
որ չպէտք է շփոթել «Պատրիկեանի նամակներին» հետ: Վերջինումս հեղի-
նակը աշխատել է դուրս բերել երկտասարդ ինտելիգէնտների տիպեր, իսկ
«Կեանքի դժերը» վերցրած են գլուղացիական կեանքից:

Գալով պ. Մեղքումեանցի լօղւածին, մենք պէտք է ասենք, որ տեղ
ենք սալիս նորան մի շարք ճիշդ նկատողութիւնների պատճառով և իբր
համեմատապէս լաւադոյնը այն լօղւածներից, որ ցայժմ ստացել ենք այլ և
այլ անձերից այլ գրքի մասին: Բայց մենք ամբողջապէս չենք միանում
լօղւածագրի հետ բոլոր նամակների առանձին-առանձին գնահատութեան
Նկատմամբ:

Գ Ր Ա Խ Օ Ս Ո Ի Թ Ի Ի Ն

Армянские беллетристы. Сборникъ изданный подь редакціей Юрія Веселовскаго и Минаса Берсеряна. Томъ первый: Մեծ քառածալ, 518 էջ. Москва, тип. т-ва И. Н. Кушнеревъ и К^о, 1893 զինն է 1 ա. 75 կ. (Հաջ վիպասաններ: Փողովաճու, հրատարակած Իւրի Վեսելովսկու և Մինաս Բերբերեանի խմբագրութեամբ):

Միտքը ստեղծած է հազարդ-
ւելու համար. նոյնն է և գեղար-
ւեստը, որով մաքերը արտալատ-
ւում են: Եւ մի գրականութիւն որ
իւր մէջ պարունակում է միտք,
զգացմունք, զեղարւեստ, — վաղ թէ
ուչ կը դառնայ սեպհականութիւն
ամբողջ մարդկութեան: Գորա հա-
մար պէտք է որ այլ գրականու-
թիւնը, իւր ներքին բովանդակու-
թեան ու ձեռի կողմից՝ բաւակա-
նաչափ բարձր զգացումներ չարու-
ցանէ, որպէս զի բոլոր ազգերին,
ամբողջ մարդկութեան կողմից հաւա-
սարապէս ընդունուի որպէս մարդ-
կութեան գանձ առ հասարակ: Հա-
լոց վիպական նոր գրականութիւնը
բուսած հայկական հողի վրայ,
սնւած հայկական գաղափարներով,
չատկացրած հալ ժողովրդի պէտքե-
րին, ալսօր առաջին փորձերն է
սեանում՝ լուսաւոր մարդկութեան

զատաստանի առաջը բերելու և
քննելու: Բայց նոյն լույսն փակտը,
որ այլ փորձերը անւում են և խրա-
խուսանք գտնում, ցոյց է տալիս
որ այլ գրականութեան արժանաւո-
րութիւնը զԹ մինչ մի չափսի
աստիճան արդէն ճանաչւած է և
վիպւած: Գա մխիթարական է մա-
նաւանդ հալոց ազգի համար, նո-
րա պատմական կեանքի ներկալ
րոպէներում. դա կարեւոր է նորա
ինքնազգացմունքի համար:

Արեւելեան հալոց նոր բեւեարիս-
տիկան իւր աւելի քան 35 ամեայ
գոյութեան ընթացքում, արտա-
լայտել է բանաստեղծութեան, վի-
պասանութեան և թատրերգութեան
ձևերով: Իւր տեղեկեցիալի և բու-
վանդակութեան կողմից, այլ գրա-
կանութիւնը դիմել է հայրենական—
ազգայինին. ալտեղ փալել են
Աբովեան, Մերենց, Բաֆֆի, իրանց

գլխաւոր վէպերում և Կամաու-Քա-
թիպա, իւր բանաստեղծութիւնները
մէջ. Ժողովրդական վարքանկարա-
գրութեանը, որի գլխաւոր ներկա-
լացուցիչներն են Պոօշեան և Աղա-
լեանց, իրանց գլխաւոր վէպերում.
հատարակականին, որի գլխաւոր ներ-
կալացուցիչներն են Սուեդուկեան
դրամալի մէջ, դեռ ևս երիտասարդ՝
Շիրվանդադէն վէպի մէջ, Պարոնեան և
Պատկանեան սատիրալի մէջ, վերջա-
պէս մանկական-բարոյախոսականին՝
որի ներկայացուցիչն է Աղալեանց՝
գլխաւորապէս իւր հեքիաթները մէջ.

Եթէ այս անունների վրայ աւել
լացնենք նաև Շահ-Աղլիլին և Պե-
շիկթաշլեանին,—մենք արդէն լրաց-
րած կը լինենք թէ արեւելեան և թէ
արևմտեան հայոց գեղեցիկ գրական-
նութեան գլխաւոր ներկայա-ցուցիչ-
ների ցանկը, որքանով որ նոքա ար-
դէն հանրային նշանակութիւն են
ստացած հայերի մէջ, շնորհիւ նոցա
անկասկածելի տաղանդի և ցափմ
արտադրած գործերի:

Եւ օտարներին մեր ներկայաց-
նելիքը բեւեռարիտիկալից—գոցա
գործերն են: Աւելի հեռուն գնալ կը
նշանակէր հրապուրել:

Ներկայ հատորը առաջին մեծ
փորձն է ուսուսաց հասարակութեանը
ճանօթացնելու հալ բեւեռարիտե-
րի հետ: Այդ փորձը անուում է գեր-
մաներէնի համար փորձ անելուց լե-
սուլ: Յալանի է որ պ. Աբգար Յով-
հաննիսեանի հրատարակութեամբ
դեռ 80-ական թւականներին լուս
տեսան Armenische Bibliothek-ի
մօտ տասնեակ գրքովները, որոնք
բովանդակում էին մեր նորագոյն

վկայասանների գրածքները, լա-
ջող ընտրութեամբ: Ռուսերէնի հրա-
տարակութեան համար գլխաւոր
գործիչը հանդիտանում է պ. Իւրի
Վեսելովսկին, ընկերութեամբ պ.
Մինաս Բերբերեանի: Պարոն Վե-
սելովսկին լաւ նախապատրաստ-
ւած է երեւում ալդ դերի համար.
անցեալ տարի ուսուսաց «Արտիստ»
գեղարեւտական ամսաթերթում նա
հրատարակեց մի ընդարձակ աշխա-
տութիւն հալ թատրերգութեան մա-
սին, արժանի նաև հայերի ուշագրու-
թեանը, քանի որ նմանը չկալ
նոյն իսկ հալ գրականութեան մէջ:

Պէտք է ասած, որ հալ գրողնե-
րից նա, ով առաջին և գլխաւոր
պատճառն է եղել, որպէս զի հայկա-
կան բեւեռարիտիկան թարգմանա-
բար արւի օտարներին, և միևնոյն
ժամանակ նա, ով ամենից շատ է հե-
տաքրքրել օտարներին՝ դա է Բաֆ-
ֆին: Մեզանում Բաֆֆին ամենաժո-
ղովրդական գրողն է, նա իւր վերայ
դարձրեց ընդհանուր ուշագրութիւն,
և ոչ միայն հայերի, ալ և օտարների
մէջ: Ռոմերի մէջ, իւր մահից լետուլ,
նա գտաւ կենսագրող, լանձին ար-
կին Նեկրասովալի, նա գտաւ հայերի
մէջ թարգմանողներ՝ Յ. Վերմիշե և
Վարա-Մուրդա. վերջինս անցեալ
1892 թ. լուս ընձալեց «Ռսկի Աքա-
դալը» ուսերէն լեղուլ, (որ մաս-մաս
տպում էր Թիֆլիսի Новое Обоз-
рѣніе թերթում), չհաշւած այն թարգ-
մանութիւնները և կենսագրական
լօղւածը, որ տպւած են ներկայ ժո-
ղովածելի մէջ: Ահա ինչու մենք չենք
զարմանում, որ Վեսելովսկու և
Բերբերեանի այս հաստ հրատարա-

կութեան մէջ, որ 509 մեծադիր էջեր է պարունակում, կէսից աւելին (260 էջ) բռնում է Բաֆֆին:

Ներկայ հատորում զետեղւած են կենսագրութիւնները և գլխաւոր դրած քննարկ քաղաքօրէն, խակ մանրերից՝ ամբողջութեամբ թարգմանութիւններ խ. Աբովեանից, Պերճ Պռօշեանից, Բաֆֆիից, Ռ. Պատկանեանից, Յակոբ Պարոնեանից, Մերենցից և Վաղարոս Աղապեանից: Այսից աւելին, որպէս նկատուցի վերը, բռնում է Բաֆֆին, մնացած կէսը բռնում են միւսները:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, առաջին հատորի մէջ չեն մտել բոլոր աչն հեղինակները, որոնք, մեր վերը ասածին համեմատ, հաստատ տեղ են բռնել մեր նոր բելլետրիստի կապի մէջ: Չգիտեմ ինչ հեղինակներ են զետեղելու խոստացւած երկրորդ հատորի մէջ, բայց եթէ այդ երկրորդ հատորը առաջնի չափ է լինելու և ինչպէս լառաջաբանում ասւած է՝ նորա մէջ տեղ են բռնելու նորագուն հալ բելլետրիստներին գրւած քննարկները, — աչն ժամանակ մենք առաջուց կարող ենք գուշակել այդ երկրորդ հատորի անաջողութիւնը: Դեռ ևս գրականութեան մէջ ամուր և վերջնական տեղ չգրաւած հեղինակների գրածները սնտեղի ենք համարում օտար հասարակութեան առաջը դնելու: Այլապէս մենք ցանկացած օգուտը չենք տեսնում, թերևս դեռ վնաս էլ լինի՝ ռեկլամներ անելով իրանց ուզին դեռ ևս բաւականաչափ չհարթած հեղինակների համար:

Ներկայ առաջին հատորի մէջ զե-

տեղւած կենսագրութիւններից շատ չաջողւած են ժանաւանդ Վեսելովսկու գրած Աբովեանցի և Բաֆֆիի կենսագրութիւնները և նոցա վէպերի գնահատութիւնը, Վեսելովսկու չօղւածների մէջ կալ մի ինչ որ համակրելի տաքութիւն, առանց որ նա դորա համար դուրս գալ քննադատի սահմաններից: Նա գիտէ նաև ոգևորել անկեղծ ոգևորութեամբ: Տեքաղաբար նոյնը չենք կարող վկայել պ. Բերբերեանի մասին, որը կենսագրութիւնը հասկանում է պանեգիրիկապի մտքով: Այսպէս օրինակ Պերճ Պռօշեանցին նւիրւած չօղւածում մենք ստիպւած էինք բազմաթիւ հարցականներ դնել: Առհասարակ նկատենք, որ կենսագրողները իզուր են իրանց համար կոչում համարում կենսագրւած հեղինակին ամեն զէպքում սուրբ դուրս բերել: Աչոյէս, օրինակ, կեանքի ամեն մի զէպք, որ անախորժ է եղած մեր վիպասանին, պ. Բերբերեանը առանց պակասութեան բացատրում է չօղւած նորա և ընդգէմ ուրիշների:

Աչքի է ընկնում նաև պ. Բերբերեանի շատ չեշուած համակրութիւնը դէպի մեզանում որոշ բայց և անհամակրելի ուղղութեան պատկանող գործիչներն ու գրողները, որոնց անունները տալիս՝ պ. Բերբերեանը անպատճառ մի զիպլումսիւն ածական պէտք է կայցի: Եթէ դա, օրինակ, պ. Աբգար Յովհաննիսեանն է, նա կ'ասի տաղանդաւոր խմբագիր (էջ 31), եթէ Պռօշեանցն է, նա չի բաւականանալ եղածով, այլ թէ կուղ նա զուրկ էլ լինի հրապարակախօսի շնորհքից, բայց և

աջնպէս նա նորան կը հռչակի իբրև տաղանդաւոր հրապարակախօս. եթէ դա Մատթէոս Մամուրեանն է, պ. Բերբերեանը չի նազիլ ոչ մի հանդամանքի և աւաց ալ և ալլութեան կը թիփ՝ տաղանդաւոր հրապարակախօս և լուսաւորած մանկալարժ Մամուրեան (էջ 446):

Անճշգոյթութիւններից վիշնք աչն, որ պ. Վեսելովսկին սխալմամբ ընդունել է իբր Բաֆֆիի չօրելեանը շտճուեց, մինչդեռ նա տօնուեց ժողովարարութեան և պարզների ու ուղերձների ձևով, թէ և ոչ մի օրուայ հանդիսով. և ալ մանաւանդ ուշադրութեան արժանի է, որ Բաֆֆին մեղանում առաջինն եղաւ, որ արժանացաւ չօրելանական ընդհանուր ցուցերին: Գորա հակառակ պ. Բերբերեանը տօնել է տալիս պ. Պոռլանդի չօրելեանը, մինչ դեռ ճշմարտութիւնը այս է, որ այդ չօրելեանի համար 1889-ին մի մասնաժողով կազմուեց, սակայն չգործեց, որքան մեզ չարժնի է:

Խնդիր կարող է լինել, թէ որ-

քան նպատակաւորմար է աչն ձեռ, որ արած է ներկայ ժողովածուին, ուր ալ և ալ վէպերից միայն հատհատ գլուխներ են թարգմանուած: Անկասկած է, որ գերմանական Armenische Bibliothek-ի ձեռ գերագասելի է, քանի որ նորա ամեն մի հատորիկը մի ամբողջութիւն է կազմում: Բայց և աչնպէս ուրա հասարակութեան սպմեան պահանջի համար ներկայ ժողովածուն իւր հատընտիր ձևով ոչ միայն կարող է օգտակար լինել և գուցէ լինի աւելի ևս հետաքրքրական: Հետաքրքրութիւն չարժեղու տեսակէտից՝ պ. պ. Վեսելովսկու և Բերբերեանի ժողովածուն մեծապէս աջողած պէտք է համարել:

Մի վերջին նկատողութիւն ևս բեւեարիտտ չի նշանակում միայն վիպասան, ալ և ոտանաւորով դրող բանաստեղծներ, դրամատուրգներ և ալլն, որոնք դուրս են գլուած ներկայ հատորից:

Ա. Ա.

Հեղինակ ? , փոխադրեց Գրիգորիս Երզնկեանց.— «Թւաբանական խնդիրներ և օրինակներ»: Տարրական զասընթացք. ա. և բ. տարի, 1892 թ., 108 էջ, զինն է 30 կոպէկ:

Պ. Գրիգորիս Երզնկեանցը իր աշխատութեան չառաջաբանի մէջ չարժնում է, որ օգուել է Գնդեբերգի գասագրքից, աշատ փոփոխութիւններ անելով (?) և բոլորովին ինքնուրույն ձև տալով (?) մեր զու-

ղական և քաղաքային մանկանց կեանքի սլալմանների համաձայն: Տեսնենք թէ որքան ճշմարտութիւն է պարունակում այդ խօսքերի մէջ: Պ. Գնդեբերգի գասագրքում

գետեղած են 752 խնդիրներ, պ. Նրզնկեանցի դասադրքում նոյնպէս 752. Երկու դասադրքերի բոլոր խնդիրները համեմատած իրար հետ մի առ մի սկզբից մինչև վերջը, ոչ բովանդակութեամբ, ոչ թւերով մազաչափ չեն սարբերուում իրարից: Բացէք ռուս հեղինակի դասադրքի որ և է էջը, կարգացէք այդ էջի առաջի պատահող խնդիրը, ցետո՞՞ վերցրէք հաշ հեղինակի դասադրքի նոյն համարով խնդիրը և զուգ կը տեսնէք, որ զոր՞ ունէք տառ առ տառ, կէտ առ կէտ թարգմանութեան հետ: Այդ ամենից ցետո՞՞ մարդ մտում է զարմացած, թէ ինչպէս պ. Գրիգորիս Նրզնկեանցը օրը ցերեկով տուտ է խօսում, հռչակելով իր դասադիրքը փոխադրութիւն և ոչ թէ թարգմանութիւն: Կա առնւազն անբարեխղճութիւն է: Նրբ մարդիկ գործելով որ և է չանցանք, կամենում են իրանց արդարացրել, ընականաբար զիմում են անբարեխիղճ միջոցներ: Նոյնը անում է և պ. Նրզնկեանցը: Որպէս զի խաբուսիկ հիմք ունենալ ստեղծ, որ իր դասագիրքը փոխադրութիւն է և ոչ թէ թարգմանութիւն, նա զիմում է հետեակ աչքակապութեան: Գնդեներդը, բացի 752 խնդիրները, իր դասադրքի վերջում զետեղել է մի շարք թւական օրինակներ. արտագրելով այդ օրինակները ամբողջովին, հաշ հեղինակը աւելացրել է իրանից և այլ օրինակներ, թէ ինչ քանակութեամբ և ինչպիսի՞ արժէք ունեցող, կարգենք այս բոպէին: Ռուս հեղինակը երկրորդ տարւալ դասընթացքի համար տւել է 513

խնդիրներ և 424 թւական վարժութիւններ: Այդ ամենը արտագրելով, հաշ հեղինակը իրանից աւելացրել է 16 թւական վարժութիւններ: Օտար հեղինակի 513 խնդիրները բառ առ բառ թարգմանելով, առանց զէթ մի հատ ինքնուրոյն խնդիր աւելացնելու և միաչն նոր 424 թւական օրինակներին կցորդելով 16 ողորմելի թւական օրինակներ, միթէ վերին ատոիճօսնի անբարեխղճութիւն, նոյն խակ անազնութիւն, չի լինիլ հռչակել իր դասադիրքը փոխադրութիւն և ոչ թէ թարգմանութիւն: Առաջի տարւալ դասընթացքում Գնդեներդը զետեղել է 239 խնդիրներ և 102 թւական վարժութիւններ. պ. Նրզնկեանը 239 խնդիրները գարձեալ բառ առ բառ թարգմանելով, առանց սեպհօխան զէթ մի խնդիր տարւալ, 102 թւական օրինակներին մէջ-մէջ աւելացրել է այլ օրինակներ 110 թւերի սահմաններում: Այդ աւելնորդ օրինակները սչինչ հմտութիւն, սչինչ աշխատութիւն չեն պահանջում. իւրաքանչիւր ուսուցիչ, որքան էլ լինի սպէտ, ամեն մի ըոպէում կարող էր կազմել հարիւրաւոր համանման թւական վարժութիւններ: Անհամեմատ դուար է և առանձին հմտութիւն և աշխատանք է պահանջում խնդիրներ կազմելը. խակ խնդիրներ, ինչպէս ասացինք, պ. Նրզնկեանցը ինքը չէ տալիս և ոչ մի հատ: Բացի սպ ամենը, մինչդեռ ռուս հեղինակի թւական օրինակները դասաւորւած են խիստ սիստեմատիկաբար, պ. Նրզնկեանցի վարժութիւնների մէջ սիստեմ ասած բանը աւելորդ է հաշ-

ւած, որով և բացատրուած է հետեւեալ հանգամանքը: Ինչպէս չափանի է, կան բաղմապատկման և բաժանման աղիւսակներ, բայց կան և գումարման ու հանման աղիւսակներ, որ շատ ուսուցիչներին դեռ չափանի էլ չեն: Սրեւում է գումարման և հանման աղիւսակների մասին պ. Նրզնկեանցն էլ գաղափար չունի, այլ պէս նա Գողգեհնբերդի գումարման և հանման աղիւսակները սովորեցնելու նպատակով աւած թւական վարժութիւնները, իր աւելացրած օրինակներով, խառնաշփոթելով խօսուչէր դարձնիլ:

Գորա հակառակ բաղմապատկման աղիւսակները ընդհանուրին չափանի են, և այդ պատճառով այլ գիտէ նաև պ. Նրզնկեանցը, որը այդ գործողութիւնների աղիւսակներում փոփոխութիւն անել իրան չի թող տել: Մեր թարգմանիչը հետևապէս չի հասկացել որ Գողգեհնբերդի բնագրի 51-երորդ էջում գրուած թւանշանները աղիւսակներ են և ոչ վարժութիւններ:

Նւ այդպէս, պ. Նրկնկեանցը Գողգեհնբերդի 752 խնդիրները բառ աւրառ թարգմանելով և ուսս հեղինակի տւած թւական օրինակներին աւելայնելով թէ քանակութեամբ և թէ արժողութեամբ ոչինչ նշանակութիւն չունեցող վարժութիւններ, ունեցել է մի նպատակ՝ թող փչել մարդկանց աչքին, վարաւորել իր անբարեխղճութիւնը: Այժմ վերին աստիճանի անբարեխղճութիւն է՝ թարգմանել մի գասագիրք և աւելացնելով մի քանի ողորմելի, աւելորդ և խառնըփնդար թւական վարժու-

թիւններ, հաւատացնել մարդկանց, որ իր գասագիրքը կազմելիս միայն «օգտուել է» օտար հեղինակից «շատ փոփոխութիւններ անելով և բոլորովին ինքնուրոյն ձև տալով մեր գիւղական և քաղաքային մանկանց կեանքի պայմանների համաձայն...»:

Պ. Նրզնկեանցը կարող է վերականգնել իր բարեխղճութիւնը, դասագրքի 3-րդ սպագրութեան ճակատին դնելով Գողգեհնբերդի անունը և պարզապէս խոստովանելով իր թարգմանութիւնը, ինչպէս արել է, օրինակ, Սիմէօնեանցը հանդուցեալ Նատուհեակու վերաբերեալ:

Գառնանք գասագրքերի բովանդակութեան: Պ. Նրզնկեանցի թարգմանած գասագրքում առաջին տարւալ ընթացքում անցնելիք խնդիրները և օրինակները վերցրած են 1—10 թւերի սահմաններից: Ասել է հալ հեղինակը կուրօրէն թարգմանելով ուսս հեղինակին, բոլորովին ի նկատի չէ աւել ուսսայ և հացց դպրոցների ծրագիրների տարբերութիւնը:

Բանը այն է որ, լուսաւորութեան նախարարութեան ծրագրի համեմատ, ներքին Ռուսաստանի տարրական դպրոցների Ա. բաժանմունքում պէտք է անցնել թւաբանական չորս գործողութիւնները 1—10 թւերի սահմաններում, որի համեմատ և Գողգեհնբերդը կազմել է իր գասագիրքը:

Մեր ծխական դպրոցների Ա. բաժանման մէջ, համեմատ վեհափառ կաթողիկոսից հաստատուած ծրագրի, պէտք է անցնել թւաբանական չորս գործողութիւնները 1—20 թւերի

սահմաններում:

Հետևաբար պ. Նրզնկեանցի թարգմանած դասագիրքը տալով խնդիրներ և օրինակներ միայն 1—10 թւերի սահմաններում, մեզանչւում է հալ դպրոցների դէմ, կիսով չափ կորցնելով իր արժէքը, որովհետև կարող է ծառայել իր նպատակին միայն մինչև շունար ամիսը: Հալ թարգմանչին մուտ է կազմել և աւելացնել իր դասագրքին 10—20 թւերի սահմաններից վերջրած նոյնքան խնդիրներ և օրինակներ, որքան խնդիրներ (239) և օրինակներ (102) բերած են 1—10 թւերի սահմաններից: Միայն այդ ժամանակ պ. Նրզնկեանցի Ա. տարւոյ դասագիրքը կարող է ընդունուել հալ դպրոցների Ա. բաժանմունքում. միայն այդպէս վարելով հալ հեղինակը Գուղենբերգի դասագիրքը չարմարեցրած կլինի մեր դպրոցական կեանքի հանդամանքներին և ոչ թէ մի քանի ողորմելի, աւելորդ և խառնըմնոր թւական օրինակներ աւելացնելով...

Գուղենբերգի դասագրքի երկրորդ էական պակասութիւնը կայանում է նորանում, որ այնտեղ կան բաւական թւով դժարամարտ և 2-րդ բաժանման աշակերտների հասկացողութեան համար անմատչելի խնդիրներ: Բերենք մի քանի օրինակներ:

1. Աճառականը 25 արչին սև և կապուտ մահուդ 76 մանէթով ծախեց. սև մահուդի արչին համար ստացաւ 6 մանէթ, իսկ կապուտի արչին համար—4: Նա որքան սև և որքան կապուտ մահուդ ծախեց:

Դա իսկապէս աղբբրական և ոչ թէ թւաբանական խնդիր է, և ևս

փորձով զիտեմ, որ ոչ թէ 2-րդ, այլ 5-րդ բաժանման շատ աշակերտներ չեն կարողացել լուծել զորան. գուցէ շատերը չհաւատան, բայց և այնպէս իրողութիւն է, որ Ներսէսեան դպրոցը աւարտած մի սուսուցիչ այդ խնդիրը չկարողացաւ լուծել:

Պակաս դժարամարտ և անմատչելի չեն և հետեւեալ խնդիրները:

2. Նրկու տեսակ շաքարաւազ կար. մէկի գրւանքան 11 կոպէկ արժէր, իսկ միւսինը—16. դոցանից խառնուրդ կազմեցին և գրւանքան 12 կոպէկով ծախեցին: Ամբողջ խառնուրդը ինչքան է քաշում, եթէ որ ստորին տեսակ շաքարաւազից 72 գրւանքալ է վերցրած:

3. Նրեք գրադիր ձեռագրից 84 թերթ արտադրեցին. առաջինը երկրորդից, իսկ երկրորդը երրորդից՝ երկու-երկու անգամ աւելի էին արտադրել: Նոքա աշխատանքի վարձը ինչպէս պէտք է բաժանէին, եթէ իւրաքանչիւր 6 թերթի արտադրութեան համար նոցա մի մանէթ էին սալլա:

4. Արձևտանոցի տէրը հաշուց, որ իր առած նաւթը միայն 16 օր կը բաւականանայ, եթէ ամենաչն օր 18 լապտերները—օրէնը 6 ժամ վառւէին: Այդ նաւթը քանի օր կը բաւականանայ, եթէ որ 12 լապտերները օրական 8 ժամ վառւելու լինեն:

Համանման դժարամարտ և 2-րդ տարւոյ համար չափից դուրս բարդ խնդիրներ շատ կան դասագրքում. դոքա աշակերտների մտաւոր ուժերը, գատողութիւնը կրթելու, զարգացնելու փոխարէն, միայն կ'ըլատեն, կըթացնեն, որովհետև իւրա-

քանչիւր ուժից բարձր աշխատութիւն միայն կործանիչ հետեանքներ է ունենում:

Գաճք պ. Նրդնկեանցի թարգմանած դասադրքի երրորդ էական պակասութեան: Կար ժամանակ, երբ մանկավարժները, օրինակ, Եստուշեակին, Ա և Բ բաժանմունքներում թւաբանական չորս գործողութիւնները անցնում էին միանդամից, անմիջապէս առաջարկելով խնդիրներ չորս գործողութիւններով խառն: Գասաուութեան ազդեղանակը ենթարկելով աշակերտին մի քանի դժւարութիւնների միանգամից, մեղանչում էր մանկավարժութեան աչն կանոնի դէմ, որ ասում է՝ միանգամից մի գծարութիւն—ПО ОДНОЙ ТРУДНОСТИ ЗА РАЗЪ:—Եւ իրաւ, աշակերտը ստիպւած էր միանգամից ընթանել և խնդրի բովանդակութիւնը և նրա թւաբանական իմաստը և չորս գործողութիւնների առանձին-առանձին էութիւնը և ազդ գործողութիւնների գիտակցաբար և արագութեամբ կատարելու զանազան միջոցները, որ հեշտ բաներ չեն: Ուստի թւաբանութեան գասաուութեան ազդեղանակի դէմ վերջին ժամանակները կռիւ շկուեց, որի հետեանքը եղաւ նոր մեթոդի ստեղծումը: Այժմ մանկավարժները նախ սովորեցնում են թւաբանական գործողութիւնները առանձին-առանձին և ապա զիմում չորս գործողութիւններով խառն խնդիրներին: Նոր մեթոդի գլխաւոր ներկայացուցիչներին մէկն էլ պ. Գոլդեյնբերգն է: միայն չարգելի մանկավարժը, կարծես հին մեթոդի ազդեցութեան տակ,

առանձին-առանձին գործողութիւնները վրա քիչ է ուշք դարձրել, որ կհաստատենք երեք կարգ փաստերով: Նախ՝ երկրորդ բաժանմունքում 20—100 թւերի սահմաններում, հանման գործողութեան բոլոր ստորձանները ուսումնասիրելու համար առաջարկում է ընդ ամենը 28 խնդիր, որ հարկաւ քիչ է. նոյնը կարելի է ասել մնացած 3 գործողութիւնների մասին. երկրորդ, իւրաքանչիւր լետազալ գործողութիւնը անցնելիս, նախկին գործողութիւնները միանգամայն մոռացութեան է տալիս, չկրկնելով նոցա, աչդպէս բազմապատկման գործողութիւնը ուսումնասիրելիս, չէ տալիս ոչ մի խնդիր գումարման կամ հանման գործողութիւններով. իսկ երբ զիմում է բաժանման գործողութեան ուսումնասիրութեան, չէ առաջարկում ոչ մի խնդիր գումարման, հանման և կամ բազմապատկման գործողութիւններով: Այդ եղանակով աշակերտները մի կողմից սովորելով նոր գործողութիւն, միւս կողմից անցած գործողութիւնները մոռացութեան կը տան և հետեաբար լաւ նախապատրաստւած չեն լինիլ չորս գործողութիւններով խառն խնդիրներին չաջողութեամբ անցնելու: Նրորդ՝ առանձին առանձին գործողութիւնների զանազան ստորձանները ուսումնասիրելիս, նորագոյն մանկավարժներից շատերը, օր. Նուբենց, խնդիրներին կից տալիս են և թւական վարժութիւններ, ազդ չէ ասում պ. Գոլդեյնբերգը, բաւականաչափով զրքի վերջը դրած օրինակներով: Ի հարկէ հմուտ և բարեխիղճ

ուսուցիչը կարող է օգտուել այդ վար-
ժութիւններին, ընտրելով համապա-
տասխան օրինակները, բայց որով-
հետեւ այդպիսի ուսուցիչներ հազիւ
թէ շատ ունենանք, ուստի ցան-
կալի է, որ խնդիրներին կից լինէին
համապատասխան օրինակներ. այդ
ձևով պ. Գոլդենբերգի մեթոդի գաղա-
նիքը կպարզէր նոյն իսկ անհմուտ
ուսուցիչներին համար:

Մեր արած երեք նկատողութիւն-
ներով կամեցանք հաստատել մի բան.
այն է, որ Գոլդենբերգը իւրաքան-
կան առանձին գործողութիւնների
վրայ քիչ է ուշք գարձրել, մի հան-
դամանք, որ կազմում է պ. Երզն-
կեանցի թարգմանած դասագրքի
3-րդ էական պակասութիւնը:

Չնայելով լիշատակած բոլոր թե-
րութիւններին, Գոլդենբերգի դասա-
գիրքը, գլխաւորապէս երկրորդ տար-
ւաջ դասընթացքը, մեր դպրոցներում
ընդունւած դասագրքերի մէջ ամենա-
լաւը, ամենաօգտակարն է: Առաջին
ահագին առաւելութիւնը, որ գտնում
ենք սուս հեղինակի դասագրքում,
կապանում է նրանում, որ նրա 752
խնդիրները և 500-ից աւելի թւական
վարժութիւնները դասաւորւած են
վերին աստիճանի սիստեմատիկա-
բար. ամեն մի խնդիր, ամեն մի
թւական օրինակ մի կողմից լինե-
լով հետևանք նախընթաց գա-
սի, միւս կողմից կազմում են
անհրաժեշտ հիմք հետեւեալ վարժու-
թիւնների: Հեշտից զէպի զժւարը,
պարզից զէպի բարդը,—ահա ման-
կավարժութեան ամենամեծ սկզ-
բունքը, և այդ սկզբունքին Գոլդեն-
բերգը ծառայել է մեծ լաջողու-

թեամբ, խիստ հետևողականութեամբ,
շատ ու շատ չեա թողնելով մեր
բոլոր բաժանմունքներում գործած-
ւող վարչ ու վերոյ անսխառն կազ-
մած դասագրքերը:

Այդպէս առաջին հարիւրեակի սահ-
մաններում դումարման գործողութիւ-
նը սովորեցնելու նպատակով բերած
թէ պարզ խնդիրները (տես 36-րդ ե-
րես) և թէ օրինակները դասաւորւած
են հետեւեալ եօթ աստիճաններով, ո-
րոնցից իւրաքանչիւրը նախապա-
րաստութիւն է հետեւեալին:

1. Տասնեակների գումարումն—
40+50 կամ 20+60:

2. Տասնեակների և միաւորների
գումարումը—30+7 կամ 50+49:

3. Իւրաքանչիւր գումարելին
բազկացած է տասնեակից և միաւո-
րից, միայն միաւորների գումարը
նոր տասնեակ չէ գոյացնում—42+55
կամ 24+72:

Ահա չարքը.

- 1) 40+50 կամ 60+20 և այլն.
- 2) 30+7 կամ 50+49 « »
- 3) 49+55 կամ 24+72 « »
- 4) 37+3 կամ 85+5 « »
- 5) 67+23 կամ 41+59 « »
- 6) 36+7 կամ 77+9 « »
- 7) 27+45 կամ 36+59 « »

Իւրաքանչիւր ուսուցչին հասկա-
նալի է թէ որքան այդ աստիճան-
ները իրար հետ շլթալած ու սերտ
կապւած են, զնայով աստիճանա-
բար հեշտից զէպի զժւարը: Նոյնա-
նման հետևողականութիւն կգտնենք
և այլ գործողութիւնները ուսումնա-
սիրելիս. նոյնպէս և բարդ խնդիր-
ների դասաւորութեան մէջ: Վեր-
ջինիս համար էլ մի ապացուց:

573. Երկու հիւան աթոռներ նորոգելու համար 68 մանէթ տուցան. մէկը 19 աթոռ նորոգեց, իսկ միւրը — 15: Իւրաքանչիւր հիւան որքան փող տուցաւ:

474. Երեք եղբայր չորս դաստալ թուղթ գնեցին. մէկը 15 կոպէկ տւեց, միւրը — 14, իսկ երրորդը — 19: Իւրաքանչիւր եղբայր որքան թուղթ սէտք է ստանայ:

Միթէ հարկաւոր է ասել որ երկրորդ խնդիրը, լինելով աւելի բարդ, աճնուամենայնիւ ինքն ըստ ինքեան հեշտութեամբ կլուծուի, եթէ առաջին խնդիրը աշակերտները գիտակցաբար հասկացել և լուծել են, կրկնում ենք, թէ պարզ ու բարդ խնդիրները և թէ օրինակների վերին աստիճանի սխառմատիկաբար դասաւորութեան կողմից Գուդենբերգի դասագիրքը մեր մէջ իր նմանը չունի:

Մենք պարզեցինք Գուդենբերգի դասագրքի առաջին և ամենաէական արժանաւորութիւնը: Երկրորդ՝ Գուդենբերգի խնդիրները, վերցրած լինելով կեանքի բազմազան հանգումանքներից, թէ իրանց բովանդակութեամբ և թէ մանաւանդ թւաբանական խմատով, բարդութեամբ, իրեա բազմակողմանի են: Մի կողմ թողնելով վերը փշած մի շարք զժարամարս և անմատչելի խնդիրները, մնացածներում մենք կուեննանք աշակերտների մտքին, դասողութեան լի ու լի սնունդ տալ նպատակաւորմար նիւթ: Այդ խնդիրները ոչ աչնքան պարզ են, որ քնացնեն, թուլացնեն երկխալի մտաւոր ուժերը, ինչպէս օր. Հենչելի խնդիրները, և ոչ էլ

աչնքան զժար, որ շլատեն, ուժասպառ դարձնեն նոցա. հետևաբար հիանալի զէնք են Ներկայացնում մանուկների մտածելու, դատելու ընդունակութիւնը զարգացնելու համար: Մեր խօսքերը զգալի դարձնելու համար բերենք երկու-երկու օրինակներ Գուդենբերգից և Հենչելից:

Գուդենբերգից.

Այս հեղինակի խնդիրները վերջանում են դասագրքի 73 երեսում. աճա 71 երեսից արտագրած 3 խնդիրներ:

541. Մի հիւան 8 օրում 87 չըրջանակ շինեց. առաջին 3 օրում — օրէնը 13 չըջանակ էր շինում, իսկ հետեւալ 4 օրում՝ օրական 9 չըջանակ: Ութերորդ օրւայ շինած չըջանակները քանիսն են:

526. Գիւղացին 51 արշին երկարութիւն ունեցող հաստ պարանը 4 կտոր արեց, աչնպէս որ առաջի կտորը՝ 14 արշին գուրս եկաւ, երկրորդը — 13, իսկ մնացած երկու կտորը հաւասար: Վերջին երկու կտորներն ինչ երկարութիւն ունեցան:

619. Ջրամբարի մէջ երկու խողովակ է բերած. մի խողովակից մի բոպէում ներս է թափուում 10 գոլջուր, իսկ միւտից գուրս է գնում մի բոպէում — 6 գոլջուր: Ջրամբարումը ինչքան ջուր կը լինի, եթէ որ 2 խողովակն էլ 7 բոպէ բաց թողնեն:

Հենչելից.

1) 65 արշին մասուղից դերձակը 5 չուխայ և 2 շարւար է կարում. մէկ գուղին որքան է կարում:

2) 75 օրւայ ջուրը 5 արտի մէջ ջրում է հաւասարապէս. իւրաքան-

չիւրին որքան է հասնում:

3) 80 ծառ 5 կարգով են տնկած, հաւասար հաւասար շափով. 3 կարգում որքան ծառ են:

Խնչ ասել կուզէ, որ Գողգեհներգի խնդիրները անհամեմատ շատ նիւթ են տալիս երեխաների մտածողութեան, գատողութեան համար, քան Հենչելի խնդիրները:

Գոքա Գողգեհներգի միջին բարդութեան խնդիրներն են, կան և ակելի դժւարները, թէ և մատչելի:

Գողգեհներգի դասագրքի պարզած երկու արժանատրութիւնները մեր աչքում աչնքան ահագին նշանակութիւն ունին, որ առատութեամբ լրացնելով դասագրքի թերութիւնները միանգամայն ակելորդ են դարձնում կանգ առնել նրա ակառակութիւնների վրայ, ուստի թող եւ տալիս ինձ վերջին նկատողութիւն լեզւի վերաբերեալ: Գողգեհներգը, ինչպէս չպտոնում է իր չառաջաբանում, որ և դառել է պ. Նրզնկեանցի գողանովի չառաջաբանը, դասագրքի լեզւին վերաբերել է մեծ ինամքով: Իւրաքանչիւր առարկայ պահանջում է համապատասխան լեզու. թւարանութեան, մաթեմատիկայի լեզուն պէտք է լինի պարզ, որոշ, կարճ, լակոնական. այդ ամենը տեղի ունին ուր հեղի-

նակի դասագրքում, հետեւաբար և պ. Նրզնկեանցի թարգմանութեան մէջ. միայն հաջ հեղինակը հատ-հատ թող է տեւ ըմահած-անճիշտ թարգմանութիւններ, օրինակ,

СТОЛЯРЪ — հլան և ատաղձագ ործ:

Бичевка — և պարան և ճոպան:

Лугъ — և խոտ հարք և մարդաղեւին կալն:

Ամբողջով մեր ասածները, գալիս ենք հետեւել կրակացութիւններին: Պ. Նրզնկեանցի երկրորդ տարւայ դասագրքը մեր դպրոցներում ընդունած թւարանական դասագրքերից ամենալուր, ամենաօգտակարն է, ուստի արժանի է տարածման, մանաւանդ եթէ մասնացոյց արած թերութիւնները ուղղւելին: Պ. Նրզնկեանցի Ա. տարւայ դասագրքը մեր դպրոցների համար աննպատակաբար է, քանի որ տալիս է նիւթ միայն մինչև չունար ամիսը, և որովհետև մինչև այդ ժամանակ աշակերտները, գրել-կարդալ նոր սովորելով, չեն կարող օգտել դասագրքից, հետեւաբար պ. Նրզնկեանցի թարգմանած Ա. տարւայ դասագրքը չպէտք է տալ աշակերտների ձեւը. բայց ինքը ուսուցիչը կարող է օգտել մինչև չունարը նիւթ ունենալու համար:

Պ. ՄՆԼՔ.

Delbrück, Anton. D-r—Ueber Hamlets Wahnsinn. Sammlung gemeinverständlicher wissenschaftlicher Vorträge, herausgegeben von Rud. Virchow und Willh. Wattenbach, Hamburg, 1893, Heft 172.

„Shakespeare und kein Ende“—
 Եւքսպիրը վերջ չունի—ասել է Կեթին: Հանձարեղ ողբերգուն ստեղծել է տիպեր, որոնք նույնքան կենդանի են քան սաղարթի աշխարհում, որքան կենդանի անձերը իրականութեան մէջ: Վաղուց է արդէն որ աշխարհքը եկել է աչն եզրակացութեան, թէ Եւքսպիրին պէտք է ոչ թէ քննադատել, այլ դեռ միաջն ուսումնասիրել: Անհասկանալին Եւքսպիրի մէջ ոչ թէ սխալմունքով պէտք է մեկնել, այլ մեր անհասկացողութիւնով: Մենք պէտք է աշխատենք բացատրել Եւքսպիրին, և նորա մութ տեղերը մենք ոտիպած ենք բացատրել նրանով, որ մենք դեռ բաւականաչափ չենք խորասուզել Եւքսպիրի ուսումնասիրութեան մէջ. նորա մէջ զաղտնիքներ կան, որ դեռ պէտք է գտնել, ինչպէս բնութեան գիտութիւնը աշխատում է բնական երևութները հասկանալ բնութեան օրէնքները գտնելով և ոչ թէ այդ երևույթները սխալ համարելով: Ի հարկ է, չափազանցացրած է համեմատութիւնը, բայց Եւքսպիրը չափազանց մեծ ստեղծագործող է:

Եւ չարունակ աճում մեծանում է Եւքսպիրեան գրականութիւնը. Կեթին ասած՝ Եւքսպիրը անվերջ է: Այս անգամ անա մեր ձեռքում մի նոր ուսումնասիրութիւն. „Ueber

Hamlets Wahnsinn“—Համլետի խելագարութեան մասին,—որի հեղինակն է հոգեկան հիւանդութիւնների բժշկ Յիւլիսի համալսարանի պրիւատ դոցէնտ և Բուրգօլցի բուժարանի բժշկ Գ-ը Անտոն Կելբրիւկ:

Կելբրիւկը աշխատում է լուսաբանել մի քանի ցալմ լաւ չորոչում գծերը Համլետի բնաւորութեան մէջ:

Առաջին հարցը, որին մերձենում է Կելբրիւկը, այս է, թէ արդեօք Համլետը իրօք ցնորած է թէ միայն աչգպէս է ուզում ցոյց տալ (այդպէս կեղծելը, ձեացնելը կոչում է բժշկանութեան մէջ սիմուլացիա): Յաշտնի է որ Համլետը ինքը ասում է թէ նա իբր ձեացնում է, բայց չաշտնի է նաև որ ողբերգութեան գրեթէ բոլոր անձերը նորան ցնորածի տեղ են բնորոշում:

Կելբրիւկը գտնում է, որ Համլետը եթէ ցնորած չէ, գոնէ գտնում է իւր սաստիկ տաղած կրքերի կատարեալ իշխանութեան ներքոյ: Օրինակ, Ներկապցման ժամանակ, երբ նրան չաջողում է թագաւորի զաղտնիքը (Համլետի հօր եղբոր) մերկացնել: Համլետը անկեղծ է, երբ Կիւլդերտտէրնի խօսքերին թէ՛ բարեհաճեցք ինձ մի առողջ պատասխան տալ, նա պատասխանում է՝ «պարտն, ես այդ չեմ կարող!» Համլետը այդ ժա-

մանակ գտնուում է ալն գրութեան մէջ, ինչ հոգեբուժական գիտութեան մէջ կոչուում է մանիակալին գրգռմունք (maniakalische Erregung): Մանուաւնդ այդ ճիշդ է ալն պատճառով, որ տեսարանի սկզբում, երբ Համլէտը մենակ է Հորացիոի հետ, սորա մօտ ձեանալը միտք չունի, քանի որ Հորացիօն գիտէ Համլէտի գաղտնիքը:

Աւելի վատ է Համլէտի գրութիւնը թաղուհու ննջարանում, ուր նա Պոլոնիոսին սպանում է:

Գելբրիւիլը աւելի քիչ նշանակութիւն է տալիս ուրակահանի (հօրսուերի) երեսլոն, չնայած որ նորագոյն գիտութիւնը բացատրում է ոգիների տեսնելու երեսլոթը իբր զգալարանքների խանդարմունք, իսկ այս վերջինը՝ իբր հիւանդութեան նշան: Գելբրիւիլը, սակայն, այդ բանը ընդունում է որպէս բանաստեղծական ֆիկցիա Եեքսպիրի կողմից, քանի որ երեսլոթը տեսնում են (առաջին տեսարանում) ոչ միայն Համլէտը, այլ և Հորացիօն և Մարցելլուսը: Ճիշդ է որ 3-րդ գործողութեան մէջ երեսլոթը երևում է միայն Համլէտին, իսկ սորա մայրը այդ չի տեսնում և այդ պատճառով Համլէտը իւր մօրը երևում է իբր ցնորւած:

Մի երրորդ անգամ մեծ գրգռմունքի մէջ է Համլէտը, երբ սա նետում է իրան Օֆելիալի դերեղմանը և կռւում է լաէրաի հետ: Համլէտը ինքը չետօղ խօսում է այդ դէպքի մասին և ասում, որ իւր միտքը խանդարւած է (Trübsinn) և ինքը խելագար:

Եեքսպիրի գրամալի մէջ շատ ու-

րիչ տեղեր կան, ուր Համլէտը չի ձևացնում, այլ իրօք դէպի խելագարութիւնը տանող գրգռմունքի մէջ է, բայց նորան չըջապատողները խելագար են չարմնում նորան նաև ամեն տեղ, ուր Համլէտը իւր պիսիմիտական աշխարհայեցողութիւնն է ցոյց տալիս: Չէ որ Համլէտի իրախօսքերն են՝ «Ս', Ատուած իմ, Ատուած, որքան զլեւի և դատարկ է թւում ինձ այս աշխարհի ամբողջ կեանքը: Քն, Քու, սա մի անապատ այգի է, ուր որովը նորան ամբողջապէս կլանում է:»

Գելբրիւիլը բնական է համարում, որ Համլէտի չըջապատողները նորան խելագար են չարմնում, որովհետև նոքա չգիտեն Համլէտի լուրջւածութեան պատճառները: Հորացիօն և թագաւորը միայն գիտեն այդ բաց պոցա խօսքերից Համլէտի մասին պարզ չի երևում թէ նոքա խելագար են համարում նորան թէ ոչ: Հորացիօն ընդհանուր առմամբ Համլէտին հիւանդ չէ ընդունում, թէև մի անգամ հակառակն է ասում: Թագաւորը աւելի է շեշտում նորա խելագարութեան մասին և գտնում է որ «խելագարութիւնը մեծերի մէջ չպէտք է առանց հսկողութեան մնայ»: Բաց պոքա ևս խնդիրը չեն վճռում:

Հաստատ է որ Համլէտը մի քանի դէպքերում գիտմամբ իրան խելագար է ձևացնում, օրինակի համար, առաջին գործողութեան մէջ ուրակահանի երեսլոց չետօղ, սպա նա հաստատապէս ձխացնում է իրան Պոլոնիոսի, իսկ տեղ-տեղ նաև որիչների առաջ: Այժմ ինչիբը

աչն է թէ արգիւօք ձեացնող մարդը (սխմուլանտ) կարող է առողջ մարդ լինել: Յալտնի է որ մի քանի հագեբոյժներ (պսիխիատր) աչնքսն հետու են գնում, որ սնդում են թէ առողջ մարդը երբէք չի կարող իրան խելագար ձեացնել: Բայց դ. ր Անտոն Գելբրիւկը պնդում է, որ առողջ մարդը կարող է խելագար ձեանալ: Բայց որ այդ անելու համար մարդ պէտք է շատ ծանրակշիւ շարժառիթներ ունենալ: Ուրեմն այդ դէպքում պէտք է որոնել այդ ծանր շարժառիթը: Գա է՝ իւր հօր սպանման համար վրէժխնդիր լինելը իւր հօր եղբորից (Թագաւորից): Եւ իրօք, երբ բեմի վրայ թատրոն ներկայացնելով լանցաւորը (Թագաւորը) դարնուում է, և երբ Համլէտը սպանում է Պոլոնիոսին, խելագար ձեանալու շարժառիթը նւագում է և նա լաւանում է մօրը թէ իբր խելագար է միաչն խորամանկութիւնից: Գորանից ցետոյ շարունակել խելագար ձեանալ՝ այլ ևս միտք չունի, և մինչև իսկ վտանգաւոր է Համլէտի համար, քանի որ նորա խելագարութեան մասին խօսում է ամբողջ պալատը և թագաւորը վճռում է հեռացրնել նորան: Համլէտը ուրեմն լուկանէր եթէ այլ ևս չձեացնէր, եթէ միաչն նա բաւականաչափ առողջ է և ուրեմն եթէ կարող է չձեացնել: Բայց բանն էլ ձէնց նրանումն է, որ նա աչգ չի կարող անել ինչպէս ինքը այլ ասում է, և նա այլ չի կարողանում, որովհետև նա իւր կրքերի կատարեալ իշխանութեան ներքոյ է, նա չի կարող իրան իշխել:

Ինչպէս?

Իւր հօր մահւան բօթը նորան մեծ ցաւ պատճառուց, բայց նորա սիրտը խոցում է մի երկրորդ հարւածով՝ իւր մօր շուտափութ պսակեւրովը իւր հօր-եղբոր հետ: Ներկայանում է հօր ուրւականը, որից իմանում է թէ նա ինչպէս է եղել սպանւած: Համլէտի ուղեղը ընկնում է խառնաչփութեան մէջ: Մաքրը շփութւում են և նա զգում է, որ կորցրել է իրա վերայ իշխելու ոյժը: Նա զգում է, որ չի կարողանալու դադարելը պահել, և որովհետև տեսնում է, որ այլ դրութեան մէջ ուրիշներին կիսախելագար է երեւալու, այդ պատճառով նա թող է տալիս իրան որ բոլորովին խելագար երեւայ, աչն Կոսով թէ ապագաչում աչգ պէտք ա կան կը լինի, ինչպէս ինքն է ասում: Այլպիսով նա այլ ևս չի ձգտում իրա վրայ իշխել և թող է տալիս անձնատուր լինել կրքերի հոսանքին: Եւ աչա ձէնց այդ բանումն է կաչանում իւր ձեանալը, սխմուլացիան: Գորանով նա իրօք կարողանում է երբեմն ձածկել գազանիքը: Շատ բնորոշ է այդ կազմից 4-րդ գործարութեան 3-րդ տեսիլը, ուր Ռոզենկրանց և Գելբրենտերն Համլէտին հարց ու փորձի են կենթարկում Պոլոնիոսի սպանման մասին. «Գուք պէտք է ասէք՝ ուր է զիակը», ասում են Համլէտին. իսկ սա, իբր թէ չի հասկանում, որ խօսքը Պոլոնիոսի մասին է. «Գիակը թագաւորի մօտ է, բայց թագաւորը զիակի մօտ չէ», ասում է նա մտածելով իւր հօր մասին. «Թագաւորը մի բան է», աւելացնում է

Համլէտը:

— «Մի բան, ողորմած տէր?»

— «Մի բան, որ ոչինչ է»:

Համլէտը շատ լաւ է զգում, որ այդ խօսքերից Ողբնկրանցը և Գիւլդենտէրնը «չինչ չհասկացան»: Ահա այդ չափով նա ձեացնում է: Բայց այդ նրան չարմար է թւում՝ իւր ուղեղով անցկացող մտքերին՝ արտա-լազուտութիւն տալու համար: Նա շատ անգամ աջակէտ է խօսում, որ նորան չհասկանան և խօսում է այնպիսի բա-ների մասին, որ ուրիշները չեն կա-րող հասկանալ:

Տեղ-տեղ նա չափազանցնում է. օրինակ, երբ նա անկարգ հագուստով ներկայանում է Օֆելիային: Աստիած չկալ որ նա այդ դիտմամբ է անում: Կամ երբ նա սուրմ է ծեր և վիմար Պալմիուսին որոգայթի մէջ դցել, կամ Օտտիկին ծիծաղելի շարձներ: Ամենեին չի ձեացնում միայն սկզբում վիշաճ կրքոտ տեսարաններում:

Բայց դ-ր Գելլերիւկը գտնում է որ Համլէտը դիմում է ճակ դիսսի-մուլացիային: Հոգեբուժութեան մէջ աղպէս է կոչում այն դէպքը, երբ մի սնն իւր հիւանդութիւնը ծածկում է. նա ձեացնում է թէ սուղջ է: Այսպէս, օրինակ, շատ լաւ է ձեացնում իրան երբ բեմի վրայ ներկայացումն են աալիս: Չնայած որ Համլէտը վերջին ծայր լարած է և գրգռւած, բայց նա ամենաճարպիկ պալատականի ձեով խօսում է Օֆելիայի, թագաւորի ու թագուհու հետ, մինչև որ, թագաւորի գաղանիքը մերկացնելուց լետու, նորա կրքերը ամենարուսն կերպով պայթում են:

Մեզ հետ միասին շատերը կը

հարցնեն անշուշտ, թէ կարող է ար-դեօք հիւանդ մարդը իրան ձեացնել: Հոգեբուժ դ-ր Գելլերիւկը պատաս-խանում է այդ հարցին, թէ «գա ամենեին անկարելի չէ և մինչև ան-գամ հազւագիւտ էլ չէ»: Երողութիւն է, որ շատ հիւանդներ հակումն ունին հիւանդական մի մի նշանները չափա-զանցնել, կամ իսկականների վրայ ուրիշներն: Էլ տակայնն՝ ձեացնե-լով: Եւ շատ անգամ լետու, ոչ մի-այն դիմացի մարդիկ, այլ նոյն իսկ իրանք հիւանդները չեն կարողանում ջտկել, եթէ երբ նոքա ձեացրեցին և երբ ոչ, այն աստիճանի այդ բա-ները խառն կերպով են կատար-ւում:

Այս ամենով հանդերձ, Գելլերիւկը, սակայն, պնդում է, որ ձեանալը (սիմուլացիա) միայն ստորագաս և կողմնակի գեր է խաղում Համլէտի մէջ, և որ զլխաւոր խնդիրը դորա-նով չի լուծւում: Իսկ ինչդիրը սա է թէ Համլէտը խելաղար է թէ ոչ:

Բժշկական գիտութեան ներկաւ գաղափարների հաճեմատ, ասում է Գելլերիւկ, խելագարութիւն, ցնոր-ւածութիւն խօսքերը չեն սաղում Համլէտի դրութեանը: «Համլէտը չու-նի որ և է բացալաւ հոգեկան հի-ւանդութիւն. բայց նա գտնւում է այն անցողական դրութիւնների մէջ, որոնք շատ լաճախ գոլանում են ողեկան առողջութեան և հիւանդու-թեան միջանցքում: Աղեկան հիւան-դութիւնը վարգանում է ողեկան ա-ռողջ կեանքի միջով: Հիւանդու-թիւնը դարգանում է հաս հատ մարդ-կանց մէջ այնպէս, ինչպէս առողջ մարդու հասունութիւնն է վարգա-

Նուան Ոգեկան զարգացումը կարող է մերթ բողբոսվին ուղիղ, մերթ շատ ծուռ ճանապարհով ընթանալ, երբեմն էլ մի քանի կողմերով ուղիղ, մի քանի ուրիշ կողմերով՝ ծուռ ընթանալ: «Այդ զէպքում մարդուս գործողութիւնները լինում են խառն անսովոր գործողութիւնների հետ»։ Բայց երբ այդ զէպքում պէտք է սգեկան հիւանդ ընդունել մարդուն? «Այդ կախած է անսովորի (աբնորմ) քանակութիւնը խմանարև համար չկալ մի մշտական չափս, հետևապէս մի որոշ դրութեան մէջ եղած մարդու մասին կարելի է աարբեր կարծիքներ ունենար Այդ պատճառով և Գելբրիւկը, «իբր զլուշ զխալմատ» Համլէտի խելագարութեան մասին կտրական պատասխան չի տալիս, բայց պնդում է որ «սահմանի վրայ չամենայն զէպս նա (Համլէտը) կանգնած է»։

Անսովորը, աբնորմը՝ Համլէտի արտակարգ գրգռականութիւնն է: Օրինակ, երբ Լաէրտը իւր քրոջ մահւան մասին մի փոքր չափից զուրս գանդատուում է, միթէ դա հիւմք է որ Օֆելիալին սիրող Համլէտը այնքան կատաղի, ինչպէս նա անում է!

Այդ և գորա նման արտակարգ գրգռականութիւնը բնորոշ է Համ-

լէտի հրպերէսթեզիայի համար:

Համլէտի բնաւորութեան մի ուրիշ արտակարգ դիժը, Նորա հուետեսական (պետիմիտական) տրամադրութիւնն է: Այլ բան է պետիմիտական աշխարհայեցողութիւն, այլ բան է պետիմիտական տրամադրութիւն: Վերջինս չի մնում սովորականի սահմանների մէջ:

Գելբրիւկը ապա անցնում է խօսելու Համլէտի անվճռականութեան, վճիռ կապացնելու անընդունակութեան մասին, որ, ինչպէս չպտնի է, շատերը արդէն նկատել են: «Այդ անընդունակութիւնը», ճիշդ բողբին ճիշդ վճիռ կապացնել, չնայած բարձր զիտաւորութիւններին, կամ ըստ Ֆիշերի՝ գործելու այդ esprit d'escalier, ահա ինչն է այնքան բնորոշ այս դժբաղդ բնաւորութիւնների համար, որոնք պաթոլոգիական սահմանի վրայ են կամ մի ոտով արդէն նորա մէջն են»։

Վերջացնում ենք չօգւածը սուելացնելով, որ դ-ր Գելբրիւկի փոքրիկ աշխատութիւնը ունի քսան և երեք ծանօթութիւններ նիւթին վերաբերեալ գրականութեան մասին:

Ա. Ա.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻՒՆԻ ԳԱՍՏԵԱՆ ԱՌԹԻՒ

Այն յաղթանակը, որ տարաւ Հայը անցեալ 1892 թւականի մայիսին, միաձայն ընտրւելով հայ ազգի մեծ սիրելիին իբր Կաթողիկոս Ամենայն Հայոց, մի բարոյական յաղթանակ էր, որ ցոյց աւեց թէ որքան դեռ ևս ամուր բարոյական կապեր կապում են իրար հետ ցիր ցան եղած բոլոր հայերին: Ճիշդ է, դորա համար պէտք էր յաղթել շատ ու շատ ներքին խլրտումներ, բայց և այնպէս մի ազգի համար փոքր բան չպէտք է համարել, երբ նա դերագոյն բուպէներին կարողանում է ճանաչել իսկականը, և ամենաբարձր պատւին հասցնել նոցա, որոնք վաստակել են այդ պատիւը իրանց ազնիւ գործունէութիւնով: Ես կարող եմ ինձ երեւակայել ժամանակներ, երբ մի ազգի քաղաքական ու հասարակական դատողութիւնը այնքան խանգարւած կը լինի, որ այդ ազգը մեծ դժարութիւններ կը զգայ ճանաչել իսկական արժանիքը, և պակասութիւններ կը համարի մարդկանց այն յատկութիւնները, որոնք փառքի ու պատւի տիտղոսներ են ստեղծում նոյն ազգի աւելի առողջ կեանքի շրջաններում:

Խրիմեան Հայրիկին միաձայն կաթողիկոս ընտրելը չպէտք է համարուի իբր ինքն ըստ ինքեան հասկանալի: Ով կատարւած գործը ինքն ըստ ինքեան հասկանալի է համարում, նա հեշտութեամբ կարող է ուրանալ այն բոլորը, ինչ հասարակական ասպարիզում կարողացել է ազգի յառաջաւոր մասը յառաջացնել այս վերջին մի քանի տասնեակ տարիներում: Խրիմեանը ընդհանուրից ճանաչւած է իբր գաղափարական մարդ: Եւ գաղափարական մարդկանց համար բուն ոգևորութիւն յառաջացնելու համար հարկաւոր են գաղա-

փարի համար կրթւած սերունդներ: Խրիմեանին կաթողիկոս ընտրելը նշանաւոր վկայութիւն է ժամանակակից սերունդների գէթ մի խոշոր մասի բարոյական ձգտումների համար: Ընտրելով Խրիմեանին կաթողիկոս, մենք ոչ միայն ընտրւածին յարգեցինք, այլ դեռ աւելի մենք ինքներս մեզ ճանաչել տւեցինք:

Երկար, չափազանց երկար սպասելով, ազգի համբերութիւնը արդէն սկսել էր հասնել կաթողիկոսի ուշանալու առիթով. վերջին ամիսներս սկսելէր նկատուել այդ բացց արդէն շուտով դորանից յետոյ սկսեցին ուրախալի լուրեր գալ, թէ խնդիրը արդէն վճռւած է: Լուրի հաստատ լինելը ժողովուրդը իմացաւ իւր տաճարների բեմերից: Յունիս 13-ին Մկրտիչ I կաթողիկոսի անունը առաջին անգամ յիշատակւեց ս. պատարագում սահմանւած օրհնութիւնների մէջ: Ժողովուրդը, առանց խտրութեան սեռի, հասակի ու դիրքի, ամբողջ ժողովուրդը խորը զգացւեց այդ հանդիսաւոր բույեին: Այդ օրը դառաւ մի ժողովրդական մեծ տօն, ուր մարդ մարդու հանդիպում էր աչքալուսով և շնորհաւորութիւններով, նման Նոր-Տարւալ, Քրիստոսի ծննդեան և մկրտութեան և Քրիստոսի շարութեան տօներին: Աւելացրէք նոր զգացւած բույեի տպաւորութեան հրապոյրը և ոյժը,—և դուք կը հասկանաք որ ժողովուրդը, իւր սիրած մեծ մարդու հետ ողով հաղորդելով, ունեցաւ իւր կեանքում մի անմոռանալի, բազմաւոր պատմական օր:

Բացց այն յաղթանակը, որ տարւեց անցեալ տարի, մեզ վրայ պարտականութիւններ է պնտւմ, և եթէ մենք ընդունակ չլինենք զգալ այդ պարտաւորութիւնները և գոհանանք միայն կատարւած իրողութիւնով,—գորանով մենք ցոյց կը տանք մեր անարժան լինելը: Այդ պարտականութիւնները երկու տեսակի են. պահանջել և զոհաբերութիւն անել: Մեր պահանջները պէտք է լինեն, նախ, որ ազգի հոգևոր դասակարգը մաքրւի իւր վատ անդամներից, ժողովուրդը՝ իւր անարժան հովիներից, եկեղեցին՝ իւր անարժան սպասաւորներից: Եկեղեցու, ժողովրդի և դասակարգի շահերը պէտք է ի մի ձուլել, աւելի լաւ ասած՝ հոգևոր դասակարգի բարոյական ու մտաւոր մակերևոյթը պէտք է բարձրացնել, ինչպէս այլ պահան-

ջոււմ են եկեղեցու և ժողովրդի շահերը: Հողերական դասակարգի ընկաճութիւնը ամենքին յայտնի է, և զանգատները այդ մասին նոր չեն: Այլ, եթէ ոչ Խրիմեանը իբր կաթողիկոս, կարող է աւելի հեղինակօրէն սկսել բարոյական մաքրութեան այդ դժւարին գործը: Ես ասում եմ սկսել. բայց սկսել այնպէս հաստատ կերպով, որ անհնարին զարձնուի վերապարձը դէպի հինը, փտածն ու նեխւածը: Պէտք է վերակենդանութիւն ներշնչել ս. Եջմիածնին, կիրթ, զարգացած ու ժողովրդասէր ղեկավարներ պատրաստելով առաջնորդներին ու յաջորդներին պաշտօնների համար: Պէտք է ասպարէզից հեռացնել անընդունակ և անարժան վարդապետներին ու քահանաներին, փոխարինելով նոցա ժամանակի պահանջներին աւելի համապատասխան վարդապետներով ու քահանաներով, անկաշառ քարոզիչների բերանով յորդորելով ժողովրդին—առաջարկել քահանայացուներ միմիայն բարի, խելօք, կրթւած և ժողովրդասէր մարդկանց:

Անցեալի մեղքերը և սխալները պէտք է քաւել ներկայի զոհաբերութիւններով: Պէտք է ազգի ձեռնառութեամբ զանձարան հիմնել յատկապէս իրանց պաշտօններից հեռացողների համար, որոնք այդպիսով տեղ կըտան աւելի արժանաւոր նորերին, որոնք կըձեռնադրեն նոր պահանջներին բաւարարութիւն առող անհատների միջից:

Այլ, եթէ ոչ Խրիմեանը, իբր կաթողիկոս, կարող է աւելի մեծ հեղինակութեամբ ձեռնարկել եկեղեցական ծիսակատարութիւնների օրէնսգրքի, այն է Մաշտոցի վերաքննութեանը, ջոկելով նորա մէջ պարտաւորիչ և անհրաժեշտ մասերը և այդպիսով թեթեւացնելով եկեղեցական ծիսակատարութիւնները դարերի աղաւաղումներից և աւելորդաբանութիւններից: Այդ վերաքննութիւնը անհրաժեշտ է, քանի որ այդ զուտ կրօնական գործի հետ մեծ կսպ ունի քահանաների հովւական պաշտօնավարութիւնը, որը մեծապէս տուժում է և դժւարանում ծիսակատարութիւնների բարդութեան պատճառով:

Եկեղեցական դասաստանական մասը մեզանում ամենաողորմելի վիճակի մէջ է: Ներկայ դրութիւնը ոչ թէ նահապետական է—այդ փառք կը լինէր—այլ ուղղակի աղաւաղւած ու փչացած: Կաշառակերութիւնը համատարած է, իրաւաբանօրէն և բարեխղճօրէն դատելու հմտութիւնը—արհամարւած, զիրքից, իշխանութիւնից չար

օգուելը դառել է կանոն: Եւ մինչքեռ մարմնաւոր իշխանութեան սահմաններում գատաստանական կարգերի մէջ մոցրած են մեծամեծ բարենորոգումներ, հիմնւած արդարադատութեան բարձր շահերի վերայ, — մեր եկեղեցական գատաստանական կարգերի մէջ իշխում է կատարեալ ասիականութեան ոգին: Մասնաւորապէս ամուսնական բաժանման վէճերը չաւիտենականանում են, որովհետեւ արդարագատութիւն գտնել գրեթէ անհնարին է դարձած մեզանում իշխող կարգու կանոնների պատճառով:

Այս և նման բարենորոգումները սակայն ցնորական կը լինեն, մինչև որ լուրջ հոգս չի քաշուի հարկաւոր բարձրութեան վրայ կանգնած հոգեւորական դասակարգ պատրաստելու համար, որը ոչ հմուտ միայն պիտի լինի զուտ կրօնական գործին, այլ և ոյժեղ կը լինի ընդհանուր զարգացման տեսակէտից:

ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մեծապատիւ խմբագիր,

«Մուրճ»-ի այս տարւոյ առաջին համարի մի քանի տողերը Նզմիրի որոշ շրջանի մէջ մեծ իրարանցում ձգեցին: Նախ դարձեալ դրօշակ բարձրացնելու ցանկալի առիթն ունեցաւ ինձ դէմ «Արեւելեան Մամուլ»-ը և ապա Պոլսի նիզակակիցները: Ահա արդէն չորրորդ տարին բոլորում է, որ ևս արհամարհելով իմ անձի և գործունէութեան վերաբերեալ գրած բոլոր զրպարտութիւնները, թշնամանքները, ստորութիւնները, լուռ ու մունջ աշխատում էի՝ ոչ թերիս համեմատ պարտականութիւնս կատարել և հնարաւոր արդիւնքն առաջացնել: Այս ինչ միտք կար հիմա չանկարձ հրատարակել ելնել և աջնալիսի մարդոց («քլուպի» անդամները) սիրաբ կոտորել, որոնց մեծամասնութիւնը անձանթ ու կարծեմ նաև բաւականին անտարբեր են եղել դէպի իմ անձը, իսկ մի քանիսն էլ ինձ ծանօթ կամ բարեկամ: Միթէ անդամները մէջ գտնուող իմ մի քանի հակառակորդներին (բաց այս բառը շատ աննշան է...) իմ ստորագրութեամբ չէի կարող իւր ժամանակն պատասխանել, եթէ ինձ համար աչդպիսի անշահ վրլուկները արհեստ չինած լինէի և համոզւած չլինէի, որ զրանց անվերջ հարահրոցները լոկ ուղմագլխական «տաքտիքալի» բան է, ինձ, իրանց աչքի փչին, չուզելով չփոթեցնելու, չչլլեցնելու և բուն գործիցս կամ հեռացնելու և կամ գէթ պարտականութիւնս կանոնաւորապէս կատարելում խանդարելու:

Այլ խմբի արարածները նկարագրիւր դեռ թող մնալ այլ առթիւ: Իսկ իմ «տաքտիքա»-ն էր երեք տարի պահպանողական դիրք բռնել, մինչև որ նրանց վառօղը հատնէր (միթէ հասնում կալ աչդպիսիները մեղանին, իրաւամբ կարող են հարցնել զրանց ճանաչողները) և ապա ծանուցադրելով ու լրագիրները մէջ չալտարարել, թէ քննական սեղանի վրայ են գրած պ. Մամուրեանի և մեր աշակերտների գրաւոր աշխատութիւնները խոկական ստորագրութիւններով: Աս ալ խստօրում կատարեցի¹⁾: Այս,

¹⁾ Վկայ են պուրական հալ և տեղական տաճկերէն ու ֆրանսերէն թեթերը Նզմիրի հալ դպրոցների ներկալ չառաջադիմութեանը:

ի հարկէ, իրանց քմքին շատ թթու եկաւ, դարա համար նորից պատերազմ հրատարակելու համար պէտք էր ամենադիւրին մի անձնական խնդիր գտնել, որ մեծ բարեբաղդութեամբ գտան «Մուրճ»-ի վերալիշեալ տողերում. նրանց բովանդակութիւնն ու ձեր ամենից շատ կը սազէր Կոմիկասցի տեսուչին, ուստի մի անսպասելի առիթ էր Բալց եւ քանի լուցի, աչքան աւելի երես ելան ալլ թուղթ մրտտողներն աներեակալելի ստութիւններ հնարելով: Կեռ երկու սարի չէ անցել, որ «Արեւել, Մամուլն» չափն անցկացրեց ինձ իմ աշակերտուհիներին, «տիրաշահել»-ուսմ գրպարտելուց չամաչելով (ալլ տողերը Քիֆլիտում իմ ընկերներից մէկի՝ պ. Յ. ցի մօտ են): Ես ալ ես չհանդուրժեցի: Նախ աւելի պատշաճ համարեցի զլմել Ազգային Վարչութեան խնդրելով, որ պաշտօնապէս ետ առնել տալ ալլ վերին աստիճանի անվազել խօսքերը, հակառակ դէպքում ռուսական հիւպատոսարանին զիմելու բաշտարարելով: Այն խնդիրն աչն ժամանակ աչնպէս վերջացաւ իւր բաւտիստութիւնն ստանալով և հիմա, «Մուրճ»-ի վերալիշեալ տողերի առթիւ, նորից անվազել գրպարտութիւններ են անում ալլ իմքի տեղական և Պուլսի մի երկու թերթերը:

Ես հիմա էլ ղեռ հրապարակ դուրս չէի գալ, եթէ «քլիւպի» անդամների անձնական խնդիրը չլինէր և ես գտնէ հիմա պէտք չզուտի մեր կովկասցիներից ալ «արտօնեալ ազգասէրների» մասին ղեռ ալս ու աչն լաւ գաղափար ունեցողներին՝ առժամանակ ալս շոշտիկելի փաստերով ներկայացնելու սրանց բարոյական սկզբունքները...:

Նախ՝ դործին անտեղեակներին ասեմ, որ ես ալս քաղաքը տեսչական պաշտօնի եկալ մի անձի փոխարէն (պ. Մամուրեանց խմբագիր «Արեւելեան Մամուլ»), որ երկար տարիներ ծառայել էր ու ալսպէս թէ աչնպէս (ժամանակին աւելի կարեւորութիւն ունեցած լինելով) արժանի էր իւր ծերութեան հասակում ազգի կողմից իբր վարձատրութիւն թոշակ ստանալու: Բալց ալս խրախուսքը մեզանում տարարաղտաբար ղեռ ոչ մի տեղ չկալ (միաչն Գէորգեան Ճեմարանի դատատու պ. Պալեանը) և նոր տեսուչն, ի հարկէ, ալլ բանում մեղաւոր չէ, քանի որ իրան էլ նոյն ապագան է սպասում: Մեր մեղը բալց աչն է եղել, որ երբ մեղ իբր մասնագէտի հարցրել են Նախկին տեսչի գործունէութեան մասին մեղ լանձնաձ երկտեւ վարժարանների մէջ, մենք խիստ քննադատել ենք ալլ՝ իբր ներկալ պահանջներից շատ վեռ մնացած: Ի հարկէ, ով չէր ցանկալ աւանց հակառակորդների կատարել մանաւանդ իւր կրթական փափուկ պաշտօնը. սակաչն տարաբաղդաբար ալլ անխուսափելի է, երբ հազար ու մի խնդիրներ են երեան վալիս ու բացատրութիւն ու կարգադրութիւն պահանջելով՝ անցեալի վրալ խօսել հարկադրում, աչն, ուլղակի բռնադատում՝ ասարբերութիւններն ու կարիքները ըմբռնելի կացուցանելու համար: Թերեռ մտածեն, որ նախորդի թերութիւնները մենք երիտասարդական

ու մասնագիտական եռանդով աւելի խիստ ենք քննադատել, սակայն այդ մասին հրապարակաւ կարծիք չենք չպահանել, ամեն բան պաշտօնական աղբիւրներից քաղելիք տեղեկագրին վերապահելով, որ իւր ժամանակին թէև անմիջապէս կազմուէց, սակայն ուշ հրատարակուէր¹⁾։

Այս աչտպէս լինելով ես սպասում էի իմ հակառակորդներից առ առաւելն աւելի խիստ քննադատութիւն, մինչև անգամ չափազանցութիւն իմ գործունէութեան թերութեանց (ի հարկէ այն մեծ դժարութեանց ու խառնակութեանց մէջ անհնար էր այլ կերպ մի քանի օրում գործը բոլորովին կարգի դնել)։ Այն, այդ ես մինչև անգամ շատ հաւատարմաբար պիտի համարէի հոգեբանօրէն։ Բայց ինչ, իմ գործունէութիւնը վերին աստիճանի անխիղճ կամ աւելի ճիշտ է ասել խեղիատակ կերպով քննադատելով՝ նաև իմ անձն այնքան ստորացնել ձգտեցին, որ մի Պոլսեցի վարժապետի սրանց մաշրաքաղաքացի «զինակիցները» մինչև անգամ աչտպէս էին գաղափար տուել, որ ես նորա դասագիրքը վատահոգութեամբ վար եմ զարկել, իսկ միւսինը գովել, Պոլսից սպասելիքներ ունենալով²⁾ և միննուց ժամանակ իզմիրցիների աչքը «թող վչելով»։ Խեղճն ամենաառավազել տողերի վրայ աւելացնում էր, որ իմ ռոխ տակ օրաուր հողը պակասում է Խզմիրում, դպրոցները քաղքաչում են և մի դասագիրք յօրինողի վնասելովն է որ իմ հացը ուտել եմ ուղում... (Բայց գիրքն ինձ նւէր էր ուղարկած, ինչպէս կողքից երևում էր)։ Որքան ցաւալի երեոթ աղապիտի համոզմունքներ հարկաւ փորձառութիւնից ստացած լինելը։ Բայց այդ կուսակցութեան ասած ու հրատարակածների տեսակներն ու թիւը անհամար են, ուստի բաւ է, եթէ վիշնք նաև «Մուրճ»-ի վերոյիշեալ տողերի առթիւ գրածները։ Ես մի «ապուշ և սարկամիա գործի եմ գառած մի քանի կրքոտ դաւաւսէրն և բուժեալ» (Օհօ, ինչ մեծ Քրաղ, ով նորելուկ ժառանգական աղղատէր որդի—Մամուրեան էֆ. 3), որ իբր թէ ես եմ հրատարակել տուել այդ կծու նկատողութիւնները, որովհետև ինձ այդ «քլիւպի» անդամները «երկու տարիէ ի վեր իրենց սրահներուն մէջ կարգ մը պարահանդէսներուն՝ մուսայան կամ չուպեցին հրաւիրել» (Ներդպալում իմ հինգ տարեալ այն էլ ուսանող կեանքում և այն բարձր

¹⁾ Թող ընթերցողն հիմա տեսնի այդ տեղեկագրում, թէ մինչև անգամ ազգ. պատմութեան դատ առնելուց ազատ եղողների մասին ժամանակում «Արձագանք»-ում ճիշտ էր եղել, որի առթիւ «Մամուլը» (նշխիմսէր) էր որ երգեց։ Գասատուների համար անպատուաբեր չապարարութիւն կպցնելը դպրոցի սրահում տեսչի կողմից նորերա զարձեալ չորս սուղչի խօսակցութեան առարկայ եղաւ։

²⁾ Չէր այդ ուղղութեամբ արածների հետք պարտկելու համար էք այդ ջախջախիչ Քրաղն արձանագրում... Ժամանակն ամեն բան կը բանաչ նաև հեռաւորներին։

ընկերութեանց մէջ ու խզմիրում չորս տարւայ մէջ ո՛վ է տեսել ինձ պարելիս. ո՞չ ապարէն լունաց և հաւոց աղբ. պարահանդէսների հրաւերներին ի պատասխան միայն մի անգամ գնացի): Իսկ «Մտղիկ»-ի (ինչ ծաղիկ է...) նման ծաղիկ թղթակիցս գրում է. «կարծեմ զինքն անդ չաճախել: կասեցուցած էին, կամ թէ գրիչս կը տատամսի հին տետրակներէ (անձ աչս գրաղէտների վատտակները...) իրողութիւններ ստորադրել (միթէ՛ 1—2 անգամ իբր հլւր երթալս ապա ամենեին չաճախելս իրանց կողմից կասեցնել է. ես երբ եմ խնդրել անգամ ընդունուելու Զօհրայ էֆ. էլ «Մասեաց վեհապանձ բարձունքէն» («Մուրճ»-ի թղթակիցը «անձուկ մտքի տւլ») անւանց սոս առթիւ Մինչ շուտ մոռացաւ խզմիրի նուն էրիտասարդների մասին երկու տարի առաջ գրած չափազանցութիւնները... Հիմա միթէ աղքատ գո՞ է աղ կեանքից:

Վերջապէս նորեղուկ գրագետը անզուսպ բռուերով հետեւեալ կերպով է շարունակում. «Մամուրեանի դպրոցից եղածները, եթէ կը բաղդատին հիմական եղածներուն հետ, մեծ անմտութիւն կը լինի, քանի որ Մամուրեանի օրսան աշակերտներն չափահաս երիտասարդներ էին, որ դպրոցի ւստեանագարանի դրքերէն կ'օգտուէին, մինչդեռ այժմեան բարձր կարգի աշակերտները մանուկներ են...» Նախ ուղիղ չէ աղբ. մենք պ. Մամուրեանի աշակերտներն էլ տեսանք, երկրորդ թող տեսնի ընթերցողը որ անձ աչսպէս է սովորեցնում հալը որդուն, թէ մի աչն մեծ մեծ պեխեբով երիտասարդները պէտք է ընթերցանութեան գրքեր կարդան...

Թող ներէ չարգելի ընթերցողը, եթէ ես, հակառակ իմ սովորութեան, այս առաջին անգամ հարկադրեցի աչքսան տարիներից վտոտ նրան գրողեցնել մի աւելի. սննդական խնդրով, որ լուսամ հետաքրքրութիւնից զուրկ չի լինիլ, մի կովկասցու և տաճկահայ որոշ ուղղութեան գործիչների մի ընդհարման համառօտ նկարագիրը ներկայացնելով:

Ա. գուք) պ. խմբագիր, լոյս ունիմ, թէ «Մուրճ»-ի մի ետ ընկած անկիւնը չէք մերժիլ այս սողերիս, որովհետեւ բարոյական սրբաբանութիւն ունիք գէթ այս չափով մեր ցանկութիւնը չարգելու, քանի որ գիտէք, թէ վերջին թշնամանքներն էլ մենք աւելի չենք տեսել: ¹⁾ Աս գրել եմ

¹⁾ Պարսք ենք համարում լալտնել, որ «Մուրճ»-ը Զմիւռնիայում խորագրով տպած սողերը («Մուրճ» 1893 թ. № 1, էջ 185), որ անագին ազմուկի տեղիք տին Զմիւռնիայում և Պոլսում, մենք հրատարակել էինք, օգտուելով մեզ ուղարկած մի մասնատնտար նամակից և ոչ նամակագրի խնդրանքով: Այլ սողերի աւելիով աչնակի վտոտիմական խմբերի կողմից եղած բաց և զգանք չարուցանող ժպթբունները լուս աղացուց են, սակայն, թէ որքան նպատակաւարմար էր «Մուրճ»-ի մէջ աչն սողերի հրատարակելը: Մէջ տեղում մի՞նչորդը պարզեց, անա գրական օգուտը, մեր սեռակէտից:

և պիտի գրեմ ոյ. Մամուրեանի մանկավարժական գործունէութեան մասին, երբ առիթը ներկայանալ, չմտանալով նորա արժանիքը համեմատական տեսակէտից, նույնպէս էլ նորա համախոհներն ու Վզմիրի ներկայ երիտասարդութեան մասին աւելի խիստ, քան ինչ «Մուրճ»-ում էր հրատարակած: Թող ուր կուզէ այդ կեանքից գոհ լինի...

Յ. ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

Վերջին տարիներս թէ ռուսաց դրականութիւնը և թէ կառավարչական շրջանները աչքի ընկնող ուշադրութիւն են դարձնում հրդեհի խնդրի վերայ: Ռուսական քաղաքներում և մանաւանդ զիւղական կեանքի մէջ հրդեհները նշանաւոր փլաններ են հասցնում ժողովրդի տնտեսական գրաւթեանը:

Անցեալ տարի կապացած համառուսական հրդեհաչիջական ցուցահանդէսին տեղի ունեցաւ նախպէս հրդեհաչիջների համաժողովը: Յուցահանդէսի և համաժողովի ներկայացուցիչների վերջին ընդհանուր նիստը վճռեց՝ ներքին գործերի մինիստրին զխմելով խնդրել մի շարք միջոցներ ձեռք առնելու մասին: Առաջ բերենք այդ միջոցներից կարևորները: 1) Հիմնել կենտրոնական առանձին վարչութիւն, որին լատկացէին հրդեհին վերաբերեալ հարցերը, որը միջոցներ որոնէր հրդեհաչիջութեան գործը բարւոքելու համար: 2) Հիմնել մէկ ընդհանուր ընկերութիւն հրդեհների առաջն առնելու և նոցա դէմ մաքառելու համար: 3) Քաղաքների հրդեհաչիջներին պետական պաշտօնեաների կարգը դասել, ինչպէս այդ կաշ Մոսկուայի և Պետերբուրգի համար: 4) Հիմնել առանձին համակազմակերպական հրդեհաչիջական դումար (ФобДт), որից թոշակ և օգնութիւն տալ հրդեհի ու առհասարակ պաշտօնավարութեան ժամանակ վիրաւորածներին:

Բացի սորանից լաւորում են հետեւեալ ցանկութիւնները: 1) Հիմնել առանձին բանձնաժողով ներքին և լուսաւորութեան մինիստրութիւնների ներկայացուցիչներից, որը մասնապէս հրդեհաչիջների օգնութեամբ չօրինէր հանրամատչելի գրքեր, որոնց մէջ բացատրէին հրդեհի դէմ մաքառելու միջոցները, և որը նախպէս ժողովրդական և կիրակնօրեալ դպրոցների միջոցով սովորեցնէր զիւղացիներին հրդեհներից զգուշանալու և նրանց հանդիմանելու միջոցները: 2) Ազատ հրդեհաչիջներին ընկերութիւնների զլրատւորներին կատարեալ ադատութիւն տալ հրդեհաչիջական գործողութեան մէջ իրանց անձնական պատասխանատուութեամբ: 3) Գարպացիներ զիւղերում ու քաղաքներում ջրամբարները, բարօք դրութեան մէջ դնել դէպի ջրամբարները տանող ճանապարհները և ըստ կարելոյն ջրախողովակներ կառուցանել: 4) Համալսարանների մէջ հիմնել սիրողների խմբեր և

Նրանց տալ անհրաժեշտ գործիքները: 5) Մտցնել միատեսակ հագուստի ձև սիրողներին խրախուսելու նպատակով: 6) Թույլ տալ պարտաւոր նւերներ ստանալու իրաւունք ունենալ, աւելի աչքի ընկնող սիրողներին և գիւղացի—սիրողներին ազատել համալսարանի գաւառատաններից նշանակւող մարմնական պատիժներից: 7) Թույլ տալ ազատ հրդեհաշէջներին ընկերութիւններին ներկայացուցիչներ ունենալ կենտրոնական հրդեհաշիջական վարչութեան մէջ, եթէ ազդելիսին հիմնուի: 8) Վերաքննել և լրացնել հրդեհին և ապահովելուն վերաբերող օրէնքները:

Վերոյիշեալ աշխատութիւնները սչ-ամբողջովին անհետեանք մնացին:

Ներկայ տարւոյ մարտի 24-ին մինիստրը հաստատեց «Միացեալ հրդեհաշիջական ընկերութեան կանօնադրութիւնը: Ընկերութեան հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ մալխի 17-ին: Ծանօթացնենք ընթերցողին վիշեալ կանօնադրութեան գլխաւոր կէտերի հետ:

1) Ընկերութիւնը հիմնուած է հրդեհների դէմ մաքաւումը գործադրելու համար:

2) Այդ նպատակով ընկերութիւնը աշխատում է՝ ա) շատացնել և կատարելագործել գողութիւն ունեցող հրդեհաշիջական ընկերութիւններին և խմբերին միջոցները և բ) տարածել նախազգուշութեան միջոցները:

3) Ընկերութիւնը բաղկանում է պատւաւոր, իսկական և աշխատակից անդամներից:

4) Իսկակաւոր անդամներ կարող են լինել, ա) հրդեհաշիջական ընկերութիւնները կամ միութիւնները և բ) մասնաւոր անձնաւորութիւններ և աջակիսի հիմնարկութիւններ, որոնք սեփական խմբեր ունեն, այն պայմանով միայն որ նոքա պարտաւոր լինեն օգնութեան համեմել նա և իրանց որոշ չըջանում գտնուող կողմնակի մարդկանց:

5) Այն անձնաւորութիւնները կամ հիմնարկութիւնները, որոնք կը վճարեն տարեկան 25 բուբլի, կամ միանւագ 300 բուբլի, կը համարեն աշխատակից—անդամներ:

Մալխի 21-ին տեղի ունեցաւ Պետերբուրգում համառուսական առողջապահական ցուցահանդիսի բացումն: Բացմանը ներկայ էին մինիստրներ, բազմաթիւ բարձրատիրճան անձնաւորութիւններ, հիմնարկութիւնների ներկայացուցիչներ և այլն:

Մաղթանքից չտող ժողովրդական առողջապահութեան ընկերութեան նախագահ Զդեկաուէր մէկ ճառ խօսեց, որի մէջ գեղեցիկ կերպով բողոքեց առողջապահական պիտութեան ահալին նշանակութիւնը թէ անհատների և թէ հասարակութեան կեանքի համար: «Առողջապահական ընկերութիւնը—առաջ ճառախօսը—կայացնելով առաջին համառուսական

առողջապահական ցուցահանդէս, ձգտում է տարածել առողջ դադալարներ առողջապահութեան մասին: Յուշահանդէսը պարզօրէն վկայում է, թէ որքան չափողութեամբ է գործադրւում գիտնական առողջապահութիւնը կեանքի զանազան պահանջների մէջ:

Նրկորդը խօսեց փոխ-նախագահ դրաֆ Սիւզոր: «Այսօր հայրենի գիտութեան տօնն է—ասաց նա, այս օրը փալուն էջ կը դառնայ ուստական կուրսուրալի պատմութեան մէջ: Յուշահանդէսի չափսը սպասածից մեծ եղաւ: Նորան մասնակցում են մինչև 500 էկսպոնենտներ, որ ներկալացրած են մինչև 40,000 էկսպոնատներ (առարկաներ): Եւրաքանչիւր բաժին ինքնուրոյն նշանաւոր հետաքրքրութիւն է ներկալացնում: Նոցա մէջ շատ սովորելիք ունեն հարուստները և աղքատները, հասակաւորները և ուսանողները, գիտնականները և բանւորները: Առաջին տեղը բռնում է գիտնական բաժինը, չեռոյ բովական հիմնարկութիւնները, դպրոցական առողջապահութիւնը և վիճակագրութիւնը: Մեծ հետաքրքրութիւն են ներկալացնում և աւելի մասնաւորները, որ է պատերազմական և երկաթուղալին բաժինները: Յուշահանդէսին մասնակցում են տէրոնական հիմնարկութիւնները, քաղաքները, գիտնական և տեխնիկական ընկերութիւնները, բարձրագոյն դպրոցները: Մարդասիրական հիմնարկութիւնները նորնպէս անուշաղբի չեն թողել ցուցահանդէսը: Օրինակ, շրբից ազատող և նորնպէս ժողովրդական ընկերութիւնները բաւական կարևոր առարկաներ են ներկալացրել: Մի խօսքով առողջապահական ցուցահանդէսը ժողովել է ամեն ինչ, որ վերաբերում է ժողովրդի առողջութեան պահպանութեանը:

Մալիսի 24-ին մեռաւ ուսուցիչ երեկելի լեզապէս Կակով Գրոտ: Նա ծնել է 1812 թւին Պետերբուրգում: Սկզբնական կրթութիւնը ստացել է իւր մօր մօտ: Յետոյ նա սովորեց լիցեննում, ուր աւարտեց ոսկեալ մեդալով և մտաւ պաշտօնի միջնորդների կոմիտեալի խորհրդարանում: Սրանից չես նա ամբիոն ստացաւ Ֆինլանդիալի Հելսինգֆորս քաղաքի համալսարանում, ապա Ալեկսանդրեան լիցեննում: Բաւց 1860 թւին պաշտօնը թողեց և նւիրեց իրան գրականութեանը և գիտութիւնների ճեմարանին, որը դեռ 1855 թւին ընտրել էր նորան իսկական անդամ: Նա բոլոր սրտով սիրում էր գրականութիւնը, որով նա ապրում էր և չնչում մինչև իւր վերջին օրերը:

Պետերբուրգի համալսարանը տւել էր նորան ուստական գրականութեան զոկտորի աստիճան: Մոսկալի համալսարանը ընտրել էր նորան պատուաւոր անդամ: Գրոտը բոլոր ուստական համալսարանների և բազմութիւ ուստական և արտասահմանեան ընկերութիւնների պատուաւոր ան-

զամ էր: 1884 թւին Նա հաստատուեց ձեմարանի ռուսական լեզւի և գրականութեան բաժնի նախագահի պաշտօնում, իսկ 1889 թւից սկսեալ Նա գիտութիւնների ձեմարանի փոխնախագահն էր: Բարեգործական ընկերութիւնները պարտական են նորա եռանդուն գործունէութեանը զանազան գեղեցիկ հիմնարկութիւնների համար:

Հանգուցեալը աւել է ռուսաց հասարակութեանը մի շարք մնացուց աշխատութիւններ: Նորա բոլոր խոշոր աշխատութիւնները վերաբերեալ պատմութեան ցոյց են տալիս նորա ինքնուրոյնութիւնը և խոր ուսումնականութիւնը, միևնոյն ժամանակ լինելով լայն և բազմատեսակ: Սօքրատեան ռազմական արժանի են թէ մանկավարժական և թէ գրականական տեսակէտներից: Նա նույնպէս լաւ տեղեակ էր սկանդինաւական գրականութեանը, կատարելագէտ տիրապետում էր ֆիննական, չեզական, իտալեական, ղանիական և չեչական լեզուներին և հիմնաւորական, իտալեական, ղանիական և չեչական լեզուներին և սլաւոնական բարբառների մասին: Մի առ մի թւել Գրոտի աշխատութիւնները շատ ղժւար է: Յալանի են նորա հեատաղօտութիւնները Գերժաւինի, Լոմոնոսովի, Կրիլովի, Կարամզինի և շատ ուրիշների մասին, կամ վերաբերեալ Կատարինէ երկրորդին, Պետրոս Մեծին և այլն: Խիստ չալանի և տարածած է նորա «Ռուսական ուղղագրութիւնը»: Հանգուցեալի աշխատութիւնների մեծ մասը թարգմանած են օտար լեզուներով և նորա աճունը մեծ նշանակութիւն և հեղինակութիւն ունի արտասահմանում: Նա ունէր պալժառ իտալեաց, բարոյական ոյժ, մեծ եռանդ, խորը գիտութիւններ: Գրոտի մահը նշանաւոր կորուստ է ռուսական գրականութեան և գիտութեան համար:

Ճանապարհների հաղորդակցութեան մինխտարը մալսի 27-ին ընդունելով նորաւայտ ինժեներներին, ղիմեց նոցա հետեւեալ խօսքերով:

«Աչն գործը, որին ղուք նւիրում էք, շատ ղժւար է մի քանի առանձին պալմանների պատճառով: Զինւորականի կամ ծովազնայի գործը տեղի է ունենում նեղ ասպարիղում, որտեղ նոցա քննում և ղնահատում են իրանց նման մասնաղէտները: Մինչդեռ ճանապարհների հաղորդակցութեան ինժեների գործը կատարում է ամենքի առաջ: Վերջինս հաղիւ վերջանալով ղառնում է հատարակութեան սեփականութիւն և հէնց սորա մէջն է կալանում նորա մեծ ծառայութիւնը և նոյնպէս նորա առանձին ղժւարութիւնը: Ամեն մարղ կարողանում է ղատել հաղորդակցութեան ինժեների գործը իւր հալեացքներին համեմատ: Ուստի ճանապարհների հաղորդակցութեան ինժեները, աւելի քան մի ուրիշ գործիչ պիտի ձգտէ իւր գործունէութիւնը համապատասխան գարձեւել տեղական

կեանքի պահանջներին և կարիքներին: Սակայն մինչև այժմ ինժեներները իրանց շատ անջատուած էին պահում, և հէնց այդտեղից են ըզխում ալն աննպաստ, երբեմն էլ անարդար, դատողութիւնները ինժեներներին մատին, որոնք տարածւած են հասարակութեան մէջ: Կրկնում եմ որ այդ լառաջանում է նորանից, որ ինժեներները չեն աչխատում մտաւարութիւն ունենալ ալն շրջանի լեա, որտեղ գործում են: Պարծնում եմ ձեր ուշադրութիւնը այդ կարեորագոյն հանգամանքի վերաջ: Գուք ամենքդ երկտասարդներ էք և մտնում էք կեանքի մէջ լաւ ձգտողներով և տաք սիրով դէպի ձեր գործը: Եւ չանուն այդ գործի խնդրում եմ չմոռանալ, որ լաջողութեան գլխաւոր պայմանը ձեր և հասարակութեան ներկայացուցիչների մէջ եղած կանոնաւոր շարաբերութիւնն է: Անհրաժեշտ է ձեռք բերել հասարակութեան հաւատը և համակրանքը և ալն ժամանակ խիստ կը թեթեանայ ձեր գործը և կ'անհեաանան ըտր մանր մունր արգելքները, որոնք ներկայումս շատ անգամ խանդարում են ճանապարհների հաղորդակցութեան ինժեներներին գործունէութիւնը»:

Փամանակի ողին է լուում այդ գեղեցիկ նկատողութիւնների մէջ: Մտենալ ժողովրդին, ուշադրութեան առնել նորա ներկայացուցիչներին ձայնը: Ահա վերից տւած լաւ քարտը:

Վերջին տարիներս գիւղատնտեսական բարձր կրթութիւնը Ռուսաստանում ընկած դրութեան մէջ էր: Պետրոսեան երկրագործական ճեմարանը (Մոսկուայի մօտ) անցնում էր իւր վերջին օրերը: Նովո-Սիբիւսանդրիալի գիւղատնտեսական ինստիտուտը փակած էր անորոշ ժամանակով: Ուրեմն բարձրագոյն գիւղատնտեսական կրթութիւնը դադարեցրած էր ուղիղ ալնպիսի ժամանակում, երբ սովը կամալ թէ ակամալ մասնացոյց էր անում ալն ճշմարտութեան վերաջ, որ գիւղատնտեսական կրթութիւնը անհրաժեշտ է Ռուսաստանի համար (և ոչ միայն Ռուսաստանի, ժանօթ. խմբ.) քանի որ վերջինս գլխաւորապէս երկրագործական երկիր է:

Ներկայումս, ինչպէս երևում է, մտադրութիւն կալ վերականգնեցնել բարձրագոյն գիւղատնտեսական կրթութիւնը: Արդէն վճռւած է բացել Նովո-Սիբիւսանդրիալի ինստիտուտը, թէև վերափոխւած կերպով: Ընտրատու կը սկսէ իւր գործունէութիւնը ապագայ տարալ սկզբից: Պարագմունքների ծրարիւր բաւական բաղմակողմանի է: Բացի զուտ տեխնիկական գիտութիւններից, լալն տեղ է լատկացւած տնտեսական գիտութիւններին և օրէնդգիտութեանը: Ռուսումնական խումբը բաղկացած է 11 պրոֆեսորներից, 11 ասիստանտներից և 4 դասատաներից:

Ընտրատու մաներա իրաւունքը հաւատար է ըտր աղգութիւնների համար և նոյնպէս կախւած չէ ատտեստանտների ինչ տեսակ լինելուց:

Որպէս ուսանողներ կարող են ընդունել բոլոր միջնակարգ դպրոց աւարտածները:

Ենտրտուած կունենալ երկու բաժին՝ գիւղատնտեսական և անտառաւիճ: Գասընթացքը պիտի տեէ 4 տարի: Անցնելու են հետեւալ աւարկաները:

1) Ռուսական գրականութիւն, 2) Փրանսերէն և գերմաներէն լեզուներ, 3) Ֆիզիկա և օդերևութաբանութիւն, 4) քիմիա, 5) բուսաբանութիւն, 6) բուսական բնախօսութիւն, 7) կենդանապահութիւն, 8) գործնական կենդանապահութիւն, 9) հանքաբանութիւն և երկրաբանութիւն, 10) հողադիտութիւն, 11) ստորին գեոդեզիա, 12) քաղաքատնտեսութեան սկզբունքները և վիճակագրութիւն 12) կառուցական (строительное) և երկրաչափական արեւտներ վերաբերեալ գիւղա և անտառատնտեսութեան, 14) օրինադիտութիւն, 15) երկրագործութիւն, 16) անտառապահութիւն, 17) տեխնոլոգիա: Յիշեալ աւարկաները ընդհանուր են երկու բաժինների համար:

Մասնաւորապէս գիւղատնտեսական բաժնում կարգացելու են՝ մասնաւոր երկրագործութիւն, գիւղատնտեսական քիմիական անալիզ, ընդհանուր և մասնաւոր զօտեխնիկա, անասունների բնախօսութիւն, անասնարութիւն, գիւղական տնտեսութիւն, գիւղատնտեսական մեքենաներ և գործիքներ, գիւղատնտեսական օրինադիտութիւն:

Իսկ անտառաւիճ բաժնին մասնաւորապէս վերաբերում են ծառադիտութիւն, անտառաւիճ տակոացիա, անտառաշինութիւն, անտառագործածութիւն, անտառաւիճ օրէնքներ և անտառաւարութիւն:

Բացի տնտեսական դասերից լինելու են պարտաւորագուցիչ գործնական պարապմունքներ:

Ուսանողները, օգտւելու համար, ունենալու են դրապարան, լաբորատորիա, դասասան հաւաքածոներ ի կարօնէսներ, կալւած, փորձական ֆերմա, բուսաբանական այգի և ուրիշ օժանդակիչ հիմնարկութիւններ:

Պետերբուրգի ժուժկալութեան ընկերութիւնը, կամենալով միջոց տալ ամբոխին տօն օրերը մաքուր զարճութիւններով անցկացնելու և այդպիսով սովորական տօնաւիճ արբեցողութիւնից հեռու մնալու, իրաւունք է ստացիլ օգտւելու այդ նպատակով աշպէս անւանւած Յարիցինեան մարզագեանից: Ընկերութիւնը մտադիր է տօն օրերին ալտեղ դաստանք սարքել: Անտեղ լինելու են զանազան մրցութիւններ ընծաներով (առագատների վերալ բարձրանալ և այլն): Երկու բնմերի վերալ ներկաւապումներ են տրւելու, մի քանի երաժշտական խմբեր ուծելու են: Աիւսկողմից հիմնւելու են նոյն տեղում էժանազին թէյարան, բուֆետ և այլն:

Նոյնպէս զանազան մանրավաճառներին տեղ են տալու էժան ապրանքներ ծախելու համար:

Նոյն հրապարակի հետ կապած է Լէչֆերտի ժողովրդական թատրոնը: Բացի հրապարակի բաց բեմերից, վիշեալ թատրոնում ներկայացումներ են լինելու սաստիկ էժան գներով: Մինչև 500 տեղերի գները նշանակելու են 5 կոպէկից, 400 տեղերինը 10 կոպէկից և այլն: Ամենաթանգ օթեակները պիտի արժենան 1 ռ. 50 կոպէկ:

Այս ամառուաչ ընթացքում ամբողջ հրապարակը լուսաւորւած կլինի ելեքտրականութեամբ: Հասարակ օրերը կը պակասեն միաջն մրցանակները, ամենաչն օր երեկոյեան ժամի 6-ից սկսեալ կածէ զինւորական երաժշտական խումբը: Հրապարակի մուտքը ձրի է:

Ահա ժողովրդին բարեփոխելու լաւ միջոցները մէկը, որի օգտակարութիւնը անհերքելի է:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԲ:

Պետերբուրգի ազքատ և հիւանդ երեխաներին խնամող ընկերութիւնը տեղ է պատրաստում ընդունելու համար աջն երեխաներին, որոնց չէ կարելի թողնել ծնողների և դաստիարակների մօտ, եթէ վերջիններս անդթութեամբ են վերաբերում դէպի փոքրիկները:

— Պետերբուրգի քաղաքապետը հետեւալ կարգադրութիւնն է արել: Ատամնարօժ Զակսի կաբլինետը քննելով, չաչտնեց, որ նորա փայտեղէնները (мебель) և բոլոր կահկարասիքը անմաքուր են պահում, գործիքները հետ խառն գտնում են ժանգոտած և կանաչած ալին-օլին բաներ, գործիքների պահարանները ծածկւած են փոշիով: Ուստի քաղաքապետը կարգադրեց փակել վիշեալ կաբլինետը և չաչտնել Զակսին, որ նա նորից հիւանդներ ընդունելու իրաւունք կունենայ, երբ ամեն բան կը դնէ պատշաճաւոր դրութեան մէջ: Օրինակելի կարգադրութիւն է:

— Սիբիրիալի Վլադիվոստոկ լրագիրը հետեւեալ տխրալի տեղեկութիւններն է տալիս: Մէկ կղզու կառավարիչը վերջապէս խմացաւ, թէ ինչպիսի անդթութեամբ էր վարւում ոմն Խանով իւր ատորադրեալ տաժանակիրների հետ: Շատերը աչք ողորմելիներից կտրել են իրանք իրանց ոտները կամ ձեռները, որպէս զի գործելու անընդունակ դառնալով ազատեն Խանովի վերահսկողութիւնից: Նոյն լրագիրը չաչտնում է, որ շատերը վերահսկողների ճնշումներին չը դիմանալով փախչում են անտառները, ուր երբեմն ոչ մի կերակուր չը գտնելով, ճարահատեալ միմեանց մորթում են և միսը ուտում: Մի քանի աչքսիսի փախածներ են բռնւած, որոնց ատարկներում մարդկալին միս են գտնւած:

— Բենդերալի քաղաքալին վարչութիւնը մեծ գործի վերայ է: Նորեւրումն ոմն ձալնաւոր Խանով զարմանք չաչտնեց, թէ ինչու «Ձիերի շուկայ»

կուլած բաղմամարդ հրապարակը ոչ մի խմբիքատուն չունի: Աւստի գուժման վճուեց մի քանի տեղեր (ու թէ մէկը) որոշել վիշեալ հրապարակի վերայ և կապալով տալ խմբիքներ ծախելու համար:

—Գուցէ շատով կաւելանայ Ռուսաստանում մի նոր համակրելի ընկերութիւն՝ «Նոր սերնդի Փիղիքական զարգացման» նպատակով: Ծրագիրը արդէն մշակւած և ներկայացրած է, ուր հարկն է՝ հաստատելու համար:

ԱՐՏԱՍԱՅՍԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

ՀԻՍՏՈՒՍՅՈՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԻՆԵՐԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՄԵՐԻԿԱՅԻՔ 1):

«Ամերիկանալու» նպատուղ հանգամանքները: Ամերիկացիների առանձնապատկությունները: Ամերիկական նախաձեռնուող ուղին: Գաղափարների բացակայությունը: Ամերիկացու անկախությունը: Ամերիկացու «հոմը»: Ամերիկացու վաղահասությունը: Ամերիկացու կարծիքը Արտագալի և Արտուրացու մասին: Ամերիկական մեծամտությունն առիթով:

II

Ընթերցողը արդէն ճանաչում է թէ ինչ տարրերից են կազմւած ամերիկական գաղթականները:

Արդ՝ ինչ պատճառների շնորհիւ են դրանք կերպարանափոխուում և դառնում զուտ «եանկիներ», ամերիկացիներ:

Առաջին պատճառը պէտք է համարել բնությունն ազդեցությունը, ամերիկական կլիմայի ներգործությունը, կլիմայի՝ որին չատուկ է էլեքտրականությունն առատությունը, օդի չորությունը: Եւ այս աննշմարելի ներգործությունն հետեանքը երեւում է մի քանի սերունդներից չետուց, երբ մարդուս մարմինը աւելի նրբանում է, դանգը աւելի երկարանում, ձեռները բարակում, ջղալին դրուծվումը ձգւում, դիւրազգացությունը գրգոււում և կենսականությունը սաստկանում:

Բայց աւելի նշանաւոր և աւելի զօրեղ պատճառը է մարդկային միջավայրը չնաչւած աչն հանգամանքին, որ ամերիկական առանձնապատկությունները չեն կազմում դեռ մի ցեղի ուրուցությունը²⁾ և սորա ապացուցը աչն է՝ որ գաղթականը աւելի արագ դառնում է ամերիկացի քան թէ մի ֆրանսիացի—անգլիացի դառնար (չէ՞ որ այս երկու ցեղերի առանձնապատկությունները աւելի բարդ են): Ինչպէս որ դաւառացին դառնում է քա-

¹⁾ Տես «Աուրճ» 1893 թ., № 5:

²⁾ = originalité, оригинальность.

ղաքացի—գրեթէ նոցն կերպով և գաղթականը դառնում է ամերիկացի։ Այս նոր մթնոլորտի մէջ նա ժամանակ չունի զբաղելու իւր գրացու շարժումներով, հաշի առնելու հասարակաց կարծիքը։ Շրջապատած լինելով աւելի բազմազան հասարակութեամբ և գործելու աւելի լայն ասպարէզ ունենալով՝ բնական է որ նա աւելի շատ զազափարններ է փոխ առնում և ենթարկւում շրջապատող մթնոլորտի աւելի զօրեղ և աւելի ներգործական հորձանքին։ Նրա մի քանի չտակով թիւնները աւելի են սրոււում, աւելի սրւում և նա քշւում է տանում ընդհանուրի հոսանքով։ Այս միջավայրի մէջ ընկնողը սկսում է մտածել աւելի շատ և աւելի արագ, մարդուս դէմքը դառնում է աւելի արտազայտիչ և աւելի շատ ձգտող դէպի կեանքը։

Ամերիկայում կարծես կտրւում են այն արմատները, որոնցով դաղթականը կապւած է եղել իր բնիկ երկրի հողի հետ։ Մտաբերեցէք եւրոպական փայերը և նախեցէք աչտեղ, Ամերիկայում, տասնեքիսու տարեկան երեխայի վրայ, որը շահեցնում է իւր դրամը, որը լրացիր է հիմնում. նախեցէք Պիտքուրդի, Ֆիլադելֆիայի այն բանւորին, որը ւօժարւում է օրական 3 դոլլար ստանալ մի մեքենայի հսկելու համար («մինչև իւր՝ Հանրապետութեան Նախագահ դառնալը», նախեցէք այն ամերիկացուն, որը աւսուր կառուցող¹⁾ լինելով մի ունիւման՝ ի մօտ, կամ ծառայ մի ֆերմերի մօտ՝ ոչ թէ բնական միտ է գործածում, այլ կտրտած, պաղցրածը՝ ուղղակի Չիկագոյից եկածը, և որը մի աչնպիսի տան մէջ է կենում, որի մասերը նա ստացել է երկաթուղով. վաղը դուք այդ ամերիկացուն մեքենավար դառած կը տեսնէք, կամ մի նորաստեղծ քաղաքի քաղաքացի, որը պատրաստ կը լինի ձեզ ծախել իւր իրաւունքի տակ եղած հողը և չեւ մի այլ տեղ իւր փոխադրւող տան հետ միասին։

Եւ ամեն բանում ամերիկացին աւելի անկախ է քան եւրոպացին կապւած չը լինելով ոչ հողի հետ, ոչ էլ հասարակական կատաների։

Նոցն իսկ իւր արտաքինում ամերիկացին չի պահպանում եւրոպացու խտութիւնը—լինի դա իրան պահելու ձեւը, հագնելը, ձաշելը։ Նոցն անկախութիւնը նկատուում է և բարոյականի մէջ, ամերիկացին նոցնքան հեշտութեամբ զնահատում է և անգլիացու հանճարը, և ֆրանսիացունը, և գերմանացունը՝ զուրկ լինելով այս երեքի նեղ հայեցողութիւնից։

Մինչդեռ եւրոպացին ծնւելով տեսնում է արդէն պատրաստ շրջանակներ, որոնց մէջ մտնելով՝ նա մնում է ամբողջ իւր կեանքի ընթացքում—եթէ նա աղքատ է՝ աղքատ, եթէ հարուստ է՝ հարուստ, չամենաչն դէպս՝ քսան տարեկան հասակում նա ընտրում է իրա համար մի կարիւրրա, որի մէջ և կնքում է իւր կեանքը՝ մնալով անփոփոխ՝ արեւտաւոր կամ վաճառական, պրոֆեսոր կամ բժիշկ, պաշտօնեալ կամ զինւորական... Իսկ ամերիկացին վարւում է իւր նախնիքների նման (որոնք գաղ-

Թելով Ամերիկա՝ հեռները բերած ունէին լոկ իրանց բազուկները) և դրամագլուխ կաղմելու նպատակով, բոլորովին նման «սետլեր»²⁾, պատրաստ է ամենաւն աշխատանքի՝ կառուցանելու իւր տնակը, կարելու իւր հագուստը, կացնով կտրելու անտառի ծառերը և բահի հաբւածներով դործելու ոսկու հանքերում: Թող չաղթող հանդիսանալ նրա կամքը՝ նրան ինչ փոթ թէ արդեօք առաջին ձեռնարկութիւնը լինելու է լրագրական, թէ մանրավաճառականական: Ամերիկացին ընտրում է ամենաօգտակարը, ամենապայմարը, ժամանակականը: Երեկ ձեռնտու էր մի կտոր հող ցանելը, այսօր աւելի ձեռնտու է մի բան հիմնելը մի նորատեսիլ տասը տուն ունեցող քաղաքի մէջ, վաղը աւելի օգտաւէտ կը լինի մի լրագրի հիմնելը, կամ մի չոգեչարժ արօրի հաստատելը: Ամենազլխաւորն ամերիկացու համար է՝ լինել աչքաբաց, արթուն, չըթթւել միշտ մրկնոցն գործի մէջ, գտնել և իրագործել այն մտքերը, դադափարները, որոնք համապատասխանում են միշտ փոփոխող և առաջադիմող այս նոր աշխարհի կեանքին: Ամերիկացին զին չի դնում երկարամեալ կրթական զարգացման, նրա իմացականութիւնը և աշխօժը չաղթում են ամեն բանին: Կրթա է ամերիկացիք ճանաչած են գործնական, բաւց նրանք ևս գործադրող, իրագործող են հէնց առաջին այն մտքի, որը խելքի մօտ է լինում, — մի չատկութիւն՝ որ գուցէ աւելի գնահատելի է, քան միմիայն գործնական լինելը: Երբ սլացող մի վաղոնից մի անկարգութեան պատճառով լրագիրը ցրւող երկխալ էղիտոնը դուրս չարտւեց — հէնց խկոյն նրա մտքովն անցաւ մի սեփական լրագիր հրատարակելը և նա իրագործեց իւր այդ միտքը՝ անպապաղ չանձն առնելով իւր վրա թէ խմբագրութիւնը, թէ հրատարակութիւնը, թէ գրաչարութիւնը, թէ ցրւելը, թէ ծախելը մի փոքրիկ օրաթերթի: Յալանի է, որը շատ շուտով խմբագիր էղիտոնը դատի է ենթարկւում մի կնոջ կողմից, որի ընտանեկան կեանքը խաղառակօրէն (իւր լրագիրը շատ թուով ցրւելու նպատակով) նկարագրել էր իւր թերթի մէջ: Անվհատ էղիտոնը ինքն իրան չի կորցնում. հէնց այդ միջոցին նա մի հեռագրական գլուխ է անում և ալնուհետև ինքն իրան տալիս է ելնքորականութեանը: Եւ այսօր նա հուշակել է՝ գլուխը անելը... արհեստ դարձրած լինելով, մի հուշակ, որին չի կարող հասնել իւր ամբողջ համարարանական և ալլազան կըրթութեամբ եւրոպացի և ոչ մի գիտնական:

Մի ուրիշ օրինակ Բալլուէին՝ որը սկզբում սոկերիչ էր, բաւց որը միեկուն ժամանակ ունէր մի քանի վաճառականական մտքեր, ապա մի քանի արհեստաւորական մտքեր, — այսօրուայ օրս դառել է չոգեկառքեր չլինող մի խոշոր գործարանատէր-մեքենագիտութեան մասին երբէք մտա-

1) =cowboy, կաղմաւած՝ cow=կով և boy=տղա:

2) Settler—գաղթական.

ծած չլինելով: Միևնույն բանը ազատացանում են և այս անունները— Carneggie, Burnhame, Parry, Williams, Westinghouse և այլն: Իսկ այն հանդամանքը թէ խնջու բոլոր ամերիկացիք, առանց բացառութեան մի մի օրինակներ չեն— բացառում է անձնական արժանատիութեամբ, բնութնոգութեան չատկութիւններով, աչքաբացութեան աստիճանով, չամառութեամբ, չարմարելու ձիրքով և այլն: Մի խօսքով ամերիկացին իւր չաջողութիւնը իւր անձի մէջ է գտնում և իրան կողմած չի համարում ոչ անունի հետ, ոչ ծագումի և ոչ ժառանգական արհեստի: Մինչդեռ Աւրուպայում երբ ապրիս են մէկի անունը— դուք իսկոյն ձեզ պատկերացնում էք մի որոշ չըջանում և դրութեան մէջ գտնուող մէկին՝ առանց իրարից բաժանելու ոչ նրա հարստութիւնը, ոչ նրա պաշտօնը և ոչ էլ նրա հասակը և բնատրութիւնը:

Որոշ չըջանակները (рамка) և սահմանները գոյութիւն չունին Ամերիկայում: Կատտաների, դասակարգերի բացակայութիւնը աւելի ակնշարտի կերակ է թէ մոտեցնու լինինք մի վագոն և ղենելու միջին եղամ ճանապարհորդող (իսկապէս՝ փոխադրող) հասարակութիւնը:

Թաւիշով ծածկւած նստարանների վրա լուս, ծխախոտի տերև ծամելով նստած են մարդիկ՝ արդուկած (ուխոյած) կարգին ժակտոներով ¹⁾, և կոլով գզակներով: Սրանց թուում հզամ վարպետները աւելի չգնած են և աւելի ընկած երեսներով. սրանք ստացել են լոկ սկզբնական, բայց հիմնաւոր կրթութիւն. իսկ գրականութեանը սրանք հետևում են մանր, բայց տեղեակ թերթեր կարդալով: Ահա այս մարդկանցից են դուրս գալու միլիոնատէր բանկիրներ և երկաթուղապէն թագաւորներ: Ֆիլադելֆիայի, Պիտսբուրգի, Պուլմօրն-Սիտիի, Սեն-Ղուիի, Յինցինատիի այս մշակները, որոնցից ամեն մէկը օրական 10—15—20 Ֆրանկ է ստանում, ունի մի փոքրիկ տնակ՝ գորգերով ծածկւած, մէջը ջահեր, վառարաններ, բազմոցներ, հալելիներ, «ուկին չեր» ²⁾ բոլորը՝ ինչ որ արտադրում է մեքենայ: Իզգործութեամբ և էժան դնով: Սրանք ունին մի ընտանեկան կեանք և սրանց կանայք չեն ընդունում գործարաններում: Սրանց ապսիտի կեանքը աւելի ևս որոշում և զարգացնում է անհատականութիւնը: Ամեն բանում նա դառնում է պարտական միմիայն իւր անձին և ուրիշ ոչ ոքի, միմիայն իւր սեփական հեռատեսութեան և նախաձեռնութեան: Ազատ կամքով նա գործ է բռնում մի բիլլիին սոսալաի ³⁾ հետ, ինքնակամ կերպով նա փոխառութիւն է անում, առանց պարտաւորւած լինելու մի բարերարի, կամ մի բարեգործական ընկերութեան: Ոչ մի անանց

1) Մինչև ծոնոյր համոզ գեղջկակ դէտտ, jaquette.

2) Rocking chair—օրօրուղ աթոռ:

3) Building society՝—կառուցանող ընկերութիւն:

պատուար կամ անջրպետ տիրոջ և մշակի մէջ. «Մի քիչ աւելի համարձակութիւնն և—չաջողութիւնն ունեցող մշակը աւելի հեշտութեամբ կարող է իւր ձեռքով իրան համար մի վիճակ ստեղծել, քան թէ այդ մշակի տիրոջ որդին». անչ աստիճանն առատ է այս երկրի արտաբերութիւնը, անչ աստիճանն շատ է մշակ ձեռքի պահանջը և անչ աստիճանն հեշտացրած է փոխառութիւնը:

Այս աչտպէս լինելով՝ ոչ ոք չի բոժարուում իրան աւելի ստոր, կախաձ ճկատելու: Ամեն մէկը չանձն է սուսում այս ինչ գործի կատարիլը աչքքանով և ուրիշ սչինչ: Նա ինքն իրան չի կապում, չի ճորտացնում՝ պարմանաւորելով ամսական 300 Փրանկով ձեզ ծառայելու. նա խոտտանում է ձեզ սպքքան ժամաչ ծառայութիւնն նման այն բանին՝ երբ մէկը պատւէր է ստանում այս ինչ բանը ձեզ չանձնել այսքան օրից փտու: Նոչնը և կնոջ ծառայութեան վերաբերմամբ. նա կատարում է ձեր չանձնած գործը այսքան ժամում—այնուհետև նա ազատ է և եթէ շարունակում է ձեզ ծառայելը՝ այդ սուժամանակեաչ մի գործ է մինչև որ նա կը գաննի մի աւելի ձեռնտուն: Շատ չաճախ Չահել օրիորդներ ծառայութեան են մտնում ամառեաչ ծովային լողարանները միմիայն իրանց հաբկաւոր գրքերի արժէքը ձեռք բերելու համար: Ծառայութիւնը բնաւ ստորութիւնն չի համարուում ¹⁾: Նիււ-իօրիկի լրագրերում պատահում է կարգաչ այսպիսի չաչտարարութիւն. «մի ջենալմեն՝ ձախտրղութիւն կրելով իւր ձեռնարկութեան մէջ և հարկաւորութիւնն ունենալով 500 դոլլարի՝ համաձայն է ծառայութեան մտնելու—այնուհետև նոր գործի ձեռնարկելու համար»: Աչտպէս միլիոնատէր մէկը որը իւր կարողութիւնը գնում է մի գեղատան գործում չանձնում է իւր 13 տարեկան երեխային գեղալաձաւով՝ գործի հետ ժանօթացնելու համար: Մի ուրիշը մի մեծ հանքի ձեռնարկելով իւր 11 և 12 տարեկան երեխաներին թողնում է սիգարներ և լրագրեր ձախելու: Աչտպիսով մի սերնդի չաջողութիւնը կամ ձախտրղութիւնը քիչ ներգործութիւնն է ունենում վտապաչի վրա: Միլիոնատիրոջ և բանտրի որդիք սկսում են միկնոչն կերպով՝ չանձնած իրանք իրանց, իրանց անհատական ոչժերին, սեպչական եռանդին, անձնական փորձառութեան: Ահա այն միակ հանգամանքը՝ որի վրա ուշաղրութիւնն են դարձնում և՛ փոխ տուղ սեղանաւորը և՛ մարդու գնացող աղջիկը: Վերցրած գրաւի վրա այնքան ուշաղրութիւնն չի դարձնում, որքան փոխ աւնողի անձի վրա. իտիական գրաւականը մարդ է և ոչ թէ հողը, որի հեկտարը, աչտպէս թէ՛ այնպէս, միայն 16¹/₂ Փր. արժէ: Նոչն սեակէտով առաջնաղրում է և ամերիկուհին: Իրան հոտամուտ եղողներին, իրան փեսացու հանգիստացողներին նա նախապատուութիւն է տալիս այնպիսի մեկին, որը

1) Ինչպէս հայերիս մէջ!

իւր կարծիքով ամենաաչքաբացն է, ամենալարմարւողն է, ամենաձկունն է, ամենազօրեղն է, որի աչքերը վառվռուն են, որի քայլածքը արագ և վստահ է, որի վճռականութիւնը բուրբական է, որը խոստանում է չաջողութիւն: Մինեւոյն ժամանակ ամերիկեւնի օրիորդը ուշադրութեան չի աւելում ոչ իւր օժիտը, որը զրօյլ է հաւասար, ոչ էլ տարիքը և կարողութիւնը իւր հօր, որը շարունակ իւր գործերը լայնացնելու, մեծացնելու, իւր հպարտութիւնը և գործելու եռանդը ամենամեծ չափով գոհացնելու մասին է մտածում:

Ամերիկացին իրան երբէք չի սահմանափակում որ և է տեղի մէջ. նա նոյնպէս մենակ է և՛ Չիկագոյում և՛ իւր հիւրանոցում և՛ իւր գաշտավայրերում. նա երբէք չի մտածում բնակութիւն հաստատել մի սան մէջ, որը նա կը թողնի իւր ժառանգներին, ուր կը չաւերժացւի նրա վաշտակը և ոչ էլ մտածում է իւր կեանքի օրերը հաստատուն հիմքի վրայ դնել. Արեւմտեան Ամերիկայում նրա բնակատեղին թւահամարած տախտակտակադին մի շինութիւն է, որը կարելի է ցանկացածի պէս կամ մեծացնել կամ նոյն իսկ տեղափոխել: Նթէ այդ սնակը կարելի—այդ կը լինի այսքան դոլլարի մի կորուստ՝ և ուրիշ ոչինչ. 3 օր բաւական է հնի նմանը մի նորը կառուցանելու (աւելի ուղիղ ասած՝ կազմելու) համար: Ամերիկացու համար, ասում է de Rousiers'ը հոմը¹⁾, օջաղը է այն տեղը, ուր որ նա գտնւում է այս իսկ բուրբին, բայց որի տէրը, իշխանը ինքն է» և ուր նա պաշտպանւած է զբախ ամեն մի շոշափումից, չարաբերութիւնից: Նւ ամերիկացին ոչինչ այնքան դրաւիչ և ախորժիտելի չի գտնում, քան երբ նա վերադառնում է գրասենեակից ընկնում իւր սուրճի ձեռքի մէջ օրօրում, սաները գնելով բուխարու բրայ և եղանակում. Home, sweet home, ալիսնքն՝ ինչքան լաւ է չը լինել ուրիշներին այլ իրա մօտ:

Ամերիկացու օտար են եւրոպական այն տիպերը (մանրավաճառի, գործակատարի և այլն), որոնք ձախտադրական հաստատութեամբ իրանց ամբողջ կեանքը սահմանափակում են որոշ չրջանակներում, որոշ գործողութիւններ կատարելով մինչև կեանքի վախճանը: Ամերիկացին ունի մի առաջնորդող իզէալ, որին նա ձգտում է համնելու և այդ իզէալն է՝ ապացուցանել, որ մարդս տէր է գործելու զօրութեան ամենամեծ չափին,—գօրութեան, որը այստեղ, Ամերիկայում արժանաւորութիւն է կազմում մարդու համար: Վիցուք կրծքով մի հլւանդ միլիօճատէր ձմեռը անցնում է Ֆլորիդայում: Ճաշին նա տեղեկանում է իւր սեղանակիցներից թէ մի ինչ որ հանք բարձի թողի է արւած. իսկոն նա համաձայնութիւն է կապցնում, կապում պաղմանը և ահա մի նոր գործ ծնունդ է առնում:

1847 թւին Ամերիկայում չիւշում էր միայն մի մարդ, որի կարողու-

¹⁾ Home—տուն, հայրենիք, օջաղ.

Թիւնը հասնում էր 25 միլիոն ֆրանկի: Այսօր դրանց թիւը հասնում է հազարների—հետեւեալ ցուցակի համաձայն.

250 հոգի ունին	100 միլիոն ֆր.	ուրեմն մօտ	25 միլիարդ
500 " " "	50 " ֆր մինչև	100 միլ.	25 "
1,000 " " "	25 " " "	50 "	25 "
2,500 " " "	12 ¹ / ₂ " " "	25 "	31 "
7,000 " " "	5 " " "	12 ¹ / ₂ "	35 "
20,000 " " "	2 ¹ / ₂ " " "	5 "	50 "
31,250 հոգի տէր են առնւազն			191 միլիարդ

Ֆրանկի կամ ուրիշ խօսքերով երեք հինգերորդականին ամերիկական ամբողջ հարստութեան, որը գնահատուում է քիչ աւելի քան 300 միլիարդ ֆրանկ:

Այդ աղիւսակը լրացնելու համար դենք նաև հետեւեալ անունները իրանց կարողութիւններով.

Նոր վախճանւած Ջէյ. Գուլլը՝ 350 միլ. ֆր. Rockefeller՝ նոյնքան Blair՝ նոյնքան, Ստանդֆորդը, Հեօնտինգտոն. Կառնեջի, Կոկս, Դրեկսել—ամեն մէկը 250 միլիոնով և այլն: Սակաջն շարունակենք:

Ամերիկացին չի ստեղծում իւր համար որոշ սահմաններ, չի բաւականանում իւր զրութեամբ, չի ձուլում մի կազապարի մէջ. նա անընդհատ աշխատում է, և եթէ նա բանում է մի հանքի մէջ՝ նա հաւատում է որ հանքի իւր մշակած երակը ամենախորն է և ամենահարուստը. այդ հաւատը, այդ եռանդը, այդ սէրը, այդ հալինաօրութիւնը ն'ան դարձնում են մի հաւատարիմ պաշտօնեայ, մի կատարեալ ճշգրիտ մեքենայ: Առաւօտեան զարթնելիս նա «կուլ է տալիս» իւր նախաձաշիկը, («մանում») իւր շորերի մէջ, և «կախուկով» ձիաքարշից հասնում կամ գրասենեակը, կամ արհեստանոցը և աչտեղ կատարածը լինում է, ըստ վիճակագրական թւերի, առաւել՝ քան Անգլիայի, Բելգիայի, Ֆրանսիայի բանուորի արածը: Ամերիկացի բանուորը գերազանցում է բոլոր մշակներին իւր ուշիմութեամբ, իւր շարժւածքների արագութեամբ, ճշտութեամբ և, չընայած նրա վարձի թանկութեան, նրա արտադրածը աւելի էժան է նստում քան Եւրոպայի մշակների ձեռքով կատարածը: Եւ նկատւած է, որ ամերիկացի բանուորը կանոնաւոր բանելով հանդերձ՝ չի շտապում, ուստի և չի փոխտում և չի քրթնում: Այնպէս պատահում է մի արդիւք իւր ուշիմութիւնը—նա կանգ է առնում տուանց վատնելու իւր զօրութիւնը: Եւ երբ ամերիկացի մշակը հանգստանում է—նա հանգստանում է կարգին, ամսով չարտնակ հիւրանոցում մնալով՝ նա չի բացում իւր ստացած նամակները և ոչ էլ լրագիր կարդում. լուս, անխօս նա պառկում է թիկնաթուի մէջ՝ փակելով իսկ իւր աչքերը: Ճիշտ մեքենայի պէս, որը կամ գործում է, կամ միանգամայն դադարում առանց միջամեկեալ, կիսագործ զրութեան:

Ազգայնաբանական հարցերը հարցադրելու և հաստատելու համար 1) ժառանգականութիւնը, որի հիման վրայ ամեն մի ամերիկացի ունիցել է ազնայիսի մի նախնի, որը ինքն է կռել իւր բազմը, իւր զիրքը իւր բազմակերպում և իւր մտաւոր կարողութեամբ. 2) բնական ընտանեկանութիւնը, որի հիման վրայ առաջ է գնում միմիայն աւելի զօրեղը՝ աւելի ձկունը, աւելի չարմարւողը և 3) սեռական ընտանեկանութիւնը—քանի որ ամերիկոսն որի որդիները տղամարդկանցից սակաւաթիւ լինելով Արեւմտեան Ամերիկայում ընտրութիւն են անում և նախապատուութիւն տալիս միմիայն աչքաբացին և չաջողութիւն ունենալու ընդունակին:

Արթութիւնը իւր կողմից նպաստում է էլի աչք շաւղով: Գրեթէ մանկութիւնից ամերիկացի երեխան հեռացնում է իւր մօրից: Նա չի խնամում քնքշացնող, հողացող և հսկող միջնորդաբան մէջ: 14 տարեկան հասակում նա ազատ է, և իւր ծնողները ոչ պարտաւորութիւն և ոչ էլ իրաւունք ունին նրա վրայ: Նրանք չեն մտածում նրա մասին հոգալու, նրա համար արհեստ ընտրելու, նրան օժանդակելու, կամ պահելու: Հարուստի և չքաւորի որդիքը ազգայնաբանութեամբ են կռւել, դուրս պրծնել և չարմար առիթ որոնել ու գտնել, երկուսն էլ կազմում են իրական փորձի ուղղակի ներգործութեան տակ: Այս եթէ հարուստի որդին ժառանգում է իւր հօր հարստութիւնը—նա արդէն ընտելացած է լինում գործին և հօր թողած կարողութիւնը ծառայում է որդուն իբրև լծակ աւելի խոշոր ձեռնարկութիւնների համար: Բոլոր հանգամանքները նպաստել և զարգացրել են պատանուն առաջ բերելու իւր կամքը, իւր վճռակամութիւնը, սուրբացնելու իւր գրական գիտութիւնների պաշարը և նրբացնելու իւր չարմարելու ձիրքը: Ազգայնաբան 17 տարեկան պատանին գործի և գործելու համար արդէն պատրաստ մի տղամարդ է հանդիսանում Ամերիկայում:

III

Բայց լսենք մի ամերիկացու ¹⁾, որը Եւրոպայից ետ գառնալով պատմում է իւր ճանապարհորդութեան մասին: Նա հրճւում է խօսում Պարիզի խաղաղ փողոցների և նրա բնակիչների անհոգութեան և գոհունակութեան մասին: Գիւղում մշակելու տւանդական ձեռք, երկրագործական գործիքները իրան հետաքրքրում են իբրև հնութեան մի վաւերագիր ճիշտ աչնայէս՝ ինչպէս Սգիպտոսի մի սովորութիւն, կամ արօրի մի բեկոր Հոմերոսի կամ Վերգիլիոսի ստանաւորները մեզ վիշեցնող: Նա խոսում է իւր հայրենիքի և ազնայի լայնածաւալ կալուածքների մասին, կատարելագործւած երկրագործական գործիքների և մամուլի մասին չէնքե-

¹⁾ The American—par H. James.

րի մասին, Չիկագոյի 60 երկաթուղային կադարանների և հոկոյ նաւերի մասին աչն նոր արեւտագիտութեանը, որը կառուցանել կարողացաւ Բիւսկիլինի հակազական կամուրջը շուգտնի վրայով, որը Պիտտուրդի մօտերքին լուստուրում է գիշերի խաւարը ձուլարանների, վառարանների կրակների հետ և օղը բոցավառում է ծխուղ ձողաւոր ջահերի պէս: Եւ այս լախածաւալ գործարանների մօտ, ուր մեքենայի կոչը և միօրինակ գործողութեամբ պատրաստում են հագարաւոր օրինակներ աչն բոլոր իրերի, սրոնք անհրաժեշտ են մարդուս համար՝ նրա հագնելիքը, ոտնամանը և նրա տնիւրը—արզուօք գործելու եւրոպական ձեր համեմատութեամբ ամերիկանիւնի հետ չէ վիշեցնում ասիականին: Չինացի և հնդիկ արհեստաւորի նման եւրոպացի մշակը բանում է էժան. եւրոպացու նման որը իւր պինձեղէնը ստանում է Բենարէսից, իսկ փղոսկրը Սապրոնիաւլից:—Ամերիկացին ստանում է եւրոպացից նկարներ, կանանց շորեր, ձեռնոցներ, մի խօսքով աչնալիս բաներ՝ որոնք պահանջում են առանձին խնամք, իրեր՝ որոնք պահանջում են շինողի կողմից մի տեսակ նախաձեռնութիւն, ձաշակ, տաղանդ և համբերութիւն: Աչպէս, ամերիկացու կարծիքով, եւրոպացու կտտարածը չնչին է, աննշան է և ինքը եւրոպացին—անշարժ, մի ժառանգական կաղապարի մէջ ձուլած, սառած: Ճողովուրդը նրան թւում է մի սպէտ ամբոխ, իսկ բուրժուազիան՝ անկարող մտնելու կիանքի մէջ առանց մի տեսակ քրտութեան ենթարկելու, առանց նախապատրաստական բազմամեալ տեսական և աւանդական կրթութեան, բոլոր մտաւոր կարողութիւնը, ընդունակութիւնը սպառւելուց չետող, նման երիտասարդ Բրահմին, որի կրթութիւնը աւարտում էր նրա 36 տարեկան հասակում: Ամեն ինչ բարք ու վարքեր, արդիւնագործութիւն, կրթութիւն ցամեն ինչ պարզ ցոյց են տալիս ամերիկացուն, որ նա արեւելքումն է—կատանների մի երկրում, ուր նախնիք պատւի մէջ են, գերդաստանները ուժեղ, բարձրագիր գասերը հեշտասէր, ստորին ժողովուրդը թշաւաւ, արարողութիւնները, ձէսերը զօրաւոր, տէրութիւնը ամենակարող, մարդս ասին կողմից կապւած իւր միջնադարի հետ, կաշկանդւած իւր ուրոչն թերի զարգացման մէջ աւանդութիւններով և նախապաշարունակերով, որոնք նրան կապում են անցած-գնացած սերունդների հետ, որոնց նա պարտական է և իւր ատախանը և իւր գոյութիւնը»:

Ձեմտ ամերիկացու այս կարծիքները միաչն մատամբ են իրաւացի: Առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, այսքանը միաչն կարելի է ասել, որ ամերիկական հոշակւած նախաձեռնող ուղին, գործելու եւանդը, տոկոճութիւնը, չամառութիւնը և աչն չեն սահմանափակում բացառապէս նոր աշխարհով—այլ ալը չատկութիւնների հագարաւոր օրինակներ կարելի է գտնել նաև հին աշխարհի ամեն մի երկրում՝ Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում և աչն: Վերջապէս միթէ, այսօրւալ ամերիկացի-

ները երեկազ գաղթականները չեն հին աշխարհից, ուր նրանք աէր էին նոյն ոգու, բայց որը սակաջն հնարաւորութիւն չէր գտնում իրան չալտնի կացուցանելու իւր ամբողջ գորութեամբ և հէնց որ չալտնեց գործելու ասպարէզ — այլ նախաձեռնող ոգին թափ տւեց իւր թեւերը և եռանդի ու տոկունութեան ասպացուցներ տւեց արդիւնագործութեան ամեն մի ճիւղում: Անհրաժեշտ էր միայն արգաւանդ հող — այլ հողը եղաւ նոր աշխարհը և հին աշխարհից Ամերիկայ եկողները աչտուան օրս արդէն չափից դուրս բարձրից են նալում իրանց հին հալրենիքի վրայ: «Ամերիկացիներ» լիքն են Եւրոպայում — միայն թէ հին աշխարհը իրաւ որ սնի առանձին պաշտաններ շնորհիւ իւր պատմութեան և հէնց այլ կապերի բացակայութեան շնորհիւ է, որ Նոր Աշխարհում հաստատուած եւրոպացիները աւելի բազմաւոր գրութեան մէջ են այլ կողմից, քանի որ հնարաւորութիւն ունին նոր հիմունքների վրայ հաստատել իրանց նոր հալրենիքի կազմակերպութիւնը:

Ոչ կարմրամորթ, ոչ էլ սեամորթ Ամերիկալին են պարտական ալժմեան ամերիկացիները իրանց ներկալ քաղաքակրթութեամբ, ալ միմիայն հին Եւրոպալին, որի հաւաքական քաղաքակրթութեան հետեանքն է միայն Ամերիկալի ներկալ քաղաքակրթութիւնը: Կարելի է միայն ասել, որ եանկլիների մեծամտութիւնը, ինքնահաւանութիւնը առաջ է եկել շնորհիւ անդադար չաջողութեան և որ նրանք այլ դեռ չարունակող չաջողութիւններից չլացած՝ իրանք իրանց ինչ ասես չեն կարծում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պարլամենտական ընտրութիւնները Վերմանիայում.—Պրոգրեսիստ և սոցիալ-դիմոկրատ կուսակցութիւնները.

Ներկայ յունիս ամսին է որ Վերմանիայում կատարւեցին ընդհանուր ընտրութիւնները կայսերութեան պատգամաւորների ժողովի (նախստագի) համար: Ռաջիստագը լուծւել էր իւր չորսամեակը լրացնելուց առաջ, որպէս յայտնի է, այն պատճառով, որ նա, ձայների մեծամասնութեամբ, մերժել էր ընդունելու կառավարութեան կողմից առաջարկած զինւորական նոր օրինագիծը: Աւերջինովս որոշուած էր զինւորական ծառայութեան տեղութիւնը երկու տարի (այժմ երեք տարի է), բայց զօրքի թիւը այժմեանից նշանաւոր չափով աւելացնուած էր (մինչ 70,000 հոգով), հետևապէս պահանջուած էր նաև աւելի մեծ ծախս: Այդ բանին ընդդիմացաւ. ռաջիստագը: Այն ժամանակ կառավարութիւնը, իւր կողմը գրաւելու համար կղերական կուսակցութիւնը, սորա անդամ Քիւնէի առաջարկած փոփոխութիւնները մտցրեց օրինագծի մէջ. բայց նաև այդ ձևով օրինագիծը չընդունւեց, որի հետևանքը եղաւ ռաջիստագի լուծումը նոր տոմարով մայիսի սկզբներում:

Ռաջիստագի համար նոր ընտրութիւնները, ուրեմն, պէտք է կատարւէին գլխաւորապէս զինւորական նոր օրինագծի նկատմամբ: Հասկանալի է թէ որքան լարւած ու շարժութեամբ քաղաքական աշխարհը հետևում էր Վերմանիայի կուսակցական կուլի ընթացքին և որպիսի անհամբերութեամբ սպասուում էին ընտրութիւններ, հետևանքներին:

Քաղաքական մամուլը իւր կողմից զուշակութիւններ էր անում ասպագայ ընտրութիւնների հետևանքների մասին, նաչած թէ ամեն

մի թերթ ինչպէս էր հասկանում զբուժիչները, կուսակցութիւնների համեմատական ոյժերը և ժողովրդի մեծամասնութեան տրամադրութիւնը: Գուշակութեան հրապօրյուններից զերծ չմնացինք և մենք: Արդ, մինչդեռ լրագիրները գրեթէ միաբերան գուշակում էին կառավարութեան պարտութիւնը, մենք մեր կարծիքը ձևակերպեցինք այսպէս. «Գերմանական կառավարութիւնը լիաջոյս է, որ ազգը կ'ընտրի մի ռաջիստագ, որը կ'ընդունի զինւորական օրինագիծը: Մենք հաւատում ենք, որ ընտրութիւնների հետեանքը այդպէս կը լինի, այսինքն կը լինի յօգուտ կառավարութեան: Բայց միևնոյն ժամանակ պէտք է ասենք, որ ազգի այդպիսի վարմունքի մէջ չպէտք է տեսնել մեծ հաւատ ղէպի կառավարութիւնը, այլ թերևս միայն ցանկութիւն՝ կառավարութեան պատիւը պահպանել և խոյս տալ մի կոնֆլիկտից, որի հետեանքները անհաշուելի կը լինեն»:

Մեր կարծիքը այժմ արդարացրած ենք տեսնում. ընտրութիւնները կատարեցին նոր տոմարով յունիսի 16-ին և 22-ին, և նոքա ամիս թէև նւազ բայց և այնպէս առաւելութիւն յօգուտ զինւորական օրինագծի:

Պէտք էր ընտրել 397 պատգամաւոր հին տոմարով յունիսի 3-ին (նոր տոմարով 15-ին), այդ օրը մինչ 180 վիճակներում ընտրութիւնները շուին վերջնական հետեանք. այնպէս որ միայն մի շաբաթ յետոյ կատարւած կրկնընտրութիւնների հետեանքներով կարելի եղաւ որոշել ապագայ ռաջիստագի ընդհանուր կերպարանքը:

Այժմ արդէն հաստատ է որ կառավարութեան զինւորական օրինագծի համար կայ անպայման մեծամասնութիւն, այն է 205 մինչև 210 հոգի ընդդէմ 187—192 հոգու:

Բայց այդ հետեանքը միակ չէ սպառում կատարւած ընտրութիւնների կարեւորութիւնը: Ներկայ տարւայ ընտրութիւնները նշանաւոր տեղ պէտք է բռնեն Գերմանիայի ընտրողական և կուսակցական պատմութեան մէջ շնորհիւ այն մեծ պարտութեան, որ կրեց գերմանական լիբերալիզմը և այն մեծ յառաջդիմութեան, որ արեց սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը: Բայց նախ առաջ բերենք ընտրութիւնների հետեանքները ըստ կուսակցութիւնների:

Ընտրւած են՝

93 հոգի կղերական (Կենտրոն):

- 75 » պահպանողական (կոնսերւատոր):
 53 » նացիոնալ—լիբերալ:
 44 » սոցիալ—դեմոկրատ:
 25) » ազատախոհ ժողովրդական:
 14) » ազատախոհների միութիւն:
 23 » Կայսերութեան կուսակցութիւն (ռաջխապարտայ):
 19 » լեհացի:
 17 » հակա-հրէական (անտիսեմիտ):
 11 » հարաւային Պերմ. ժողովրդական կուսակցութիւն:
 10 » էլզասցի:
 *7 » վեյթ:
 2 » բաւարական դիւղական միութիւն:
 1 » դանիացի:
 3 » դեռ ևս անյայտ:

Հասկանալու համար ազատախոհ (ֆրայզլիննիզ) կուսակցութեան պարտութեան մեծութիւնը, պէտք է ասենք, որ այդ կուսակցութիւնը զուրս էր եկել նախկին ընտրութիւններից 1890 թ. 66 հոգով, մինչդեռ այժմ նա ունի միմիայն մօտ 40 հոգի: Կորա հակառակ սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը, որ 1890 թւականի ընտրութիւններից զուրս եկաւ մօտ 25 հոգով, այժմ արդէն ունի 44 ներկայացուցիչ գերմանական ռաջխատագում:

Եւզենիոս Րիխտերի ազատախոհ կոչւած կուսակցութեան ջարդը աւելի ևս զգալի կ'երեւայ, եթէ ինկատ առնենք այս հանգամանքը, որ ընտրութիւնների գլխաւոր օրը, մեր տոմարով յունիսի 3-ին, նա գրեթէ ջնջւած էր և միայն կրկնընտրութիւնների ժամանակ նա կիսով չափ ազատեց, շնորհիւ այն աջակցութեան, որ նա ստացաւ միւս կուսակցութիւններից:

Այդ կուսակցութեան վիճակը ներկայացնում է մեծ հետաքրքրութիւն այն սկզբունքների պատճառով, որոնց ամենազուտ արտայայտիչն է հունդիսացել նա սկսած 60-ական թւականներից: Այդ ժամանակ նա կոչոււմ էր պրոգրեսիստ (յառաջդիմական) կուսակցութիւն, որի գրոշակն էր անհատական ազատութեան սկզբունքը քաղաքացիական կեանքի մէջ. իսկ քաղաքականի մէջ նորա ձգտումն է եղել կատարեալ պարլամենտականութիւն, այսինքն ազգի պատ-

դամաւորների բացարձակ գերիշխանութիւնը, որ կապուած է թա-
 գաւորի իրաւունքների սահմանափակումների հետ: Պրոգրեսիստ կու-
 սակցութիւնը եղել է պաշտպան Գերմանիայի միութեան. բայց
 այս զանազանութեամբ, որ նա չի ուզեցել զորա համար զոհել
 պարլամենտի հեղինակութիւնը: Յայտնի է որ Բիսմարկը Գերմա-
 նիայի միութիւնը իրագործելու համար «ցերեմոնիա» չի արել պար-
 լամենտի հետ և չենել է աւելի թագաւորի վերայ. և զորա հա-
 մար զօրքը վերակազմելու խնդրում, 60-ական թ.ականներին, կա-
 ռավարութիւնը, սահմանադրական կարգը խախտելով, իրագործեց
 իւր զինւորական ծրագիրը, հակառակ պարլամենտի. և միմիայն
 յետոյ, 1866 թ.ականի յաջող պատերազմից յետոյ, Բիսմարկի կա-
 ռավարութիւնը, «չեախն թւով» պարլամենտից ստացաւ վաւերացումն
 աջն բոլորի, ինչ արել էր կառավարութիւնը առանց պարլամենտի:
 Բայց և այդ պէպքում պրոգրեսիստները ընդդիմադրական դիրք բռնե-
 ցին, մնալով փոքրամասնութեան մէջ: Պրոգրեսիստները նաև յաջորդ
 տարիներում բռնեցին ընդդիմադրողի դիրք ամեն անգամ, երբ զըն-
 լում էր երկրի զինւորական պաշտպանութեան և հզօրութեան խնդիր:
 Պրոգրեսիստները, որոնց չեկավարն է Բիստերը և որոնց մէջ մեծ
 դիրք է բռնում ամենքիս ծանօթ պրոֆ. Ֆրիստովը, միշտ հակա-
 ռակ են եղել զօրքի աւելացման և միշտ պահանջել են որ զինւորա-
 կան ծառայութեան տևողութիւնը կրճատուի, յուսալով թէ այդպի-
 սով զօրքը կը մտանայ քաղաքացիական զօրքի կամ միլիցիայի փոխին:
 Միջանկեալ պէտք է ասեմ, թէ և մեր այժմեան առարկային չի
 վերաբերում, բայց ամենքիս համար հասկանալի հետաքրքրութեան
 պատճառով, որ 60-ական թ.ականների գերմանական պրոգրեսիստ
 կուսակցութեան հետևողն էր նաև յայտնի հայ հրապարակախօս
 հանգուցեալ Գրիգոր Արծրունին, որը իւր հրապարակախօսութեան
 մէջ անց էր կացնում միանգամայն նոյն հայեացքները թէ անտե-
 սական ու սոցիալական խնդիրներում, թէ կրօնական-եկեղեցական և
 թէ քաղաքական ամեն կարգի խնդիրներում: Ժամանակով, եթէ մենք
 զբաղւելու լինենք Արծրունիով, կ'աշխատենք այդ կէտը պաշտածօրէն
 լուսաբանել, իբրև մի բան, որ առաջին անգամ մեզինց է նկատ-
 ւում, և որ հեռակապէս, կարծում ենք, անյայտ է մնացել մեր ժա-
 մանակակիցներին: Այժմ անցնենք:

Ինչ վերաբերում է քաղաքական խնդիրներին, ազատասոհ հուսակցութեան ժողովրդականութիւնը այնչափով նւագում էր, որ չափով Բիսմարկը յաղթանակներ էր տանում: Բայց միայն արտաքին քաղաքականութիւնը է է ու միայն զինուորական խնդիրները, սրանց մէջ Բիսմարկի պրոգրեսիստ կուսակցութիւնը պարտութիւններ էր կրում: Իբրև մոլեռանդ պաշտպան անհատական ազատութեան, նա մաքառում էր պետութեան միջամտութիւն քարոզող վարդապետութեան դէմ սոցիալական ու տնտեսական խնդիրներում: Իսկ այդ վարդապետութիւնը յատուկ է սոցիալիզմին: Այսպիսով գերմանական պրոգրեսիստ կուսակցութիւնը հակոտնեան էր դեռ ևս թոյլ սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան: Բայց Բիսմարկը իւր սուր աչքով ըմբռնեց թէ որքան վտանգաւոր է բանւոր դասակարգի մասին հոգսը թողնել սոցիալ-դեմոկրատիային. Բիսմարկը, հալածելով այդ կուսակցութիւնը, աշխատեց հաշտեցնել սորա պահանջները բուժուագիւցի կամ կապիտալիստների պահանջների հետ, հետևելով մի քաղաքականութեան, որը սկսեց կոչել պետական սոցիալիզմ, Բիսմարկը իբր զլիսաւոր ներկայացուցիչ այդ նոր քաղաքականութեան: Այդ ժամանակից է որ Գերմանիայում սկսում է կառավարութիւնը ծրագրել մի շարք օրինադժեր յօգուտ բանւոր դասակարգի, միացած պրոտեկցիոնիզմի հետ, մի քաղաքականութիւն, որ իւր ազդեցութիւնն արաւ Եւրոպայի բոլոր միւս պետութիւնների վրայ, սոցա մէջ նաև Ռուսաստանը: Սօթանանական թւականների երկրորդ կէսից սկսած տնտեսական և սոցիալական քաղաքականութեան այդ շրջանը տևում է և իշխողն է նաև այսօր և դեռ երկար կը շարունակի: Արդ, մի ժամանակ պրոգրեսիստ կոչւած կուսակցութիւնը, հաւատարիմ իւր սկզբունքներին, նոյնքան հակառակորդ հանդիսացաւ Բիսմարկի տնտեսական ու սոցիալական քաղաքականութեան, որքան նա դէմ էր նորա արտաքին քաղաքականութեանը: Պրոգրեսիստները, իբրև բուժուագիւցի ներկայացուցիչներ, աւելի ու աւելի կորցրին իրանց ոտի տակի հողը, շարունակելով մնալ լոկ յարձակողական դիրքի մէջ և շարունակ ընդդիմադրելով կառավարութեան ծրագիրներին յօգուտ բանւոր դասակարգի: Գորա հակառակ այսպէս կոչւած նացիոնալ-լիբերալները, որոնց հետ պրոգրեսիստները ամենից շատ աւնչութիւն ունէին,

աւելի հակեցին կառավարութեան կողմը, այնպէս որ անհնարին գտան դաշնակցութեան մէջ մտնել պրոգրեսիստների հետ, որոնք հետևում էին անապայման և սիստեմային ընդդիմադրութեան քաղաքականութեան: Բիխտերի կուսակցութիւնը աւելի ևս հեռացաւ նացիոնալ-լիբերալներից և սկսեց կոչել ազատախոհ (ֆրայզիմանիզէ) կուսակցութիւն, իսկ վերջինս ապա բաժանւեց աջ ու ձախ ճիւղերի, ձախը, ամենամեծը, առաջնորդութեամբ Բիխտերի, աջը, փոքրագոյնը՝ առաջնորդութեամբ Բիկերտի: 1887 թւականի ընտրութիւններից կուսակցութիւնը դուրս եկաւ միայն 32 հոգի ներկայացուցիչներով: Բիամարկի հրաժարականից յետոյ 1890-ին կուսակցութիւնը շատ զօրեղացաւ, ունենալով ռալստագում 66 անդամ, և ահա այժմ, յունիսի 3-ի ընտրութիւններին, նա համարեա իսպառ ջնջւեց և նոյն իսկ Ծիրխովը չընտրւեց, և միայն կրկնընտրութիւններին նա կարողացաւ ունենալ առաջւայ ունեցածի դրեթէ կէսը, մտաւորապէս այնքան, որքան նա ունէր 1887-ին:

Բիխտերի կուսակցութեան ստացած ջարդը մեծ նշան է ժամանակի ողու: Անկասկած է, որ Բիխտերի կուսակցութեան ծրագիրը այլ ևս չի կարողանում բաւականութիւն սալ ժամանակակից պահանջներին: Նախկին եւրոպական լիբերալիստը այսպիսով ձգնաժամի մէջ է. և Բիխտերի ազատախոհ կուսակցութեան պարտութիւնը ներկայ յունիսի ընտրութիւններին, մեծ յայտարար էր նոր սոցիալական հոսանքների ուժեղանալուն:

Որքան նշանաւոր է պրոգրեսիստների պարտութիւնը, նոյնքան և աւելի ևս նշանաւոր է սոցիալ-դեմոկրատների յաղթութիւնը: Այդ երկու կուսակցութիւններն էլ պատկանում էին ընդդիմադրութեան, օպոզիցիային. բայց մինչդեռ առաջինը ամենուրեք, միւսը յաղթող դուրս եկաւ: Դա ապացոյց է, որ լոկ ընդդիմադրութեան պատճառով չէ որ սոցիալ-դեմոկրատները յաղթեցին, այլ նրանով, որ նոցա ծրագրի մէջ կայ աւելի դրական էլեմէնտ, քան պրոգրեսիստների ծրագրի մէջ:

Սոցիալ-դեմոկրատ կուսակցութիւնը Գերմանիայում, որպէս անսանք, այժմ կ'ունենայ ռալստագում 44 ներկայացուցիչ, որքան

նա երբէք ունեցած չէ: Այդ կուսակցութիւնը, որ շատ նշանաւոր դեր է կատարում Գերմանիայում, իւր սկիզբը առնում է նոյնպէս 60-ական թւականներից, և առաջ բաժանւած էր երկու ուղղութիւնների. գոցանից մէկը սերում էր Ասալից, իսկ միւսը դոնում էր Աիբինէխտի և Բեբելի ղեկավարութեան ներքոյ: Այդ երկու ուղղութիւնները, սակայն, միացան 1875 թւականին, սոցիալիստների կոնգրեսում, որ կայացաւ Վոթա քաղաքում. և այդ ժամանականից կուսակցութիւնը միացած և համերաշխ զործում է նոյն Աիբինէխտի և Բեբելի գլխաւոր ղեկավարութեամբ: Եւ կուսակցութիւնը շուտով սկսեց մեծ ծաւալումն ստանալ Գերմանիայում, մանաւանդ բանւոր դասակարգի և ինտելիգենցիայի մի մասի մէջ: Այդ կուսակցութեան յաջողութիւնների դէմն առնելու համար Բիսմարկը, 70-ական թւականները երկրորդ կիսում, որպէս վերն է նկատեցինք, մշակեց սոցիալական բարենորոգումների մի ծրագիր, իսկ միւս կողմից սկսեց հալածել սոցիալիստներին, 1879 թւին առաջարկելով և ռայխստագից ընդունել տալով այն օրէնքը, որով սոցիալիստների ժողովները և ադատ պրոպագանդան արգելւում էին: Այդ օրէնքը որ սկզբում, միայն տարով էր տրւած, յետոյ 1883-ին և 1887-ին նորից առաջարկեց և ընդունեց յաջորդ չորս տարւայ համար: Բիսմարկի հեռանալը կանցլէրութիւնից 1890 թ. ի միջի այլոց եղաւ տարաձայնութիւնների պատճառով այդ օրէնքը երրորդ անգամ երկարացնելու նկատմամբ: Երիտասարդ կայսր Վիլհելմ II հակառակեց այդ դիտաւորութեանը և օրէնքը վերացեց աշնանը 1890 թւականի, որից յետոյ սոցիալիստները նորից ձեռք բերեցին իրանց նախկին ազատութիւնը: Բայց պէտք է խոստովանել և այն, որ այժմ սոցիալիստները շատ աւելի օրինական ուղղութեամբ սկսեցին զործել քան առաջ էր, և, ինչպէս հետեւանքները ցոյց տւին, աւելի ևս մեծ ժողովրդականութիւն ձեռք բերեցին մասսայի մէջ:

Սոցիալիստների զօրեղանալը պէտք է հետեւցնի մի աւելի սերտ դաշնակցութիւն չափաւոր պահպանողականների և նացիոնալ-լեբերալների ու այլ կուսակցութիւնների մէջ: Եւ թերևս այդ դժւար հանգամանքից կարողանան կղերականները իրանց օգուտը քաղել:

Յ. Գ. — Յուլւածը զրելուց յետոյ Բերլինից ստացեց յուլիսի 2-ից հետեւեալ հեռագիրը. »Տալիստագը 198 ձայնով ընդդէմ 187-ի

ընդունեց զինևորական օրինագծի առաջին յօդւածը:» Այսպիսով կառավարութիւնը, որպէս տեսնում էք, հասաւ իւր նպատակին: Յաջորդ օրերում զինևորական օրինագիծը ընդունեց ամբողջապէս:

Ն.

Ֆրանսիական պարլամենտը, օրինական ժամանակամիջոցը լրացած լինելով, նոյնպէս լուծեց և ընտրութիւնները նշանակւած են կատարելու օգոստոսի 22-ին:

Ներկայ յունիսին Ֆրանսիական կուսակցութիւններից նորագոյնը՝ Բուլանժականը՝ վերջնականապէս լուծեց խաչառակ կերպով: Խաչառակութեամբ սկսեց—խաչառակութեամբ վերջացաւ, որպէս և պէտք էր և սպասելի էր...

Ն.

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿԱՌՈՂԻԿՈՍ ԱՄՆԵԱՅՆ ՀԱՅՈՑ ՄԿՐՏԻՉ: Խրիմեան Հայրիկը, ազգի առաջին ընտրելին, հաստատուած է Կաթողիկոս ամենայն հայոց: Հաստատուած լինելը իմացեց լոնիսի 13-ին կիւրակի օր կատարուած պատարագի ժամանակ, ուր Մկրտիչ Կաթողիկոսի անունը առաջին անգամ վիշեց: Նորին Վեհափառութիւնը ս. Էջմիածին հրաւիրելու համար Երուսաղէմ ուղևորեցին Տէր Տեղակալից նշանակուած հոգևոր պատւիրակները՝ Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեան և Սարգիս եպիսկոպոս Տէր-Գալստեան, ուղեկցութեամբ Եփրեմ վարդապետի և Մեսրոբ արքեպապի: Պատւիրակները, ս. Էջմիածնից դալով, մնացին Թիֆլիսում մի քանի օր, սպասելով Բաթումից-Պոլիս գնացող շոգենաւի ուղևորելուն: Թիֆլիսից նոքա դուրս եկան լոնիսի 25-ին շաբաթ օր:

ՎԵՀԱՓԱՌ: ՀԱՅՐԻԿԻ ՀԵՌԱԳԻՐԸ 1): Էջմիածին Երուսաղէմից, Տեղակալ Երեմիա եպիսկոպոսին: Ասուած, որ յաջողէ զամենայն յամենայնի, նա կամեցաւ ՎԵՀ ԿԱՅՍԵՐ ձեռօք հաստատել ազգին ընտրութիւնը: Սորա համար փութացին ընդհանուր ազգայինք ամեն դատակարգէ շնորհաւորել Կայսերական վաւերացումն: Ձկարենալով ամեն բունն զգացմանց մի առ մի պատասխանել, լուազոցն դատեցի մի հեռազրով վճարել **ՄԵՐ** հայրական պարտիք, յայտնելով իղձ հոգեոյս. նախ օրհնել երկնաւոր Հայր, առ որ կաղթէի. եղիցին կամք Քո. օրհնել ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ կեանքը, որ պսակեց ժողովրդին հաւատք. օրհնել ազգ,

Այս հեռագիրը ստացանք ս. Էջմիածնի «Արարատ» ամսագրի խմբագրութիւնից, առանձին ապաճ թերթիկով:

որ հաւատարիմ մնաց եկեղեցու աւանդութեան: Հեռազիրս հրատարակել տւէք «Արարատ»-ի և լրագրաց միջոցաւ:

Հ Ա Յ Բ Ի Կ

«ՄՈՒԲՆ»-Ի ՅՈՒԼԻՍ ԵՒ ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻ համարները, ըստ սովորականին, լոյս կը տեսնեն միացած: Հաւանականօրէն ամառուայ միացեալ համարները լոյս կը տեսնեն Օգոստոսի 15-20-ին:

ԱՐՄԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ վէպը պ. Շիրվանզադէի վերջանում է «Մուրճ»-ի ներկայ համարում և շատով լոյս կը տեսնի նաև առանձին հատորով:

ՀԱՅՐԵՆԻՔ, Պոլսի չափնի լրագիրը, որ հրատարակում էր պ. Արփիար Արփիարեանի խմբագրութեամբ և պ. Յովհաննէս Շահնազարի անօրինութեամբ, վերստին դադարեցրած է Տաճկական կառավարութիւնից: Հալքենիքը չառաջադիմական ուղղութեամբ համակրելի մի թերթ էր և իւր միշտ թարմ ու առողջամիտ լոզւածներով ընդունակ երիտասարդութեան ձգտող մասի համակրութիւնը վաստակելու: Յալտնելով մեր համակրանքը դէպի Հալքենիքի ցալժման գործունէութիւնը, լոյս ունենք որ նորա խմբագրութիւնը չի վհատուի դժբաղդ գէպքից ապագայի գործունէութեան համար:

ԾԱՂԻԿ շարաթաթերթը, որ պատկանում է խաւարամիտների բանակին, «Մուրճի» գէժ պարսաւ ուղղելու զիտաւորութեամբ դրած մի լոզւածում, («Մուրճ սոսագիրը» խորագրով, տես «Մաղիկ» 1893, № 9) հակառակ իւր բարի կամքին ստիպւած է խոստովանել, որ «Մուրճ»-ում «ընկերային նիւթերու վրայ (անշուշտ երբեմն!) կերևին ընտիր հեղինակութիւններ...»

Յիշեալ թերթը նոյն ալջ լոզւածում, ամեն երկրների խաւարամիտներին չատուկ մի եղանակով, միացած հալք և սրդի Մամուրեանների հետ, ջանում է Չմիւռնիայի հալոց վարժարանները բարենորոգող պ. Յ. Տէր-Միրաքեանի վարկը նրանով վաչր գցել, որ, իբր թէ մի ինչ որ ձեռնածուի (Քոկուանիկ) վկայութեամբ, պ. Յ. Տէր-Միրաքեանը մի տառասխալ է արել գերմաներէնում...

ՊՈՒԼՍ, մեր թղթակից պ. Գիտակին: Ձեր նամակը ցաւօք սրտի չկարողացանք հրատարակել: Փերես չաջուղի մնզ տպել դալ համարում: Շարունակեցէք սակաջն:

† ԿՈՒՉԱՆԻ, Միխաիլ Նիկողոսեւիչ, Անդրկովկասի գիւղացիական գործերի ասեանի նախկին պետը, վախճանեց Ռուսաստանում: Հանգ-

զուտեալը լուսնի մի քանի փնակատելի վաստակներ Անդրկով-
կասի կալածատիրութեան մասին:

† ԳԻ ԳԸ ՄՈՊԱՍԱՆ, մէկը Ֆրանսիական ամենաժողովրդական վարստան-
ներից, հեղինակը բազմաթիւ վէպերի, վախճանեց լուսնիսին,
խելագարութեան զրութեան մէջ:

ՀԱՅԿԱԿԱՆ, ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ: Ներկայ 1893 թւականի
ամառաւ ամիսներում բացւելու է Թիֆլիսում Հայոց Բարեգոր-
ծական Ընկերութեան մատենադարանը: Մատենադարան հիմնելը
լիջեալ ընկերութիւնը վճռել էր զեռ ևս երեք տարի առաջ,
որոշելով բացումը վտաճգել մինչև որ ամեն տարի 800 ուսույլի
վերապահելով՝ երեք տարւալ ընթացքում կը դուանալ 2400
ուսուցիչ գումարը, որով և պէտք է սկսէր գրադարանի հիմն-
արկութիւնը: Առաւարտութիւնից թուլաւութիւնը ստացւեց
1892 թւականին, իսկ այժմ ահա շատով պէտք է բացւի
գրադարանը: Գրադարանը սնենալու է երկու մաս, որոնցից
մէկը լինելու է հիմնական գրադարան, իսկ միւսը լինելու է
փոխատու գրադարան: Հիմնականի համար ձեռք ևն բերելու
բոլոր հաշերէն գրքերը, անխտիր, ապա առհասարակ արեւելա-
գիտութեան վերաբերեալ գրքերը օտար լեզուներով: Հիմնական
գրադարանից օգուել կարելի կը լինի գրադարանի մէջ և,
բացի որոշ գէպքերից, ոչ մի գիրք չպիտի գուրս տուի: Փո-
խատու գրադարանը կազմելու է հանրակրթական գրքերից
հաշերէն և օտար լեզուներով: Պարբերական հրատարակու-
թիւնները լինելու են թէ՛ հիմնականում և թէ՛ փոխատու մա-
սում:

Հիմնականում, բացի գրքերից, կընդունեն նաև հին
ձեռագրեր, ալբումներ, դրամներ, արձանագրութիւններ և այլն:

Բարեգործական Ընկերութիւնը ներկայ լուսնիսին կալաց-
րած նիստում ընտրեց եօթ հոգուց բաղկացած մի ցանձնա-
ժողով՝ Գրադարանի կանոնադրութիւնը մշակելու համար:
Յանձնաժողովի մշակած ծրագիրը կ'ենթարկուի ընդհանուր ժո-
ղովի քննութեան և քւէարկութեան: Բայց Գրադարանի պաշ-
տօնական բացումը աչնուամենայնիւ կը կատարուի կանոնա-
դրութիւնը հաստատուեց առաջ:

Արքը դժագրածի համեմատ մի գրադարանի հիմնելը
Թիֆլիսում հայոց Բարեգ. Ընկերութեան նշանաւոր գործերից
մէկն է, և որպէս այգլիսին՝ շնորհաւորում ենք Ընկերութիւնը
այլ օգտակար գործի համար:

ՎՐԻՊԱԿ, Սոջն համարում (№ 6) զետեղած պ. Լ. Մանուէլեանի ոտանաւորի վերնագրի տեղ պէտք է լինի երեք աստղանշան (***):

ՆՈՐ ՍՍՍՅԱԾ ԳՐՔԵՐ

- 1) „МОИСЕЙ ХОРЕНСКИЙ, въ новомъ переводѣ Н. О. ЭМИНА, съ примѣчаніями и приложеніями—Исторія Арменіи—Изданіе Лазаревск. Инст. Вост. Языковъ—„Этнографическій фондъ Н. О. Эмина“, выпускъ I. (Посмертное изданіе).—Москва, тип. В. А. Гатцукъ, 1893, գինն է 2 ռ., ուղարկելով 2 ռ. 25 կոպէկ:
- 2) ԷՖԵՐՍ, Գէորգ, փոխադրութեամբ Ս. Շապիրի և Թարգմ. Գրիգոր ՇԱՀ. ԲՈՒԴԱՂԱՆՆԻ.—Փարաւոնի աղջիկը, պատմական վէպ: Թիֆլիսի շ. շ. Բնկ. հրատարակութիւն: Թիֆլիս, տպ. Շարաձէ, 1893, գինն է 80 կոպէկ:
- 3) ԼՈՒՆԿԵԻԻՉ, Վ.—Հանրամատչելի բնախօսութիւն (13 նկարներով), ձեռագրից թարգմ. Կ. Գիւլնազարեան. Հրատարակեց Թիֆլիսի շա. շր. Բնկ. Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1893, գինն է 1 ռ.
- 4) CARRIÈRE A.—Novelles sources de Moïse de Khoren: Etudes critiques. Vienne, Imprimerie des Mechitharistes, 1893, գինն է աստրիական ֆլորին 2,50:
- 5) ՄԱՐԿ ՏԻԷՆ (Սամուէլ Կրեմէնս).—Իշխանն ու աղքատը (պատմական վէպ), թարգմ. Գրիգոր Շահբուղաղեան: Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի. 1893, գինն է 1 ռուբլի:
- 6) ՏԷՐ-ՄԻՔԵԼԵԱՆ, Արշակ, Գ. ր.—Հալատտանեայց եկեղեցին և Բլուզանդեան ժողովոյ պարագայք. պատմական չառաջադրութիւն (?) Մոսկւա, տպ. Մ. Բարխուդարեանցի, 1892, գինն է 1 ռ. 50 կոպէկ. (Արժանացած Իզմիրեանի Սահակ-Մեարդեան մրցանակի):
- 7) ՄՈՉԽՈՒԲԱՐԻՉԷ, Ա. Էլզուջա, վէպ.—Վրացերէնից թարգմ. Տ. Փիրումեանց: Թիֆ. շա. շր. Բնկ. հրատարակութիւն: Թիֆլիս, տպ. Վրաց. Հրատ. Բնկ. 1893, գինն է 45 կոպէկ:
- 8) ՔԱՄԱԼԵԱՆՑ, Ս.—Խարազի ազալ կամ երկու ախպերացեղ (հէքեաթ): Հրատարակութիւն Թիֆլ. շա. շրատ. Բնկ.—Թիֆլիս, 1893, տպ. Շարաձէի, գինն է 40 կոպէկ:

Խմբագիր՝ ԱԻՆՏԻԲ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

Իններորդ հիստորիկ

1893 թ. № 1, 2, 3, 4, 5, 6 1893 թ.

№ 1

1 ՇԻՐՎԱՆՁԱԳԷ	5 Արսէն Գիմաքսեան:
2 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԳՐ.	60 Մտերմութիւն (բանաստեղծութ.):
3 ԲԱՇԻՆՁԱՂԵԱՆ, ԳԷՈՐԳ.	61 Մի պատկեր իմ Վիշողութիւնից:
4 ԹՈՒՄԱՆԵՍԱՆՅ, ՅՈՎՀԱՆ.	77 Կալի երգ (բանաստեղծութիւն):
5 ՍԵՆԿԵՒԻՉ, ՀԵՆՐԻԿ.	78 Առանց դառնանքի (վէպ):
6 ՄԻԹԱՐԵԱՆՅ, ԱՐՇԱԼՈՅՍ.	101 Գիշերապահ (բանաստեղծութ.):
7 ԱՆԱԳՉԵԱՆ, ՅԱԿՈԲ.	105 Մեր առևտուրը և գործարանները:
8 ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.	118 Լուի Պաստօր:
9 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.	130 «Մակրիթ», թարգ. Մալխասեանցի
10 Ա., Ա.	140 „Кавказский Календарь“.
11 ԼՈՒՍԻՆԻ.	146 Ժամանակակից քրոնիկ: † Գրիգոր Արծրունի:
12 ԽՄԲ.	160 Գուտաու Ազուլֆ Շուումֆ:
13 Ֆ.	162 Արտասահմանեան քրոնիկ:
14 ԵՍԵՄԵԱՆ.	176 Օրէ ցօր:
15 Շ.	181 Քաղաքական տեսութիւն:—Պանամայի գործը և Ֆրանսիայի ներքին զրութիւնը:
16 ԽՄԲ.	186 Զանազան լուրեր. Նոր բաժանորդներին նւէր:—«Մուրճ»:—Զմիւռնիալուս:—«Մշակ» լրագիրը:—Հո.

գեհանգրիստ Գ. Ա. Շուստրի:—Հա-
լոց թատրոնի 35-ամեակը:—Աւ-
Վարդապետեան:—Բժիշկների հա-
մաժողովը Թիֆլիսում:—Մ. Էքմա-
լեան:—Նոր գրքեր:

№ 2

1 ՇԻՐՎԱՆՁԱԳԷ	197 Արսէն Գիմաքսեան:
2 ՄԻԻԹԱՐԵԱՆՑ, ԱՐՇԱՂՈՅՍ	253 Գարնանալին առաւօտ (բան.):
3 ԱՂԱՅԵԱՆՑ, ՂԱԶԱՐՈՍ	255 Քեօրօղլին կալանաւոր:
4 ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆ.	267 Օրօրացազոյ (բանաստեղծ.):
5 ՍԵՆԿԵԻԶ, ՀԵՆՐԻԿ.	269 Առանց դաւանանքի (վէպ):
6 ԲԱԼԱԳԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ	289 Լուի Պատեօր (վերջ):
7 ԹԱՌԱՅԵԱՆՑ, ՍԵԳՐԱԿ.	297 Հաչ բողոքական համալն.քը I.
8 Ս. Թ.	310 «Գողութեան կռիւներ»:
9 Ա.	315 «Նորայր Բիւզանդացին»:
10 ԼՈՒՍԻՆԻ.	317 Ժամանակակից տեսութիւն. Ժա- մանակիս երիտասարդութիւնը:
11 ԲԱՐԵՈՒԳԱՐԵԱՆՑ, ԱՐՇԱԿ	326 Թարգմանելու իրաւունքը:
12 Ֆ.	330 Ռուսաստանից:
13 ԽՄԲ.	343 Զանազան լուրեր. Առաքել Ծա- տուրեան և զիւլատնտ. ուսումնա- բան. — † Տէն:—Քաղաք. ընտրու- թիւններ:—Աղբիւր ամսագիրը:— Հալոց զպրօցները Անդրկասպեան և Թիւրքեստանի երկիրներում:— Բաքւի Մարդաս. Ընկեր. — Բժիշկ- ների ժողով Թիֆլիս. — «Մուրճ»-ը Ախալքալաքում: Փոխառու Ըն- կերութիւն Շուշիում:—Միական- ների ժողով:—Ղազարոս Աղաչ- եանց:—Բուխարայի Էմիրը:—«Ա- րարատ» ամսագիր:

№ 3

1 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	353 Լուսաւորութ. թշնամիներին (բ.):
2 " " "	354 Գարնանամուտ (բանաստեղծ.):
3 ՇԻՐՎԱՆՁԱԳԷ	355 Արսէն Գիմաքսեան:
4 ԾԱՏՈՒՐԵԱՆ, ԱԼԵԿՍԱՆԳՐ.	406 1893 թ. (բանաստեղծութիւն):

5	ՎԼԻՍՆՈՑԿԻ-ԻՅ՝ ՎԱՆՑԵԱՆ	408	Գինա Բանիչիչ Բոչա՝ բանաստեղծ.
6	ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆ.	421	Վատ օրեր (բանաստեղծութիւն):
7	ԽԱԺԱԿՆԵԱՆ, ԳԱՐԵԳԻՆ.	422	Նաւթաշրջանի բանուորները, IV:
8	ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆ.	432	«Հառաչանք» պօէմայից:
9	ԹԱՌԱՅԵԱՆՑ, ՍԵԴՐԱԿ	436	Հալ-բողոքական համայնքը II.
10	Ա., Թ.	447	«Աղանից երկիր և գրացիք»:
11	Գ., Վ.	452	Բուրժէի «La terre promise».
12	ԱՂԱՅԵԱՆՑ, Ղ.	457	Յ. Թումանեանցի «Անուշ»-ից մի ճաշակ:
13	ԱՐԱՍԹԱՆԵԱՆՑ, ԱԻՆՏԻՔ	461	Պրօսէկա քաղաքալին ընտրութիւնների՝ Ազգութիւնների խնդիրը:
14	ՂԱՐԱՋԵԱՆՑ, ԳԷՈՐԳ	474	Նամակ խմբադրութեան:
15	Ֆ.	477	Արտասահմանեան քրոնիկ:
16	ԵՍԵՄԵԱՆ	491	Օրէ ցօր:
17	Z.	496	Քաղաքական տեսութիւն Ֆրանսիա և Գերմանիա: Ֆերրիլի մահը:
18	ԽՄԲ.	498	Ջանաղան լուրեր: Թիֆլ. Հրատար. Ընկ.—Ծխական դպրոցների հոգաբարձութիւնների նկարագիր: —Բաֆֆի Ընկերութ. Թէհրանում: —Արիտասակէս եպ. Սեղրակեան:—Նոր գրքեր:

№ 4

1	ԱՐԱՍԹԱՆԵԱՆՑ, ԱԻՆՏԻՔ	501	Հողալին խնդիրներ Անդրկովկասում:
2	ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆ.	520	Ն. Բարաթաշիլու զամբանի վերաց
3	ՇԻՐՎԱՆՋԱԳԷ.	521	Արսէն Գիմաքսեան:
4	ԲԱԼՈՒՂԵԱՆՑ, ՋԱՒԱԳ	573	Սառըն հիւսիսում. (Բանաստ.):
5	ԱՂԱՅԵԱՆՑ, Ղ.	574	Իմ կեանքի գլխաւոր զէպքերը:
6	ԽԱԺԱԿՆԵԱՆ, ԳԱՐԵԳԻՆ	585	Նաւթաշրջանի բանուորները, V.
7	ԹԱՌԱՅԵԱՆՑ, ՍԵԴՐԱԿ	594	Հալ-բողոքական համայնքը, III.
8	ՄԱԳԱՓԵԱՆ, ԵՂԻՇԷ	706	Ազգի երկիչը (չարուն.):
9	Ա., Թ.	622	«Շուշան» Ատրպետեանի:
10	«	629	Ամուսնական խնդիրներ:
11	ԼՈՒՍԻՆԻ	631	Ժամանակակից տեսութիւն: Թիֆլ. քաղաքալին ընտրութիւնները:
12	Ա., Թ.	641	Ռուսաստանից:
13	ՂՈՒՎԵԱՆՑ, Ա.	655	Անտառները Ռուսաստանում:

15	ԵՍԵՄԵԱՆ.	660	Օրէ ցոր:
15	Z.	666	Քաղաքական տեսութիւն իրլանդական ինքնաւարութեան օրինագիծը: Չինւորական օրինագիծը Գերմանիայում և ռալիստաղի լուծումը:—Խտալիա:
16	ԽՄԲ.	668	Ջանադան լուրեր: Արխատակէս եպ. Սեղրակեան:—Յարութիւն Արարարատեանի գրքի քննադատութիւն:—Թիֆլ. քաղաք. ընտր.—Բագել Եաւթատէրերի սինդիկատ:—Ս. Գիւղաատեանց:—Թիֆլ. քաղ. վարկի ԼՆկ.—Հրանտ Մամուրեան:—Կրթական գործը Թիւրքիայում (Հալոց ուսումնարաններ):—Կոնֆերենցիայի խնդիր Հայաստանի գործերի համար:—Խրիմեան Հարիկի տարեգարձ:—Գոնդուկով-Կորակով:—Նիկոլ. Բարաթաշւիլի:—Թրքակ. ԼՆկ. գրագիրտ. տարածելու համար:—Թրքական լրագրի տանամեակ:—Թանգութիւն զաւառներում:—Հալոց Բարեգործ. ԼՆկ.—Նոր գրքեր:

№ 5

1	ՇԻՐՎԱՆԶԱԴԷ	683	Արտէն Գիմաքսեան (չար.)
2	ԼԵՌԵՆՅ	739	Ընկերիս (բանաստեղծութիւն):
3	ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆ.	741	Սովի ժամանակից (ղրուց):
4	ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅ՝ ՇԱՏՈՒՐԵԱՆ	750	Բանաստեղծութիւններ:
5	ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՍ	755	Իմ կեանքի գլխաւոր գէպքերը:
6	ՎԱՐԴԱՆԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ.	770	Հողատիրութիւնը Թիւրքիայում:
7	ՏԷՐ-ՋԱՔԱՐԵԱՆՐ, ՍԱՐԳԻՍ.	784	Գիւղական հանգամանքներ:
8	ԹԱՌԱՅԵԱՆՅ, ՍԵՂՐԱԿ.	791	Հալ-բուրքական համալնքը, IV.
9	Ս. Թ.	802	«Հովական աստուածաբանութիւն»:
10	» »	807	«Առքանազ Փամբակ. վէպիկները»:
11	ՎԱՆԿ	808	Մի բանաստեղծ. խնդրի առթիւ:
12	ՏԷՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՅ, Մ.	810	Երկրագործ Փամբակ. գրութիւնը:
13	ՄՈՒՐԱԳԵԱՆՅ, Յ.	815	Սև ծովի ափերից:

14	ԼՈՒՍԻՆԻ.	820	Ընարութիւններ 1) Թիֆլ. քաղ. խորհրդարանի. 2) Ներսէս. զպր. հոգաբարձութեան:
15	Ս. Թ.	828	Ռուսաստանից:
16	Ֆ.	836	Արտասահմանեան քրոնիկ: Ներկայիս ամերիկացիք:
17	ՆԱՀԱՊԵՏՆԱՆՅ, ԳՐ.	845	Նրաժշտական քրոնիկ:
18	ԽՄԲ.	848	Զանազան լուրեր: Վ.հ.Յ. Վաթողիկոսը:—Օգնութիւն սովեալներին և ս. Էջմիածինը:—Օրիորդ Վարդուհի Յակոբեան:—Քուր գետը:—Նոր դրքեր:

№ 6

1	ՇԻՐՎԱՆԶԱԴԵ	869	Արսէն Գիմաքեան (վերջ):
2	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ ԼԵՒՈՆ	927	* * երգ (բանաստեղծ):
3	ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՍ	929	Իմ կեանքի գլխաւոր դէպքերը:
4	ԾԱՏՈՒՐԵԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ.	942	Անմուտց երգ (բանաստեղծ):
5	« »	946	Բլրուլ (բանաստեղծ):
6	ՖԵԼԻՔՍ	947	Նատուրալիստ և Զոլան (չար.)
7	ՄԵԼՔՈՒՄԵԱՆՅ, Պ.	960	Ա. Նամալեան՝ «Պատրիկեանի նամակները»:
8	Ա. Ա.	976	Армянские беллетристы.
9	ՄԵԼՔ. Պ.	979	Նրդեկեանցի «Թւարան. խնդիրներ»:
10	Ա., Ա.	987	Շեքսպիրեան դրականութիւն:
11	ԱՐԱՍԹԱՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻՔ	992	Ժամանակակից տեսութիւն: Ասթողիկոսի պարտեան առիթով:
12	ՏԵՐ-ՄԻՐԱՅԵԱՆՅ, Յ.	996	Նամակ խմբագրին:
13	Ս. Թ.	1001	Ռուսաստանից:
14	Ֆ.	1009	Արտասահմանեան քրոնիկ: Ներկայիս ամերիկացիք (չար.)
15	Շ.	1019	Քաղաքական տեսութիւն: Պարլամենտական ընտրութիւնները Գերմանիայում: Բիխտերի ազատախոհ կուսակցութիւնը և սոցիալ-դեմոկրատները Նոր ռուսաստանում:
16	ԽՄԲ.	1027	Զանազան լուրեր: Մկրտիչ I կաթողիկոս:—Ասթողիկոսի հեռագիրը:—Հալբենիք լրագրի գաղտրու:

մը:—Մաղիկ շարաթաթերթը:—Ի
զը Սոպասան:—Մ. Ն. Կուչան:—
Հաշկական գրադարան թիֆլիսում
և Բարեգործական Ընկերութիւնը:
—Նոր գրքեր

17 ԽՄԲ. 1031 «Մուրճ»-ի բախանդակութիւն 1893
թ. № 1—6:

Խմբագիր՝ ԱԻԵՏԻՒՅ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԳԱՋԱՐԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՈՒՐՇ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Վ. Շահառուս էն հեթոեալ փներոջ

(Նշանակած գները առաջին երեք տարիների համար անփոփոխ պահպանելու են մինչև վերջը 1895 թ.)

«ՄՈՒՐՇ» 1889 թ. անկազմ	4 ռ. — 4.
«ՄՈՒՐՇ» 1890 թ. անկազմ	5 » — »
«ՄՈՒՐՇ» 1891 թ. (սակաւաթիւ) անկազմ	10 » — »
«ՄՈՒՐՇ» 1892 թ. անկազմ	9 » — »

Վ Ճ Ա Ր Ը Կ Ա Ն Խ Ի Կ

Ճանապարհաճախքի համար ուղարկուում է մի-մի ռուբլի ամեն տարւոյ համար:

Կազմի համար վճարուում է վերադիր 60 կոպ. ամեն կիսամեակի համար:

Դիմել՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.
Tiflis, Rédaction de la Revue „Mourtch“.

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՏԵՐԷՆ ԳՐԹԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԻՒՆԸ
 Ի նկատի ունենալով տպագրել կենսագրական և զիանական զրքոյց-
 ների մի շարք հանրամատչելի ընթերցանութեան համար՝ իր կազ-
 մած ցուցակից առայժմ հրատարակում է հետևեալ նիւթերը,
 առաջարկելով ձեռնհաս անձերին՝ սոցանից մէկի կամ մի քանիսի
 մասին զրելու (Լուրաքանչիւր զրքոյցը պէտք է բաղկացած լինի
 մօտաւորապէս 60—100 երեսից) և ներկայացնելու Ընկերութեանս
 մինչև հոկտեմբերի մէկը:

Հին գործողներէց

1. Ս. Սահակ և Մեսրոպը
2. Վարդան Մամիկոնեան
3. Ղազար Փարպեցի
4. Մովսէս Խորենացի
5. Ներսէս Շնորհալի

Նորագոյն գործողներէց

6. Ստեփանոս Նաղարեան
7. Թաչատուր Աբովեան
8. Ներսէս Վարժապետեան Պատր.
9. Ներսէս Ե. Կաթուղիկոս
10. Օտեան.

Նորագոյն գործողներէց

1. Աբ. Լինկոլն
2. Մեծն Պետրոս
3. Վ. Հիւզօ
4. Գարսին

1. Կովկասի ազգութիւնները.
2. Ի՞նչ և ինչպէս է արդիւնաբերում Կովկասը.
3. Կովկասի ֆիզիկական աշխարհագրութիւնը.
4. Բոյսերի կեանքի զլխաւոր երևոյթները.
5. Ծովերը, գետերը և սառցադաշտերը.
6. Թէ ինչպէս են տարածւած երկրագնդի վերայ բոյսերը և
 կենդանիները.
7. Երկրագնդի պատմութիւնը (Գէօլոգիական էտիւղ).
8. Նլեքարականութիւն և զալանականութիւն:

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ
 „ԲՆԿԵՐՈՒԹԻԻՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻԻ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՑԱԾ

աշխարհի մէջ կարեմեքեմաների բոլոր ցուցանանդէտներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՂԱՐԳԵՒՆԵՐԻ

կարեւոր ընկերներ տան ավիլներին և սպելու օգնակամներ
 բոլոր արհեստաւորների համար

ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում: Չինգերի ընկերութեան կենդրոնական պաշտատում, Գո-
 օվինսկի պրօսպեկտի վերայ, Մերիմանովի տան և նրա բաժանմունք-
 ների մէջ:

Բաղում: Մեքայելեան փողոցում,
 Մերլա Սևոպեանի տ.
 Քուլթայետում: Բուլվարի դէմ,
 Չերեկովի տ.
 Բաթումում: Ասիս-Մելիքեան փո.

վրցում, Կուզլորի տ.
 Ասխարաղում: Գոսպինի դւար №
 2, Տ. Աֆանասի:
 Երևանում: Իմ ճամբորդ վարձա-
 կայների մօտ:

և նրանց ճանապարհորդող գործակալներէ Տօր


ՄԻՋԻՆ ԵՒ ՀԻԻՍԻՍՏՅՈՒՆ ԵՒՐՈՊՅՈՒՆ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ԵՒ ԸՆԿԵՐ.
 ԳԼԽԱՌԸ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ



Գ. ՆԵՅԳԻԼԻՆԳԵՐ

Գնողները կարող են, եթէ կամենում են, զրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, ալն է՝ շարաթով կամ
 անտով և կամ ժամանակամիջոց տաճառը զրուակաճանդրամը վճարելու համար:
 Յ. Գ. Չինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնուում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս և
 ասեղներ, թիւ, մետաքս և այլ մեքենավիճ պատկանելի իրեղէններ սմեմաչափաւոր գներով:

THE UNIVERSITY OF CHICAGO
DIVISION OF THE PHYSICAL SCIENCES
DEPARTMENT OF CHEMISTRY



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

և

ՎԱՃԱՌԻՈՒՄ Է

Յովհաննես Թումանյանի

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԿՐՈՐԴ ՀՍՈՐ

ԳԻՆՆ Է 60 ԿՈՊԵԿ

Գրվել՝ Тифлисъ, Центральная книжная торговля, կամ հեղինակին՝
Норашенская ул. № 28. կամ «Մուրճ»-ի խմբագրատանը:

Սիստեմ ԶԻՆԳԵՐԻ եւ ուրիշների


ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ

Ստեղներ, մակոչկներ, իւզ և մեքենաների ամեն մասերը ամենա-
աժանագրած գներով

Գ. ՄՈՒԼԵԱՐՍԿՈՒ

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏՈՒՄ

Թիֆլիս, Գորովինսկից պրոսպ., մուտքը Բարեատինսկայա փողոցից,
„Тифлисский Листовъ“-ի խմբագրատան տակ, տուն Ռոտինովի:
Նոյն տեղում վաճառոււմ են Վարչաւեան գործարանների ամեն տե-
սակ ապրանքներ, մանաւանդ թուղթ, կորացրած կարասիք, եր-
կաթէ կարասիք, ապակի, հայելիներ, լամպեր, պատրաստի կաշի
ներ և այլն:



„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1893 ԹՈՒՍԿԱՆԻ ՀԱՍՄԻ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

Տարեկան գինն է 10 ռ.

Բաժանորդագրութեան համար դիմել՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ } Тифлисъ. Въ редакцію журнала „МУРЧЪ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր գործակալութիւններին՝

ԹԻՖԼԻՍ. — Կենտրոնական գրավաճառանոց:

» պ. Յովհաննէս Թումանյ, Սիօնի փողոց № 27:

» պ. Յովհ. Թումանեանցի մօտ, Հրատ. Բնկ. գրասենեակում,
Բարոնսկայա փողոց:

ԲԱՔՈՒ. — պ. Աւետիս Սուլխանեանց, ազնւոյ «Надежда» ընկ.:

ՌՈՍՏՈՎ և ՆՈՐ-ՆԱԽԻՉԵՒԱՆ. — Եղբ. Պ. և Գ. Ունանեաններ:

ԲԱԹՈՒՄ. — պ. Սարգիս Մակարեանց (գրաս. Եղբ. Մովեաններ):

ՄՈՍԿՒԱ. — պ. Վարդան Թումանեանց (Чистые Пруды, д. Тупицына:

» պ. Ստեփան Վարդազարեան, Юшковъ переул., д. Адлеръ.

ՕՒԵՍՍԱ. — պ. Միքայէլ Մուրադեանց (գրասեն. Եղբ. Մովեաններ):

ԹԱԻՐԻՉ. — պ. Ասատուր-բէկ Միքայէլեանց:

ՉՄԻԻՐՆԻԱ. — պ. Յ. Տէր-Միրաքեանց (Մեսրոպ. վարժարան):

ՄԱՐՍԵՅԱ. — պ. Սիմէօն Միրզայեանց: Rue St Jacques № 86:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. — Ստեփան Վեհապետեան:

ԵՐԵՒԱՆ. — պ. Աւետիս Աղամիրզեանց:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ գտանուում է Թիֆլիս, Վելիամինեան փողոց, տուն № 8

